

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԺԱՍՏՈՒԹՅԱՆ ԻՆՍԻՏՈՒՏ

ԱՐՄԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ԱՐԵՎԵԼՅԱՆ ՇԻՐԱԿԸ
XIX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ
(պատմաժողովրդագրական ուսումնասիրություններ)

«Դպիր» հրատարակչություն
ԳՅՈՒՄՐԻ - 2005

ՀՏԴ 941(479.25)

ԳՄԴ 63.3(2Հ)

Հ 300

Հրատարակության է երաշխավորված
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտական
խորհրդի 2005թ.մարտի 25-ի որոշմամբ
Գիտական խմբագիր՝

պատմ.գիտությունների դռկտոր,
ալորֆեսոր **Աշոտ Սելյոնյան**

Հայրապետյան Ա.Ս.

Հ 300 Արևելյան Շիրակ ԽIX-րդ դարի առաջին կեսին: Պատմա-
ժողովրդագրական ուսումնասիրություն.-Գյումրի:Դպիր, 2005.-204 էջ:

Սույն մենագրությունը պատմաժողովրդագրական ուսումնասիրությունն է՝ նվիրված
պատմական Շիրակ գավառի արևելյան հասպաձի Ռուսաստանին միացման, նրա
այդ ժամանակաշատվածի վարչական բաժանումների, բնակվալայրերի ու ազգա-
բնակչության տեղաբաշխման, Ռուսական կայսրության կողմից վարվող ժողովրդա-
գրական քաղաքականության, էմինիկ տեղաբաշխմերի, դրանց պատճառների և դրա-
բանան առանձնահատկությունների, ինչպես նաև մի շարք այլ հիմնահարցերի ըստ
ամենայնի պարզաբանմանը:

Գրքում փորձ է արվել ի մի բերել Արևելյան Շիրակի պատմության նոր շրջանին վե-
րաբերող պատմագիտական և ժողովրդագրական փաստերն ու տեղեկությունները,
որ սփուրված են գիտական գրականության մեջ և արխիվային փաստաթղթերում՝ գա-
վառող ԽIX դարի առաջին կեսի սոցիալ-տնտեսական, ռազմաքաղաքական, ինչպես
նաև էմինժողովրդագրական հնարավորինս ամբողջական պատկերը ներկայացնելու
համար:

Գիրքը նախատեսված է բուհերի մասնագիտական բաժինների ուսանողների,
մասնագետ-պատմաբանների և ընթերցող լայն հասարակության համար:

Հ 0503020913 2005
792(01)-2005

Գ.Դ.Մ 63.3(2Հ)

Ա Ռ Ա Զ Ա Բ Ա Ն

Հայ պատմագիտության մեջ Արևելյան Շիրակի սոցիալ-քաղաքական, տնտեսական ու մշակութային կյանքին, ինչպես նաև նրա էթնոժողովրդագրական իրավիճակին և Անդրկովկասի վարչատարածքային բաժանումների համակարգում ունեցած տեղին վերաբերող բազմաթիվ տեղեկությունները ուղղակի ցրված են պատմիչների գործերում, գիտական գրականության մեջ, արխիվային փաստաթղթերում և այլուր:

Սույն ուսումնասիրությամբ նպատակ է Հետապնդվում ի մի բերել Արևելյան Շիրակի պատմության, մասնավորապես նոր շրջանին վերաբերող պատմագիտական և ժողովրդագրական փաստերն ու տեղեկությունները, որ առկա են Հայ և օտար պատմագրության մեջ՝ համակարգելու և ուրվագծելու համար գավառի տվյալ ժամանակաշրջանի սոցիալ-քաղաքական, ռազմավարական, ինչպես նաև էթնոժողովրդագրական հնարավորին չափ ամբողջական պատկերը: Այն նվիրված է Պատմական Շիրակ գավառի Արևելյան հատվածի՝ Ռուսաստանին միացման, վարչական բաժանումների, բնակավայրերի ու ազգաբնակչության տեղաբաշխման, Ռուսական կայսրության կողմից վարչող ժողովրդագրական քաղաքականության, էթնիկ տեղաշարժերի, դրանց պատճառների և դրանորման առանձնահատկությունների, նաև մի շարք այլ հիմնահարցերի ըստ ամենայնի պարզաբանմանը: Ժամանակագրական առումով ուսումնասիրությունը ընդգրկում է Հայ պատմական լուրջ տեղաշարժերով և էթնոժողովրդագրական բուռն գործընթացներով աչքի ընկնող մի կարևորագույն պատմական ժամանակահատված՝ XIX դարի առաջին կեսը, գործընթացներ, որոնց հիմքում ընկած են մի շարք տնտեսական և հատկապես քաղաքական շարժառվիթներ՝ մասնավորապես, Ռուսական կայսրության արևելյան քաղաքականության հարածուն ակտիվագումը, արևելահայության ռուսական կողմնորոշման ուժեղացումը և այլն:

Աշխատության մեջ Հաջորդաբար քննության են ենթարկվել Արևելյան Շիրակին առնչվող մի շարք հիմնախնդիրներ: Պատմագրության ընձեռած տեղեկությունների համակարգմամբ նախ ուրվագծվել է գավառի քաղաքական և սոցիալ-տնտեսական կյանքի համառոտ պատկերը հին և միջին դարերից մինչև XIX դարասկիզբը՝ Ռուսաստանին միանալու ժամանակահատվածը, ապա մանրազնին քննության են առնվել Ռուսական կայսրության հետ Շորագյալի գավառի միավորմանն առնչվող հարցերը:

XIX դարի շեմին նպաստավոր ռազմաքաղաքական իրադրություն էր ստեղծվել Անդրկովկասը Ռուսաստանին միացնելու համար, և ցարիզմը «ազատագրական առաքելության» դրոշի ներքո իննամքով թաքցնելով իր արևելյան քաղաքականության նվազողական բնույթը, չհապաղեց ձեռնամուխ լինել դրա իրագործմանը, մանավանդ՝ որ

Անդրկովկասի միացումը Ուռուսաստանին օբյեկտիվորեն համապատասխանում էր նաև տեղի ժողովուրդների՝ օտարի գարավոր ստրկական լծից ազատագրվելու վաղեմի ձգտումներին: XIXդարասկզբի ոռուս-պարսկական և ոռուս-թուրքական պատերազմների առաջին փուլում (մինչև 1813թ.) թուրք-պարսկական լծից ազատվեցին և Ուռուսական կայսրության հովանու տակ անցան Դաշտաստանն ու Վրաստանը, Գյանջայի, Ղարաբաղի, Շաքիի, Շիրվանի, Դերբենդի, Ղուբայի, Բաքվի, Թալիշի խանություններն ու Լոռու, Փամբակի, Շամշադինի, Զանգեզուրի, Շորապյալի գավառները, Երկրորդ փուլում (1828թ.)՝ նաև Երևանի և Նախիջևանի խանությունները: Այլ խոսքով՝ 1801-1828թթ. ընթացքում լիովին ազատագրվեց և Ուռուսաստանի միացավ գրեթե ամբողջ Արևելյան Հայաստանը:

Մենապրոթյան շրջանակներում այս խնդրի հանգամանալի արձարծումը արդիական ենք համարում այնքանով, որքանով կարևորվում է Շորապյալի, որպես Անդրկովկասում Ուռուսական կայսրության խոչըր հենակետներից մեկի, ուզգամավարական և տնտեսական նշանակությունն ամբողջ XIX դ.: Արևելյան Շիրակն այն աշխարհագրական դարպան էր, որով Ուռուսաստանը ներթափանցում էր Պարսկահայաստան, և Շորապյալի սուլթանության գրավումով ցարական ինքնակալությունը սկիզբ էր դնում ոչ միայն Արևելյան Հայաստանի միացման խնդրի լուծմանը, այլև Հիմնավորակես խառնում էր արևմտանելլուպական տերությունների ուզգամաքաղաքական պլանները Անդրկովկասում՝ պատճեշելով նաև թուրք-պարսկական նկրտումները գեպի Վրաստան, որը գարասկզբին արդեն փաստորեն միավորվել էր Ուռուսաստանին: Այս ամենի հատակ գիտակցումով էլ Հետամուտ ենք եղել ըստ ամենայնի խորությամբ քննելու ոռուսական իշխանությունների՝ նշված ժամանակաշրջանի ուզգամատնտեսական քաղաքականությունը Արևելյան Հայաստանում, մասնավորաբար՝ Արևելյան Շիրակում:

Հետազոտվող թեմայի բազմաթիվ հիմնահարցերի շարքում առանձնակի կարևորություն է ներկայացնում քննության ենթակա ժամանակահատվածում Շորապյալի գավառի բնակչության էֆեկտով զովրդագրական վիճակի և կրոնադավանաբանական կազմի, բնակավայրերի տեղագրության, բնակչության տեղաշարժերի, նրա ազգային կազմի տոկոսային հարաբերակցության դինամիկայի և այլ խնդիրների մանրակրկիտ ուսումնասիրությունը: Համապատասխան նյութերի խիստ սակավությունը, հաճախ նաև խապար բացակայությունը դժվարալուծելի է գարձնում որոշակի ժամանակահատվածների վերաբերյալ ամփոփ վիճակագրության կազմումը, աղքատիկ են մանավանդ 1801-1825 թթ. վերաբերող վիճակագրական տվյալները. ձեռագիր և տպագիր աղբյուրներում տեղ գտած այդ տեղեկությունները գերազանցապես սահմանափակվում են ամբողջ գավառի, կամ առանձին բնակավայրերի

մասին ընդհանուր առմամբ խիստ թուցիկ ու ճշգրտման կարոտ հիշատակություններով:

Ժողովրդագրական Հիմնախնդիրների քննության տեսանկյունից աշխատության մեջ առանձնակի կարևորություն է տրվում ուսուական իշխանությունների կողմից 1840-1850 թթ. ընթացքում Անդրկովկասյան երկրամասի վարչատարածքային բարեփոխումների քաղաքականության և դրանում Արևելյան Շիրակին հատկացված դերակատարության խնդիրների մանրազնին ուսումնասիրությանը: Տարածաշրջանում կուտակված ուազմաքաղաքական, տնտեսական, սոցիալական, նաև ազգային և հոգեոր խնդիրների՝ Ռուսաստանին նպատակարմար լուծումների որոնման հրամայական անհամեշտությունը հանգեցրեց անդրկովկասյան տիրույթների վարչատարածքային բաժանումների, որոնք Հաջորդաբար կանքի կոչեցին 1840 թ.: Դրանք թելաղորված էին ոչ այնքան տեղայի ժողովրդների սոցիալ-տնտեսական և երկրի բնապատմական պայմաններով, որքան ցարական ինքնակալության՝ երկրամասում հետապնդած ուազմական, ոստիկանական, ֆինանսական և գաղութատիրական շահերով: Այդ շահերով պայմանագրորված՝ ուսումները նվաճված տարածքները պարբերաբար ենթարկում էին վերաբաժնումների՝ անընդհատ ստեղծելով նոր վարչական միավորներ, հաճախ վերաձելելով հները կամ փոփոխելով միևնույն վարչական միավորի տարածքային սահմանները և այլն: Ինդրով առարկայի առումով դրանք հանգեցրին 1805 թ. գոյություն ունեցող Փամբակ-Շորագյալի դիստանցիայի հիման վրա 1840 թ. նոր, ավելի մեծ վարչական միավոր՝ Ալեքսանդրապոլի գավառի ստեղծմանը, որ ինքնին նշանակալի առաջադիմական քայլ եղավ տեղական կառավարման արդյունավետության բարձրացման, ինչպես նաև Հայաստանի հյուսիսային հատվածում հայշատ հողերը մեկ վարչական միավորի կազմում ընդգրկելու տեսակետից:

Ինչպես ողջ Արևելյան Հայաստանի, այնպես էլ Արևելյան Շիրակի ժողովրդագրական Հիմնախնդիրների ուսումնասիրության առումով կարևորություն է ձեռք բերում պարսկահպատակ Հայերի և, մանավանդ, արևմտաՀայերի գաղթերի, ըստ բնակության նոր վայրերի գաղթականների տեղաբաշխման, երկրամասի բնակչության էթնո-ժողովրդագրական և կրոնադավանաբանական իրադրության վրա գաղթերի թողած ազգեցության և հարակից այլ հարցերի ուսումնասիրությունը: Թուրքմենչայի (1828 թ. փետրվարի 10/22) և Աղդիանապուրի (1829 թ. սեպտեմբերի 2/14) հաշտության պայմանագրերը քրիստոնյաներին Պարսկաստանից և Թուրքիայից արտագաղթելու լայն իրավունքներ ընձեռեցին: Զանգվածային այդ գաղթերը վերականգնեցին Արևելյան Շիրակի բնակչության ժողովրդագրական նախկին հայեցի պատկերը և իրենց կազմակերպման ու իրականացման լուրջ թերություններով հանդերձ, նպաստեցին տարածաշրջանի բնակչության մեջ հայ տարրի գգալի ավելացմանը, ազգային

կազմի քանակական աճին ու որակական փոփոխմանը և դրանով՝ Արևելյան Շիրակը հայ ժողովրդի մի ստվար հատվածի համար ազգահավաքման օջախի վերածելուն:

Գրքում լուսաբանվում են նաև ոչ պակաս կարևորություն ներկայացնող այլ խնդիրներ՝ կապված XIXդարի 30-ական թվականների վերջերից Արևելյան Շիրակի տարածքում ուստական զինվորական և քաղաքացիական իշխանությունների կողմից անցկացվող քաղաքաշինական բուռն միջոցառումների, գավառի տարածքում նոր բնակավայրերի հիմնադրման, գավառակենտրոնի քաղաք հրոչակման և Ալեքսանդրապոլ վերանվանման հետ: Մասնավորապես ի մի են բերվել և գնահատանքի արժանացել Կումայրի, Գյումրի, Ալեքսանդրապոլ տեղանունների վերաբերյալ գիտական գրականության մեջ առկա սուուժաբանական տեղեկությունները, հանգամանորեն մեկնաբանվել են ինչպես քննության առարկա ժամանակահատվածում Շիրակի գավառի այս հատվածում քաղաք Հիմնելու շարժառիթներն ու պատճառները, այնպես էլ նորաստեղծ քաղաքի անվանափոխությանը, հատակագծմանը, կարճ ժամանակահատվածում նրա տնտեսական բավականին արագ զարգացմանը, Խուսական կայսրության համար քաղաքի ունեցած ուազմավարական կարևոր նշանակությունը վերաբերող Հարցերը:

Հայ մատենագրության մեջ Շիրակի մասին տեղեկություններ կան Մովսես Խորենացու, ¹ Ղևոնդի², Սամվել³, Անեցու⁴, Սոնեփանոս Տարոնեցու⁴, Առաքել Դավթիթեցու⁵, Զաքարյա Քանաքեռոցու⁶ և Աբրահամ Կրետացու⁷ աշխատություններում: Ընդ որում, բոլոր պատմիչներըն էլ Շիրակը գերազանցապես հիշատակում են այս կամ այն ժամանակաշրջանում տիրող ուազմաքաղաքական իրավիճակի առնչությամբ՝ առանց վարչական, ժողովրդագրական, տեղագրական կամ ժամանակագրական բնույթի մանրամասների: Թերեւս միայն վերջին երկու հեղինակները և մասնավորապես Աբրահամ Կրետացին է, որ շրջագայելով Արևելյան Հայաստանի մի քանի շրջաններում, վարչական և տեղագրական բնույթի որոշ աղքատիկ տեղեկություններ է թողել նաև պարսկական տիրապետության տակ գտնվող Շիրակ գավառի արևելյան հատվածի մասին:

Թուրք-պարսկական տիրապետության շրջանից պահանձված վարչական ու տեղագրական նյութերի մեջ իրենց կարևորությամբ ա-

¹ Մովսէսի Խորենացւոյ պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1910:

² Պատմութիւն Ղեոնդայ մեծի գրադապետի Հայոց, Սանկտ-Պետերբուրգ, 1887:

³ Սամուէլ Անեցի, Հաւաքամունքի ի գրոյ պատմագրաց, Վաղարշապատ, 1893:

⁴ Սոնեփանոս Տարոնեցի Ասողիկ, Պատմութիւն տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885:

⁵ Առաքել Դավթիթեցի, Պատմութիւն Առաքել վարդապետի Դավթիթելոյ, Վաղարշապատ, 1896:

⁶ Զաքարեայ սարկաւագ Քանաքեռոցի, Պատմագրութիւն, հ. Ա-Բ, Վաղարշապատ, 1870:

⁷ Աբրահամ Կրետացի, Պատմութիւն անցիցն իւրոց և նատր Շահին Պարսից, Վաղարշապատ, 1870

ուանձնառում են *XVII* դարի թուրք պատմագիրներ էվլիա Զելեփի⁸, իբրահիմ Փեչլի⁹ և Սոլաք Զագեկի¹⁰ աշխատությունները: Վերջիններս 1554 և 1578 թվ. թուրք-պարսկական բախումներն ու թուրքական բանակների երևանյան արշավանքները նկարագրելիս բավականին մանրամասնորեն անդրադարձել են դեպի երևան շարժվող թուրքական զորքերի ճանապարհին Հանդիպած տարածքների, այդ թվում նաև Շիրակ գավառի որոշ բնակավայրերի և դրանցում բնակչության էթնիկական կազմի նկարագրությանը:

Վարչատեղագրական և ժողովրդագրական բնույթի ուշագրավ տեղեկություններով է Հարուստ Վենետիկի Միջթարյան միաբանության անդամ, մեծանուն պատմաբան Ղուկաս Ինձիճյանի «Աշխարհագրությունն չորից մասամբ աշխարհի»¹¹ երկասիրությունը (1806թ.), որի միայն Պատմական Հայաստանին նվիրված առաջին Հատորում մեծածավալ արտիկվային նյութի և հրապարակի վրա եղած գրականության բազմակողմանի ուսումնասիրության հիման վրա Հեղինակը մանրամասն տեղեկություններ է Հաղորդում նաև *XVII* դարի սկզբներից Արևելյան Հայաստանի մեծագույն մասը կազմող երևանի բյուրեցիության (Չուգուր-Սաադի կուսակալության) վարչատարածքային բաժանման, նրա տնտեսության, ժամանակի ուշագրավ քաղաքական անցյալի, բնակչության տեղաշարժերի ու տեղաբաշխման և այլնի մասին: Խնդրու առարկա թեմայի ուսումնասիրության տեսանկունից կարևորություն է ներկայացնում Հեղինակի «Հնախօսություն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի»¹² աշխատությունը, որի Շիրակին վերաբերող բաժինը նվիրված է մասնավորապես Կամսարական նախարարական տան ծագումնաբանության և Շիրակում ու Արշարունիքում նրանց Հաստատվելու հետ կապված հիմնադիրների պարզաբանմանը:

XIX դարի 50-ական թվականներից սկսած՝ հրապարակի վրա Հայտնիքին Ղևոնդ Ալիշանի «Տեղագիր Հայոց Սեծաց» (1853 թ.), «Շիրակ» (1881 թ.), «Այրարատ» (1890 թ.) մեծարժեք աշխատությունները, որոնց մեջ ինչդրու առարկա թեմայի ուսումնասիրության տեսանկյունից Հատկապես կարևորվում է «Շիրակ» մենագրությունը¹³: Հմտորեն օգտվելով ձեռքի տակ եղած բազմաբնույթ նյութերից, նաև

⁸ Էվլիա Զելեփի, «Թուրքական աղբյուրները Հայաստանի, Հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրբների մասին», կազմեց Ա. Սաֆրաստյանը, Հ. Գ., Եր., 1967:

⁹ Իբրահիմ Փեչլի, «Թուրքական աղբյուրները...», կազմեց Ա. Սաֆրաստյանը, Հ. Ա., Եր., 1961:

¹⁰ Սոլաք Զաղեկ, «Թուրքական աղբյուրները ...», կազմեց Ա. Սաֆրաստյանը, Հ. Բ., Եր., 1964:

¹¹ Ինձիճեան Ղ., Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, Հ. Ա., Վենետիկ, Ս. Ղար, 1806:

¹² Ինձիճեան Ղ., Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի, Հ. Ա-Գ, Վենետիկ, 1835-ՌՄՁԴ, Էջ 173-178:

¹³ Ալիշան Ղ., Շիրակ, տեղագրութիւն, պատկերացոյց, Վենետիկ, 1881:

Հայաստանի վերաբերյալ օտարերկրացիների ուղեգրություններում առկա բազմաթիվ տեղեկություններից՝ անվանի հայագետն այս աշխատովիյան մեջ, առանձին անծտովիյուններով հանդերձ, ամենայն մանրամասնովիյամբ վեր է հանել Շիրակ գավառի երկու՝ արևմտյան և արևելյան հատվածների վարչաժողովրդագրական պատկերը, ինչպես նաև ուղղագծել է թուրք-պարսկական տիրապետության ողջ ընթացքում գավառի երկու հատվածներում աստիճանաբար զորեղացող հայաթափման գործընթացի միտումները։ Ապա կենտրոնանալով Արևելյան Շիրակի պատմության հիմնահարցերի լուսաբանման վրա՝ բացի տեղագրական, ժողովրդագրական ու քաղաքաշինական բնույթի տեղեկություններ հայտնելուց, հեղինակը քննության է առել նաև Ռուսաստանին նրա միացման ռազմաքաղաքական և սոցիալ-տնտեսական հետևանքները։

Շիրակ գավառի տեղագրական, ժողովրդագրական ու վարչական հարցերի ուսումնասիրության և լուսաբանման խնդիրներում պակաս կարեոր նշանակություն չունեն Ներսես Սարգսյանի¹⁴, Մ. Վակների¹⁵, Հ. Լինչի¹⁶, Հովհ. Հակոբյանի¹⁷, Ա. Զալայանի¹⁸, Մ. Քաջունու¹⁹ և Պողոս վարդապետ Պետրոսյանի²⁰ աշխատությունները։ Թերություններով հանդերձ, ուշագրավ ու արժեքավոր են հատկապես Պողոս վարդապետ Պետրոսյանի «Տեղագրութիւն Շիրակայ» և Ն. Սարգսյանի «Տեղագրութիւնք ի Փոքր եկ ի Սեծ Հայս» մենագրությունները, որոնք պարունակում են աղբյուրագիտական նշանակություն ունեցող տեղագրական ու վարչաժողովրդագրական բնույթի բազմաթիվ ուշագրավ տեղեկություններ։ Հատկապես արժեքավոր են Հայկական բնակավայրերի ու դրանցում առկա բնակչության թվաքանակի վերաբերյալ տեղեկությունները։ Դրանց մեծ մասը վերաբերում է ավելի ուշ ժամանակաշրջանի, այնուամենայնիվ այդ տեղեկությունները խիստ կարեոր են այն իմաստով, որ եզակի Հաղորդումներ են պարունակում գավառի բնակավայրերի տեղագրության ու դրանցում հաստատված արևմտահայ գաղթականների որակություն իննելու ինդրի ճշտման առումով։

¹⁴ Սարգսյան Ն., Տեղագրութիւնք ի Փոքր եկ ի Սեծ Հայս, Վենետիկ, 1864:

¹⁵ Վակներ Մ., Ճանապարհորդութիւն ի Հայաստան, Վիեննա, 1851:

¹⁶ Լինչ Հ. Ֆ. Պ., Հայաստան ուղևորություններ և ուսումնասիրություններ, հ. 1, Կ. Պոյիս, 1913:

¹⁷ Հակոբյան Հովհ., ՈՒղեգրություններ, Աղբյուրներ Հայաստանի և Անդրկովկասի պատմության, հ. 2, ԺԹ գարի առաջին քանամյակ (1800-1820), Եր., 1934:

¹⁸ Զալայան Ս., Ճանապարհորդութիւն ի Սեծն Հայաստան, մասն Ա-Բ, Տիֆլս, 1842-1858:

¹⁹ Քաջունի Մ., Աշխարհագրութիւնն Հին և Նոր Հայաստանեաց, Վենետիկ, 1857:

²⁰ Տեղագրութիւն Շիրակայ, աշխատասիրեալ ի Պօղոս վարդապետէ Պետրոսեան, Արարատ, Էջմիածին, 1870, Յ-րդ տարի, թիւ Ա, էջ 20-25, թիւ Բ, էջ 54-58, թիւ Գ, 100-105, թիւ Ե, էջ 181-185, թիւ Զ, էջ 238-245, թիւ Է, էջ 273-283, թիւ Ը, էջ 347-351:

Բացի վերոհիշյալ աշխատություններից, որ վերաբերում են XVIII դարավերջի և XIX դ. առաջին կեսի Հայաստանի ու մասնավորապես Արևելյան Շիրակի վարչականիքնիկական և պատմաաշխարհագրական Հիմնախինդիրներին, տարբեր ժամանակներում հրապարակ են իջել նաև Շիրակի պատմության առանձին շրջաններին նվիրված և ուսումնասիրության թեմայի համար հետաքրքիր նյութեր պարունակող աշխատություններ²¹:

Նույն ժամանակաշրջանի Արևելյան Շիրակի վերաբերյալ արժեքավոր և ուշագրավ տեղեկություններ կան նաև ոռու պատմագիրներ և ժամանակագիրներ Ս. Բրոնսևակու, Ս. Էզովի, Ն. Նեֆելեկի, Վ. Իվանենկոյի, Վ. Պոտտոյի և այլոց աշխատություններում²²: Վարչատեղագրական բնույթի ուշագրավ տեղեկություններով հարուստ են Հատկապես վերջին երկու հեղինակների գործերը: Այսպես, եթե Վ. Իվանենկոն, իր "Գրայանու պատմության մեջ, ի մի բերելով հրապարակի վրա եղած նյութերը, փորձել է հնարավորին չափ մանրամասնել պարսկական տիրապետության տակ անցած Արևելյան Շիրակի XVI-XVIII դարերի պատմությունը՝ ի թիվս այլ հարցերի հայտածելով նաև գավառի՝ թաթարական ցիտանցիայի վերածվելու պատճառներն ու հանգամանքները, ապա Վ. Պոտտոյն «Կովկասյան ժողովածուի» XXI հասորում մեր թեմայի ուսումնակիրության տեսանկյունից ընձեռնում է տեղագրական բնույթի ուղղակի եզակի նյութ՝ պարսկերենից թարգմանաբար տալով XVIII դարակեսի Շորագյալի սուլթանության բոլոր 109 գյուղերը²³:

Հարկ ենք Համարում ընդգծել, որ գերազանցապես վերոհիշյալ Հայ և օտարազգի հեղինակների աշխատություններն են Հնարավորություն տալիս լուսաբանելու այն վարչատեղագրական և ժողովրդագրական գործընթացները, որ տեղի են ունեցել Շիրակ գավառի

²¹ Գրիգորյան Մ., Համառուս տեղագրություն Հնութեանց Սեծին Շիրակ և Մայրաքաղաքին Անդոյ, Ալեքսանդրապոլ, 1903; Կողեան Ս., Կամսարականները «Տիրաք Շիրակյա և Արշարունեաց», Վեհնան, 1926; Հակիրյան Թ., Անիկ պատմություն, Հ. Ա.-Բ., Եր., 1980-1982; Վիրաբյան Ս., Շորագյալի սուլթանությունը XVI դարի վերջերից մինչև XIX դարի առաջին քառորդը, «Պատմագիտական հետազոտություններ», Վանաձոր, 2001 և այլն:

²² Броневский С., Новейшие географические и исторические известия о Кавказе, М., 1823; Историческая записка об управлении Кавказом, т. I, Эзов С., Тифлис, 1907; Нефедьев Н., Взгляд на Армянскую область, из путевых записок Н. Нефедьева, СПб., 1839.

²³ Иваненко В., Гражданское управление Закавказьем от присоединения Грузии до наместничества Великого Князя Михаила Николаевича, Тифлис, 1901, стр. 25-27.

²⁴ Потто В., Материалы к истории персидской войны 1826-1828гг., 1825-й год, Кавказский сборник, т. XXI, Тифлис, 1900, стр 42-43.

արևելյան հատվածում մինչև XIX դ. սկզբում ընկած ժամանակահատվածում:

Թեմայի ուսումնասիրության տեսանկյունից մեծ հետաքրքրություն են ներկայացնում նաև Ռուսաստանին Արևելյան Շիրակի միացման պատմական նշանակության, Ռուսական կայսրություն պարսկահպատակ Հայերի, ապա արևմտահայերի գանգվածային ներդաղթի, Շորպայափ գավառում ըստ բնակավայրերի գաղթականների տեղաբաշխման, գաղթերի արդյունքում գավառի էթնոժողովրարական և կրոնադավանաբանական նորովի իրադրության, Ալեքսանդրապոլ քաղաքի՝ համանուն գավառի կենտրոն գառնալու և այլ ուշագրավ հարցեր։ Դրանցից թերևս միայն երկու-երեքն են պատմագիտության մեջ ենթարկվել լուրջ ուսումնասիրության։ Այսպես, գեռևս մինչխորհրդային շրջանի հայ պատմագիտության մեջ առանձին մենագրություններով Ալ. Երիցյանը, Ա. Պետրովյանը, Ե. Գեղամյանը, Դ. Անանունը²⁵, օտարազգի Հեղինակներից Ն. Դուբրովինը, Վ. Պոտոտին, Շերբատովը, Պ. Կովայինակին, Կ. Բորովովինը, Դ. Ռոզենը, Ի. Շոպենը, Ա. Պետրովը և ուրիշներ, պարբերական մամուլի էջերում նաև Զ. Գրիգորյանը, Դյուլորյանը, Մ. Կոցերուն, Լ. Սեմյոնովը, Կ. Շուլցինը²⁶, խորհրդացին, Դյուլորյանը, Դյուլորյանը, Վ. Կոցերուն, Լ. Սեմյոնովը, Կ. Շուլցինը²⁷,

²⁵ Անանուն Դ., Ռուսահայերի հասարակական գարգացումը XIX դարում (1800-1870), հ. Ա., Բաքու, 1916; Գեղամյան Ե., Հայերի պատմագրական շարժումները Ժամանումը, Բաքու, 1915; Երիցյան Ալ., Ամենայն Հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայր XIX դարում, հ. Ա.-Բ. Թիֆլիս, 1894-1895; Պետրովյան Ա., Պատմութիւն Հայոց, Վ. Պոլիս, 1871:

²⁶ Дубровин Н., История войны и владычества русских на Кавказе, т. 2-4, СПб., 1885-1886; Նոյնի, Закавказье 1803-1806гг., СПб., 1866; Նոյնի, Георгий XII, последний царь Грузии и присоединение ее к России, СПб., 1867; Потто В., Геройская защита Баязета, изд. 2, СПб., 1879; Նոյնի, Памяти старых кавказцев, Тифлис, 1897; Նոյնի, Кавказская война в отдельных очерках, эпизодах и биографиях, т. 1-4, СПб., 1885-1887; Генерал-фельдмаршал князь Паскевич, его жизнь и деятельность. По неизданным источникам составил Генерального Штаба Ген.-лейт.Щербатов, т. 3,октябрь 1827-май 1831, СПб.,1891; Ковалевский П., Завоевание Кавказа Россией, СПб., 1887; Петров А., Война России с Турцией 1806-1812 гг., т. 3, СПб., 1885; Бородин К., Переселенцы в Закавказье, СПб., 1891; Шопен И., Исторический Памятник состояния Армянской области в эпоху ее присоединения к Российской империи, СПб., 1852; Розен Д., История Турции от победы реформы в 1826 году до Парижского трактата в 1856 году, ч. 1, От истребления яничар до смерти Махмеда II, СПб., 1872.

²⁷ Գրիգորյան Զ., Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միավորման նշանակությունը հայ ժողովրդի ազգահավաքման և գյուղական համար, Պատմա-բանագրական Հանդես (այսուհետև՝ ՊԲՀ), Եր., 1978, Խ 3; Դյօլօրյ, Արմյան 1854 գայ, Կավказ, Տիֆլիս, 1854, 20 октября, N22; Потто В., Материалы к истории персидской войны 1826-1828гг., 1825-й год, Кавказский сборник, т. XXI-XXX, Тифлис, 1900-1903, 1910; Կոչես Մ., Описание вторжения персиян в

յին շրջանի հայ պատմագիտության մեջ Գ. Գալոյանը, Զ. Գրիգորյանը, Վ. Դիլոյանը, Ե. Մանուկյանը, Մ. Մուրագյանը, Բ. Բաղյանը, Վ. Թունյանը, ուստի պատմագիտության մեջ Վ. Շերեմետը, Ա. Ֆադեևը և ուրիշներ ոչ միայն լիովին համակարծիք են Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միացման առաջադիմական խոշոր իրադարձություն լինելու հարցում, այլև այն իրավացիորեն դիտում են իրեն ստեղծված պայմաններում միակ ելքը, որը որոշակի հնարավորություն բնձեռեց հայ ժողովրդի տնտեսական, մշակութային և քաղաքական կամքի զարգացման համար՝ փրկելով հայությանը փիզիկական բնաշնչման վտանգից, հետալու ապահովելով նրա թվական աճն ու հավաքաքական գոյությունը²⁸: Այդ համատեքստի մեջ էլ ըստ արժանվոյն գնահատական է տրվում հայկական տարածքներից Ռուսական կայսրությանը առաջինը Արևելյան Շիրակի միացման պատմական նշանակությանը, որ այնքան հստակ բանաձեռէ է ուղղմական պատմաբան Վ. Պոտտոն: «Շրագայի մարզը... պաշտպանում էր Վրաստանը ոչ միայն Երևանի կողմից, այլև Կարսի ու Արդահանի թուրքական բերդերից, հաջող պատրամ լինելով Թուրքիայի և մանավանդ Պարսկաստանի համար Վրաստան ներխուժելու նպատակով»²⁹:

Խնդրո առարկա թեմայի քննության տեսանկյունից պատմագիտական գրականության մեջ համակումանիորեն են ուսումնասիրված նաև դեպի Ռուսական կայսրություն պարսկահպատակ հայության և արևմտահայության 1828-1831 թթ. գաղթերի հարցերը: Բնակչության զանգվածային այս տեղաշարժերը, հիմնովին վերականգնելով Արևելյան Հայաստանի բնակչության ժողովրդագրական երեսնի պատկերը, իրենց կազմակերպման և իրականացման լուրջ թերություններով հանդերձ, օբյեկտիվորեն նպաստեցին Արևելյան Հայաստանի և մասնավորապես Արևելյան Շիրակի տարածքում հայահավաքման գործին: Թերևս հարցի

Грузию в 1826г., Кавказский сборник, т. XXII, Тифлис, 1901; Семенов Л., К вопросу о значении Туркменчайского договора для истории Армении, ՊԲՀ, Еր., 1959, N 4; Шульгин К., Взятие Эривани, Сборник материалов для описания местностей и племен Кавказа, выпуск 4, отд. 2, Тифлис, 1884.

²⁸ Գալոյան Գ., Ռուսաստանը և Անդրկովկասի ժողովուրդները, Որպագծեր նրանց փոխհարթությունների քաղաքական պատմության հին ժամանակներից մինչև Հռկտեմբերյան սոցիալիստական Սեծ հեղափոխության հայթանալը, Եր., 1978; Գրիգորյան Զ., Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին և նրա պատմական նշանակությունը, Եր., 1978; Դիլոյան Վ., Արևելյան Հայաստանը XIX դարի առաջին երեսնամյակին և Հայ-ռուսական Հարաբերությունները, Եր., 1989; Մանուկյան Ե., Հայ ժողովրդի ազգահավաքման գործընթացն Արևելյան Հայաստանում XIX դարի 20-ական թվականների վերջերին-30-ական թվականների սկզբներին, Ատեն. պատգիտ. թեկ., Եր., 1991; Մուրագյան Մ., Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին XIX դարի ռուսական պատմագիտական և Հասարակական մտքի գնահատմամբ, Եր., 1985; Балаян Б., Дипломатическая история русско-иранских войн и присоединение Восточной Армении к России, Ер., 1988; Тунян В., Восточная Армения в составе России, Ер., 1989.

²⁹ Потто В., Кавказская война..., т.1, стр. 336.

այսչափ կարևորությամբ կարելի է բացատրել այն լրջագույն հետաքրքրությունը, որ գեռաւ մինչխորհրդային շրջանում այդ իրադարձությունների նրկաստմամբ դրսեղորդեց Եղեղամյանցի, Գ.Աղանյանցի, Ալ. Երիցյանի, Եփրեմ Սեթի, Վ. Պոստոյի, Ս.Գլինկայի, Կ. Բորովդինի, Ն. Ֆլորովսկու, Ա. Գրիբոյեդովի և այլոց կողմից, իսկ խորհրդային և արդի շրջաններում՝ Ա. Մելքոնյանի, Հ. Մուրացյանի, Ե. Մանուկյանի, Կ. Հովհաննիայանի, Ն. Թափաքայլյանի և մասնավորապես Մ. Դարբինյանի աշխատություններում³⁰:

Այս տեսակի թերևս բավարար չի կարելի համարել գավառի տարածքում ըստ բնակավայրերի պարսկահայ և արևմտահայ գաղթականության տեղաբաշխման խիստ կարևոր հարցի քննության մակարդակը։ Դժվարին այս խնդրի լուծումը բարդանում է հատկապես ձեռքի տակ եղած պատմական աղբյուրների սակավաթիվ և թերի լինելու պատճառով, որոնք, ի գեպ, սույն աշխատության մեջ մեր կողմից պայմանականորեն բաժանվել են երկու կորմիք։ Առաջին խմբին դասվող աղբյուրներում («Արևելյան մամուլ»³¹, Ա. Ջալալյան,³² Ս. Էփրիկյան,³³

³⁰ Գեղամյանց Ե., Պատմական քաղվածքներ, պարակ 3, մաս 1, Բաքրու, 1909; Ազանեանց Գ. ք., Կարնոն գաղթը (1829-1830), Թիֆլիս, 1891; Երիցյան Ալ., Ամենայն Հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք XIX դարում, Հ. Ա., Թիֆլիս, 1894; Կարապետյան Կ., Եփրեմ Սեթը արևմտահայության 1829-1830թթ. գաղթի մասին, ՊԲՀ, Եր., 1974, N 2; Գրիбоедով Ա., Полное собрание сочинений, т. 3, СПб., 1917, Потто В., Кавказская война в отдельных очерках, эпизодах и биографиях, т. 3, выпуск 4, СПб., 1887; Глинка С., Описание переселения армян аддербиджанских в пределах России, М., 1831; Бороздин К., Переселенцы в Закавказье, СПб., 1891; Обозрение российских владений за Кавказом, в статистическом, этнографическом, топографическом и финансовом отношении, ч. 2, СПб., 1836; Ерицков А., Нерсес V и Воронцовы, Тифлис, 1898; Մելքոնյան Ա., Երգում, Երգումի նահանգի Հայ ազգաբնակչությունը 19-րդ դարի առաջին երեսնամյակին, պատմանողովորպահական ուսումնակիություն, Եր., 1994; Մուրադյան Հ., Կարսի նահանգի քարչածողովրաբական պատմերը 19-րդ դարի առաջին երեսնամյակին, Ատեն. պատ. գիտ. թեկ., Եր., 2001; Անոնվան Ե., Հայ ժողովրդի ազգահավաքման գրությացն Արևելյան Հայաստանում XIX դարի 20-ական թվականների վերջերին-30-ական թվականների սկզբներին, Ատեն. պատ. գիտ. թեկ., Եր., 1991; Հովհաննիսյան Կ., Պարսկահայերի գաղթը և Ներսես Աշտարակեցին, Աշխատություններ Հայաստանի պատմության Պետական թանգարանի, Եր., 1975, N 4; Տավակալյան Հ., Պереселение армян из Персии и Турции в Закавказье после присоединения Восточной Армении к России, ՊԲՀ, Եր., 1976, N 3; Դարբինյան Մ., Արևմտահայերի 1829-1830 թթ.-ի գաղթը Հայկական մարդ և Հարակից շրջաններ, ՊԲՀ, Եր., 1974, N 2; Նույնի, Եներ Ախացիկայի և Ախացիկայի Հայերի 1829-30թթ. գաղթի պատմությունից, «Բանբեր Երևանի Համալսարանի» (այսուհետև՝ ԲԵՀ), Եր., 1973, N 2; Նույնի, Նոր վակերագրեր պարսկահայերի և արևմտահայերի 1828-1830 թթ. գաղթի վերտերյալ, «Բանբեր Հայաստանի արխիվների» (այսուհետև՝ ԲՀԱ), Եր., 1973, N 2

³¹ Տեղեկագրական պատառքիներ. Արևելյան մասն Եիրակայ, «Արևելյան մամուլ», Զմիւռնիս, 1898, 28-րդ տարի, թիւ 15, 1 օգոստոսի, թիւ 16, 15 օգոստոսի, թիւ 17, 1 սեպտեմբերի, թիւ 18, 15 սեպտեմբերի, թիւ 19, 1 հոկտեմբերի, թիւ 22, 15 նոյեմ-

Ղ. Ալիշան,³⁴ «XIX դարակեսի եկեղեցական չափաբերական մատյաններ»,³⁵ մասսամբ նաև՝ «Հայաստանի և Հարավից շրջանների տեղանունների բառարան»)³⁶ տրվում են միայն աշխարհագրական տվյալներ, այսինքն՝ նշվում է գաղղթականների որտեղից լինելը և Շորագյալի գավառի որ գյուղում հաստատվելը: Փոխարենը երկրորդ խմբին պատկանող աղբյուրներում, որ գերազանցապես արխիվային նյութեր են³⁷, ուղղակի ի հակագրություն վերը նշվածների՝ շեշտը դրվում է միայն թվային տվյալների ներկայացման վրա: Այնպես որ Շորագյալի գավառի տարածքում գաղղթականների տեղաբաշխման հնարավորին չափ իրական պատկերի վերականգնման գժվարագույն խնդիրը կարելի է լուծել միայն այս երկու խմբերի աղբյուրների ճիշտ համադրությամբ, ինչն էլ ստորև փորձել ենք իրավործել:

Ուսումնամակրպող բազմաթիվ հիմնահարցերի շարքում մեծ կարևորություն է ներկայացնում նաև Արևելյան Շիրակի XIX դարի 30-50-ական թվականների էթնոժողովրդագրական և կրոնադավանաբանական վիճակների քննությունը: Վերոհիշյալ խնդիրի պարզաբանմանը դեռևս մինչյուրհրդային շրջանի պատմագիտության մեջ անդրադարձել են Ղ. Ալիշանը, Ս. Զարալյանը, Պողոս վարդապետ Պետրոսյանը, Ե. Թոփչյանը, Ն. Նիկողոսյանը, Գ. Վանցյանը և այլորք:³⁸ Այս կապակցությամբ հետաքրքիր նյութեր են հրապարակվել մանավանդ՝ «Կովկասյան օրացույց» և «Արևելյան մամուկ» պարբերականների էջերում: Սակայն հիշատակությունների մեծագույն մասը, վերաբերելով հիմնականում ավելի ուշ ժամանակաշրջանի կամ էլ սահմանափակվելով միայն առանձին բնակավայրերի մասին թրուցիկ տեղեկություններով, չեն կարող որևէ լուրջ ծառայություն մատուցել գավառի XIX դ. 30-50-ական թվականների էթնոժողովրդագրական և մանավանդ կրոնադավանաբանական իրավիճակի քիչ թե շատ հանգամանալի ներկայացման խնդրում: Նշված Հարցերն իրենց վերջնական լուծումը չստացան նաև

բերի, թիւ 23, 1 գեկտեմբերի, թիւ 24, 15 գեկտեմբերի, 1899, 29-րդ տարի, թիւ 3, 1 փետրվարի, թիւ 5, 1 մարտի, թիւ 6, 15 մարտի:

³² Զարյան Ա., Ճանապարհորդություն ի Մեծն Հայաստան, մասն Ա-Բ, Տիկիս, 1842-1858:

³³ Էփրիկյան Ա., Պատկերազարդ բնաշխարհի բառարան, հ. Ա-Բ, Վենետիկ 1903-1907:

³⁴ Ալիշան Ղ. Շիրակ, տեղագրություն, պատկերացոյց, Վենետիկ, 1881:

³⁵ ՀՀ ՊԿՊԱ, Փոնդ 47, ցուցակ 1, գործ 659-663, 859-860, 863, 865, 920-923, ցուցակ 2, գործ 1, 18, 20-23, 37, 39, 46-48, 69-70, 73-75, 79, 81-83, 89-92, 98, 102-103, 107-115, 120-121, 128-135, 138-140, 146-150, 153-158, 195, 201, 225, 237, 415, 516, 530, 621, 626, 630, ցուցակ 3, գործ 199, ցուցակ 6, գործ 37, 59, 119, 152, 167, 179, 248:

³⁶ «Հայաստանի և Հարավից շրջանների տեղանունների բառարան», կազմեցին՝ Թ. Հակոբյան, Աստ. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան, հ. 1-5, Եր., 1986-2001:

³⁷ ՀՀ ՊԿՊԱ, Փոնդ 93, ցուցակ 1, գործ 85, 86:

³⁸ Թոփչեան Ե., Արեքսանդրապոլի գավառ, «Աղբյուր», Թիֆլիս, 1896, 14-րդ տարի, N 7; Նիկողոսյան Ն., Վիճակագրական տեղեկություններ Արեքսանդրապոլի գավառի Հայրածառավորչականների մասին, «Մուրհ», Թիֆլիս, 1901, օգոստոս, N 8; Վանցյան Գ., Պատմական ակնարկ բաշաների անցյալից, «Մուրհ», Թիֆլիս, 1894, N 7-8:

խորհրդային և Հետիսորհորդային շրջանների պատմագիտական ուսումնասիրություններում։ Թեև Խ. Ավալալբեկյանի, Ա. Հայթյանի, Վ. Ռշտունու և մանավանդ Հ. Սարգսյանի, Վ. Խոջաբեկյանի, Զ. Կորկոտյանի և ուրիշների աշխատությունները³⁹ զգալի չափով լուս սփռեցին այս հիմնահարցերի պարզաբանման վրա, սակայն նվիրված լինելով ամբողջ Արևելյան Հայաստանի՝ ինդրու առարկա ժամանակաշատվածի էթնոգրությանը պարզական դրության ուսումնասիրությանը, Արևելյան Շիրակի հարցում տեղի են տվել նաև որոշ թվային անձտությունների։ Հետևաբար փորձել ենք ՀՀ ՊԿՊ արխիվի 93 ֆոնդում պահպող թիվ 85, 86, 87 և 109 գործերի⁴⁰ մեր կողմից անցկացված մանրակրկիտ ուսումնասիրությամբ աշխատանքում այս խնդիրներին տալ միանգամայն սպառչչ պատասխաններ։

Հետազոտվող թեմայի տեսանկյունից պատմագիտական գրականության մեջ և մամուլում բազմակողմանիորեն ուսումնասիրված կարելի է համարել թերևս միայն XIX-ր 30-ական թվականների վերջերից Արևելյան Շիրակի վարչական կենտրոն դարձած Գյումրի-Աղեքսանդրապոլի պատմությանը վերաբերող Հարցերը։ Այսպես, նորաստեղծ այս քաղաքի վարչատեղագրական ու ժողովրդագրական, ինչպես նաև ուսումնագրական ու սոցիալ-տնտեսական խնդիրներին դեռևս մինչ խորհրդային շրջանում բազմիցս են անդրադարձել ուսուական «Կովկաս», «Կովկասյան օրացույց» պարբերականները։ Օ. Կոնսուանտինովի, Ռուցելիչի և այլոց մի շարք Հոդվածներով, «Անդրկովկասյան բանբերը»՝ Վ. Պերեվալենկոյի, «Կովկասյան ալմանախը»՝ Ն. Լինստրոմի Հոդվածներով, ինչպես նաև բազմաթիվ այլ հանդեսներ ու պարբերականներ։⁴¹ Այս խնդիրների քննության առումով ուսուականից

³⁹ Ավալալբեկյան Խ., Հողային հարցը Արևելյան Հայաստանում, Եր., 1959; Հայթյան Ա., Հայստանի ուսուական վերաբնները 1830-1920թթ., Եր., 1989; Ռշտունի Վ., ՈՒրագանի Հայաստանի գյուղացիության պատմության, մաս Ա (1828-1870թ թ.), Եր., 1960; Խոջաբեկյան Վ., Հայաստանի բանկությունը և նրա զրագվածությունը, Եր., 1979; Կորիտյան Զ., Խորհրդավին Հայաստանի բնակչությունը վերջին Հարյուրամյակում (1831-1931), Եր., 1932; Սարկսյան Գ., Նаселение Восточной Армении в XIX-начале XXв., Ер., 2002.

⁴⁰ ՀՀ ՊԿՊ, գ. 93, գ. 85, 86, 87, 109:

⁴¹ Дневник офицера, состоящего в отряде, действующем на кавказско-турецкой границе. Отрывок 1, Лагерь под Александраполем, Кавказ, Тифлис, 1854, 16 июня, N 46; Диорье, Армяне в 1854 году, Кавказ, Тифлис, 1854, 20 октября, N 22; Александрапольский уезд, Кавказский календарь на 1899 год, отд. III, Тифлис, 1898; Армяно-Григорянские церкви Александрапольского уезда, Кавказский календарь на 1854 год, отд. III, Тифлис, 1853; Армяно-католические церкви в Закавказье и число их прихожан, Кавказский календарь на 1885 год, Тифлис, 1884; Александрапольский уезд, Кавказский календарь на 1855 год, Тифлис, 1854; Город Александраполь, Кавказский календарь на 1851 год, отд. III, Тифлис, 1850; Константинов О., Александраполь, Кавказский календарь на 1850 год, III, Тифлис, 1849; Руцевич, Статистические очерки

Հետ չի մնում նաև մինչվորհըրդային շրջանի հայ մամուլը. «Փորձ» և «Արարատ» հանդեսներում, «Արուրեան» և «Մեղու Հայաստանի» թերթերում Հրապարակված Ատրափետի, Ե. Գեղամյանցի, Հ. Խոջայանցի, Կ. Մատինյանի, Ալ. Միկիթարյանի, Շահենի, Գ. Տեր-Դավթյանցի ու Քաջբերունու Հողվածներն ու թղթակցությունները իրենց նշանակալի ավանդը բերեցին վերոհիշյալ Հարցերի համակողմանի արծարծման գործում:⁴² Սակայն Ալեքսանդրապոլի պատմությունն հիրավի բազմակողմանիորեն ուսումնասիրվեց միայն խորհրդային և հետիորհրդային շրջաններում ՀՀ ՊԿՊ Պատմության ինստիտուտի արխիվներում պահպող նյութերի,⁴³ Կ. Կողմոյանի, Հ. Գաբրիելյանի, Կ. Սեղբոյանի, Ա. Մաթևոսյանի, Վ. Հարությունյանի մենագրությունների⁴⁴ հիման վրա, նաև մի շարք պարբերականներում, Հայագիտական Հանդեսներում ու գիտական ժողովածուների էջերում լույս տեսած Խ. Ավետիսյանի, Մ. Դարբինյանի, Ա. Մաթևոսյանի, Ա. Հայրապետյանի, Հ. Կարապյոյանի, Մ. Դավոյանի, Մ. Նորյանի, Վ. Հարությունյանի, Ա. Մաթևոսյանի և այլոց՝ հարցի բազմաթիվ մանրամասներին նվիրված Հողվածների լույսի ներքո:⁴⁵ Եվ այսուհանդերձ, որոշ Հարցեր, կապված

некоторых городов Кавказа и Закавказского края, Кавказский календарь на 1852 год, отд. III, Тифлис, 1851; Переваленко В., Поездка в Александрополь, Закавказский Вестник, Тифлис, 1853, 22 января, ном. 4; Линстрем Н., Кавказский Альманах на 1904 год, Тифлис, 1903; Спасский-Автономов К., Второе посещение Арагата, Отечественные записки, т. 38, ном. 1-2, СПб., 1845.

⁴² Ատրափետ, Ալեքսանդրապոլի ապագան, «Ախուրեան», Ալեքսանդրապոլ, 1907, 30 հունվարի, N 3; Գեղամեանի Յ. Ախալցիխից մինչև Անի, «Փորձ», Տիֆլիս, 1880, ապրիլի, N 4; Խօջահանց Հ., Գիտմիթ, «Արարատ», Էջմիածին, 1871, թիվ թ.; Մատինեանց Կ., Ալեքսանդրապոլի վաճառականները, «Մեղու Հայաստանի», Թիֆլիս, 1874, 2 փետրվարի, թիվ 5; Միկիթարեանց Ալ., Ալեքսանդրապոլ, «Մեղու Հայաստանի», Թիֆլիս, 1873, 28 ապրիլի, N 15; Շահեն, Փողոցներ չունենք, «Մեղու Հայաստան», Ալեքսանդրապոլ, 1907, 16 փետրվար, թիվ 8; Տէր-Դավթեանց Գ., Ալեքսանդրապոլ, «Մեղու Հայաստանի», Թիֆլիս, 1873, 24 մարտի, թիվ 11; Քաջբերունի (Գաբրիել Հովհաննեսիս), Ալեքսանդրապոլից գետի Կարին, «Փորձ», Տիֆլիս, 1879, III տարի, մայիս, N 5:

⁴³ ՀՀ ՊԿՊ Փոնդ 125.ցուցակ 1.գործ 14-Ի մաս; ՀՀ ԳԱԱ Պի արխիվ, Ն. Նիկողոսյանի նյութեր, գ. 103; Ա. Թամրապամի նյութեր, գ. 103:

⁴⁴ Կողմոյան Կ., Լենինական, Եր., 1957; Գաբրիելյան Հ., Լենինական, Եր., 1944; Մեղրբոյան Կ., Արևեստավորական ավանդությունները և դրանց արտահայտությունները լինինականցիների կենցաղում, «Հայ ազգագրություն և բանահյուսություն», Հ. 6, Եր., 1974; Մաթևոսյան Ա., Գյումրիի ժողովրդական ճարտարապետությունը, Եր., 1985; Հարությունյան Վ., Գյումրիի ժողովրդական ճարտարապետությունը, Գյումրի, 1998; Նույնի, Գյումրին, Երա մարգիկ, սովորությունները, Գյումրի, 1996:

⁴⁵ Ավետիսյան Խ. Ա., Քաղաքների գարբագումը Սովետական Հայաստանի ներկա տարածքում 1828-1914թթ., ՊԲՀ, Եր., 1978, N 3; Դարբինյան Մ., Գյումրին Ալեքսանդրապոլ վերամանելու մասին, ԲՀԱ, Եր., 1981, N 2; Մաթևոսյան Ա., Լենինականի Հաստիագծումը և կառուցապատումը XVIII-XIX դր., ԼՀԳ, Եր., 1972, N 10; Հայրապետյան Ա., Գյումրի-Ալեքսանդրապոլ XIX դարի առաջին կեսին, ՀՀ ԳԱԱ ԵՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», Հաստոր 4, Գյումրի, 2001; Կարապյոյան

մասնավորապես քննության առարկա ժամանակաշրջանում Շիրակ գավառի արևելյան հատվածում քաղաք Հիմնելու պատճառների, նորաստեղծ քաղաքի անվանափոխության, հատակագծման, կարծ ժամանակահատվածում նրա տնտեսական արագ զարգացման հետ, կարիք ունեն նորովի լուսաբանման, ինչն էլ սույն աշխատության մեջ փորձել ենք իրավործել:

Գրքում արձարծված Հիմնահարցերի ուսումնասիրության համար բացի վերը Հիշված Հայ և օտարազգի պատմագիրների թողած Հիշողություններից, որ գերազանցապես վերաբերում են Շիրակ գավառի՝ մինչև XIX դարասկիզբն ընկած ժամանակաշրջանի պատմությանը, մեծարժեք սկզբնաղբյուրներ են Հանդիսացել Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի Փոնդերում պահպատկան այն բացառիկ կարևորություն ներկայացնող տասնյակ վավերագրերը, որոնք վերաբերում են Արևելյան Շիրակի XIX դամանավանդ առաջին երեսնամյակի պատմությանն ու ժողովրդագրական վիճակին: Մատենադարանի Կաթողիկոսական դիվանի, Ալեքսանդր Երիցյանի, Կարապետ արքեպիսկոպոսի, Ներսես Աշտարակեցու, Լազարյանների և Շահնիամթունյանի Փոնդերում պահպատկան այդ վավերագրերի չնորհիվ մեզ Հաջողվեց վեր Հանել տարածաշրջանում այդ ժամանակահատվածում տիրող ռազմաքաղաքական վիճակին, գավառի բնակավայրերին ու դրանցում առկա Հայ բնակչության թվաքանակին ու վիճակին վերաբերող բազմաթիվ փաստաթղթեր, գեկուցագրեր ու նամակներ՝ Հայացեագրված Կովկասյան Կորպուսի գլխավոր Հրամանատարությանը, Էջմիածնի Հայոց Կաթողիկոսարանին և այլոց: Դրանք Հետաքրքիր տեղեկություններ են պարունակում ինչպես գավառի տղյալ-տնտեսական վիճակի, այնպես էլ Հոգեւոր գործերի և մանավանդ գավառակենտրոն Ալեքսանդրապոլում եկեղեցաշինության, բնակչության ազգային կազմի, Էջմիածնի կառավարության տեղաշարժերի և այլ Հարցերի մասին: Այս Փոնդերում պահպատկան մի շարք վավերագրեր մեծ արժեք են ներկայացնում 1822-1823 թթ. և մանավանդ 1828-1831 թթ. գաղղթերին վերաբերող իրենց փաստաթղթերով, որոնցում մի շարք նոր մանրամասներ են բացահայտվում ուստական իշխանությունների կողմից Պարսկաստանի և Թուրքիայի Հայությանը գաղղթեցներու և վերջիններին մի ստվար զանգվածի՝ Արևելյան Շիրակում հաստատվելու կապակցությամբ:

Հետազոտվող թեմայի որոշ հիմնախնդիրների՝ արևմտահայության գաղղթի, գաղղթականների՝ Արևելյան Շիրակի տարածքում ըստ

Հ., Կումայրին ըստ սեպագիր և այլ աղբյուրների, ՇՊՄԾ Հանրապետական երկրորդ գիտաժողովի թեմպիներ, Գյումրի, 1996; Դավոյան Մ., Մեր քաղաքի անցյալից, «Բանափոր», Լենինական, 1978, 11 մարտի N 59; Նորյան Մ., Ականատենի վկայություն-Գյումրիի քաղաք 1817թ.-ին, «Բանափոր», Լենինական, 1978, 28 գեկտեմբերի, N 303; Հարությունյան Վ., Գյումրի-Ալեքսանդրապոլիս XIX դարում, «Բանափոր», Լենինական, 1978, 14 գեկտեմբերի, N 297; Մաթևոսյան Ա., «Ի մեծ գեաւազաքառագլուխությունը», «Բանափոր», Լենինական, 1979, 10 հոկտեմբերի, N 237 և այլն:

բնակավայրերի տեղաբաշխման, ինչպես նաև գաղթերից հետո մինչև XIXդ. 50-ական թվականներն ընկած ժամանակահատվածում գավառի բնակչության էթնոմուլտրագրական ու կրոնադավանաբանական վիճակների ուսումնասիրության Համար Հատկապես մեծ կարևորություն են ներկայացնում ՀՀ Պատմության կենտրոնական պետական արխիվի (ՀՀ ՊԿԱ) թիվ 47 (Եկեղեցական չափաբերական մատյաններ), թիվ 90 (Բացառապես գաղթերին վերաբերող փաստաթղթեր, զեկուցագրեր, նամակներ, Հանձնարարականներ և այլն) և թիվ 93 (Կամերալ ցուցակագրման ձեռագրեր) Փոնդերում պահպող ուշագրավ փաստաթղթերը: Մեզ Հետաքրքրող առանձին արխիվային նյութեր, կապված Ալեքսանդրապոլ քաղաքի XIX դարակեսի պատմության, վարչատեղագրական, ժողովրդագրական ու սոցիալ-տնտեսական դրության հետ, կան նաև ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի արխիվի Լեյլի, Ն. Նիկողոսյանի և Ա. Թամրազյանի փոնդերում պահպող փաստաթղթերում:

Աշխատանքի Համար Հատկապես խոչոր նշանակություն ունեն սկզբնաղբյուրի արժեք ստացած գրավոր առյուղները, մասնավորապես Կովկասյան Հնագրական Հանձնաժողովի կողմից հրատարակված և տարածաշրջանում դարասկզբին առկա ուսագմաքարաքական իրավիճակի ու էթնոտոպովրդագրական տեղաշարժերի ուսումնասիրության Համար առանձնակի կարևորություն ներկայացնող 12 հատոր արխիվային նյութերը,⁴⁶ Հայ ժողովրդի պատմության քննությանը վերաբերող վավերագրերի եռահամար եռահամար ժողովածուները, ինչպես նաև Օ. Եվլիցկու, Ն. Ֆլորովսկու, Ն. Վորոնովի և այլոց կողմից հրատարակված վիճակագրական նյութերն ու փաստաթղթերի ժողովածուները⁴⁸: Մինչև XIX դարակեսը տարածաշրջանում ընթացող ուազմաքարաքական ու սոցիալ-տնտեսական զարգացումների և Հատկապես էթնոտոպովրդագրական

⁴⁶ Акты собранные Кавказской Археографической Комиссией(АКАК), т. 1-12 Тифлис, 1866-1904.

⁴⁷ Собрание актов, относящихся к обозрению истории армянского народа, ч.1-3, М., 1833.

⁴⁸ Евницкий Орест, Статистическое описание Закавказского края, с присовокуплением статьи; Политическое состояние Закавказского края в исходе XVIII века и сравнение оного с нынешним, СПб., 1835; Обозрение российских владений за Кавказом, в статистическом, этнографическом, топографическом и финансовом отношении, ч. 1-3, СПб., 1836; Сборник сведений о Кавказе, т. 1, Тифлис, 1871; Сборник статистических сведений о Кавказе, издаваемый Кавказским отделом императорского русского географического общества, составил и издал Н. Воронов, т. 1, Тифлис, 1869; Свод статистических данных о населении Закавказского края, извлеченных из посемейных списков 1886г., Издан по распоряжению Главноначальствующего гражданской частью на Кавказе, Закавказским статистическим комитетом, Тифлис, 1893; Эриванская губерния, Военно-статистическое обозрение Российской империи, т. XVI, ч. 6, СПБ., 1853.

տեղաշարժերի ուսումնամիջության տեսանկյունից կարևորություն են ներկայացնում նաև Ծ. Աղայանի խմբագրությամբ ՀՀԳԱԱ. Պատմության ինստիտուտի հրատարակած «Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին»⁴⁹ և «Արևելյան Հայաստանի սոցիալ-քաղաքական և տնտեսական դրությունը Ռուսաստանի հետ միավորվելուց հետո»⁵⁰ խորագրերը կրող փաստաթղթերի ու նյութերի ժողովածուներն ու 1828-1831 թթ. պարսկահպատակ Հայերի և արևմտահայերի գաղթերի վերաբերյալ Մ. Դարբինյանի⁵¹ ու Մ. Խաչարյանի⁵² կողմից գիտական շրջանառության մեջ դրված նյութերը:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԱՐԵՎԵԼՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՎԱՐՉԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՄԻՆՉԵՎ ՀԻՆՉ ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԵՐԵՄՆԱՍԹԱԿԻ

Ա) Պատմաշխարհագրական ակնարկ

Շիրակ պատմական գավառի Փիզիկա-աշխարհագրական դիրքի վերաբերյալ առաջին հանգամանալի տեղեկությունը տալիս է VIII դարի «Աշխարհացույցը»⁵³, ըստ որի Շիրակը Այրարատ նահանգի 8-րդ գավառն էր՝ 3730 կմ քառ. տարածքով: Նրան հարևան էին՝ արևմուտքում Վանանդի, Հարավում՝ Արշարունիքի (Երասխաձոր), արևելքում՝ Նիգի, Արագածոտնի, Վերին Տաշիրի և Հյուսիսում՝ Աշոցքի գավառները:⁵⁴ Գավառի բնական սահմաններն անցնում էին արևմուտքում՝ Ախուրյան և Կարս գետերի ջրբաժանով, Հյուսիսում՝ Մեծ Աղքարալեռնազարդարթով՝ հասնելով մինչև Ղըզըր-Դաղ (Կարմիր սար), Ախուրյան գետ և Փամբակի լեռնաշղթա: Արևելքում գավառի սահմանը

⁴⁹ Присоединение Восточной Армении к России, Сборник документов, т.1-2, ред. Ц. Агаян, Ер., 1972-1978.

⁵⁰ Документы и материалы по истории армянского народа. Социально-политическое и экономическое положение Восточной Армении после присоединения к России (1830-1870), Ер., 1993.

⁵¹ Дарбинян М., Новые документы о переселении персидских и западных армян в 1828-1830 гг., ԲՀԱ, Եր., 1977, N 3; Դարբինյան Մ., Նոր վավերագրեր պարսկահայերի և արևմտահայերի 1828-1830 թթ. գաղթի վերաբերյալ, ԲՀԱ, Եր., 1973, N 2:

⁵² Խաչարյան Մ., Պարսկահայերի ներգաղթի կազմակերպումն ըստ ժամանակի փաստաթղթերի, ԼՀԳ, Եր., 1978, N 10:

⁵³ Տե՛ս Երեմյան Մ., Հայաստանն ըստ «Աշխարհացույցի», Եր., 1963, Էջ 73:

⁵⁴ Ալիշան Ղ., Շիրակ, Կենեսիկ, 1881, Էջ 1:

Ախուրյան, Փամբակ և Ղազախ գետերի ջրբաժանն էր, ինչպես նաև Քեփենելի (Քյափանակ) լեռնագագաթները, Ղղլղաթը (Շարայի լեռ) և Արագածի Հրաբխային ձագարը, իսկ Հարավում այդ ասհմանը ձգվում էր Արագածից մինչև Թոփ-քար (Գնդաքար), ապա Ղարախ-Թափայով հասնում էր մինչև Անձավիգուլս, որից հետո, բարձրանալով արև-մուտք, կիսում է Ախուրյանը Տեկոր և Երասիս գետերի ջրբաժանով⁵⁵: Գավառի ամենամեծ գետը՝ Ախուրյանը, սկիզբ է առնում Արփա լճից և կմաերով Շիրակի սարահարթը երկու մասի՝ Երվանդաշատ քաղաքի մոտ թափվում Արաքս գետը: Շիրակի տարածքում են գտնվում Ախուրյանի վտակներ Տեկորը, որ սկիզբ է առնում Գյումրի, Զիթթար լեռներց և Չորրուն՝ Նալբանդ ու Կոտիկ լեռներից: Շիրակի հողածածկույթը մետահողային է՝ նստած Հրաբխային տուֆի վրա, իսկ որոշ շրջաններում (Զազուռի բարձրավանդակի թեքություններ) ընդհանրապես հողային շերտը բացակայում է: Ինչպես անցյալի, այնպես էլ ժամանակակից մի շարք տեղեկագրական աղյուղներում նշվում է, որ իրեւ Հայկական լեռնաշխարհը բնութագրող շրջան, գավառն ունի մեծամասամբ փոքրասիական, կովկասյան և մասամբ էլ իրանական բուսական ու կենդանական աշխարհ՝ իր լեռնային տեղանքով պայմանավորված հանդարատ կիրած:

Բնականաբար լեռնային տեղանքն ու կիման գեռ հնագույն ժամանակներից որոշիչ գեր են ունեցել պատմական գավափի տարածքում մարդկային բնակավայրերի ի հայտ գալու, ինչպես նաև տնտեսության տարրեր ցուղերի ձևավորման և զարգացման մեջ:

ՈՒսումնասիրողների հավաստմամբ՝ տուաշին այդպիսի բնակավայրերը պատմական գավառի տարածքում վկայվում են գեռևս մ.թ.ա. III հազարամյակից (Քեմի, Ամասիա, Կառնուտ, Հառիճ, Հոռոմ, Սպանդարյան և այլն):⁵⁷ Ստուգապես հայտնի է նաև, որ մ.թ.ա. X-VIII դդ. այս տարածքում ապրել են մի քանի ցեղամիություններ, այսպես կոչված «երկրներ», որոնցից Կալխաննեին ուսումնասիրողները հատկացնում են ներկայիս Արթիկի շրջանի տարածքը, Ալտուփիննեին՝ Ախուզյանի արևմտյան ափի, Անիշտեղային՝ Արաքսի հուսկասային ափի տարածքները, Կորիքաննեն տեղադրում է այժմյան Անիի շրջանում, Գոլուտախեն՝ Ախուզյանի արևելյան ափին: ⁵⁸ Հիմնըգեղով Խորիսորյան և Սարդուրյան տարեգործությունների ընձեռած փաստերի վրա՝ Հայ և

⁵⁵ Магакян А. К., Растительность Армянской ССР, М., 1941, стр. 13.

⁵⁶ Магакян А. Г., Гаспринский Армянского ССР, Еր., 1941, стр. 16.
 «Տեղապահմիկն Ծիրակաց աշխատավիրեալ ի Պողոս Վարդապետի Պարույրն,
 «Արարատ», 3-րդ տարի, Եջմիածին, 1870, էջ 20-21; Խաչագրян Т., Древняя культура Ширака, Ер., 1975, стр. 8.

⁵⁷ Авагян Л., Четвертичные ископаемые млекопитающие Армении, Ер., 1953, с. 11.

⁵⁸ Հմայական Ս., Շիրակը Լուշա-Կատարգա-Վիսերուկի դաշնության կազմում, Շիրակի պատմամշակութային ժառանգությունը, Հանրապետական առաջին գիտաժողովի թեմսներ, Գյումրի, 1994, էջ 22:

այլագգի պատմաբանները Պատմական Շիրակն առաջնահերթուն նույնացնում են Էրիախի կոչվող երկրի կամ իշխանության հետ:

Այս հարցում վճռորոշ նշանակություն է ունեցել, մասնավորապես, Արգիշտի Ա. (մ.թ.ա. 786-764 թթ.) ուրարտական թագավորի արշավանքներից մեկի արձանագրությունը (մ.թ.ա. 775 թ.),՝ թողնրված Գյումրուց 8 կմ դեպի Հյուսիս-արևմտաւք գտնվող Մարմաշեն գյուղից ոչ հեռու՝ Ակսուզյան (Արփաչայ)գետի ձախ ափին: Այդ արձանագրության մեջ հիշատակվում է Էրիախի երկրը, որ ընկած է Կատարգա, Գուլուտախի և Ոհիտերուխի երկրների միջև, Աբելիանիից (Աբեղյանք-Ա.Հ.) ոչ հեռու, Էթիունիի հարեանությամբ: Հետազոտողներն այն կարծիքին են, որ այդ տարածքն ամենից ավելի համապատասխանում է ներկայիս Գյումրուն և նրա շրջակայքին:⁵⁹

Առաջին պատմական տեղեկությունը, որ Էրիախի-Շիրակի մասին տալիս են ուրարտական սեպագիր աղբյուրները, թվագրված մ.թ.ա. 785 թվականով: Խոսքը գնում է Արգիշտի Ա.-ի մի արձանագրության մասին, որը պատմում է Էթիունի ցեղամիության դեմ նրա պատժից արշավանքի մասին: Այդ արձանագրությունը խնդրո առարկայի քննության տեսակետից կարևոր ենք Համարում մի քանի առումներով: Նախ, գրանում վկայելով, որ գրավել է Լուշա, Կատարգա, Էրիախի, Գուլուտախի, Ոհիտերուխի երկրները և հասել մինչև Աբունի երկիրը՝ Արգիշտի Ա-ն գրավված երկրների անունների հաջորդական թվարկմամբ՝ գծել է ուրարտական գորքերի շարժի ուղին, որոնք ձորովի ավագանով շարժվել են դեպի Հյուսիս-արևելք, ապա Լուշա և Կատարգա երկրներով հասել Զլդըր լճի հարավային ափերին, որտեղոց էլ մուտք են գործել Էրիախի-Շիրակի տարածք (Դրանից հետո նոր Ախուրյանի ձախ ափով իջել են Հարավ մինչև այդ գետի՝ Արաքսին միախառնվելու տեղը, ապա անցնելով Արաքսը, ուղղություն են վերցրել դեպի հարավ-արևմուտք և ներխուժել Արաքսի աջ ափին գտնվող Ոհիտերուխի երկիրը): Երկրորդ եթե Լուշա, Կատարգա, Ոհիտերուխի երկրները ուրարտացիներին հայտնի էին գեռաւ Սենուա Ա.-ի (մ.թ.ա. 810-786 թթ.) ժամանակներից, ապա Էրիախիի մասին առաջին անգամ հիշատակվում է ավելի ուշ, միայն Արգիշտի Ա.-ի սույն արշավանքի հետ կապված: Երրորդ, որ պակաս կարևոր չէ, հիշյալ արձանագրությունում Էրիախին նշվում է որպես Արգիշտիի կողմից գրավված երկիր ի թիվս Լուշայի, Կատարգայի և այլոց: Հետևաբար, պետք է ենթագրել, որ ամենայն հավանականու-

⁵⁹ Արտօնյան Հ., Տոպոնոմիկա Որարտу, Եր., 1985; Պուտրովսկի Բ., Վանսկое царство (Որարտу), Մ., 1959; Կապանյան Գր., Историко-лингвистическое значение топонимики древней Армении, «Գիտական աշխատություններ», Հ. XIV, Եր., 1940:

⁶⁰ Գարբրիելյան Հ., Լենինական, Եր., 1984, էջ 7:

⁶¹ Արտօնյան Հ., Բայնուլի (Որարտу), Военно-политическая история и вопросы топономики, Ер., 1970, стр. 189-191.

թյամբ մ.թ.ա. VIII դ. սկզբներին էրիախի-Շիրակը ունեցել է ինքնուրույն ցեղասպառության կարգավիճակ:

Ենթադրվում է, որ Արգիշտի Ա-ի վերոհիշյալ արշավանքը լիովին չի ծառայել իր նպատակին, որովհետև հենց նույն մ.թ.ա. 785թ. նա մի նոր արշավանք է ձեռնարկել Հյուսիսային շրջանների (դրանց թվում նաև Էրիախիի) դեմ: Տարով Արգիշտի Ա-ի դեպքի Հյուսիսային շրջաններ կատարած նոր արշավանքի երթուղու համառոտ նկարագրությունը՝ Ն. Հարությունյանը հանգում է այն եղրակացության, որ «ուրարտական զորքերը մարտերով անցել են մի քանի հարյուր կիլոմետր և այդպիսով ասպահովել են Ոիրարտու-Բիամնիլիի տիրապետությունը Հյուսիսի և Հյուսիս-արևմուտքի մի շարք երկրների վրա»⁶²: Այսինքն Արգիշտի Ա-ի երկրորդ արշավանքը դեպքի Հյուսիս այս անդամ լիովին ծառայել է զրավված տարածքները Հնագանդեցներու նրա նպատակին: Այս մասին է խոսում նաև Հիշատակությունը այն հսկայական ավարի և գերիների, որոնց մասին վկայված է արձանագրության մեջ (Զնայած Գյումրուց ոչ հեռու, այժմյան Մարմաշենի մոտ թողնված վիմագիրը այս արձանագրության մեջ չի նշված արքայի անունը, սակայն, հետագոտողների կարծիքով՝ կասկած չի հարուցում, որ խոսքը վերաբերում է Արգիշտի Ա-ին, որովհետև մյուս Արգիշտին Հյուսիսային տարածքների գրավմամբ չի գրավվել):

Դրանից հետո 11 տարի վերոհիշյալ Հյուսիսային երկրները և դրանց մեջ նաև Էրիախիին, զերծ մնաց ուրարտական նոր արշավանքներից և նույնիսկ փորձ էր անում վերականգնելու իր ինքնիշխանությունը: Դրա պատճառն այն էր, որ ինչպես նշում է Ն. Հարությունյանը, Արգիշտի Ա-ն այդ շրջանում ամբողջովին զբաղված էր իր հսկայածավալ տերության հարավ-արևելքի ինտիրներով, որոնք լուծերուց հետո «կրկին զբաղվում է Հյուսիսային շրջանների (երկրների)» նվաճմամբ:⁶³ Խորիսորյան տարեգրության XIII տարվա (մ.թ.ա. 774 թ.) տվյալներով՝ այս անդամ նա գրավում է Էրիախին և Կատարգան՝ հասնելով Իշկիգուրու երկիրը⁶⁴: Դրանից հետո դեպքի Էրիախի Արգիշտի Ա-ի նոր արշավանքների մասին ոչինչ հայտնի չէ: Մնում է ենթադրել, որ մինչև իր մահը նա այլևս դրա անհրաժեշտությունը չի ունեցել:

Մ.թ.ա. 764 թ.-ին ուրարտական գահն անցնում է Արգիշտի Ա-ի որդուն՝ Սարգուրի Բ-ին (մ.թ.ա. 764-735 թթ.): Վերջինս մ.թ.ա. 751-750 թթ. որոշ քայլեր ձեռնարկում է իր պետության սահմաններն ընդայնելու ծալրագույն Հյուսիսում և Հյուսիս-արևելքում նվաճնելով՝ Արելյանին (Արելյանք), Կուլսան (Կոլսիդա), Խուչանին: Իսկ արդեն հաջորդ տարում, ամենայն հավանականությամբ նկատի ունենալով, որ

⁶² Արցունյան Հ., նշվ. աշխ., էջ 197:

⁶³ Նույն տեղում, էջ 233:

⁶⁴ Տե՛ս նույնի, Խօհօքական լետոնիս Արշակունյաց 1-րդ, ԷԲ 7, 1953, ԱԿՀ, տեքտ 127.

խաղաղ գոյության ավելի քան երկու տասնյակ տարիները թուլացրել են՝ ՈՒրարտուկ գիրքերն էրիախիում, Սարդուրի Բ-ն վերագրավում է այն⁶⁵, իր արշավանքը նկարագրելով հետևյալ կերպ. «Արշավեցի Էրիախի, մեկ օրվա ընթացքում էրիախի երկիրը ես գրավեցի,...մարդ, կին գերի տարա, տափարը քշեցի տարա: Քաղաքներն այրեցի, երկիրն ավերեցի...»⁶⁶: Հաստ Սարդուրյան տարեգրության՝ դեպի էրիախի Սարդուրի Բ-ն կատարել է 8 (կամ 6) արշավանքներ, որոնցից միայն չորսի նկարագրություններն են հասել մեզ: Այդքանն էլ բավական է եղրակացներու համար, որ երկրի հյուսիսում ուրարտական տիրապետությունը շարունակում էր մնալ բավականին անհաստատ, և նույնիսկ Սարդուրիի դաժանագույն պատժամիջոցները, բնակչության մեծաթիվ գերեվարումները, հսկայական ավերն ու թալանը «չեն կարողանում վերջնականորեն հնագանդեցնել էրիախին, և որ այդ երկրի համար ուրարտացիները դեռևս շատ կատաղի կոփիներ պիտի վարեին»⁶⁷: Հավանաբար Սարդուրի Բ-ի երկրորդ արշավանքը դեպի էրիախի տեղի է ունեցել մ.թ.ա. 749-747 թթ. արանքում, երրորդը՝ 745թ. կամ գուցե մի փոքր ուշ: Սրանց հետևանքը եղավ այն, որ էրիախին ամբողջությամբ մտցվեց Վանի թագավորության կազմի մեջ, ուրարտական իշխանության ամրապնդման նպատակով երկրում կառուցվեցին ամրոցներ, թողնվեցին կայազորներ: Այնուամենայնիվ Սարդուրի Բ-ին չհաջողվեց ամբողջությամբ և վերջնականապես իրեն ենթարկել էրիախին: Այդ է վկայում Սարդուրիի հաջորդ և վերջին արշավանքը դեպի էրիախի մ.թ.ա. VII դարի 40-ական թվականների ավարտին: Հարավում Ասորեստանի հետ մղվող պատերազմներից անընդհատ թուլացող ՈՒրարտուկ համար անչափ կարենոր էր իր գերիշխանության տակ պահել գոյն հյուսիսում զավթած իր երկրները: Ասորեստանին անցած հարավային տարածքների կորուստը Սարդուրի Բ-ն փոխարինեց դեպի հյուսիսային երկրներ կատարած մի քանի պատմիչ արշավանքներով⁶⁸: Ի դեպ, այս վերջին արշավանքի ուազմավարը իր հսկայական չափերով «պիտում է միայն Խորխորյան տարեգրության երկրորդ տարվա (մ.թ.ա. 785թ.) և Սարդուրյան տարեգրության մ.թ.ա. 751-750 թթ. տվյալներին, իսկ ինչ վերաբերում է հյուսիսային շրջաննե-

⁶⁵ Սարդուրյան տարեգրության իրագարձությունների ժամանակագրական կարգ մասին տե՛ս Մելիկանիլ Գ., Ուրարտական կլինոօբրազնական նամակների ժամանակագրական անցած ժամանակաշրջանի անձնագիրը, Երևան, 1960, էջ 230.

⁶⁶ Հմայակյան Ա., Էրիախին ասովածապետություն, Շիրակի պատմամշակութային ժառանգությունը Հայաստանական երկրորդ գլուխողովի թեզիսներ, Գյումրի, 1996, էջ 12-13:

⁶⁷ Արդյունյան Հ., նշվ. աշխ., էջ 258:

⁶⁸ Մելիկինիլ Գ., Ուրարտական կլինոօբրազնական նամակների ժամանակագրական անցած ժամանակաշրջանի անձնագիրը, Երևան, 1970, էջ 258.

բից (նաև Էրիախիլից- Ա.Հ.) քշված անասունների գլխաքանակին, ապա այն իր նախաղեղպր չունի ամբողջ ուրարտական տարեգրության մեջ»⁶⁹:

Սարդուրի Բ-ի գահակալման վերջին տարիների ռազմական իրադարձությունները լուսաբանող տարեգրության հատվածները մեզ չեն հասել: Հետեւաբար անհնար է որոշակի պատկերացում ունենալ այս թագավորի օրոք Էրիախի կատարված նոր արշավանքների մասին: Այնուհետև Պատմական Շիրակի մասին տեղեկություններ չկան՝ մինչև մ.թ. V դարը:

Մի փոքր շեղվելով պատմության ժամանակագրական շարադրման ընդունված կարգից՝ Շիրակ գավառի այդ շրջանի պատմությունը տանը ըստ Կամսարական և Բագրատունյաց նախարարական տների վերաբերյալ գրավոր աղյուրների տեղեկությունների:

Հատ Մ. Խորենացու՝ Շիրակ գավառի անունը գալիս է Արամայիս նահապեսի որդի Շարայից, որին «...պողովածին և զշատակեր, առաքչ ամենայն աղիխիւն ի դաշտն մի մօտաւոր, արգաւանդ և բերրի, յորում գնան ջուրք ոչ սակաւք, ի թիկունս հիւսիսոյ լերին, որ անուանեցաւ Արագած»⁷⁰: Մ. Խորենացին պատմում է նաև Շիրակը Տրդատ Գ-ի կողմից Կամսարականներին նվիրելու մասին, որ ծագումով Կարենի Պահապ տոհմից էին և սկզբնապես ապրում էին Պարսկաստանում: Երբ, սպանելով Արտավան Ե-ին, Սասանի որդի Արտաշիրը գարձակ թագավոր (մ.թ. 227 թ), պահապավան երկու ցեղերը՝ Ասպահապետի ու Սուրենի Պահապիները, Հոժարությամբ ընդունեցին նրա իշխանությունը, իսկ երրորդ ցեղը՝ Կարենի Պահապը, դիմագրեց Արտաշիրին և այդ պատճառով վերջինիս կողմից կոսորդվեց⁷¹: Ամբողջ ցեղից կենդանի մնացած Պերոպամատ անունով միակ երեխան Կամսարական տոհմի նախնին եղավ: Սրա Կամսար որդուն Տրդատ Գ-ն բերելով Հայաստան, մկրտեց Գրիգոր Լուսավորչի ճեռքով և նվիրեց Երամիսաձոր ու Շիրակ գավառները⁷²: Որոշ ժամանակ անց Երամիսաձոր գավառն ի պատիվ Արշավիր Կամսարականի վերանվանվեց Արշարունիք⁷³, մինչդեռ երկրորդ գավառի անունը չփոխվեց, և Կամսարականներն ի սկզբանե պահպանեցին իրենց «Տիարք Շիրակայ» կոչումը⁷⁴: Ա. Կողյանը այս մասին գրում է. «Գավառի նոր տերերը չփոխեցին գավառի անունը:

⁶⁹ Արյունյան Հ., Զեմլеделие и скотоводство Урарту, Еր., 1964, стр. 194.

⁷⁰ Խորենացի Մ., Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1910, էջ 39-40:

⁷¹ Կողեան Ա., Կամսարականներու ծագումը, «Հանդես ամսօրեայ», թիւ 3-4, Վիեննա, 1924, էջ 125; Հիբրաման Հ., Հայոց տեղոյ անունները, «Հանդես ամսօրեայ», թիւ 12, Վիեննա, 1905, էջ 378:

⁷² Խորենացի Մ., նշվ. աշխ., էջ 247; Ինֆեյան Ղ., Հնախոսութիւն աշխարհագրական Հայաստանեաց աշխարհի, հ. 1-3, Վենետիկ, 1835-Ռ-Մ-Չ, էջ 174:

⁷³ Քաջունի Մ., Աշխարհագրութիւն Հին և Նոր Հայաստաննեաց, Վենետիկ, 1857, էջ 141-142:

⁷⁴ Գևորգյան Մելիքսեղեկ, Համառու տեղագրություն Հնությանց Մեծին Շիրակայ և Մարտաքարագին Անդոյ, Ամբքանդրապոլ, 1903, էջ 10; Մինաս Վարդապետ Համեղյուց, Ազգաբանութիւն Հայոց, Վաղարշապատ, 1870, էջ 4:

Շիրակն իր անունով այնքան էր հրռչակված, որ գրվել էր նաև հարավում Աղձնյաց մեջ իրբունոր Շիրակ կամ նոր Շիրական»⁷⁵:

Շիրակի ու Արշարունիքի վրա Կամսարականների ալիրապետությունը տևում է մինչև VIIIդ., երբ պայմանավորված տարածաշրջանի ռազմաքաղաքական իրավիճակով, այս գավառները Կամսարականների կողմից վաճառում են Աշոտ Մսակեր Բագրատունուն:

Բագրատունիները այս գավառներում նեղվում էին արար գորավար Զահապից, որ գրավելով Արշարունիքի մի մասը, պատրաստվում էր զավթել այն ամբողջությամբ, չունենալով վերոհիշյալի համար թույլտվություն ոչ խալիքից, ոչ էլ Դվինում նստող Էրմինիայի ստիլանից: Օգտվելով դրանից՝ Բագրատունիները հարձակվում են նրա վրա և վտարում իրենց տիրույթներից: Այդ մասին Վարդան պատմիչը հիշում է. «...եկեալի ի կողմամբքն Շիրակայ՝ հարին զօրոսն Խմայիի՝ որ անդ, եւ գրաւեցին յինքեանս զՇիրակ և զԱշոցք և զգաւառն Տայոց»⁷⁶: Այս նույն դեպքերը նկարագրելիս՝ Ղ. Ալիշանը Հիշատակում է նաև Բագրատունիների ինչ-ինչ «բազում գանձերի» մասին. «Աշոտ Մսակեր պետ Բագրատունեաց, որ գանձագին արար ի Կամսարականաց զերկիր նոցա Արշարունիս և զՇիրակ, և զմասն մի սորա թափեաց զինու զօրութեամբ յԱրաբացւոց, առաջին յետ բազում դարուց նորոգեալ երեկի ամրին Անոյ յելս Հ գարու, ուր և հաստատէ զբնակութիւն իւր»⁷⁷: Այս «բազում գանձերի» մասին ալիսարկում է նաև Մ. Զամշյանը. «... ետուն գանձ բազում ի Կամսարականս, և գնոյ ատին ի նոցանէ զայն գաւառ. ուր և նորոգ շինեալ Աշոտոյ զերկրորդն Անի, որ յատաջն էր աւան փոքրիկ, բնակեցոյց ի նմա զբնտանիս իւր»⁷⁸: Վերոհիշյալ կարծիքները Թ. Հակոբյանին թույլ են տալիս իրավացիորեն մերժելու հայ պատմագրության մեջ արմատացած այն տեսակետը, որի համաձայն Բագրատունիները Կամսարականներից ուղղակի գնել են Արշարունիքի ու Շիրակի գավառները :

Իրոք, հայտնի է, որ արաբական տիրապետության ողջ ժամանակաշրջանից Հայաստանում նմանատիպ այլ գործարքներ հիշատակված չեն: Հայտնի է նաև, որ խալիքայության նվաճած բոլոր երկրները թեկուց և ձևականորեն, բայց համարվել են խալիքի սեփականություն:⁷⁹ Հետևաբար դժվար է համաձայնվել այն մտքի հետ, որ Բագրատունիները խալիքի սեփականություն հանդիսացող տարածքները

⁷⁵ Կոփեան Ա., Կամսարականները «Տիարք Շիրակայ և Արշարունեաց», Վիեննա, 1926, էջ 31-32:

⁷⁶ Վարդան Վարդապետ, Հաւաքումն պատմութեան լուսաբանեալ, Վենետիկ, 1862, էջ 76:

⁷⁷ Ալիշան Ղ., նշվ. աշխ., էջ 37:

⁷⁸ Զամշյան Միքայել, Պատմութիւն Հայոց, հ. Բ, Վենետիկ, 1875, էջ 415:

⁷⁹ Արաբական աղբյուրները Հայաստանի և Հարեւան երկրների մասին, Յակուտ ալ-Համազի, Արտվ-Ֆիդա, իրն Շաղդադ, կազմեց՝ Հ. Թ. Նալբանդյանը, Եր., 1965, էջ 132:

թեկուզեմ «բազում գանձիւք» կարող էին գնել Կամսարականներից։ Ավելի հավանական է այն, որ Բագրատունիները նախապես վերոհիշյալ տարածքները գենքի ուժով ազատել են արար զորավար Զահավից և դրանից Հետո միայն նախկին տերերին՝ Կամսարականների ժառանգներին հատուցել «գանձիւք»։

Ի տարբերություն Կամսարականների, Բագրատունիները հենց ձեռք բերման օրվանից մեծ ուշադրություն են դարձնում Շիրակին։ Դրա վկայությունն է նաև այն, որ գեռևս Աշոտ Ա. թագավորից (885-890 թթ.) առաջ, Աշոտ Մասկերի որդին՝ Հայոց սպարապետ Սմբատ Խոստովանողը, իր համար աթոռանիստ էր գարձել Շիրակի ամենաամուգ բերդը՝ Անին⁸⁰։ Բագրատունիների և մանավանդ Գագիկ Ա. թագավորի օրոք Շիրակը, որպես Անի-Շիրակի թագավորության կենտրոն (թագավորություն, որն ըստ Ստ. Օրբելյանի⁸¹ և Մտեփանոս Տարոնեցու (Ասողիկ)⁸² X-XI դդ. ուներ մոտ 50000 կմ քառ. տարածք և շուրջ 1000000 բնակիչ) հասավ իր տնտեսական և ռազմական բարգավաճման բարձրակետին։ Բնականաբար, Գագիկ Ա.-ի արտաքին և ներքին քաղաքականության մեջ ունեցած հաջողությունները լուրջ մտահոգություն էին առաջացնում Բյուզանդիայում։ X դ. վերջերին և XI դ. սկզբներին բյուզանդացիներն արդեն գրավել էին Բարձր Հայքի մեծ մասը, Տայքը և Վասպուրականը։ Բագրատունիների թագավորության շուրջը Բյուզանդիայի օղակումը ուժեղանում էր նաև Հայերի մեջ գոյություն ունեցող տարածայնությունների պատճառով։ Արդեն Գագիկ Ա.-ի մահից Հետո Բագրատունյաց գահը գտանում է կովախնձոր Երկու եղբայրների՝ Հովհաննես-Սմբատի և Աշոտ Դ.-ի միջև։ Արդյունքում կնքվում է պայմանագիրը, ըստ որի Երկիրը բաժանվելու էր Երկու մասի և վերամիավորվելու էր Հովհաննես-Սմբատի մահից հետո։ Ընդ որում, վերջինիս բաժին էին ընկել Անի մայրաքաղաքը, Շիրակը, Արարատյան դաշտը, Աշոցաց ձորը, Ամբերդը, Կալան և Կայծոն բերդերն ու Տավուշի գավառը, իսկ մնացած Հողերը, կամ այսպես կոչված՝ «գրսի աշխարհը», որ սահմանակից էր Պարսկաստանին և Վրաստանին, անցնում են Աշոտ Դ.-ին։ Այս պայմաններում թուզակամ Հովհաննես-Սմբատը կազմում է մի կտակ, որով իր մահից Հետո Անի քաղաքն ու նրա շրջակայքը հանձնվում էր Բյուզանդիային։ Վերջինս էլ բոնությամբ տիրանալով Անիին (1045 թ.)՝ դարձնում է այն կատապանության կենտրոն։⁸³ Բյուզանդիան գրավված Հայկական շրջաններում վարում էր ժողովրդին կեղեքելու և նրան դիմադրելու հնարավորությունից զրկելու քաղաքականություն, քայլայտում, թուլացնում էր Հայերի ուազմական ուժը՝ աչքի

⁸⁰ Ավշան Ղ., նշվ. աշխ., էջ 37։

⁸¹ Օրբելյան Ստ., Պատմութիւն նահանգին Արևական, Թիֆլիս, 1910, էջ 300; Հակոբյան Վ., Մանր ժամանակագություններ, Հ. Ա., Անսանուն ժամանակագություն (դարը՝ ?), Եր., 1951, էջ 384։

⁸² Մտեփանոս Տարոնեցի Ասողիկ, Պատմութիւն տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885, էջ 256։

⁸³ Հայ ժողովրդի պատմություն, ՀԽՍՀ ԳԱ հրատ., հ. Գ., Եր., 1976, էջ 429։

ընկնող զինվորականներին պաշտոններ տալով Հայաստանից հեռու փայլերում։ Բյուզանդական իշխանությունները անընդհատ ծանրացնում էին Հարկերը և փորձում վերացնել Հայկական եկեղեցու ինքնուրույնությունն ու այն ենթարկել իրենց։ Սակայն նման քաղաքականությունը բարորպին էլ չամրապնդեց Բյուզանդիայի գիրքերը տարածաշրջանում, և արդեն XI դ. կեսերին Հայաստանը, որ փաստորեն գտնվում էր թույլ ու անպաշտպան վիճակում, անկարող եղավ գիմազրիկ Կովկաս ներթափանցած նոր թշնամու՝ սեղուկ-թուրքերի հարձակումներին։ Գրավելով Պարսկաստանը՝ վերջիններս մի քանի արշավանքներով (1048, 1049, 1054 թթ.), ներխուժեցին նաև Հայաստան, կողոպտեցին մի քանի գավառներ, կոտորեցին ու գերի տարան հազարավոր մարդկանց, իսկ արդեն XI դ. կեսերից ձեռնարկեցին նաև ամբողջ Հայաստանի նվաճումը։ 1064 թ. սեղծովյան արշավանքի մասին Աս. Օրբելյանը գրում է. «...առին և զԿարս, առին զբուր գաւառն Շիրակայ և Վանանդայ և Արշարունեաց և զԱրարատյան և զՄիսական աշխարհս և զԲաղացն և զամենայն երկիրս մինչ ի գուռն Տփղեաց»⁸⁴։ Այս արշավանքին մասնակցած Գանձակի Աբովյանի էմիրը 1072 թ. Ալփ-Ալվանից գնում է ավերպած Անին ու տալիս իր որդուն՝ Մանուչիրն։ Սրանով սկսվում է Շաղդաղյան տիրապետության շրջանը Անիում, որ որոշ ընդհատումներով տևում է 125 տարի։

Անիի Շաղդաղյան առաջին էմիր Մանուչիր վարում էր Հայամետ քաղաքականություն։ Մինչդեռ նրա որդին՝ Աբովյանի թ-ն (մոտ 1118-1124 թթ.), մի տկար ու վախկոտ մարդ, չխարողանալով կառավարել և տեսներով, որ Գանձակի Սեղծուկ Մելիք Տուղրի Շահը գրավել է Շիրակի մի մասն ու սպառնում է Անիին, որոշում է 60000 դինարով այս վաճառել Կարսի ամիրային⁸⁵։ Տեղեկանալով այս մասին՝ անեցիներն ապստամբում են ու դիմում Վրաստանի օգնությանը։ Ժամանակակիցը 1123 թ. օգստոսի 20-ին անեցիների՝ Վրաց թագավորին ներկայանալու մասին հիշում է. «Տարակուսեալ տառապեալ բնակիչք քաղաքիս Անույ և Շիրակ գաւառի՝ խորհեցեալ ելս գտանել մրրկին ձեռն տալով յարքայն Վրաց ի Դաւիթ, նենքեցին ամիրային Աբովյանը»՝ որդույ Մանուչիր, որ տիրէր քաղաքին յետ հօրն մահու, առնելով զթագաւորն ի ներքս՝ բանալով զդրունս քաղաքին, որ ընդ մտանելն առ ժամայն, եղել վնաս արեան և ոչ միոյ չնչոյ»։⁸⁶ Անին ազատազրում է 1174 թ. և արդեն վերջնականորեն՝ 1199 թ. Հայ-վրացական բանակին հաջողվում է 1196-1204 թթ. ընթացքում ազատազրի նաև Արարատյան աշխարհը, Արցախն ու Սյունիքը։ Զաքարեն և իվանե Հայագդի իշխանների

⁸⁴ Օրբելյան Աս., նշվ. աշխ., էջ 376-377; Մանաղյան Հ., Քննական տեսություն Հայոցողովիք պատմության, հ. Գ., Եր., 1977, էջ 57։

⁸⁵ Ալպյուսյան Ա., Պատմական Հայաստանի սահմանները, Կահիրե, 1950, էջ 298։

⁸⁶ Սահմանէ Անեցի, Հաւաքմունք ի զրոյ պատմազրաց, Վաղարշապատ, 1893, էջ 125-126; Սելիմեթ-Բեկի Լ., Վրաց ազգյուրները Հայաստանի և Հայերի մասին, Հ. Ա., Եր., 1934, էջ 218։

գլխավորած միացյալ գորագների, «որք քաջովթյամբ իւրեանց թափեցին ի Թուրքաց յոլով բերդս և գաւառս ի սուլ ժամանակի», ազատագրական արշավանքների մասին ամենայն մանրամասնությամբ հաղորդում է Վարդան Արևելյան պատմիչը⁸⁷:

Նոր ազատագրված Հյուսիս-արևելյան Հայաստանը բաժանվեց Զաքարյանների միջև⁸⁸: Ընդ որում, ամիրապասալար Զաքարեին, որ իրեն էր վերագրել Բագրատունյաց «շահնշահ» տիտղոսը, անցավ Շիրակի գավառը՝ Անի մայրաքաղաքով, Լոռու մի մասը և այլ գավառներ՝ մինչև Բասեն կամ Մժնկերտ: Իվանե աթաքեկի իշխանությունը տարածվում էր Լոռվա մյուս մասի, Արարատյան նահանգի արևելյան մի քանի շրջանների, Սևանա լճին Հարակից տարածքները ներառնող գավառների՝ գլխավորապես Գեղարքունիքի, Սողքի, Վայոց-Զորի, Նաև Հյուսիս-արևելյան Սյունիքի ու մի քանի այլ շրջանների վրա: Զաքարյան երրորդ իշխանությունը Զաքարեի և Իվանեի հորեղբայր Վահրամի Զաքարը որդունն էր և տարածվում էր Տավուշի, Փառիսոսի ու Գարդմանի վրա:

Զեռք բերված խաղաղությունը երկարատև չեղավ: Արդեն 1226թ. Խորեզմի շահ Զալայ աղ-Դինը, Հալածիկով մոնղոլների կողմից, գրավում է Գանձակը, Լոռին, Տիփիսը և մտնելով Շիրակ՝ պաշարում Անին: 1236թ., նվաճելով երկրի Հյուսիս-արևելյան շրջանները, Անին գրավում է նաև մոնղոլ Զարմաղանը: Մոնղոլական տիրապետության ժամանակաշրջանում Անիում և Շիրակում իրրև Զաքարյան իշխողներ հիշատակվում են ամիրապասալար Զաքարեի որդի Շահնշահ Ա-ն, Նրա որդիներն ու թոռները: Հաստ Ղ. Ալիշանի՝ Զաքարյաններն Անիում դեռևս գոյատևում էին նաև XIV դարի առաջին կեսին (Շահնշահ Ա-ի թոռներ Շահնշահ Բ-ը (մահացած 1320 թ., Վահրամ, Զալա)՝⁸⁹:

Մոնղոլական արշավանքներին Հաջորդած թուրքմենական ցեղերի՝ (կարա-կոյունլու, աղ-կոյունլու) շուրջ մեկդարյա տիրապետությունը (մինչև XV դարի վերջ) ոչ միայն տնտեսական կործանման եզրին հասցեց տարածաշրջանը, այլև պատճառ հանդիսացավ XVI դ. սկզբում արդեն ուրվագծող թուրք-պարսկակական բախումների համար, որոնք շարունակվեցին մինչև XVIII դարի կեսերը:

Բ) Արևելյան Շիրակը Երևանի խանության կազմում

XV դ. վերջերին և XVI դ. սկզբներին Մերձավոր Արևելքի քաղաքական թատերաբեմում սկսում են կարևոր գեր խաղալ նոր կազմակրված Սեֆեյան Պարսկաստանն ու Սուլթանական թուրքիան:

⁸⁷ Վարդան Վարդապետ, նշվ. աշխ., էջ 138; Հակոբյան թ. Խ., Անիի պատմություն (1045թ. մինչև անկումն ու ամայացումը), Հ. Բ., Եր., 1982, էջ 125:

⁸⁸ Հայ ժողովրդի պատմություն, Հ. Գ., էջ 541:

⁸⁹ Ալիշան Ղ., նշվ. աշխ., էջ 101:

Սեփելյան պետության հիմնադիր Շահ-Իսմայիլ Ա-ն (1502-1524 թթ.)
աղկոյունյու թուրքմենական ցեղերի գեմ հաղթանակ տանելով՝ XVI դ.
սկզբներին անը է դասնում մի Հսկայական երկրի, որի մեջ մտնում էին
Պարսկաստանը,⁹⁰ Միջագետքը, Ատրպատականը, Վրաստանն
և Հայաստանը:⁹¹ Իսկ անընդհատ հզրացող Օսմանյան կայսրությունը
XVI դ. վերջերին իր սահմաններն արևելքում Հասպեր մինչև Եվրատ
գետը՝ պատմական Մեծ Հայքի արևմտյան սահմանափեծը: Այդ ժա-
մանակներից սկսած՝ ինչպես Շիրակը, այնպես էլ ողջ Հայաստանը մոտ
225 տարի շարունակ դառնում են թուրք-պարսկական պատերազմների
արյունոտ թատերաբեմ:

XVI դ. սկզբներից մինչև Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին
միացման պահը ընկած ժամանակահատվածի Շիրակի քաղաքական
պատմությունը, որ այս առումով գրեթե լիովին նույնանում է ամբողջ
Արևելյան Հայաստանի քաղաքական պատմության հետ, ավերում, սովոր ու կոտորած բերող թուրք-պարսկական պատերազմների մի մոռայլ ժա-
մանակադրություն է: Այդ ընթացքում թուրքերն ու պարսիկները բագ-
մբցու ավերել ու իրար ձեռքից կիւել են Շիրակը: Ուսումնասիրվող ինպի-
տեսակետից մեկ առ մեկ թվարկել և նկարագրել դրանք բոլորը, կարծում
ենք, անհրաժեշտ չէ: Նպատակահարմար ենք Համարում քննության
ենթարկել միայն քաղաքական այն խոշոր իրադարձությունները, որոնք
առանցքային նշանակություն են ունեցել գալափոր՝ նշված ժամանակա-
շրջանի պատմության համար:

Թուրք-պարսկական առաջին պատերազմը սկսվում է 1512 թ.
սովորան Սելիմ Ա-ի և Շահ-Իսմայիլի միջև ահաբեկիչ նամակների
փոխանակումից հետո: Վճռական ճակատամարտում, որ տեղի է ունե-
նում Զլդրանի գաշտում 1514թ. օգոստոսին, Շահ-Իսմայիլը խայտառակ
պարտություն է կրում և իր զորքերի մնացորդներով փախչում երկրի
խորքերը՝ թուրքերին թողնելով Արևելյան Հայաստանի մեծագույն մասը
(այդ թվում նաև Շիրակը), ինչպես նաև Ատրպատականը՝ թավրիդ քա-
ղաքով:

Արևելյան Հայաստանին տիրանալու մարմածը XVI դ. 50-ական
թվականների առաջին կեսին կրկին բորբոքված թուրք-պարսկական նոր
պատերազմի պատճառ եղավ: Նախահարձակ եղած Շահ Թահմազի
արշավանքին ի պատասխան՝ թուրքերը 1514 թ.⁹² Կարսի վրայով
անցնելով Ախուրյան գետը, մտնում են Արարատյան երկիրը և շարժվում
գեպի երևան՝ ճանապարհին ավերելով և հողին հավասարեցնելով
գյուղերն ու շինությունները: Վերոհիշյալ աղետաբեր արշավանքի և

⁹⁰ Հայ ժողովրդի պատմություն, ՀինԱՀ ԳԱ Հրատ., Հ. Դ., Եր., 1972, էջ 56-57; Լեռ, Հայոց պատմություն, Հ. Գ., Եր., 1946, էջ 171-172:

⁹¹ Ալիշան Դ., Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 300:

⁹² Հակոբյան Թ. Խ., Երևանի պատմությունը (1500-1800), Եր., 1971, էջ 11; Ներսիսյան Մ., Հայ ժողովրդի պատարագական պայքարը թուրքական բանապետության դեմ
1850-1870թթ., Եր., 1955, էջ 8:

մասնակորաբար գրա հետևանքով Շիրակի գաժան ավերումների վերաբերյալ վկայություն ունի թուրք պատմագիր Իբրահիմ Փեչչին, որին գրեթե նույնությամբ կրկնել է նաև XVII դ. թուրքական մի այլ պատմագիր՝ Սոլաք Զաղբեն. «...Հայդթական բանակը քանդեց ու ավերեց այդ քարայշեն գյուղերը, շինությունները ոչնչացրեց ու հողին հավասարեցրեց»⁹³:

1554-1555 թթ. տեղի ունեցած երկարատև բանակցություններից հետո 1555 թ. Թուրքիայի և Պարսկաստանի միջև կնքվում է Հաշտության պայմանագիր, որով Հայաստանն առաջին անգամ բաժանվում է այդ տերությունների միջև։ Այդ բաժանմամբ Հայկական Պարլեռնաշղթայից գեափի հյուսիսի ընկած քոլոր շրջանները, և նրանց մեջ նաև Արևելյան Շիրակը մնացին Պարսկաստանի տիրապետության տակ։ Սակայն 1555 թ. կնքված Հաշտությունը երկարատև չեղավ։ 70-ական թվականների վերջերից կրկն սկիզբ է առնում թուրք-պարսկական պատերազմների մի նոր շղթա, որ գրեթե առանց ընդհատման տևում է ավելի քան 12 տարի՝ 1578-ից մինչև 1590թթ.։ Թուրքերը, 300000-ոց հեծելազորով հարձակվելով Երևանի վրա, գրավում են այն՝ կայազորներ կարգելով նաև իրենց արշավանքի ճանապարհին գրավված Շորապալի, Թալինի, Ակչակապայի, Սուրմալուի և այլ բերդերում⁹⁴։

Մինչև 1590 թ. տևած շարունակական բախումների հետևանքով թուրքերին հաջողվում է ոչ միայն գրավել ամբողջ Անդրկովկասն ու Աստրապատականը, այլև սպառնալ բուն Պարսկաստանին։ Ցանկանալով վերահաստատել 1555 թ. թուրք-պարսկական սահմանագիծը՝ Շահ-Աբասը⁹⁵ 1603 թ. գրավում է Թավրիզն ու Նախիջևանը և պաշարում Երևանը։ Դրան զուգընթաց՝ պարսկական մեկ այլ զորաբանակ արշավում է դեպի արեևմուտք՝ սոսկալի ավերածության ու կոտորածի ենթարկելով Շիրակի, Երզրումի, Բասենի, Խնուսի գավառները, ինչի մասին առանձնակի ցավով են վկայել Առաքել Դավթիթեցին և Զաքարյա Քանաքեռոցին⁹⁶։ Թուրքերը պարսկական այս հարձակմանը պատասխանեցին պարսիկների՝ Երևանը գրավելուց միայն երկուս ու կես ամիս անց, երբ Շահ-Աբասը տիրել էր նաև Կարսին սթափ

⁹³ «Թուրքական աղբյուրները Հայերի և Անդրկովկասի մյուս ժողովրդների մասին», Հ. Ա, Եր., 1961, էջ 33։

⁹⁴ «Թուրքական աղբյուրները Հայաստանի, Հայերի և Անդրկովկասի մյուս ժողովրդների մասին», Հ. Բ, Եր., 1964, էջ 272։ Աղանեանց Գ., Դիւան Հայոց պատմութեան, գիրք Ժ, Թիֆլիս, 1912, էջ 37-39։

⁹⁵ Էզօ Կ., Сношения Петра Великого с армянским народом, СПб., 1898, стр. 243.

⁹⁶ Առաքել Դավթիթեցի, Պատմութիւն, Վաղարշապատ, 1896, էջ 29-30։

⁹⁷ Զաքարիա Սարգսակ Քանաքեռոցի, Պատմագրութիւն, Հ. Ա, Վաղարշապատ, 1870, էջ 18։ Հայերն ձեռագերի ժի դարի հիշատակարաններ (1601-1620 թթ.), Հ. Ա, Կագմեցին Ա. Հովհաննիսյան, Վ. Հակոբյան, Եր., 1974, էջ 130։

⁹⁸ Առաքել Դավթիթեցի, նշվ. ախո., էջ 37; Նաջարյան Հ. Խ., XVII դարի սկզբի թուրք-իրանական պատերազմը և Հայերի տարեգրությունը, Եր., 1959, էջ 40։

դատելով, որ ուժերի քանակական հարաբերությունը իր օգտին չէ, և որ բաց ճակատամարտում թուրքերին դիմադրելն անհնար կլինի, Շահ-Աբասը նահանջում է՝ ամայացնելով իր նահանջի ճանապարհին բնկած բոլոր քաղաքներն ու գյուղերը, անդահան անելով բնակչության՝ «...սկսեալ ի կողմանցն նախիջևանոյ՝ զՇիրակ, զՆիգ, զԵղեգնաձոր, զԳեղամ, զԼոռի, զՀամզաշիման, զՇարապիսանայ, զԶարիշատ, և զՊաշտն Արարատու, զԵրևան քաղաք, զԿոտէս գաւառ, զՄաղկնաձոր...», զՊուռ է Զաքարյա Քանաքեռոցին:

1639 թ. Կնքվեց թուրք-պարսկական հաշտության նոր պայմանագիր, որ պատմությանը Հայտնի է Կարիք-Շիրինի անունով: Ի դեպ, այդ պայմանագրով որոշված սահմանները⁹⁹ Հիմք Հանդիսացան նաև Թուրքիայի և Պարսկաստանի միջև 1746թ. Կնքված պայմանագրի համար և գրեթե անփոփոխ մնացին մինչև XIX դ. առաջին քառորդը:

Այդ պայմանագիրը 1639 թ.-ից Հայաստանը վերջնականապես բաժանեց երկու՝ արևելյան և արևմտյան մասերի: Արևելյան Հայաստանը, որի մեջ էին Գուգարքը, Արշարունիքի մի մասը, Շիրակի արևելյան հատվածը՝ Գյումրի ավանով, Արարատյան գաշտը՝ Երևան քաղաքով, Ապարանի շրջանը մինչև Լոռվա լեռները, Նոր-Բայազետի և Նախիջևանի գավառները, Սյունիքը, Արցախին ու Վասպուրականի արևելյան մասը, անցավ Պարսկաստանին¹⁰⁰:

Խնդրո առարկայի քննության տեսակետից տարածաշրջանի XVI-XVIII դդ.-ի պատմաքաղաքական անցքերի այսպիսի համառոտ շարադրմանքն անհրաժեշտ համարեցինք ոչ միայն ցույց տալու համար, թե Շիրակի գավառը վերոհիշյալ թուրք-պարսկական պատերազմների ընթացքում քանից ձեռքից ձեռք անցավ, այլև ընդգծելու, թե Հայաստանի աղետովի բաժանումը ինքնին որքան առավել աղետավի եղավ այս գավառի համար՝ այն ևս տրոհվելով երկու մասերի՝ Արևմտյան կամ Թուրքական և Արևելյան կամ Պարսկական՝ իրենց ուրույն ճակատագրերով ու պատմաքաղաքական զարգացումներով: Այժմ փորձենք ավելի մանրամասնել Շիրակի գավառի արևելյան հատվածի նկարագիրը, թե ի՞նչ կարգավիճակով և ե՞րբ է այն մտել Երևանի խանության (Ըելլերբեյության) մեջ:

XVI դ. վերջերին Շիրակի արևելյան տարածքում կազմավորվում է Շորագյալի սուլթանությունը՝ Արթիկ կենտրոնով, որ հարավից սահմանակից էր Թալինի, արևելքից՝ Ապարանի մահալներին, արև-

⁹⁹ Զաքարեայ Սարկաւագ Քանաքեռոցի, նշվ. աշխ., էջ 18:

¹⁰⁰ Նաջարյան Հ. Խ., 1639 թվականի թուրք-իրանական հաշտության պայմանագիրը և Հայաստանը, Եր., 1969, էջ 26; Ռոպեն Ի., Исторический Памятник состояния Армянской области в эпоху ее присоединения к Российской империи, СПб., 1852, стр. 351-352.

¹⁰¹ Հակոբյան Թ. Խ., Հայաստանի պատմական աշխարհագրություն, Հ. 2, Եր., 1968, էջ 378:

մուտքից՝ Կարսի, Հյուսիս-արևելուտքից՝ Ախալցիսայի փաշալություններին, իսկ Հյուսիս-արևելքից՝ Փամբակի սուլթանությանը¹⁰²: Շորագյափ սուլթանության ձևավորման մասին ժամանակագրական առումով կարծիք են Հայտնել նախ Վ. Իվանենկոն¹⁰³, ապա նաև Լեռն¹⁰⁴: Երկուսն էլ իրողությունը ներկայացնում են հետեւյալ կերպ. XVI դ. երկրորդ կեսին պարսից շահերի հրամանով Բորչալու և Ղազախ գավառներում բնակություն հաստատեցին մոտ 35000 թաթարներ: Այդ երկիրը պատկանում էր Վրաստանին և սկզբնապես բնակեցված էր Հիմնականում Հայերով, որոնք տեղի տալով թաթարներին, հեռացան ավելի ապահով վայրեր (տեղում մնացին շատ քէրրեր): Թաթարները, որպես հուսայի տարր, պիտի մշտական հսկողության տակ պահեին վրաց արքունիքն ու թույլ չտային վրացիներին ընդգործ Պարսկաստանի գեմ: Սկզբում այս թաթարներն անկախ էին և կառավարվում էին իրենց խաների կողմից, բայց Նադիր Շահը սրանց ենթարկեցրեց վրաց թէյմուրաղ թագավորին, իսկ արդեն Հերակլ Բ-ն, օգտվելով Պարսկաստանում տիրող խառը իրավիճակից, Վրաստանը հոչակեց անկախ ու լրիվ իշխանություն ձեռք բերեց նաև թաթարական շրջանների կամ այսպես կոչված՝ թաթարական դիստանցիաների վրա: Դրանք Ալաստ գետի մոտ բնակվող դազախական, սրանցից հարավ-արևելք՝ Գյանջայի խանության սահմանին՝ Շամշադինի, արևմուտքում՝ Դեբեդ գետի մոտ՝ Բորչալուի, սրանից գետի հարավ՝ Փամբակի, իսկ սրանից էլ արևմուտք՝ Երևանի խանության և Թուրքիայի սահմանին՝ Շորագյալի թաթարական դիստանցիաներն էին (ուղեմասեր):

Անկախությունը կորցրած թաթարներին հաջողվեց պահպանել ներքին ինքնավարությունը, որ ունեին գեռևս պարսկահպատակության շրջանից: Նրանց գյուղերը կառավարվում էին աղալարների կողմից, որոնք, Հողի սեփականատերեր չիներով և չվարձատրվելով պետության կողմից, ապրում էին ժողովրդից գանձված հարկերով: Իբրև ժողովրդի առաջնորդներ և նրա զորական ուժը գիսավորողներ, իրենց անձի մեջ կենտրոնացնելով նաև ներքին գատաստանական և վարչական իշխանությունը, սրանք հետզհետե հայտնվեցին կատարյալ իշխողների դրության մեջ: Աղալարները նաև իրենցից մեկնումեկին ընտրում էին որպես գիսավոր՝ գիսատանցիայի բոլոր բնակավայրերը կառավարելու և միմյանց միջև ծագած վեճերը հարթելու նպատակով՝ Ղազախում նրանք կոչվում էին վերիներ, իսկ Շամշադինում և Շորագյալում՝ սուլթաններ:

¹⁰² Վիրաբյան Ա., Շորագյալի սուլթանությունը XVI դարի վերջերից մինչև XIX դարի առաջին քառորդը, «Պատմագիտական հետազոտություններ», Վանաձոր, 2001, էջ 38:

¹⁰³ Иваненко В., Гражданское управление Закавказьем от присоединения Грузии до наместничества Великого Князя Михаила Николаевича, Тифлис, 1901, стр. 25-27.

¹⁰⁴ Լեռ, Երկերի ժողովածու, Հ. Գ., վերը 1, Եր., 1969, էջ 90-91:

Պարսկական տիրապետության շրջանում Շորագյալի սովորականությունը կամ նույն Արևելյան Շիրակը Այրարատ, Վարածնունիք (Դարձաչչագ), Նիդ (Ապարան), Մազագ-Ռիբծ-Մասսյացոտն (Գառնի-Վեղի), Ճակատք (Սուրմալու), Արագածոտն (Կարբի), Կոտայք (Գրիգորլաղ) և Սյունիք աշխարհի Գեղարքունիք ու Սողք գավառների հետ մտնում էր Չուփուր-Սաադ կամ Չուգուր-Սաադ¹⁰⁵ կոչված կուսակարության մեջ, որ առաջացել էր արդեն XIVդ. վերջերին, կարա-կոյունլու թուրքմենական ցեղերի տիրապետության ժամանակ, և սկզբնական շրջանում իր մեջ էր առնում նախկին Երասխածոր և Ճակատք գավառներն ու դրանց մերձակա մի քանի շրջանները¹⁰⁶: XVI դ. էլ ավելի ընդարձակվելով՝ այս կուսակարությունն իր մեջ ընդգրկում էր նախկին Այրարատյան աշխարհի մեծագույն մասը, իսկ XVII դ., ըստ Աղամ Օլեարիի վկայության՝ Երևանի բեյլերեցիությանը (նոյն Չուգուր-Սաադի կուսակարությանը) ենթակա էին Ղափանը, Ջուղան, Սիսիանը, Քաշաթաղը, Երևանը Կըրիս-Բուլաղը, Ազստաֆան, Ապարանը, Դմանիսը, Աղբետը, Զըդը և շատ այլ շրջանները¹⁰⁷: Ինչ վերաբերում է բուն Երևանի խանության XVII դ. սահմաններին ու տարածքի մեծությանը, ապա այդ մասին վկայությունները տարտամ են ու ոչինչ չասող և թույլ չեն տալիս մեզ հստակ պատկերացում կազմելու այդ ժամանակաշրջանում Արևելյան Շիրակի պատկանելության հարցի մասին: Օրինակ, այդ դարի երկրորդ կեսի Հայտնի Հեղինակներից մեկը՝ Շարգենը, Երևանի խանության սահմանների վերաբերյալ բավարարվում է միայն Հետեւյալ անորոշ արտահայտությամբ: «Երևանի խանությունը տարածվում է Երևանի շուրջը ավելի քան քսան մղոն: Այդ տարածության մեջ կան քսաններեք մենաստաններ և հինգ կուսանոցներ»¹⁰⁸: Ինչպես տեսնում ենք, ժամանակակից ճանապարհորդի վկայությունը բանալի չի տալիս որևէ չափով մեկնելու Երևանի խանության գրաված տարածքի ու սահմանների իրական մասշտաբները: Նույնչափ թերի են նաև Հայ ժամանակաբիների և վրաց աղբյուրների վկայությունները: Այսպես, օրինակ՝ XVII դ. Հեղինակ Ղակոր Կարսնեցին Երևանի խանության սահմանների մասին գրում է միայն, որ նրա խանը «մեծ պարոն է և բազում զօրաց տէր. և ունի սինոռ մինչև ի շրջապատն Մասիսոյ, երկիրն Երէվանայ և մյուս կողմն մինչ ի Արտազ, որ է Մակու և Յապաղան»¹⁰⁹: Այս վկայությունից հայտնի է դառնում միայն, որ Երևանի խանության սահմանները հարավ-արևելքում ձգվում էին մինչև Մակուի մերձակայ-

¹⁰⁵ Ինձիման Ղ., Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, մասն առաջին, Հ. Ա. Վենետիկ, 1806, էջ 255; Ալիշան Ղ., Այրարատ, էջ 284:

¹⁰⁶ Փափազյան Հ., Օտար տիրապետությունը Արարատյան Երկրում, «Տեղեկագիր», ՀՍՍՀ Գ.Ա. (Հաս. գիտութ.), Եր., 1960, N 7-8, էջ 25:

¹⁰⁷ Adam Olearus, Les Voyages en Moscovie, Tartarie et Perse, Amsterdam, 1727, pg., 22.

¹⁰⁸ Путешествие Шардена по Закавказью в 1672-1673 гг., Тифлис, 1902, стр. 248.

¹⁰⁹ Հակոբյան Վ., Մանր ժամանակագրություններ, Հ. Բ., Եր., 1956, էջ 557:

քք՝ ընդգրկելով Արարատյան գաշտն իր շրջակայքով։ Նույն Հեղինակի մեկ այլ անուղղակի վկայությունից մեզ քիչ թե շատ հայտնի է գառնում Երևանի խանության նաև արևմտյան սահմանը, երբ խոսելով թուրքական տիրապետությունների արևելյան սահմանների մասին՝ գրում է. «Եւ ի յարևելից կողմն Ախալցխոյ և Զլտրոյ երկիրն և Շիրակավանս երկիրն, Յանի քաղաքն իւր թէմովն մինչ ի գուռն Երէ-անայ»¹¹⁰։

Երևանի խանության հյուսիսային սահմանի մասին վկայություն ունի XVIII դ. վրաց անանուն Հեղինակներից մեկը։ Նկարագրելով Վրաց Կոստանդինի որդի Դավիթ Թագավորի տիրույթները՝ սա ընդգծում է,որ Հարավում դրանք Հասնում են «... մինչև Երևանի սահմանը, որևէ տարածվում է մինչև Բամբակ և Լոռի և մինչև Ղազախի սահմանը»¹¹¹։ Ինչ վերաբերում է խանության արևելյան սահմանին, ապա Հայտնի է, որ Երևանի խանությունը այդ կողմում շփում էր Նախիճնանի խանության հետ, և դրանց սահմանագիծը սովորաբար անցնում էր Գեղամա լեռների Հարավային վերջավորություններով։ Այսպիսով վերոբերյալ վկայությունների համարդրմամբ կարելի է պնդել, թե Երևանի խանությունը XVII դ. սկզբներին ձգվում էր հետևյալ սահմանների մեջ։ Արևմտյան Արփաչայից (Ախուրյան) մինչև Գեղամա լեռները և Հայկական Պար լեռնաշղթայից (աս 1555 թից թուրք-պարսկական սահմանագիծ էր և այդպիսին էլ մնաց հետագա դարերում) մինչև Փամբակի լեռնաշղթան ու Արագածի Հյուսիսային ստորոտները։ Ավագծից հետևում է, որ Արևելյան Շիրակը XVII դ. սկզբին չկար Երևանի խանության կազմում։ Սրան համարիտ լինելով՝ թ. Հակոբյանը իր «Երևանի պատմությունը 1500-1800 թվականներին» աշխատության մեջ նաև նշում է, թե Շորապյալը Երևանի խանության կազմի մեջ է մտել միայն կիսաանկախ խաների տիրապետության շրջանում, մանավանդ՝ Հուսեին-Ալի խանի օրոք (1762-1783 թթ.)¹¹²։

Հայ պատմագրության մեջ ընդունված այն կարծիքը, թե Արևելյան Շիրակը Երևանի խանության մեջ մտել է կիսաանկախ խաների տիրապետության շրջանից սկսած, վիճելի է, քանի որ արդեն Զաքարյա Քանաքեռցու կողմից XVII դարակեսի գեպերի, մասնավորապես Զալ խանի (Երևանի խանը մինչև 1670 թ.) իշխանության գուփի գալու և խանության ներսում անհուսապի ու վնասակար տարրերին պատժելու նկարագրությունից Երևում է, որ Արևելյան Շիրակն արգեն այդ շրջանում մտնում էր Երևանի խանության մեջ։ Քանաքեռցին գրում է. «Եւ որք անդ էին՝ համբուրեցին գծունկ. և մունեաթիկ ելալ աղաղակեր, ահա Զալ խան եղեւ տէր Երևանայ։ Եւ ի նմին ժամու... ըմբռնեաց այր մի Այրումու Տաշտամուր անուն. վասն զի յատաշին զանորէից ապստամբեալ էր և Զալս այս այլ հնարիւք իմն ըմբռնեաց զնա, և կախեալ ի

¹¹⁰ Նույն տեղում, էջ 562։

¹¹¹ Մելիքսեթ-Բեկ Լ., նշվ. աշխ., Հ. Բ., Եր., 1938, էջ 144։

¹¹² Հակոբյան թ. Խ., Երևանի պատմությունը (1500-1800թթ.), էջ 142։

ոտանէն՝ բրածեծ արարին այնքան՝ մինչև մերձ ի մահ լինել. և ապա արկին ի բանտ. և բազում տուգանս առին, և արձակեցին. և գնաց ի տուն իւր ի Շիրակ. և ի բազում հարուածոց անտի մեռաւ»¹¹³: Արևելյան Շիրակի՝ XVIII դ. 30-ական թվականներին Երևանի խանության կազմում լինելու մասին շատ ավելի հստակ տեղեկություն է Հաղորդում պատմիչ, ժամանակի կաթողիկոս (1734-1737թթ.) Աբրահամ Կրետացին՝ նշելով, թե Շորագյալը Երևանի խանության ինը մահալ-ներից մեկն է. «...զի յԵրևան թ մահալ գալով, թ մելիք կան. Կարբու և Դրսպովախու, Շորակու, Իքտիրու, Գառնու, Ծաղկաձորու, Գեղարքունոյ, Ապարանու և Շիրակաւանու»¹¹⁴:

Շատ ավելի ամբողջական ու որոշակի են դառնում տեղեկությունները Շորագյալի մասին սկսած XVIII դ. երկրորդ կեսից՝ Հուսեին-Ալի խանի տիրապետության շրջանից, մասնավորաբար վրաց Հերակլ Բթագավորի 1779 թ. Երևանյան արշավանքի առիթով¹¹⁵:

XVIII դ. 70-ական թթ. վերջերին լարվում են Հարաբերությունները Վրաստանի և Երևանի խանության միջև՝ կապված Հուսեին-Ալի խանի կողմից Վրաստանին հարկ չվճարելու հետ: Իրադրությունը սրվում է Հատկապես 1779 թ., երբ Հերակլ Բթագավորը Հաջողված արշավանքի շորջիկ Երևանի խանությունից պոկում է Շորագյալի սուլթանությունը և նրա սուլթան Ղահրամանին դարձնում իրեն Հպատակ¹¹⁶: Դրանից հետո Շորագյալը հետ վերցնելը դառնում է Երևանի խանների մշտական մտահոգության առարկան ընդհուպ մինչև դարավերջ. պարսիկներին միայն 1800 թ. վերջերին է բախտ վիճակում Նախիջևանի Քյալբաղի խանի գլխավորությամբ ի վերջո գրավել Շորագյալը¹¹⁷: Այս իրավիճակն անփոփոխ պահպանվում է մինչև 1805թ. երբ սուսական զորքերը գեներալ-մայոր Պ. Նեսվետուկի գլխավորությամբ Շորագյալը վերջնականորեն միացնում են Ռուսաստանին:

Գ) Արևելյան Շիրակը (Շորագյալի գավառը) ռուս-պարսկական և ռուս-թուրքական Հակամարտությունների թատերաբեմ

XIX դ. շեմին նպաստավոր իրադրություն էր ստեղծվել Անդրբկովկասը Ռուսաստանին միացնելու համար, և ցարիզմը չհապաղեց

¹¹³ Զաքարեայ Սարկաւագ Քանաքեռցի, նշվ. աշխ., Հ. Բ, Վաղարշապատ, 1870, էջ 102-103:

¹¹⁴ Աբրահամ Կրետացի, Պատմութիւն անցից իւրոց և նադր Շահին Պարսից, Վաղարշապատ, 1870, էջ 61-32;

¹¹⁵Տե՛ս ՀՀ ՊԿԱ, Փոնդ 247, ցուցակ 1, գործ 181 (քարտեղ); Бутков П., Материалы для новой истории Кавказа с 1722 по 1803г., т. 2, СПб., 1869, стр. 73.

¹¹⁶ Գրիգորյան Վ. Ի., Երևանի խանությունը XVIII դարի վերջերում, Եր., 1958, էջ 32-33; Միհրանի թիկ Լ., նշվ. աշխ., Հ. Գ, էջ 178:

¹¹⁷ Дубровин Н., История войны и владычества русских на Кавказе, т. 3, СПб., 1886, стр. 207.

Ճեռնամուխ լինել դրա իրավութմանը: Միացումը Ռուսաստանին օբյեկտիվորեն համապատասխանում էր թուրք փաշաների և պարսիկ խաների դարավոր ստրկությունից ազատագրվելու նաև Հայ ժողովրդի ձգտումներին:

Արդեն 1801թ., համաձայն 1783 թ. Գեորգիկայն ռուս-վրացական պայմանագրի¹¹⁸, Ռուսաստանին միացվեց Արևելյան Վրաստանը, 1803 թ.: Սեպտեմբերին, 1804 թ.: Խերեթիան և Գուրիան (Աբխազիան միացավ 1810 թ.)¹¹⁹: Այս քայլը Անդրկովկասի ժողովուրդները, մասնավորապես Հայերը, ընդունեցին ոգևորությամբ՝ դրանում տեսնելով պարսկական լծի մոտալուս թոթափումը: Ավելին, Վրաստանի միացմամբ, ըստ էության սկսվում էր Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին, քանի որ «Վրաստանի կազմում Ռուսաստանին անցան Քարթին, Շամշադիլը (ներկայիս Շամշադինի շրջանը), Փամբակն ու Շորապալը (ներկայիս Ստեփանավանի, Ղարաբղիսայի, Համամլուի, Ղղղոչի, Լենինականի շրջանները, Արթիկն ու Ապարանը մասսամբ), Սոմիսեթը (ներկայիս Ալավերդու շրջանի մի մասով), Ղազալիը (ներկայիս Իջևանի ու Դիլջանի շրջաններով ու Ալավերդուն անցած մի քանի զուղերով), Խևսուլիան, Փշավիան և Դուչեար»¹²⁰:

Այս ամբողջ գրավկած տարածքում Հայերի թիվը մեծ չէր, բայց այն սկսեց արագորեն աճել և Վ. Պոտոտոյի վկայությամբ՝ չնայած Հայերի նկատմամբ Պ. Ցիցիանովի վատ վերաբերմունքին, մի քանի տասնյակ Հազար Հայեր բնակեցվեցին Վրաստանում և ռուսական Հպատակություն ընդունեցին¹²¹:

1804թ. գարնանը, Գանձակի գրավումից հետո, ռուս-պարսկական Հարաբերություններն էլ ավելի սրբլեցին: Մայիսի 10-ին Երևանի խանին Պ. Ցիցիանովի գրած նամակի հիմնական բովանդակությունը Երևանի բերդը Հանձնելու և տարեկան 8000ու. Հարկ վճարելու պահանջն էր, ինչին, Հասկանալի է, խանը չէր համաձայնվելու: Սա էլ Ն. Դուբրովինի կարծիքով ռուսների երևանյան առաջին արշավանքի պատճառը

¹¹⁸ Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, Ալ. Երիցյանի արխիվ, թղթ. 157, փակ. 9; Խելտուլիսվիլի Մ., Վեступլու Հրուց ու համար Ռուսական կայսերական պատճենների մասին, 1901, ս. 33; Մարտիրոսյան Վ.՝ Նոր վալերագրեր Գեորգիկակի 1783թ.-ի դաշնագրի մասին, «Պատմա-բանասիրական Հանդես» (այսուհետև՝ ՊԲՀ), Եր., 1978, թիվ 3, էջ 235-241:

¹¹⁹ Պողոսյան Ա., Ռուս-Հայ բարեկամության պատմությունից, Եր., 1974, էջ 22; Հայ ժողովրդի պատմություն, Հնուշ ԳԱ Հրատ., հ. 6, Եր., 1974, էջ 113:

¹²⁰ Կորկուտյան Զ., Խորհրդային Հայաստանի բնակչությունը վերջին Հայութամյակում 1831-1931, Եր., 1932, էջ XXVI-XXVII:

¹²¹ Потто В., Кавказская война в отдельных очерках, эпизодах и биографиях, т. 3, выпуск 4, СПб., 1887, стр. 721-722.

¹²² Фадеев А., Россия и Кавказ первой трети XIX века, М., 1960, стр. 108-109;

Акты собранные Кавказской Археографической Комиссиией (АКАК), т. 2, Тифлис, 1868, стр. 611.

Հանդիսացալ՝¹²³: Սկզբած 1804-1813 թթ. ոռու-պարսկականա պատերազմն իր հետ բազում ավերածություններ ու զոհեր բերեց՝ միևնույն ժամանակ վերջնականորեն լուծելով Արևելյան Շիրակը Ուռասաստանին միացնելու խնդիրը: 1804 թ. մայիսի վերջերին ոռուական գորքերը Պ. Յիշիանովի վիխավորությամբ մոտան երևանի խանության տարածք՝ ունենալով ընդամենը 4080 շարային վիճակոր՝ որից 3413-ը՝ հետևակազորային, 667-ը՝ հեծալ և 12 թնդանոթ՝¹²⁴: Սրանց կազմում էր նաև այսպես կոչված «Վրացական հեծելազորը»՝ 370 մարդ, որ ժամանակակիցի հավաստմամբ՝ մեծամասամբ Հայեր էին Մելիք Արովի գիշավորությամբ՝ հավաքված սահմանամերձ Փամբակի, Շորագյալի, Շամշադինի, Ղազախի, Բորչալուկի շրջաններից՝¹²⁵:

Անցնելով Լոռի-Փամբակով՝ Հունիսի սկզբներին ոռուաները հասան Գյուղմրի, իսկ նույն ամսի 10-ին Ալբուրյանի ափին՝ Փոքր Ղարաբիլսա (Ազատան) գյուղի մոտ, տեղի ունեցավ ոռուական կորպուսի առաջապահ ուժերի և պարսկական գորքերի միջև առաջին լուրջ ճակատամարտը: Թեպետ պարսկիներն ուներին 8000 սարբազ և թվով գերակշռում էին հակառակորդին, բայց ոռու զինվորների և նրանց օգնող Հայ աշխարհազորայինների եռանդուն գործողությունների չնորհիվ պարսկիները պարտվեցին՝ տալով 200 զոհ, իսկ ոռուներին հաջողվեց պարսկական գերությունից ազատել 400 Հայ ընտանիք՝: Բացի այդ Երևանի խանի կողմից Կարսի փաշայություն արտաքինու 7000 Հայ ընտանիքի համար էլ ճանապարհ բացվեց անցնելու Փամբակ և Լոռի՝ ապաստան գտնելու ոռուական հավատակության տակ: Մանրամասնորեն նկարագրելով նշված ճակատամարտը՝ Պ. Կովալենսկին անդրադառնում է նաև Հայ աշխարհազորայիններին, նշելով, որ գեներալ Տուչկովին Շորագյալում միացան տեղացի Հարյուրի չափ հեծյալներ, որ եղան ոռուների հավատարիմ դաշնակիցները, օգնականներն ու լրտեսներն ամբողջ պատերազմի ընթացքում՝: Դեպի Երևան արշավանք սկսելու համար Հունիսի 12-ին Գյուղմրի են ժամանում ոռուական կորպուսի վիխավոր ուժերը՝ գեներալ Յիշիանովի հրամանատարությամբ: Գյուղմրուց Ապարանի վրայով շարժվելով դեպի Երևան՝ Հունիսի 25-ին ոռուները գրավում են Քանաքեռը, ապա Աբաս-Միրզային հետ շպրտում

¹²³ Дубровин Н., Закавказье 1803-1806гг., СПб., 1866, стр. 121; Иоаннисян А., Присоединение Закавказья к России и международная дипломатия в начале XIX столетия, Ер., 1958, стр. 74.

¹²⁴ Дубровин Н., История войны и владычества русских на Кавказе, т. 4, СПб., 1886, стр. 302; Մեկ այլ վարկածի համաձայն՝ վիճակուների թիվը 4370-էր, որից 1020-ը՝ հեծելազոր, իսկ թնդանոթների քանակը՝ 20: Այս մասին տես Հայ ժողովրդի պատմություն, հ. 6, էջ 118:

¹²⁵ Խубов Е., Описание достопамятных прошествий в Армении, СПб., 1811, с. 93.

¹²⁶ Գրիգորյան Զ., Արևելյան Հայաստանի միացումը Ուռասաստանին և նրա պատմական նշանակությունը, Եր., 1978, էջ 115-116:

¹²⁷ Ковалевский П., Завоевание Кавказа Россией, СПб., 1887, стр. 98.

Արաքսի աջ ափի՝ հուլիսի 2-ին պաշարելով Երևանի բերդը¹²⁸: Սակայն պաշարված բերդը հանձնելու համար բանակցովթյունների ձգձգումը ուղղակիորեն մարեց ոռոսական զորքի մարտական ոգևորությունը: Եթե սրան հավելենք նաև հիվանդների ու վիրավորների թվի օրավուր աճը (հիվանդություններից օրական մահանում էր 10-20 մարդ)¹²⁹, թերամումը, ինչպես նաև պարսիկների անվերջանալի ասպատակությունները զորքի թիկունքում, միանգամայն պարզ կդառնա, թե ինչու Պ. Ցիցիանովը արգեն սեպտեմբերի 3-ին դադարեցրեց Երևանի պաշարումը ու ստիպված եղավ հետ քաշվել գեավի Վրաստան:

Ոռոսական կորպուաի Երևանյան առաջին արշավանքը թեաետ չպասկեց Երևանի գրավումով, բայց և անհետևանք չմնաց: Այդ արշավանքն արագացրեց Երևանի սարդարի հպատակության տակ գտնվող Շորապյալի սուլթանության միացումը Ոռոսաստանին: Արշավանքի ժամանակ Շորապյալի Բուղազ սուլթանը ուսւաների նկատմամբ վերապահ դիրք էր բռնել և ոռոսների նահանջից հետո, սարդարի թելադրանքով, Հարձակումներ սկսեց Վրաստանի սահմանակից շրջանների վրա: Ի հեծուկս սուլթանի, տեղի բնակչությունը շարունակում էր գործել ոռոսների օգտին: Մտերծված այսպիսի նպաստավոր իրավիճակում 1805թ. մարտի 30-ին գեներալ Պ. Նեսվետամի գլխավորած զորագունդը գրավեց Շորապյալի սուլթանության կենտրոն Արթիկը, իսկ նույն տարվա հոկտեմբերին ոռոսական հպատակություն ընդունեց նաև Բուղազ սուլթանը¹³⁰: Շորապյալի միացումը Ոռոսաստանին խոշոր նշանակություն ունեցավ տեղական բնակչության համար, ամրապնդվեցին նաև Ոռոսաստանի ռազմաստրատեգիական դիրքերը Թուրքիայի և Պարսկաստանի սահմանագլխում:

Պարսիկների ռազմական ու դիվանագիտական անընդհատ պարտությունները ստիպեցին արևմտաեվրոպական տերություններին Ոռոսաստանի գեմ պատերազմի մեջ ներքաշել նաև Թուրքիային: 1806 թ. գեկտեմբերի 18-ին վերջինս պաշտոնապես պատերազմ հայտարարեց Ոռոսաստանին: Սկսեց 1806-1812 թթ. ոռոս-թուրքական պատերազմը: Թուրքական Հրամանատարությունը որոշել էր Անդրկովկասում գիխավոր Հարվածը Հասցնել Կարսի կողմից և, անցնելով Շորապյալն ու Բորչարում, Հարձակվել Թիֆլիսի վրա: Սա նշանակում էր առանց այն էլ ավերված Շորապյալը ևս մեկ անգամ ենթարկել ավերման ու թալանի: «Արևելյան Հայաստանի ամենատուժած վայրերը, գրում է Լեռն,-Փամբակն ու Շորապյալն էին, որոնցով անցնում էր Թիֆլիս տանող ուղիղ և կարճ ճանապարհը, իսկ Արթիկը, որ Երևանի կողմից պար-

¹²⁸ Ներսիսյան Մ., Հայ ժողովրդի նոր պատմության էջերից, Եր., 1982, էջ 72; Генерал-лейтенант Давид Осипович Бебутов, СПб., 1867, стр. 3; Генерал-лейтенант

Б. Бебутов, Кавказ, Тифлис, 1854, N 7, 23 января, стр. 1.

¹²⁹ Հակոբյան Թ., Երևանի պատմությունը 1801-1879թթ., Եր., 1959, էջ 291:

¹³⁰ Присоединение Восточной Армении к России, Сборник документов, т. 1, редактор Ц. Агаян, Ер., 1972, док. 218, стр. 292.

սիկների առաջին հանգրվանն էր, յուրաքանչյուր պատերազմից հետո դառնում էր ավերակ»¹³¹:

Մշակված ծրագրի համաձայն՝ Մալկայում կենտրոնացված ոռուսական գլխավոր ուժերը ի. Գուղովիչի գլխավորությամբ շարժվերու էին դեպի Ախալցխայի փաշայություն՝ թուրքերի մուտքը դեպի Արևմտյան Վրաստան փակելու համար, իսկ զորքերի մյուս մասը, որ կանգնած էր Փամբակում և Արևելյան Շիրակում, Պ. Նեսվետակի գլխավորությամբ շարժվելու էր դեպի Կարս¹³², որի Մամեդ փաշան, Գուղովիչի հավաստմամբ, պատրաստ էր ինքնակամ ընդունելու ոռուսական հպատակություն։ Ի. Գուղովիչը գլխավոր ուժերով շարժվեց դեպի Ախալցխա՝ Կարսի գրավումը թողնելով գեներալ Պ. Նեսվետակի փոքրաթիվ ուժերին։ Վերջինս փորձեց գրավել բերդը, բայց չկարողացավ և նահանջելով՝ ամրացավ Գյումրիում¹³³։ Ուժեղութած թուրքերը 1807 թ. մայիսի Յունի 10000 զինվորներով ու 20 թնդանոթով շարժվեցին դեպի Գյումրի։ Դեռևս մայիսի 27-ի ի. Գուղովիչին ներկայացրած իր զեկույցում Պ. Նեսվետակը գրում էր, թե թուրքերը որոշել են Վրաստան ներխուժել պարսիկների հետ միասին։ «Ղարաքիլիսայից, Գյումրուց և Արթիկից Երևան ուղարկված լրտեսները տեղեկացնում են, որ Յուսուֆ փաշան և Հուսեին Հուլի խանը պայմանավորվել են միասին Հարձակվել մեզ վրա և գուրս քչել Վրաստանից։ Ավելին, Յուսուփ փաշան խոստացել է օգնության գեազրում Շորապյալը հանձնել Երևանի խանին։ Այս ծրագրը իրագործելու համար Երևանի մոտ կազմավորվել է 1500 հոգանոց ջոկատ, որի նպատակն է ապաստմբության մղել Ղազախի թաթարներին և Փամբակի ու Շորապյալի վրա Հարձակվելով, ինձ շրջափակման մեջ առնել»¹³⁴։ Միևնույն ժամանակ 12000 զորքով դեպի Գյումրի էր շարժվում նաև Աբաս-Միրզան՝ Յուսուփ փաշայի հետ միավորվելու և վերը նշված ծրագրը իրականացնելու համար։ Հունիսի 5-ին թուրքերը երկու անգամ գրոշում են Գյումրու վրա, ներխուժում դրույի փողոցները, բայց Կովկասյան գրենադերական գնդի քաջարի գինվորները նրանց գուրս են շարրտում և հետ մղում Ախուրյանի աջ ափը¹³⁵։ Այս մարտերի ժամանակ Յուսուփ փաշան կորցնում է իր սեփական դրոշակը և ավելի քան 200 սպանված։

Ավելի կատաղի էր Հունիսի 18-ի ճակատամարտը։ Իմանալով Գյումրու դեպքերի մասին՝ ի. Գուղովիչը օգնության է շտապում Պ. Նեսվետակին։ Թուրքական բանակին միանալու Աբաս-Միրզայի մտադրությունը իսպահներու և հակառակորդի ուժերը անջատ-անջատ ջախ-ջախելու նպատակով հունիսի 18-ին ի. Գուղովիչի գլխավորած զորքերը՝

¹³¹ Լեռ, Երկերի ժողովածու, Հ. Դ., Եր., 1984, էջ 365։

¹³² Погосян М., Карабская область в составе России, Ер., 1983, стр. 19-20.

¹³³ Присоединение..., т. 1, док 362, стр. 413.

¹³⁴ Присоединение..., т. 1, док. 360, стр. 411-412.

¹³⁵ АКАԿ, т. 3, Тифlis, 1869, стр. 546.

թվով 7000 մարդ¹³⁶, Ախուրյանի ափին՝ *Փոքր Ղարաքիլիսա գյուղի* մոտ, գրոհում են թուրքական 20000 զորքի վրա և շուրջ 7-ժամյա արյունաչեղ ճակատամարտից հետո պարտովթյան մատնում թուրքերին: Տաղով ավելի քան 1000 սպանված և մեծաքանակ ռազմամթերք թողնելով մարտի դաշտում Յուսուֆ փաշան խուճապահար փախչում է դեպի Կարս: Ուստանան կորպուսի այս Հաղթանակը ոչ միայն ձախողեց թուրք-պարակական ռազմական դաշնաքի կնքումն ու Վրաստան մտնելու նրա պլանը, այլ նաև ստիպեց թուրքիային զինադարդար խնդիրել:

Օգտվելով սահմանամերձ շրջաններում տիրող ժամանակավոր խաղաղությունից՝ ի. Գուգովիչը կորպուսի գլխավոր ուժերով՝ 6000-ոց զորքով ու 12 դաշտային թնդանոթներով Ապարանի վրայով շարժվում է դեպի Երևան՝ Հոկտեմբերի 7-ին պաշարելով բերդը: Սակայն իր նախորդի՝ Պ. Ցիցիանովի նման, Համառ դիմադրության հանդիպելով ու ծանր կորուստներ տալով՝ ստիպված էր նոյեմբերի 30-ին դադարեցնել Երևանի բերդի պաշարումը: Երևանյան երկրորդ արշավանքը, որ ուսւաների վերջին անհաջողությունն էր այս պատերազմում, պարսիկներին ու թուրքերին առիթ տվեց Շորագյալը գրավելու նոր փորձեր կատարել: Էրզրումի սերականը, ինչպես մինչև Գյումրու ճակատամարտը, այնպես էլ գրանից հետո, ամեն կերպ աշխատում էր Համախմբել Երևանի խանի, Կարսի, Բայազետի, Ախալցխայի փաշաների զինված ուժերը և միացյալ ճակատով Հարձակվելով ոսւսական զորքերի վրա՝ նրանց գուրս քշել Շորագյալից, Փամբակից ու ամբողջ Վրաստանից:

1809 թ. Հուկիսի 16-ին գնդապետ իշխան Ոհուակովը Գուգովիչին փոխարինած գեներալ Ա. Տորմասովին տեղեկացնում է, որ «պարսկական 8000-ոց բանակը, Երևանից դուրս գալով, կանգնել է Մուրագթեսի վայրում՝ Արթիկից 40 վերատ հեռու և միտք ունի Հարձակվելու Շորագյալի վրա»¹³⁸: Նույն Հուկիսին Գյումրուց մայոր Քանանովը գլխավոր հրամանատար Ա. Կորմասովին հայտնում է. «...պարսկական 12000-ոց հեծեկազորին Աբաս-Միրզայի գլխավորությամբ օգոստոսի 6-ին սպասում են Ապարանում, իսկ մինչ այդ Նաղի-Բեկին Հրամայված է կտրել կապը Փամբակի և Շորագյալի միջև: Վրաց թագաժառանդ Ալեքսանդրն էլ անցնել է Ախալցխա այնտեղից մեզ վրա Հարձակվելու համար»¹³⁹: Հուկիսի 21-ին Գյումրու մոտ ուժեղ մարտեր են տեղի ունենում ուսւաների ու պարսիկների միջև, որն ավարտվում է վերջիններիս պարտությամբ: Հուկիսի երկրորդ կեսին տեղի ունեցած ոսւսպարսկական ընդհարումների մասին գեներալ Տորմասովը մանրամասնորեն տեղեկացնում է ռազմական նախարար Ա. Արակչելին ներկայացրած գեկուցագրում. «...անցնելով Հարձակման, պարսկական

¹³⁶ Նույն տեղում, էջ 548-549:

¹³⁷ Պարսկացան վ., Հայ ավասարական շարժումների պատմությունից, Եր., 1958, էջ 81:

¹³⁸ АКАԿ, т. 4, Տիֆլիս, 1870, стр. 496.

¹³⁹ Նույն տեղում, էջ 690-691:

300 հոգանոց հեծյալ ջոկատը Երևանի Հուսեինի խանի գլխավորությամբ հուլիսի 21-ի առավոտ ժամը 8-ին գրոհել է Համամուշ գյուղում տեղակայված մեր պահակակետը: Գրոհը շարունակվել է նաև Հաջորդ օրը՝ հուլիսի 22-ին, 6-ժամյա փոխհրաձգությունից հետո պարսիկները նահանջել են՝ չկարողանալով պատճառել մեզ ոչ մի վնաս»¹⁴⁰: Նոյն օրը պարսկական 6000-ոց զորքը հարձակվում է Առիկ գյուղի վրա և Համառ դիմադրության հանդիպելով, նահանջում է՝ տալով 100 սպանված: Այդ օրը պարսկական զորքերը են նկատվում նաև Գյումրի գյուղի մոտ: Վերջիններիս դեմ է ուղարկվում փոխդնդապետ Բողաչել՝ 150 կազակներով, 50 գյումրեցի թաթարներով և 2 հետևակային վաշտերով: Զակառակորդը երկժամյա փոխհրաձգությունից հետո նահանջում է՝ տալով 50-ից ավելի սպանված¹⁴¹: Պարսկական վերջին գրոհը Գյումրու ուղղությամբ տեղի է ունեցել հուլիսի 23-ին, երբ 300 հոգուց բաղկացած ուժական ջոկատը մայոր Տոկարեկի գլխավորությամբ ստիպում է պարսկական 5000-ոց զորքին նահանջել՝ տալով 50-ից ավելի սպանված:

Թուրք-պարսկական հարձակումները Շորապյալի ուղղությամբ շարունակվում են նաև 1810-1813 թթ.: 1810 թ. օգոստոսի 12-ին Արթիկի և Գյումրու միջև տեղադրված ճամբարից գեներալ-մայոր Պորտնյագինը գլխավոր հրամանատար Տորմասովին հայտնում է, որ Երևանի Հուսեինի խանը 5000 հեծյաներով պատրաստվում է Հարձակվել Շորապյալի վրա և միանալ Ախալցիսայի Շերիֆ փաշայի հետ¹⁴²: Երեք օր հետո նա գեկուցում է. «Իմ Գյումրի գալուց մի ժամ անց, ես թնդանոթային կրակոցներ լսեցի Արթիկից և այրվող դաշտը տեսնելով՝ անմիջապես մեկնեցի այնտեղ: Տեղում իմացա, որ պարսկական հեծելագորը Հասան խանի և Խամայի խանի գլխավորությամբ, Արթիկի դաշտում, այրելով հացահատիկի հինգ դեղ Հարձակվել է գնդապետ Ոհրակովի ջոկատի վրա, պարտություն է կրել ու քաշվել Ապարանի կողմը»¹⁴³:

1811 թ. օգոստոսի 13-ին գեներալ Տորմասովը Փամբակ-Շորապյալի շրջանի զորքերի հրամանատար գեներալ-մայոր Լիսանելիշն հայտնում է, որ թուրքական սերասկյարը մոտ 8000-ոց զորք կենտրոնացնելով կարսում և Ախալցիսայում, առաջարկել է Երևանի Հուսեին-Ղուլի խանին «պարսկական զորքերով հարձակվել Հարաբիլիսայի վրա, իսկ սերասկյարը իր թուրքական զորքերով կարժի Գյումրու և Արթիկի վրա»¹⁴⁴:

1812 թ. հոկտեմբերին պարսկական զորքերը Երևանի կողմից հարձակվում են Փամբակի և Շորապյալի վրա, Դիլիջանի կողմից մտնում

¹⁴⁰ Присоединение..., т. 1, док. 438, стр. 522-524.

¹⁴¹ Նոյն տեղում, էջ 523:

¹⁴² АКАԿ, т. 4, стр. 725.

¹⁴³ Նոյն տեղում, էջ 727:

¹⁴⁴ АКАԿ, т. 4, стр. 775.

Են Բորչալու, կողոպտում ու գերում են տեղական բնակիչներից շատերին: Սակայն ուստական զորքերին կրկին հաջողում է հետ մղել թշնամուն¹⁴⁵: Այսպիսով, 1804-1813 թթ. ոռու-պարսկական և 1806-1812 թթ. ոռու-թուրքական պատերազմների ընթացքում ո՞չ թուրքական և ո՞չ էլ պարսկական զորքերին չհաջողվեց պրավել Շորապյալը:

Դրան հակառակ՝ ուստական զորքերը խոշոր հաջողության հասան թուրքական ճակատում. 1809 թ. գրավվեց Փոթին, 1810 թ.՝ Սուկիումը, իսկ 1811 թ. գեկտեմբերի 8-ին Կոտյարեևկու զորագունդը կայծակնային գրոհով գրավվեց Ալսալքալաքի բերդը¹⁴⁶: Այս ամենը, ինչպես նաև ոռուսական զենքի հաղթանակները եվրոպական ճակատում ստիպեցին Թուրքիային հաշտություն խնդրել և 1812 թ. մայիսի 16-ին Բուխարեստում հաշտության պայմանագիր ստորագրել,¹⁴⁷ որով ոռու-թուրքական պետական սահման ճանաչվեցին Արևմուտքում Պրուտ, իսկ Անդրկովկասում Ախուլյան գետերը:

Թուրքերի հետ պատերազմի հաջող ավարտն ու Հայրենական պատերազմում ուստական զորքերի հաղթանակը պարսիկներին զրկեց հաղթելու բոլոր պատրաճքներից, որոնք ամբողջովին և իսպառ ցրվեցին ոռուսների մի քանի նոր հաղթանակներով: Դրանցից կարեւորներն էին հատկապես Ալանդուուքի հաղթանակը 1812 թ. նոյեմբերի 1-ին և Լենքորանի բերդի գրավումը 1813 թ. հունվարի 1-ին: Այս հաղթանակները փաստորեն որոշեցին պատերազմի ելքը: 1813 թ. հոկտեմբերին Ղարաբաղի Գյուլիստան փոքրիկ բերդավանում հաշտության պայմանագրի կնքումով ավարտվեց ոռու-պարսկական 1804-1813 թթ. պատերազմը: Գյուլիստանի պայմանագրով Պարսկաստանը ճանաչեց Դաղստանի, Վրաստանի, ինչպես նաև Գյանջայի, Ղարաբաղի, Շաքի, Շիրվանի, Դերբենտի, Ղուլայի, Բաքվի, Թալիշի խանությունների, Լոռու, Փամբակի, Շամշադիլի, Զանգեզուրի և Շորագյալի գավառների միացումը Ռուսաստանին: Վրաստանի և Ղյուլիստանի Ադրբեջանի հետ միասին Արևելյան Հայաստանի այդ գավառների միացումով սկիզբ դրվեց նաև մնացած Հայկական Հողերի միացմանը Ռուսաստանին:

Բուխարեստի (1812 թ.) և Գյուլիստանի (1813 թ.) պայմանագրերի կնքումից հետո, Եղրավյալի շրջանի բնակչությունը մի փոքր շունչ քաշեց թուրք-պարսկական զալիքիչների հարձակումներից, բայց ինդարությունը երկարատև չեղագ:

¹⁴⁵ АКАК, т. 5, Тифлис, 1873, стр. 676-678.

¹⁴⁶ Петров А., Война России с Турцией 1806-1812 гг., т. 3, СПб., 1885, стр. 362-370.

¹⁴⁷ Договоры России с Востоком, политические и торговые, СПб., 1869, стр. 49-58.

¹⁴⁸ Այդ մասին մանրամասն տե՛ս Պոտտո Բ., Կավказская война ..., т. 3, СПб., 1886, стр 24-26.

1825 թ. վերջերից արդեն նկատելի էին դարձել պարսկական բանակում կատարվող վերադասավորումներն ու դեպի ռուսական սահմանը պարսկական զորագոկաստների շարժը: Իսկ երբ անգիտական գործակալների միջոցով՝ Պարսկաստան հասավ դեկաբրիստների ապատամբության չափազանցված լուրք, Ռուսաստանի դեմ պատերազմը դարձավ անխուսափելի: Պարսկների ուղղմական նախավասրաստությունների մասին ռուսական կովկասյան կառավարչապետությունը տեղյակ էր: Այսպես, 1826 թ. Հուլիսի 3-ին փոխծովակալ Վելյամինովին հղած իր գեկուցագրում գնդապետ Ռենտուր Հայտնում է. «Հենց նոր արքեպիսկոպոս Մարտիրոսի միջոցով ստացա Ղազար Սելիք Կուրարովի հունիսի 27-ին Թավրիզից գրած նամակը, որից տեղեկացա, որ պարսկական մեծամիջուկ գորքը շարժվում է գեափի Արդարիլ, Երևան, Սեղրի, Օրդուքաղ՝ իր հետ ունենալով 15 թողանոթ»¹⁴⁹: Նույն Ռենտուր 1826 թ. հուլիսի 18-ին տեղեկացնում է Երմոլովին Արաս-Միրզայի 60000 բանակի Ղարաբաղ ներխուութեղու մասին: Արաս-Միրզայից առաջ՝ հուլիսի 16-ին, ուղղմական գործողությունները սկսեցին Երևանի սարդար Հուսեին-Ղուլի խանն ու նրա եղբայր Հասան խանը: Վերջիններս, կոտրելով ռուսական սահմանային պահակակետերի գիմաղբությունը, ներխուութեցին Փամբակ-Շորագյալի տարածք ու սկիզբ դրեցին 1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմին, որում Արաս-Միրզայի իննիքին էր Ղարաբաղ-Ելիսավետպոլի վրայով գրավել Թիֆլիսը, իսկ Երևանի վրայով՝ Փամբակ-Շորագյալը և գուրս մղել ռուսներին Անդրկովկասից: Չափազանց ծանր դրություն էր ստեղծվում Անդրկովկասի ժողովուրդների և ռուսական գորքամիջուկ գորամասերի համար: Օգտվելով Հարմար պահճից՝ Երևանի սարդարի եղբայր Հասան խանը իր գորքերով Հարձակվում է Փամբակի և Շորագյալի երեք կարելոր կետերի՝ Միրաքի, Փոքըր Ղարաքիլիսայի և Համզաշիմանի վրա¹⁵⁰: 1826 թ. ամռանը Շորագյալի և Փամբակի գավառներում պարմիկների կատարած ավելածությունների ու ոճրագործությունների մասին Վ.Պոտտոն գրում է. «Վրա Հասավ 1826 թ. ամառը, երբ պարսկական Հրոսակախմբերն անսպասելի կերպով, առանց պատերազմ հայտարարելու, ներխուութեցին մեր սահմանները, և ամպրոպը ճայթեց անպաշտպան բնակչության գլխին: Երևանի խանի առաջին Հարվածը կրեցին Փամբակի և Շորագյալի շրջանները: Գյուղերն ամայացրին, երեխանների ու կանանց մեծ մասին տաննջամահության ենթարկեցին, Հարյուրավոր ընտանիքներ գերի տարան»¹⁵¹:

¹⁴⁹ Հովհաննիսյան Կ., Արևելյան Հայաստանի պատապրական շարժման պատմությունց, Եր., 1981, էջ 53:

¹⁵⁰ АКАР, т. 6, ч. 2, Тифлис, 1875, стр. 354.

¹⁵¹ Потто В., Первые добровольцы Карабага в эпоху водворения русского владычества, Тифлис, 1902, стр. 58.

Շորագյալում Հասան խանի կատարած չարագործությունների, ինչպես նաև 1826 թ. Հովհս-Հոկտեմբեր ամիսների ուսումնական ընդհարումների մասին մանրամասնորեն պատմում է գեներալ-լեյտենանտ Մ. Կոցեբուն «Կովկասյան ժողովածու» Հանդեսի XXII համարում¹⁵²: Կոցեբուն նաև նշում է մինչ պատերազմի սկավեր ուսասական զորքերի դասավորվածությունը. Փամբակում և Շորագյալում՝ 2993 զինվոր, 12 թնդանոթ, 500 կազակ, Ղարաբաղի պրովինցիայում՝ 2651 զինվոր, 6 թնդանոթ, 316 կազակ և Թալիշի խանությունում՝ 694 զինվոր ու 91 կազակ¹⁵³:

1826 թ. Հովհսի 16-ին Հասան խանը 3000-ոց զորքով հարձակվում է Միրափի վրա ու ստիպում գնդապետ իշխան Սևարսեմիձեկին, գնդապետ բարոն Ֆրիդրիխսին և փոխգնդապետ Դոլգովիսարբուրովին Ապարանով նահանջել դեպի Գյումրի¹⁵⁴, իսկ ուսաներին Հետապնդող պարսկական բանալը մտնում է Փոքր Ղարաբիլսա ու սարսափելի ավերածություններ կատարում: 1838 թ. սենատոր Գանի հետ Հայաստանում կատարած իր ճանապարհորդական ուղեգործություններում և. Արովյանը, խոսելով Փոքր Ղարաբիլսայի դեպքերի մասին, գրում է. «Այստեղ թափեց իր անողորմ դառնության թույնը Երևանի արյունաբերու կուսակալ Հասան խանը... սրախողիսող արեցին ծերունիներին, այրեցին տները, ավար վերցրին նրանց ամբողջ ունեցվածքը և 200 դեռահասների գերի տարան»:

Պետական փաստաթղթերի Համաձայն՝ չնայած հարձակման հանկարծակիությանը, պարսկեները ամբողջ Շորագյալից գերի են տարել ընդամենը 1200 մարդ¹⁵⁵, բայց ականատեսների ու ժամանակակիցների վկայությամբ՝ 1200 մարդ կամ մոտավորապես 200 ընտանիք^{*} պարսկեները գերի էին վերցրել միայն Փոքր Ղարաբիլսայում¹⁵⁶: Հովհսի 16-ին պարսկական մեկ այլ՝ 200 Հովհանոց ջոկատ հարձակվում է Համգաչյանի վրա: Հովհսի 18-ի գրությամբ Երևանի խանը ուներ 1000 հեծյալ Գյոկչայում՝ նայի խանի գլխավորությամբ և 1000 հեծյալ

¹⁵² Кондебу М., Описание вторжения персиян в Грузию в 1826г., Кавказский сборник, т. ХХII, Тифлис, 1901, стр. 19-141.

¹⁵³ Եռոյն տեղում, էջ 101:

¹⁵⁴ Кондебу М., Նոյնին:

¹⁵⁵ Արովյան Խ., Երկերի լիակատար ժողովածու, հ. 7, Եր., 1956, էջ 47-48:

¹⁵⁶ Присоединение Восточной Армении к России, Сборник документов, т. 2, под редакцией Ц. П. Агаяна, Ер., 1978, док. 133, стр. 209.

* Կ. Հովհաննիայանը գրում է, թե միայն Փոքր Ղարաբիլսայում գոհել է 1115 մարդ, որից 600-ը արական, իսկ 515-ը իգական սեռի (Կ. Հովհաննիայան, Արևելյան Հայաստանի պատագրական շարժման պատմությունից, Եր., 1981, էջ 56): Գ. Աղանյանը նկարագրելով Փոքր Ղարաբիլսայի դեպքերը, գրում է. «Տուժածների թիվը հասնում է 2000-ի, որից 70-ը սպանված, 200-ը վիրավոր, իսկ մնացածը՝ գերի է տարիել» (ՀՀ ՊԿԱ, Փող. 332, գուցալ 1, գործ 120, էջ 1):

¹⁵⁷ Утверждение русского владычества на Кавказе, т. 4, ч. 1, под редакцией генерал-майора Потто, Тифлис, 1906, стр. 250.

կարափափախներ էլ՝ Բաղիկչայի դիմաց: Երևանի սարդարն անձամբ ներխուժել էր Միրաք՝ ունենալով երկու գումարատակ հետևակ, 6 թնդանոթ, 3000 հեծյալ, իսկ նրա եղբայր Հասան խանը մտել էր Աղյաման (Գառնահովիտ) և իր 5000 հեծյալներով պատրաստվում էր Հարձակվել Գյումրու վրա: Ուստաները Փամբակն ու Շորավարը երևանի խանի Հարձակումներից պաշտպանելու համար ունեին ընդամենը 120 զինվոր Բեքամսուում (Սև Պարնի), 700 զինվոր 4 թնդանոթներով Գյումրիում, 200 զինվոր 1 թնդանոթով՝ Համամլուում (Սպիտակ), 75 զինվոր՝ Հերէերում, 60 զինվոր՝ Ջելալ-օղլիում (Ստեփանավան), 300 զինվոր 3 թնդանոթով և 60 կազակ՝ Ղարաբիլիսայում (Վանաձոր) և 300 զինվոր ու 2 թնդանոթ Բալիկ-չայում¹⁵⁸: Երբ Հուկիսի 25-ին Աբաս-Միրզայի 60000-ոց բանակը մտավ Ղարաբաղ և պաշարեց Շուշին, ¹⁵⁹ Հասան խանի գորքերը դրանից չորս օր անց՝ 29-ին հայտնվեցին Գյումրու և Ղարաբիլիսայի դիմաց, սակայն որևէ լուրջ հաջողության չեն հասնում: 1826 թ. սեպտեմբերից ուստա-պարսկական պատերազմը թևակոխեց իր երկորդ շրջափուլը, որը նշանավորվեց Համալրում ստացած Կովկասյան հասուլի կորպուսի գորամասերի մի շարք հաղթանակներով: Դրանցից առաջինը Շամիսրի նշանավոր ճակատամարտն էր, երբ ուստական 2000-ոց մի զորագունդ գեներալ Վ. Մալաթովի հրամանատարությամբ սեպտեմբերի 3-ին Շամիսր գետի ափին ջախջախեց Ամիրի խանի պարսկական 10000-ոց բանակն ու ետ գրավեց Ելիսավետպոլը: «Շամիսրի Հաղթանակը, — գրում է Վ. Պոտոտն, — դարձավ պատերազմի ելքը կանխորոշող փաստ, կշեռքի նժարը թեքվեց ուստաների կողմը, և ապագան խոստանում էր նորանոր Հաղթանակներ»¹⁶⁰: Սեպտեմբերի 13-ին ուստաները գեներալ Պասկվիչի կովկասի ժամանակակից կրկին Շամիսրի մոտ պարտության են մասնում արդեն Աբաս-Միրզայի 25000-ոց բանակը: Նույն ժամանակամիջոցում ուստական կորպուսի գորամասերը Հաղթական մարտեր են վարում նաև Շորագյալում, Փամբակում և Ապարանում: Ուստական առաջապահ գորքերը՝ 3 հետևակային գումարտակ, 3 թնդանոթ և 150 հեծյալ, իշխան Մասրսեմիձեի գլխավորու-

¹⁵⁸ Потто В., Материалы к истории персидской войны 1826-1828 гг., Кавказский сборник, т. XXIV, Тифлис, 1903, стр. 3.

¹⁵⁹ Գալոյան Գ., Ուստաստանը և Անդրկովկասի ժողովուրդները, Եր., 1978, էջ 196:

¹⁶⁰ Ներփառան Մ., նշվ. աշխ., էջ 293:

¹⁶¹ ՀՀ Պետական գոնդ 332, ցուցակ 1, գործ 120, էջ 1:

¹⁶² Потто В., Кавказская война..., т. 2, СПб., 1885, стр. 796.

* 1826թ-ին որպես Երմղովի տեղակալ Կովկաս է ուղարկվում գեներալ Պասկվիչը: Ն. Աշոարակեցուն գրած նամակներից մեկում Խ. Լազարյանը գաղտնի Հաղորդում էր, որ կայսրը դժգոհ է Երմղովից և Կովկաս է ուղարկում գեներալ Պասկվիչին, առաջմ որպես ստորագրյալ, իսկ Հաղթանակ շիներու դեպքում նա կիրիսարինի Երմղովին: Այդ մասին տես Մաշտոցի անվան Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 53, վագ. 162:

թյամբ սեպտեմբերի 20-ին գրավում են Ղզղաղ և Համամլու գյուղերը, իսկ 21-ին Դ. Դավիթովի զորագունդի Ապարանում՝ Միրաք գյուղի մոտ, Հաղթական ճակատամարտ մղեղով Հասան խանի 4000 հեծյալների դեմ, վերջիններիս հարկադրում է նահանջել Երևան¹⁶³: Այսպիսով, չնայած թշնամու թվական գերակշռությանը, Կովկասյան կորպուսին հաջողվեց 1826 թ. աշնան վերջերին Գյուղիստանի պայմանագրով ճանաչված Անդրկովկասի ոռուսական տիրուկթները լիովին մաքրել պարսկական բանակներց:

1827 թ. սկզբին Կովկասյան կորպուսը սկսում է Երևանյան երրորդ և վերջին արշավանքը: Ապրիլի 13-ին գրավում է Էջմիածինը, հունիսի 26-ին՝ Նախիջևանը, հունիսի 7-ին՝ Աբսարաբադը, սեպտեմբերի 20-ին ոռուսները գրավում են Սարդարապատի բերդը¹⁶⁴, հոկտեմբերի 1-ին՝ Երևանը¹⁶⁵, Հոկտեմբերի 13-ին մտնում Թավրիզ, իսկ Հաջորդ տարվա մինչև Հունվարի 25-ը գրավում Մարաղան, ՈՒրմիան, Խոյը, Սալմաստն ու Արդաբիլը: Իրար Հաջորդած ծանր պարտություններն ու երկրում ծայր առած հունումները ի վերջո ստիպեցին Ֆաթհ-Ալի շահին հաշտություն ինդրել: Հաշտությունն անհրաժեշտ էր նաև ոռուսներին, քանի որ նրանք արդեն լուծել էին իրենց առջև դրված խնդիրը՝ գրավել Երևանի և Նախիջևանի խանությունները և դուրս գալ Արարափ սորատեղիական կարեռություն ներկայացնող սահմանագիծը: Հաշտության կնքումը կկանխեր նաև թուրք-պարսկական հնարավոր ուղղմական դաշինքը, և թուրքիայի հետ պատերազմի դեպքում Կովկասյան կորպուսի ամբողջ ուժերը կկենտրոնացնեին վերջինիս դեմ: 1828 թ. փետրվարի 10-ին Ոռուսաստանի և Պարսկաստանի միջև կնքվեց թուրքմենչայի հաշտության պայմանագրերը¹⁶⁶, որով Պարսկաստանը ճանաչեց Արևելյան Հայաստանի միացումը Ոռուսաստանին:

Դ) Շորագյալի գավառի միացումը Ոռուսական կայսրությանը. Վարչատարածքային սահմաններն ըստ Գյուղիստանի և Թուրքմենչայի պայմանագրերի և ժողովրդագրական իրավիճակը

XIX դ. սկզբը նշանավորվեց նոր ոռուս-պարսկական և ոռուս-թուրքական պատերազմներով, որոնց արդյունքում Ոռուսական կայսրությանը միացվեցին Դաղստանը ու Վրաստանը, Գյանջայի,

¹⁶³ Ներսիսյան Մ., նշվ. աշխ., էջ 306:

¹⁶⁴ Լեռ, Հայոց պատմություն, Նորագույն շրջան, մ. 2, Եր., 1927, էջ 102:

¹⁶⁵ Այդ մասին մանրամասն տե՛ս Պոտտո Բ., Покорение Эривани, изд. 2, СПб., 1903; Шульгин Կ., Взятие Эривани, СМОМПК:, выпуск 4, отд. 2, Тифлис, 1884, стр. 34-39.

¹⁶⁶ Договоры России с Востоком..., стр. 214-227.

Ղարաբաղի, Շաքիի, Շիրվանի, Դերբենդի, Ղուբայի, Բաքվի, Թալիշի, Երևանի և Նախիջևանի խանությունները, Լոռու, Փամբակի, Շամշադինի, Զանգեզուրի, Շորապյալի գավառները:

Այժմ ավելի մանրամասն նկարագրենք, թե ինչպիսի պատմաքաղաքական հանգամանքներում և ինչպես միացվեց Ռուսաստանին Շորապյալի գավառը:

Շորապյալ կամ Արևելյան Շիրակ ենք կոչում պատմական Շիրակ գավառի այն մասը, որ կիսվելով Ախուրյան գետով՝ ընկնում է նրա արևելյան կողմում: Ինչպես գրում է Դ. Ալիշանը՝ «Հյուսիսից այն սահմանակից է Լոռու և Փամբակի գավառներին՝ բաժանվելով վերջիններից» Մատաթափե և Ղուզղարա լեռներով, հարավում և արևելքում Արագածոտնի գավառից անջրավետում է Գարաբիսաչ, Նոր Ահմեդ, Աղախան, Գոշ-Թեփես, Քեփենեկ, և Արագած լեռներով, իսկ արևելյան կողմում Ախուրյան գետով՝ բաժանվում է Շիրակի մյուս՝ արևմտյան մասից, որ Օսմանյան սահմանի մեջ է»¹⁶⁷:

Շիրակի գավառի արևելյան հատվածում XVI դարի վերջերին ձևագորգած Շորապյալի սուլթանությանը տիրելու երևանի խաների և վրաց թագավորների միջև երկարատև վեճը լուծվեց միայն 1805թ., երբ ռուսական զորքերը գններալ-մայոր Պ. Նեսկինակի գլխավորությամբ Շորապյալի սուլթանությունն ընդմշյա միացրին Ռուսաստանին¹⁶⁸: Իսկ այս լրադարձությանը նախորդել էր Հետելյալը. 1801թ. սեպտեմբերի 12-ին ռուսաց Ալեքսանդր Ա կայսեր մանիֆեստով պաշտոնապես ձևակերպվեց Արևելյան Վրաստանի միացումը Ռուսաստանին*, ինչը չափանց կարևոր նշանակություն ունեցավ՝ Անդրկովկասի ժողովուրդների համար: Վրաստանի և նրա կազմում Հյուսիսային Հայաստանի մի քանի շրջանների՝ Ռուսաստանին միացումով հայ ժողովրդի համար ստեղծվեցին Ռուսաստանի օգնությամբ պարսկական և թուրքական տիրապետությունից ազատագրվելու իրավան պայմաններ: Ռուսաներն հույս ունեին ամբողջ երկրամասը յուրացնել Վրաստանի օրինակով՝ առանց լուրջ ռազմական զործողությունների՝ կանխապես ապահովելով տեղի ժողովուրդների և մանավանդ, Հայերի աջակցությունը: Այդ է վկայում Պավել Ա-ի 1801 թ. Հունվարի 23-ի ուսակիպատը Վրաստանում գլխավոր Հրամանատար Կ. Կոռրիինդին. «...Փորձեք լավ Հարաբերություններ Հաստատել Հայերի հետ: Մեր կարծիքով նրանք հոգնել են պարսիկներից և ուրախ կլինեն մեզ նման դաշնակից ու Հովանավոր

¹⁶⁷ Ալիշան Դ., Շիրակ, էջ 143; Տեղագութիւն Շիրակայ, աշխատասիրեալ ի Պողոս Վարդպապետ Պետրոսյանի, էջ 55; Քաջմերունի, Ակեբաննդրապոլից դեպի Կարին, «Փորձ», III տարի, 5 մայիսի, N 5, Տիվիս, 1879, էջ 173:

¹⁶⁸ АКАԿ, թ. 2, стр. 574.

* Առաջին անգամ Արևելյան Վրաստանը Ռուսաստանին միացվեց 1801թ-ի Հունվարի 18-ի Պավել Ա-ի մանիֆեստով: Այդ մասին տե՛ս Մաշտոցի անվան Մատենադարան, Աւ. Երիցյանի արիվիլ, թղթ. 157, վալ. 9, էջ 1:

ունենալով»¹⁶⁹, իսկ Ալեքսանդր Ա. կայսրը նույն Կ. Կոռորդինգին 1801 թ. սեպտեմբերի 12-ի իր հրահանգով կարգադրել էր «ջանալ ավելացնելու Ռուսաստանի Համախոչների թիվը, մանավանդ՝ Հրապուրել Երևանի, Գանձակի, Շաքիի, Շիրվանի և Բաքվի խաներին»¹⁷⁰: Սակայն, երբ ի գերեւ եղան խաղաղ պայմաններով նոր տարածքներ Ռուսաստանին միացնելու ցարական կառավարության հույսերը, առաջնահերթ գարձավ Շորագյալի գավառի գրավման ինդիբը: Դեռևս 1800 թ. սեպտեմբերի 24-ին գեներալ-մայոր Լազարեց գեներալ-լեյտենանտ Կոռորդինգին ուղարկած իր գեկուցագրում գրում էր, թե «...սա (Շորագյալի գավառը-Ա. Հ.) Մեծ Հայաստանի մի մասն է, որ անցել է Վրաստանին և գտնվում էր վերջինիս տիրապետության տակ, մինչև Հերակլ Բ-ն, որ տիրում էր նաև Երևանի խանությանը, և որն էլ նվիրեց Շորագյալը Երևանի խանին: Որոշ ժամանակ անց, երբ Երևանի խանի և Հերակլ Բ-ի Հարաբերությունները վատացան, Շորագյալը հետ վերցվեց Երևանի խանությունից և մինչև Հիմա գտնվում է Վրաց տիրապետության ներքո»¹⁷¹: Ինչպես տեսնում ենք, գեներալ-մայոր Լազարեց գեկուցը պարարտ հող էր ստեղծում Շորագյալի գավառի մոտայլուստ միացումը Ռուսաստանին Հիմնավորելու համար: Շնորհված ոռուական սրբնիաց գրոհի՝ 1804 թ. մինչև Հունիսի 15-ը գրավվեցին Փոքր Ղարաբիլսան, Գյումրին և Արթիկը, և գրանով փաստորեն Շորագյալի գավառը կամ այդ ժամանակ դեռ գոյություն ունեցող Շորագյալի սովորական միացվեց Ռուսաստանին: Փորձելով գարգացնել Հաջողությունը՝ ոռուական բանակը, Հունիսի 15-ին գուրս գալով Գյումրուց, Ապարանի վրայով շարժվեց դեպի Երևան, բայց Երևանը գրավելու ոռուակը բողոք հույսերը ի չիք գարձան, և սեպտեմբեր ամսին նրանք ստիպված նահանջեցին Վրաստան: Ռուսական նահանջից հետո Շորագյալի սովորական միացվեց անցավ Երևանի խանին, մնալով սակայն, ինչպես նախկինում, մի ինքնավար գավառ՝ Հապատակված Բուռգաղ սովորականին, որի հետ էլ Կովկասյան կորպուսի Հրամանաստարությունը բանակցություններ սկսեց Շորագյալը Ռուսաստանին միացնելու նպատակով: «Մեզ Հայտնի է, գրում էր իշխան Պ. Յիշխանովը 1804 թ. սեպտեմբերի 14-ին Բուռգաղ սովորականին ուղարկած նամակում, - որ նախկինում Դուք ենթարկվել եք Վրացական թագավորությանը: Արդեն երեք տարի է, ինչ Վրաստանը գտնվում է Ռուսաստանի կազմում և վայելում է մեր բարի ցարի հովանավորությունը: Մեզ Հայտնի է նաև, որ Դուք այժմ ենթարկվում եք Երևանի սարդարին, և վերջինս Ձեզ անխղճորեն թալանում է: Այդ պատճառով էլ առաջարկում ենք Ձեզ բնդումել ոռուական հապատակություն, որը անդորր կբերի Ձեզ և Ձեր տիրույթներին»¹⁷²: Սակայն դեպ-

¹⁶⁹ Մաշտոցի անվան Մատենադարան, Լագարյանների արխիվ, թղթ. 111, գործ 79, վալ. 1:

¹⁷⁰ Դյուրովին Հ., Զակավազье в 1803-1806гг., стр. 57.

¹⁷¹ АКАԲ, т. 1, Тифлис, 1866, стр. 591-592.

¹⁷² АКАԲ, т. 2, стр. 625-626.

քերը Շորագյալում այլ բնթացք ունեցան: Երևանի Մահմադ խանը, իր մոտ կանչելով, բանտարկում է Բուրգաղ սուլթանին և որպես փրկագին պահանջում 30000ռ.¹⁷³: Հակառակ դեպքում խանը սպառնում էր զորք ուղարկել Շորագյալ՝ դրամը ժողովրդից բռնությամբ ստանալու համար: Վերջինս էլ, չկամենալով վճարել, դիմում է ուստաներին՝ իննդրելով նրանց պաշտպանությունը: Այդ մասին Պ. Նեսվետակը 1805 թ. մարտի 20-ին Պ. Ցիցիանովին ներկայացրած իր գելուցում գրում է. «Սույն ամսին ինձ մոտ եկած Ղարամահմեղ-աղան (սուլթանի որդին-Ա.Հ.) և Զեգանե-Գիր բեկն ինձանից իննդրում են ոռուսական հպատակություն և առաջարկում շտապ կերպով գրավել Արթիկը, որպեսզի այն չգրավվի Երևանի խանի կողմից: Նրանք իննդրում էին զորքեր ուղարկել Ղփչաղ (Հառիճ), որտեղ և իրենք պետք է հավաքվեին իրենց ընտանիքներով և ունեցվածքով»¹⁷⁴: Օգտվելով իրավիճակից՝ գեներալ-մայոր Նեսվետակը իննդրում է Պ. Ցիցիանովին օգնել չորագյալցիներին և թուլլտրովություն ստանալով նրանից՝ 1805 թ. մարտի 27-ին 400 զինվորներով Փամբակի Ղարաքիլիսա գյուղից անցնում է Շորագյալ ու մարտի 30-ին գրավում Արթիկը: Բուրգաղի փոխարքն Նեսվետակը սուլթան է հոչակում նրա որդուն՝ Համո-բեկին, որն էլ 1805 թ. մարտի 31-ին ամբողջ ժողովրդով ընդունում է ոռուսական հպատակություն՝ ստորագրելով առանձին պայմանագիր՝¹⁷⁵: Սակայն Հուլիս ամսին բացահայտվում է Համո-բեկի դավաճանությունը. վերջինս ստաներից գալտնի կապ էր պահպանում Երևանում գտնվող իր Հոր Հետ: «Եղներով իրավիճակից՝ գրում էր Նեսվետակը Ցիցիանովին, -նպատակահարմար ենք Համարում կանչել Համո-բեկին Ղարաքիլիսա և պահել այնքան ժամանակ, մինչև մենք կդնանք Արթիկ և տեղում կլուծենք բոլոր Հարցերը»¹⁷⁶: Թե ի՞նչ հարցեր էին լուծվելու Արթիկում, այդ մասին մեզ հասած փաստաթղթերում ոչինչ չի խոսվում: Հայտնի է միայն, որ 1805 թ. Հուլիսի 17-ին Համո-բեկը կանչ վում է Ղարաքիլիսա և ընդմիջում գրկվում իշխանությունից:

1805 թ. Հուլտեմբերի 25-ին Ելիսավետպոլի բերդում գեներալ Պ. Ցիցիանովը գերությունից վերադարձած Բուրգաղ սուլթանի հետ պայմանագիր է կնքում, որի համաձայն Շորագյալը մեկրնդիշտ միանում է Ռուսաստանին՝ տարեկան վճարելով 2000ռ. Հարկ՝¹⁷⁷ Պաշտո-

¹⁷³ Дубровин Н., История войны и владычества русских на Кавказе, т.4, стр. 429.

¹⁷⁴ Присоединение..., т.1, док. 218, стр. 292.

¹⁷⁵ АКАК, т. 2, стр. 574; Утверждение русского владычества на Кавказе, т. 1, под редакцией В. Потто, Тифлис, 1901, стр. 197.

¹⁷⁶ АКАК, т. 2, стр. 625-626.

¹⁷⁷ Присоединение, т. 1, док. 276, стр. 337-338. Շորագյալը Ռուսաստանին միացնելու համար գեներալ-մայոր Նեսվետակն արժանացել է ար. Վկալիմիրի երկրորդ աստիճանի շքանշանի:

նապես այն վակերացվեց 1813 թ. Հոկտեմբերի 12-ի Գյուլիստանի պայմանագրով¹⁷⁸:

Շորագյալի միացումը Ռուսաստանին խոչոր նշանակություն ունեցավ տեղի բնակչության համար, որը վերջապես ազատվեց թուրք-պարսկական բռնակալների լծից: Ինչ վերաբերում է Ռուսաստանին, ապա Շորագյալի ձեռքբերումը կարևոր նշանակություն ուներ նախ որպես հայի շտեմարան, որի մեծ կարիքն ուներ ռուսական բանակը: Թուրքական և պարսկական տիրապետության տակ գտնվող հայ զանգվածներն առաջին անգամ հնարավորություն ստացան անմիջապես կապվելու ռուսահպատակ Հայերի հետ: Մեծ էր նաև Շորագյալի գավառի ռազմաստրատեգիական նշանակությունը որպես միջնապատ Ռուսաստանի, Թուրքիայի և Պարսկաստանի միջև: Այստեղ՝ Շորագյալի տարածքում, միանգամից բախվում էին երեք պետությունների շահեր: Ռուսաստանը Շորագյալի գրավումը համարում էր կարևորագույն և առաջնահերթ նախապայման հետագայում ամբողջ Արևելյան Հայաստանին տիրելու հարցում, իսկ Թուրքիայի և մանավանդ Պարսկաստանի համար Շորագյալը միանգամայն հաջող պլացցարմ էր Վրաստան ներխուժելու և ռուսներին այնտեղից վտարելու համար: Պատահական չէ, որ XIX դ. ռուսական պատմագրությունը այնքան կարևոր տեղ է հատկացնում Շորագյալին վերոհիշյալ պատմաքաղաքական իրադրության մեջ: Այսպես, ռազմական պատմաբան Վ. Պոտտոն գրում է. «1805 թ. մարտին գեներալ Նեսվետակը Ռուսական կայսրությանը միացրեց Շորագյալի կարևոր մարզը, որ պաշտպանում էր Վրաստանը ոչ միայն երևանի, այլև Կարսի ու Արդահանի թուրքական բերդերի կողմից»:

Բայց Գյուլիստանի պայմանագրին վիճակված չէր երկար կյանք ունինալ: Այն փաստը, որ պայմանագրի կնքումից ընդամենը երկու տարի անց Ս. Պետերբուրգում Պարսկաստանի գեսապան Միրզա Աբդել Հասան խանը, արդեն կիսառկամատիվ ձևով գիմելով ռուսական կառավարությանը, առաջարկում էր կնքել ավելի մանրամասն պայմանագիր և «շահին վերադարձնել այն խանությունները, որոնք Ռուսաստանին էին զիջվել Գյուլիստանի պայմանագրով», վկայում էր ռուս-պարսկական հարաբերությունների սրման մասին: Դրան նպաստում էր նաև թուրքական կառավարությունը, որը չճանաչելով Գյուլիստանի հաշտությունը, չընդունեց նաև Վրաստանի միացումը Ռուսաստանին: Թուրքերին, մանավանդ Կարսի փաշայությանը, մեծ վնաս հասցրեց Շորագյալի գավառի միացումը Ռուսաստանին, որով փակվեց գեպի Պարսկաստան գնացող ճանապարհը, և դժվարացավ հա-

¹⁷⁸ АКАИ, т. 5, Тифлис, 1873, стр. 735; Договоры России с Востоком..., стр. 210.

¹⁷⁹ Потто В., Кавказская война..., т. 1, СПб., 1885, стр. 336.

¹⁸⁰ ՀՀ ԳԱԱ Պի, Լեոյի ֆոնդ 1, ցուցակ 1, գործ 349, կը 1; Внешняя политика России XIX и начале XX века, 1815-1830гг., документы, т. VIII, М., 1972, с. 547.

ցահատիկի արտահանումն այս ուղղությամբ, ինչն էլ իր հերթին մեծապես վնասեց փաշայության տնտեսությանը: Ահա այսպիսի իրավիճակում Վրաստանում գլխավոր զորահրամանատար Ա. Երմոլովը որպես Ռուսաստանի արտակարգ դեսպան 1817թ. ժամանեց Պարսկաստան՝ քննարկելու Գյուլիստանի պայմանագրի կատարման հարցերը¹⁸¹:

Ի՞նչն էր պարսկական կողմին թեևապրում պատերազմով կորցրած հողերը բանակցությունների միջոցով հետ ստանալու հարցում: Վ. Դիլոյանը գրում է, թե «...մինչև Գյուլիստանը կնքվել էր այսպես կոչված «սեպարատ ակտ»», որը պարսկական կողմին հնարավորություն էր թողնում զիմել կայսրին՝ սահմանները փոխելու խնդրանքով¹⁸²: Ինչպես կտեսնենք, հետագայում այդ «սեպարատ ակտը» դիվանագիտական բավական մեծ անախորժությունների տեղիք տվեց, մանավանդ, որ սահմանաբաժան գիծը պայմանագրում ծառությամբ և մանրամասն նշված չէր: Եթե մինչև 1823 թ. Աբբաս-Միրզան Ա. Երմոլովի հետ բանակցություններում հետ էր պահանջում միայն Թավիշի և Ղարաբաղի խանությունները, ապա 1824թ. նա սկսեց պահանջներ ներկայացնել նաև Շորագյալի նկատմամբ: Մինչդեռ կարևոր ռազմասարատեղիական դիրք ունեցող այդ շրջանը՝ սեպի պես խրված երևանի խանության և Կարսի փաշայության միջև, որ արդեն 20 տարի ուռւական տիրապետության տակ էր, Ա. Երմոլովը ոչ մի պայմանով չէր ցանկանում հետ վերադարձնել պարսիկներին: Այն ոչ միայն պաշտպանում էր Վրաստանը թուրք-պարսկական հարձակումներից, այլև պատերազմի դեպքում հարմար հենակետ էր Թուրքիայի կամ Պարսկաստանի վրա հարձակվելու համար: Երմոլովի կարծիքով չարժեք ոչ մի կտոր հող վերադարձնել պարսիկներին, քանի որ դա էլ ավելի կրծվարացներ առաջ այն էլ պաշտպանության համար անհարմար սահմանը պահելու: Ճիշտ է պարսկական կողմին Ֆաթհ-Ալի խանի գլխավորությամբ 1824 թ. բանակցությունների ժամանակ այնուամենայնիվ հաջողվեց Շորագյալից պոկել և Պարսկաստանին միացնել բավականին մեծ մի տարածք՝ բնկած Քյափանակ-չայի և Ղափան-չայի միջև, բայց ուռւական այդ վիզումը չգոհացրեց Աբբաս-Միրզային¹⁸³: Ուռւ-պարսկական 1824 թ. բանակցություններում անհամաձայնության գլխավոր պատճառը այսպես կոչված «Շորագյալի անկյունն եղավ»¹⁸⁴: Ավելին, ձախողվելով

¹⁸¹ Балаян Б.,Международные отношения Ирана в 1813-1838 гг., автореф. канд. дис., Ер., 1963, стр. 14.

¹⁸² Դիլոյան Վ., Արևելյան Հպատականը 19-րդ դարի առաջին երեսամյակին և հայուսական հարաբերությունները, Եր., 1989, էջ 188:

¹⁸³ Потто В., Материалы к истории персидской войны 1826-1828 гг., 1825-й год, Кавказский сборник, Тифлис, 1900, т. XXI, стр. 168.

¹⁸⁴ Фадеев А.,նշվ. աշխ.,էջ 191;Балаян Б.,Дипломатическая история русско-иранских войн и присоединение Восточной Армении к России, Ер., 1988, стр. 140.

Շորագյալը հետ վերադարձներու իրենց պլանի մեջ, պարափկները գրավեցին Սեղրու ոռուական մասը և հրաժարվեցին հեռանի խանովթյանը պատկանող Սևանա լճի հյուսիս-արևելյան մասը: Իրավիճակը շիկանում էր. Աբաս-Միրզան նորից ու նորից պահանջում էր Շորագյալը: Հաջողովթյան չհասնելով բանակցություններում պարսկական կողմը սկսեց մեծ թափով պատրաստվել պատերազմի, որի առաջին հարվածը իրենց վրա ընդունեցին Փամբակի և Շորագյալի գավառները:

Արդեն 1825 թ. նոյեմբերի 8-ի թիվ 613 գեկույցում իշխան Սևարսեմիձեն գեներալ Վեյսմինովին հայտնում էր, որ Աբբաս-Միրզայի հրամանով Երևանի սարդարը Շորագյալի Աղյուսաման և Բողդողան գյուղերն է ուղարկել շատ երևանցիների, ասերով, թե դրանք պարսկական Հողեր են¹⁸⁵: «Ես,- գրում է Սևարսեմիձեն,- նամակ եմ ուղարկել սարդարին և ասել եմ, որ դրանք մեր հողերն են, և եթե նա երևանցիներին այդ հողերից չեռացնի, ապա ես նրբանց կամարեմ շորագյալցիներ և կդարձնեմ ոռուահպատակ»¹⁸⁶: Բայց ոռուական կողմի պահանջը իր նպաստակին չհասավ, ավելին Վեյսմինով Ա-ն 1826 թ. հուլիսի 7-ին իշխան Սևենչիկովին գրում էր, թե «Երևանի սարդարը ոչ միայն իր մարդկանց չի հեռացրել իր կողմից զավթված և մեզ պատկանող Շորագյալից, այլև հայտարարելէ, թե 12 օրից այստեղ է բերելու նաև քոչվորների և մեծաթիվ զորք»¹⁸⁷: Հավանաբար այս նամակը դեռ չէր հասել հասցեատիրոջը, երբ պարսկական զորքերը Երևանի կողմից ներխուժեցին Փամբակի և Շորագյալի գավառների տարածք և սկիզբ դրեցին 1826-1828թթ. ոռու-պարսկական պատերազմին: Պատերազմ, որի ընթացքում պարսիկները մի վերջին անգամ փորձեցին վտարել ոռուներին Անդրկովկասից, իսկ արցունքում կորցրեցին ոչ միայն Վրաստանին ու ամբողջ Անդրկովկասին տիրելու հույսը, այլև իրենց վերջին հենակետերն Արևելյան Հայաստանում՝ Երևանի ու Նախիջևանի խանովթյունները: 1828 թ. փետրվարի 10-ի Թուրքմենչայի պայմանագրով Պարսկաստանը հրաժարվեց Անդրկովկասի նկատմամբ ունեցած իր բոլոր Հավակնություններից:

Թուրքմենչայի պայմանագրիը մեծ նշանակություն ունեցավ նաև Արևելյան Շիրակի համար: Այս պայմանագրով ապահովվեց գավառի հարավային և արևմտյան սահմանների անվտանգությունն, ու վերջ դրվեց դեպի պարսիկ հրոսակների թալանչիական արշավանքներին, որոնք պարբերաբար շնորհած վերածում էին ավերակ ու ամայի տարածքի: Այդ են վկայում ոչ միայն Հայ հեղինակները, այլև Հայաստան այցելած օտար ճանապարհորդները, անգլիացի ճանապարհորդ Ջեյմս Մորիերը հայտնում է. «Մինչև Հարաբիլիս մենք բնակության հետքեր

¹⁸⁵ Потто В., նշվ. աշխ., Կавказский сборник, т. XXI, стр. 106.

¹⁸⁶ Նույնը:

¹⁸⁷ Потто В., նշվ. աշխ., Կавказский сборник, Тифлис, 1900, т. XXII, стр. 131.

միայն տեսանք, ամեն ինչ կատարյալ ամայության մեջ էր շնորհիվ վերըին տասնհինգ տարվա յերկու ազգերի միջև մղող քայլայիշ պատերազմի»¹⁸⁸:

Հայտնի է, որ XVIII դ. երկրորդ կեսին Արևելյան Շիրակի տարածքում կար 109 գյուղ՝ Դրանցից մինչև XIX դարի առաջին քառորդը գյուղատեղին ընդամենը 16-ը, որոնցից տասը, ըստ Ս. Վիրաբյանի, Հայկական գյուղեր էին Գյումրի, Խիթ Ղարաբղյան (Ազատան), Բայանդուր, Հոռոմ, Արթիկ, Հառիճ, Փոքր Պարսի, Թավշան-Ղաղաղ (Շիրակավան), Ջաջուռ և Մարմաշեն, իսկ 6-ը՝ Ջրախոր (Ջրառատ), Ղուլիջան (Սպանդարյան), Ղասմալի (Գետափի), Փալութի (Արփենի) և այլն՝ մահմեղական¹⁸⁹: Շորապյալի գավառի գյուղերի թվի նվազման այսպիսի բարձր տեմպերի պատճառը տարածաշրջանի ուղղմաքաղաքական իրավիճակն էր: Գրեթե անընդհատ մղողող պատերազմների արդյունքում քայլայից գավառի տնտեսությունը, իսկ ժողովուրդը կամ գերեվարվեց, կամ էլ հեռացավ ավելի ապահով վայրեր: Ժողովրդագրական վիճակն ավելի վատացավ XIX դ. սկզբին, կաված ուսւ-պարսկական և ուսւ-թուրքական պատերազմների հետ, որոնք Շորապյալի գավառը վերածեցին համարյա ամբողջությամբ ամայի ու ավերակ տարածքի:

Ուսւական կայսրությանը միավորվելու պահին Շորապյալի գավառն ուներ 24 գյուղ: Ի դեպ, Հարևան Փամբակի գավառում, որ Ուսւական կայսրությանն էր միացել Շորապյալից մի փոքր շուտ, Հաշվում էր 22 գյուղ: Մենք միտումնավոր հիշեցինք Փամբակի մասին, քանի

¹⁸⁸ Հակոբյան Հովհ., նշվ. աշխ., էջ 331:

* Ենիկու, Գեղեցրու, Բաշքենդ, Սավաշ-բուլադ, Թուլեկու, Դարաքենդ, Բողադ-քեսան, Էյն-քենդ, Ղուլիջան, Քարքիմաք, Քուրի-քենդ, Քենտառամեն, Քուրքշինլու-ուլյա, Քոռ-Հասան, Ղարա-թեփե, Թուն-կեչի, Շիշթեփե, Ղարամու, Սարիքենտ, Դերբենտ, Ալիկու, Ղոնախոսան, Ցովս, Զարիչու, ՈՒշ-թեփե, Օրթաքիլիսա, Իին-Համեն, Դուզ-թեփե, Ղարաքիլիսա, Թաթլու, Անուր-գերե, Անուրա-թաթլու, Քաղաքան-թաթլու, Գոյզարու, Հուրկալա, Ղաֆար-Ալի, Ղարաբուղադ-Սուլանու, Բաղդատչուր, Գումրի, Ղափուլի, Արթիկ, Ղիշալ, Արդվիկ, Բեկ-քենտի, Հոռոտ, Սիչենուր, Թոմարսա, Իլանլու, Թաղաղուղ, Ցուլական, Էյն-դարախ, Ղարա-թեփե, Գյուլ-քենդի, Մալ-քենդի, Ղուն-բերդու, Աբոնու, Հալ-վերդի, Թեփե-դոնեկ, Դուզքենդուլյա, Շիրայի, Ցող-քեչեն, Ալ-քիլիսա, Սուփենդ, Զիիերլու, Փուսկի, Գեռնի-լեռ, Նենիփ-բուլադ, Սեհտի-ոուլի, Իսա-Հանլու, Պութիպան, Ղարա-գենկելու, Ղարա-զեկե, Աղ-Բուլադ, Հասան-քենդի, Ղուր-դու-բուլադ, Ղոյա-յասուկ, Ղոր-ուռան, Ղարա-գլիլան, Իմանլու-Սուլանու, Աշեքենդ, Իսահակ, Հարմա, Կատ, Փորսուկի, Խարչե-քեսան, Գյուլ-քենդի, Զորան-գիրմազ, Ղարա-զասուր, Ղըրի-Դագիմանլար, Նեզարալի-քենդ, Ղալաչե, Հասմանլու, Սափ, Մունիուլյու, Ավի-քուչեկ, Հասրադու, Ղզղ-Ղոչ, Շարաբիանա, Անրեկ, Շեքերեսա, Ալի-քենա, Աղ-բուլադ, Բուլադ-չոկ, Խանում-քենդի, Քութերչինու, Հարա-

մարսա, Բաշխարաբա, Ղարաբուղադ, Ղինիքենդ (տե՛ս Պոտո Բ., նշվ. աշխ., Կавказский сборник, т. XXI, стр. 42-43.):

¹⁸⁹ Վիրաբյան Ս., նշվ. աշխ., էջ 39:

¹⁹⁰ Ավդաբեկյան Խ., Հողային հարցը Արևելյան Հայաստանում (1801-1917թթ.), Եր., 1959, էջ 17:

¹⁹¹ Ավդաբեկյան Խ., նշվ. աշխ., էջ 17:

որ Ռուսաստանի միանալուց հետո այս երկու գավառները միավորվելով՝ կազմեցին մեկ առանձին վարչական միավոր՝ Փամբակ-Շորագյալի դիստրանցիան։ Ռուսաստանին միանալու պահին այս գավառներում բնակչության պատկերն հետևելուն էր.

Աղյուսակ 1

| գավառի անունը | գյուղեր ի թիվը | Հայեր | | Թաթարներ | | այլազգիներ | | ընդամենը | |
|------------------|-------------------|-------|-------|----------|-------|------------|-------|----------|-------|
| | | ծուխ | շունչ | ծուխ | շունչ | ծուխ | շունչ | ծուխ | շունչ |
| Փամբակ | 22 | 401 | 3297 | 113 | 589 | --- | --- | 514 | 3886 |
| Շորագյալ | 24 | 660 | 4096 | 89 | 476 | 59 | 305 | 808 | 4877 |

Սա, ըստ էության, բնակչության ամենաբարձր ցուցանիշն է, որ գրանցվել է Շորագյալի գավառում մինչև XIX դ. 20-ական թվականների վերջը։

Միավորմանը հաջորդած առաջին տասնամյակում նկատվում է գավառի բնակչության թիվի կտրուկ նվազում, որ շարունակվում է մինչև 1817 թ.։ Ընդ որում, եթե մինչև 1810 թ. այն տեղի էր ունենում համեմատաբար դանդաղ, ապա 1810-1817 թթ. այդ գործընթացն այսպես ասած՝ «ազատ անկման» վիճակում էր։ 1808թ. կայսրին ներկայացված մի գեկուցագրում նշվում էր, թե Շորագյալի գավառում կա 524 ընտանիք կամ 2773 մարդ¹⁹²։ Սա նշանակում է, որ Ռուսաստանի հետ միավորման պահից հետո անցած երեք տարիների ընթացքում գավառի բնակչության թիվը պակասել էր 284 ընտանիքով կամ 2104 չնչով։ 1810թ.¹⁹³ բնակչության թիվը նշվում է մինչև 450 ընտանիք կամ 2000 մարդ, իսկ 1817թ. հասնում նվազման իր կրիտիկական կետին։ Շորագյալում մնացել էր ընդամենը 174 ընտանիք կամ 870 մարդ¹⁹⁴։ Այսպիսի աղետայի վիճակը խուճապային տրամադրություններ էր ծնում նույնիսկ ուստական բարձրաստիճան զինվորականության շրջանում։ 1811 թ. սեպտեմբերի 30-ին գեներալ-մայոր Ստալ Բ-ն մարկիզ Ֆ. Պաոլուչչին ներկայացրած գեկույցում գրում էր, թե ուսւ-պարսկական և ռուս-թուրքական երկարատև պատերազմների պատճառով Շորագյալի և Փամբակի գավառները մարդաթափ են եղել։ Բնակչության մեծ մասն արտագաղթել էր, շատերն էլ գերի էին տարվել, և այժմ այդ երկու շրջաններում կար ընդամենը մոտ 500 ծուխ։ Գավառի բնակչության թիվը հետզհետե նվազումը կովկասյան կրպաւսի գյուսավոր հրամանատարությանը նույնիսկ հաշտեցրեց այն մտքի հետ, թե արժե Շորագյալի ամայի ու անմարդաբնակ գավառը հետ վերադարձնել պար-

¹⁹² АРАԿ, т. 4, стр. 953.

¹⁹³ Броневский С., Новейшие географические и исторические известия о Кавказе, М., 1823, стр. 60.

¹⁹⁴ АРАԿ, т. 6, ч. 1, Тифlis, 1874, стр 691.

¹⁹⁵ АРАԿ, т. 5, стр. 115.

սիկներին: 1817 թ. Հունվարի 9-ին կայսրին ներկայացրած զեկույցում, խոսելով ուսու-պարսկական բանակցություններում ուսաների կողմից պարսիկներին տարածքային զիջումներ անելու մասին, գեներալ Երմոլովը առաջարկում էր ամենածայրահեղ դեպքում վերադարձնել Շորագյալը, որն ունի ընդամենը 200 աղքատ ընտանիք¹⁹⁶: Բարեբախտաբար, գեներալ Երմոլովի այս առաջարկին վիճակված չէր իշխականանալու: Շորագյալի գավառը չնորդիվ իր կարևոր ոպամասարատեգիական դիրքի մնաց Ռուսական կայսրության կազմում:

Ազգաբնակչության թվի անընդհատ կրճատումն ու տնտեսության քայլքայում գավառում, անշուշտ, պայմանավորված էին ինչպես արտաքին, այնպես էլ ներքին գործուններով: Արտաքին գործունների տակ նկատի ունենեք գրեթե քառորդ գար մղվող պատերազմները, ավերը, թալանն ու գերեվարումները, որոնց մասին շատ ենք խոսել, իսկ ներքին գործունների տակ նկատի ունենք տեղական չինովնիկների անպատճեփ կամայականություններն ու չարաշահնումները, բարձր Հարկերը, դրանցից բխող աղքատությունը և այլըն: Չարաշահնումների օրինակներից է Փամբակի մոռլազակ Օրբելիանի օրինազանց գործունեությունը, որի մասին 1809 թ. նոյեմբերին Ս. Տորմասովին հաղորդում էր տուժող Մ. Հարութինովը: Վերջինս գրում էր, թե 1807 թ. ամբողջ ընտանիքով, իթիվս այլ գաղթականների Կարսից տեղափոխվել են Շորագյալի Ղիչաղ գյուղ և գեներալ-մայոր Նեսվետաևից իրավունք են ստացել երկու ջրաղաց ու մեկ ձիթչանք կառուցելու: «Այս շինարարության վրա, գրում էր Մ. Հարութինովը, մենք ծախսել ենք մեր ամբողջ ունեցվածքը, իսկ այժմյան Շորագյալի տեր Փամբակի մոռլազակ իշխան Օրբելիանը, առանց դատ ու գաստատանի մեզանից խվել է մեր ջրաղացներն ու ձիթչանքը և հանձնել Բուլգաղ սուլթանի եղբորը»¹⁹⁷:

Մոռլազի նման վարքագիծը նորություն չէր: Դեռևս 1805 թ. գեներալ-մայոր Նեսվետաևը գրում էր Պ. Ցիցիանովին, թե մոռլազից բազմից պահանջել է տեղեկանք տեղի բնակչության թվի մասին, բայց նաև անընդհատ հետաձգում է գա ներկայացնելը, «Հավանաբար ցանկություն ունի հետապայում օգտվել Հարկերի հավաքումից»¹⁹⁸: Եվ իրոք, օգտվում էին թե՛ մոռլազի և թե՛ գերությունից ազատված Բուլգաղ սուլթանը, որի վերադարձը առաջ բերեց Փամբակի և Շորագյալի գավառների բնակչության դժգոհությունը: 1811 թ. նոյեմբերի 16-ին մարզիկ Պառլուչին Մալինսկուն գրում էր, թե սուլթանը Շորագյալից վերցրել է մոտ 500 ու. ավար և բացի այդ ինչոր նոր Հարկ է մտցրել, որ կազմում է մոտ 600 ու.¹⁹⁹ «Հայերի ինդիանքը չմերժելով, գրում էր Պառլուչին, - Հրամայում եմ քաղաքացիական

¹⁹⁶ АКАԿ, т. 6, ч. 2, стр. 142.

¹⁹⁷ Присоединение..., т. 1, док. 445, стр. 536-537.

¹⁹⁸ АКАԿ, т. 2, стр. 632.

¹⁹⁹ АКАԿ, т. 5, стр. 115.

չինովնիկ»²⁰⁰ ուղարկել Շորագյալի շրջան, Հարցը տեղում քննելու համար»:

Եվ մինչև չինովնիկները զբաղված էին Բուղաղ սուլթանի անօրինությունների վերացմամբ, Շորագյալի գավառը շարունակում էր մարդաթափ լինել: Հետաքրքիր է մի փաստ. 1805 թ. Շորագյալի գավառն ուներ մոտ 1000 ծովս և Պ. Ցիցիանովի և Բուղաղ սուլթանի միջև կնքված պայմանագրի համաձայն՝ տարեկան վճարելու էր 2000 ռ. Հարկ: 1805-1817 թթ. գավառի ազգաբնակչության թիվը կրճատվեց համարյա 5,5 անգամ, հասներով մինչև 174 ծխի: Նշված ժամանակահատվածում ուսուական իշխանությունները մի քանի անգամ ազատեցին շորագյալցիներին պայմանագրում նշված տարեկան 2000 ռ. Հարկը վճարելուց: Այսպես, օրինակ 1809 թ. մարտին կոմս Գուղովիչը գրում էր, թե երկարատու պատերազմները քայլքայել են գավառի տնտեսությունը, և այդ պատճառով առաջարկում էր շորագյալցիներին ազատել 1805, 1806 և 1807 թթ. Հարկերի վճարումից, իսկ Հարկերի հետագա հավաքումն էլ Հանձնարարել Փամբակի մոռուրավին²⁰¹: Բայց ապարդյուն, իշխանությունները չարձագանքեցին 1805 թ. պայմանագրով ամրագրված հարկի չափը փոքրացնելու սույն խելամիտ առաջարկին: Միայլ շտկվեց միայն գեներալ Երմոլովի կողմից: 1817 թ. փետրվարի 28-ին նա Դ. Գուրեկին գրում էր, թե գավառում նախկինում ապրում էր 1000, իսկ այժմ՝ 174 ընտանիք, այն էլ ծայրահեղ գատ վիճակում, որի պատճառը գրեթե 10 տարի շարունակ ընթացող պատերազմներն են: Առաջարկվում էր «1813, 1814, 1815 և 1816 թթ. Հարկերը՝ 8000 ռ. արծաթ, Հաշվել չեղյալ, քանի որ 1805 թ. այս կողմ Շորագյալի գավառը վճարել է ընդամենը 3010 ռ. 89 կրպեկ Հարկ, և այն էլ ոչ թե դրամով, այլ հացով: Բուղաղ սուլթանի հետ կնքված պայմանագրիրը պետք է Համարել անվագեր, իսկ վերոհիշյալ գավառը նշված պատճառներով ազատել Հարկերից»²⁰²: Նույն Երմոլովը Փամբակի և Շորագյալի գավառների ազգաբնակչության տնտեսական պայմանները բարելավելու և հետագա արտագաղթը դադարեցնելու նպատակով որոշում է այդ երկու գավառների սահմանագլխին կառուցել ամրոց Ժողովրդի ապահովությունը թուրք-պարսկական Հարձակումներից երաշխավորելու համար: «Նոյնիսկ այժմ՝ գրում էր գեներալ Երմոլովը Դ. Գուրեկին 1819 թ. փետրվարի 12-ին, - երբ պատերազմ չկա, բավականին վտանգավոր է այստեղ Հողագործությամբ զբաղվելը, քանի որ լինելով սահմանամերձ, այս տարածքը մշտապես ենթարկվում է թուրք-պարսկական թալան-չիական հարձակումների»²⁰³: Ավարտելով իր գեկույցը՝ գեներալ Երմոլովը գրում էր. «...և որպեսզի այլևս արտագաղթ չինի, ես որոշել

²⁰⁰ Նոյն տեղում, էջ 116:

²⁰¹ АКАՀ, տ. 3, стр. 228.

²⁰² Присоединение..., т. 2, док. 8, стр. 33-34.

²⁰³ АКАՀ, տ. 6, ч. 1, стр. 19-20.

ևմ իջեցնել տեղի հարկերը, քանի որ միայն այս պայմանով է կարելի ստիպել փախած փամբակցիներին ու շորագյացիներին հետ վերադառնալ»²⁰⁴: Գեներալը համոզված էր, որ եթե այս քայլերը չձեռնակվեն, ապա նոր պատերազմի գեպքում Փամբակն ու Շորագյալը կմնան ամայի ու թշնամու համար հեշտ կինի գրանց գրավումը»²⁰⁵:

Ազգաբնաշության թվի տատանումների վրա մեծ ազդեցություն էր թողնում նաև գաղթը Երևանի խանության և Կարսի փաշայության տարածքներից դեպի Շորագյալի գավառ և Հակառակը, սկսած վերջինիս՝ ուսւների ձեռքն անցնելու օրվանից: 1805թ. մարտին՝ Շորագյալը գրավելուց հետո, ուսւական զորքերը գեներալ-մայոր Նեսվետակի գլխավորությամբ առաջնալով հասնում են մինչև Էջմիածին, գրավում այն, իսկ հետ վերադառնալիս իրենց հետ վերցնում վանքի գանձերն ու շրջակա 12 գյուղերի բնակչությանը, ավելի քան 600 տուն: Սրանց մի մասին 60 գրենադերների, 50 կազակների և 150 հեծյալների ուղեկցությամբ գեներալ Նեսվետակը թալինի վրայով ուղարկում է Շորագյալ, իսկ մյուս մասին՝ տանում Թիֆլիս:²⁰⁶ Այս դեպքերի մասին Լեռն գրում է. «12 գյուղ ևս Հայոց ժողովուրդ են բերեալ, որք կարեն լինելի չափ 600 տանց. որոց գոմանս բերին ի քաղաք (Թիֆլիս - Ա. Հ.)»²⁰⁷: Նույն 1805 թ. մայիսի 12-ին Նեսվետակը Յիշիանովին գեկուցում էր, թե ընդհանուր առմամբ Երևանի գյուղերից ուսւական տարածքներ է գաղթեցրել 357 ընտանիք, որից 200 ընտանիքը տեղափոխել է Փամբակում և Շորագյալում: «92 ընտանիք աշտարակցիներ,- գրում էր Նեսվետակը, - իրենց անսառներով ուղարկել եմ Շորագյալ,... 68 ընտանիք տեղափոխել եմ Հարաբիլսայում (խոսքը Փամբակի Սեծ Հարաբիլսա գյուղի մասին է-Ա. Հ.)»²⁰⁸: Նույն տարվա (1805 թ.) օգոստոսի վերջին Շորագյալ են վերադառնում Երևան փախած 400 ընտանիք թաթարներ,²⁰⁹ իսկ մեկ տարի անց՝ 1806 թ. նոյեմբերին, Նեսվետակի թույլտվությամբ այստեղ է հաստատվում նաև ուսւական հպատակություն ընդունած Խոյի Զաֆար խանն իր համախոհներով՝²¹⁰: Շուտով սկսված ուսւ-թուրքական պատերազմը (1806-1812 թթ.) սկիզբ է դնում դեպի Փամբակի և Շորագյալի գավառներ արևմտահայերի ներգաղթին: Կարսեցի Հայերի առաջին խումբը՝ չորս 700 ընտանիք, նշված գավառներ է գաղթում արդեն 1807 թ. մարտի վերջին, երբ ուսւական զորքերը Նեսվետակի գլխավորությամբ շարժվում էին դեպի Կարս:

²⁰⁴ Նույն տեղում, էջ 21, 692:

²⁰⁵ Նույնի:

²⁰⁶ Присоединение..., т. 1, док. 229, стр. 299-300.

²⁰⁷ Հետ, Երկրի ժողովածու, հ. Դ, էջ 262:

²⁰⁸ Присоединение..., т. 1, док. 234, стр. 307.

²⁰⁹ Присоединение..., т. 1, док. 229, стр. 299-300.

²¹⁰ АКАԿ, т. 3, стр. 270.

²¹¹ Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռագիր 6517, էջ 2:

Եվս 500 ընտանիքների նա ազատում և Գուղովիչի հրամանով՝ Շորագյալ է ուղարկում արդեն ապրիի 6-ին՝ Կարսից նահանջելիս²¹²: Ղզրչախ-չախում՝ տեղեկանալով՝ Էրզրումի սերասկյար Յուսուփ փաշայի հարձակման մասին, Նեսվետաևը կարողանում է ապրիի 20-22-ի ընթացքում շրջակա թրքահպատակ գյուղերից տեղահանանել և Փամբակի ու Շորագյալի գավառներում վերաբնակեցնել 3111 մարդու՝ մեծամասամբ հայերի, իրենց ունեցվածքով, անսառններով, վաճառքի ու ցանքսի համար անհրաժեշտ պարենով²¹³:

Մատենադարանի Կաթողիկոսական գիվանում պահպող մի ան-վանացանկի Համաձայն՝ 1807 թ. Կարսի փաշայությունից Մեծ Ղա-րաքիլսա գյուղում բնակություն էր Հաստատել 21 ընտանիք կամ 95 շունչ, Համամլուում՝ 8 ընտանիք կամ 41 շունչ, Պարնիում Հաստատվել էին 350 հոգուց բաղկացած 58 ընտանիքներ, Փոքր Ղարաքիլսայում տեղավորվել էր 45 ընտանիք կամ 271 շունչ, Գյումրիում՝ 41 ընտանիք կամ 183 շունչ, ընդհանուր առմամբ՝ 173 ընտանիք կամ 940 շունչ, որից 494-ը արական, 446-ը իգական սեռի ներկայացուցիչներ²¹⁴: Այլ փաստեր վկայում են, որ գեպի ռուսական տարածքներ ներգաղթին զուգահեռ՝ տեղի է ունեցել նաև Հակառակ գործընթացը: 1801 թ. Հուլիսի 13-ին գեներալ-մայոր Լազարել գեներայլեյտենսանտ Կնոր-րինգին գրում էր, թե Երևանի Մամադ խանն ու Քյալբալի խանը 400 հոգանոց զորացուկատով տեղավորվել են Շորագյալում և «իսանին հա-ջողվել էր իր կողմը գրավել և տանել Փամբակի և Շորագյալի 14 թաթարական գյուղերի բնակիչների»²¹⁵: Այսպիսի տեղաշարժեր նկատվեցին նաև Եթցիանովի երևանյան առաջին արշավանքի ժամա-նակ: Ն.Դուբրովինը գրում է, թե Վրաց արքայորդիներ Ալեքսանդրի, Հու-լինի և Փարնավագի հետ պայմանագործածովթյան Համաձայն՝ միայն Փամբակի գավառից 27 գյուղերի բնակիչներ իրենց աղայարների գյու-վորությամբ փախան Կարսի փաշայության տարածքը²¹⁶: Սրանց հետ վե-րադարձներու համար ռուսները ստիպված եղան նույնիսկ պատանդներ վերցնել²¹⁷:

Արևելյանայերի գաղթը Կարսի և Ախալցխայի փաշայություններից Փամբակի ու Շորագյալի գավառներ շարունակվեց նաև Հաջորդ տարիներին: 1812 թ. հունվարի 17-ին մարկիզ Պառլուչին գրում էր: «Կան 57 ընտանիք ջավախսքցիներ՝ տեղավորված Լիլոյում, Ախալքա-լաքից դուրս եկածներ՝ տեղավորված Բորչալուում, 100 ընտանիք Կարսի

²¹² АКАК, т. 3, стр. 600.

²¹³ АКАК, т. 3, стр. 614.

²¹⁴ Սաշտոցի անվան Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 22ա, վավ. 86:

²¹⁵ АКАК, т. 1, стр. 599.

²¹⁶ Дубровин Н., Закавказье от 1803-1806 гг., стр. 358.

²¹⁷ Присоединение..., т. 1, док. 258, стр. 323-324.

թաթարներ՝ տեղավորված Փամբակում և 38 ընտանիք հայ-կաթոլիկներ՝²¹⁸ Փամբակում և Շորագյալում»:

Իր նահանգի տարածքից դեպի ոռոսական տիրույթներ արտադադրի ուժեղացումից անհանգստացած՝ 1814թ. Կարսի Մահմադ փաշան և Կարա բեկը գեներալ Ռտիշչեկն խնդրում են Փամբակում և Շորագյալում բնակվող իրենց փաշայության բնակիչներին ուղարկել նախկին բնակության վայրերը, իրենց պահանջը հիմնավորելով Բուխարեստի պայմանագրի այն կետով, որն արգելում էր հպատակների ազատ երթևեկության իրավունքը: Իսկ գաղթածները քիչ չէին: Ըստ ոռոսական պաշտոնական փաստաթղթերի՝ Ղարաքիլիսայում (Վանաձոր) դրանք 110 ընտանիք էին, Գյումրիում՝ 20, Բեքանտում* (Մեծ Պարնի)՝ 50, Համամլուում (Սպիտակ)՝ 10, Փոքր Ղարաքիլիսայում՝ 20, Լոռիում՝ 60, ՈՒզունլարում (Օձուն)՝ 6, Ճոճկանում՝ 14, Թիֆլիսում՝ 30, Ղազախի և Շամշադինի տարածքներում՝ 150, Կախեթում և Քարթիում՝ 133, ընդամենը՝ 603 ընտանիք²¹⁹: Թուրքական կողմի խնդրանքը հաղորդվում է Փամբակի և Շորագյալի գյուղերում հաստատված կարսեցիներին: Գեներալ-մայոր Սիմոնովիչը 1815 թ. մարտի 20-ին գեներալ Ռտիշչեկն ներկայացրած զեկուցագրում Հայտնում է, թե ընդհանուր առմամբ հետ վերադառնալու ցանկություն ունեն 37 ընտանիքներ, իսկ մնալ ցանկացել են 22 ընտանիք՝ Ղարաքիլիսայում, 22 ընտանիք՝ Լոռիում, 13 ընտանիք՝ Գյումրիում, 5 ընտանիք՝ Համամլուում, 18 ընտանիք՝ Բեքանտում և 75 ընտանիք Փոքր Ղարաքիլիսայում²²⁰: Այսինքն ոռոսական հպատակություն էին ընդունում 155 ընտանիքներ, և սրանք վերջինները չէին: Արդեն 1817 թ. ապրիլի 15-ին գեներալ Երմոլովը գնդապես Յակիմովին գրում էր, թե Երևանի աղալար Մաշագի Աբդուլլան իր և 200 այլ ընտանիքների համար իշխան Սևարսեմիձեկից Շորագյալում հաստատվելու թույլտվություն է խնդրել: «Նմանատիպ խնդրանք են ներկայացրել նաև Կարսի շատ հայեր, - գրում էր Ա. Երմոլովը, - բայց ես չէի ցանկանա մեր սահմանամերձ շրջանները բնակեցնել թշնամի երկրի բնակիչներով»²²¹: Եվ չնայած նա Յակիմովին առաջարկում էր ժամանակավորապես դադարեցնել գաղթականների նոր խմբերի ընդունումն ու տեղաբաշխումը Փամբակի և Շորագյալի գաղթականների նոր խմբերի ընդունումն, այնուամենայնիվ ներգաղթը շարունակվում էր: Նույն 1817 թ. Բայազետի փաշայության Ալաշկերտի Կարասու գյուղից Շորա-

²¹⁸ АКАК, т. 5, стр. 18.

* Արևելյան Շիրակի այս և մնացած գյուղերի նոր անունները տրվում են նաև աշխատության վերջում:

²¹⁹ Մուրադյան Հ., Կարսի նախանգի վարչաժողովրդագրական պատկերը 19-րդ

²²⁰ դարի առաջին երեսնամյակին, Ատեն. պատ. գիտ. թեկ., Եր., 2001, էջ 138:

²²¹ АКАК, т. 5, стр. 816.

²²² АКАК, т. 6, ч. 2, стр. 149.

գյալի գավառի՝ Քյաֆթազուր (Փանիկ) գյուղ են տեղափոխվում 12 ընտանիքներ²²², 23 ընտանիք չորանքարայցիներ ավագներ Խալիլի աղայի և Մամաղ-Հասան աղայի գլխավորությամբ 1819 թ. տեղափոխվում են Շորապյալի գավառի Զաջուռ գյուղ: Լ. Սևարսեմիձեն հուլիսի 29-ին ի. Վելյամինովին հայտնում էր, թե նորեկները քոչվորներ են՝ 158 հոգի (89-ը արական, 69-ը իգական սեռի)²²³:

Թուրքիայից, մանավանդ՝ Կարսի փաշայությունից դեպի Փամբակ և Շորապյալ հայերի ներգաղթը նոր թափ է ստանում 1822 թ., երբ պարսկական 12000-ոց բանակը պաշարում է Կարսը: Այս պատերազմի օրերին շատ կարսեցիների, կարինցիների և բայազեսցիների հաջողվում է անցնել ուսուական տարածքներ: Ըստ 1822 թ. կազմված չափաբերական մատյանների՝ Շորապյալի միայն Փաքը Ղարաքիլիսա գյուղում կային Կարսի նահանգի Փարգիտ, Ղարախան, Զումուշու, Քեչերորդ, Բաշ Շորապյալ, Հազաքյարաք, Ճալա, Ծպնի, Տիկոր, Տիկնիս գյուղերից և Կարս քաղաքից գաղթած հայեր: Կարսեցիներ կային նաև Շորապյալի Հոռոմ, Ղալթախչի (Հարթագյուղ), Ղշաղ գյուղերում²²⁴: 500 ընտանիք թուրքահայ գաղթականներ տեղափորվել էին Գյումրիում, իսկ մնացած մասը՝ Շորապյալում և Լոռիում²²⁵:

Ուսուական տերության մարզերը գաղթած արևմտահայերի մասին Ն. Աշտարակեցին Հ. Լազարյանին գլում է. «... նկատելի է թէ յորպիսի հեծութիւնիս կայցեն առ հասարակ և բարեպաշտ համարեալ լինին, որք մազապուրծ զանձինս և զրնտանին զօրեն արկանել մերկ ու բոլի ընդ հովանեաւ զրոշակի իւրոյ կայսէրական մեծութեան ամենայն ուսուաց ի Շիրակ գաւառ...»²²⁶: Եվս 368 ընտանիք հայ-կաթոլիկներ Շորապյալի գավառի Ղափիլ(Գուսանապյուղ), Քյափանակ (Հովիտ) և Քյաֆթառլի (Փանիկ) գյուղեր են գաղթում արդեն 1823թ.²²⁷: Մա հայ-կաթոլիկների երկրորդ զանգվածային գաղթն էր դեպի Շորապյալի գավառ, քանի որ առաջինը տեղի էր ունեցել 1810 թ., երբ մարկիզ Պառլուչչի օգնու-

²²² Տեղագրական պատառիկներ. Արևելյան մասն Շիրակայ, «Արևելյան նամուլ», Զմբոնիս, 1898, 1 դեկտեմբերի, թի 23, էջ 890; Մելքոնյան Ա., Ժողովրդագրական տեղաշարժերը Զավախքում և Ախալցխայի գավառում 19-րդ դարի առաջին քառորդին, «Բրան-Նամե», Եր., 1998, N 1-2-3, էջ 15:

²²³ Պրisoединение..., տ. 2, դօք. 43, սր. 67-68.

²²⁴ Մաշտոցի անվան Մատենադարան, Կարողիկոսական դիվան, թղթ.43, վավ. 298թ., թղթ. 46, վավ. 249:

²²⁵ Մելքոնյան Ա., Էրզրում, Էրզրումի նահանգի հայ ազգաբնակչությունը 19-րդ դարի առաջին երես-նամակին, «Պատմամողովդագրական ուսումնասիրություն», Եր., 1994, էջ 127:

²²⁶ Տե՛ս Մելքոնյան Ա., նշվ. աշխ., էջ 127-128; Մաշտոցի անվ. Մատենադարան, Լազարյանների արխիվ, թղթ. 105, գործ 13, վավ. 192, էջ 2-3:

²²⁷ АКАՆ, տ. 6, գ. 1, սր. 466-467.

թյամբ շուրջ 140 ընտանիք հայ-կաթոլիկներ էին բնակեցվել գավառի տարածքում²²⁸:

1823 թ. միառժամանակ վերջ դրվեց հայերի զանգվածային գաղթին դեպի ոռոսական տիրույթներ: Շուրջ քառորդ դար տևած գաղթի շնորհիվ Արևելյան Հայաստանի հյուսիսային շրջանների, և մանավանդ Շորագյալի գավառի ազգաբնակչությունը զգալի համարում ստացավ: Արդյունքում, սկսած XIX դ. 20-ական թվականներից՝ ամայի գարձած գավառը նորից սկսեց վերհասնել: Այս գործընթացին մեծապես նպաստեց նաև ոռոսական կառավարության կողմից ընտրված ճիշտ հարկային քաղաքականությունը: Հարկերի մինչեւ մինիմում նվազեցումը և Փամբակի ու Շորագյալի գավառների սահմանագլխին կառուցվող ամրոցի առկայությունը պատճառ հանդիսացան Հայուրավավոր նորեկների համար՝ Շորագյալի գավառը որպես երկրորդ հայրենիք ընտրելուն, իսկ փոքրաթիվ տեղաբնակներին էլ հետ պահպանին այլ վայրեր գաղթելուց: Այս ամենի շնորհիվ գրեթե անմարդաբնակ Շորագյալի գավառը 1824-1825թթ. արդեն ուներ 705 ծուխ՝ 529-ը հայկական, 176-ը թաթարական²²⁹, որը գավառի ազգաբնակչության 1805 թ. ցուցանիշից՝ 808 ծիսից, պակաս էր ընդամենը 103 ծիսով: Այսպիսին էր Շորագյալի գավառի ժողովրդագրական իրավիճակը ոռոս-պարսկական 1826-1828 թթ. պատերազմի նախօրեին:

Շորագյալի գավառի ժողովրդագրական դրությունը 1805-1825թթ.

Աղյուսակ 2

| | 1805թ. | 1808թ. | 1810թ. | 1817թ. | 1824-1825թթ. |
|-------|--------|--------|--------|--------|--------------|
| Ծուխ | 808 | 524 | 450 | 174 | 705 |
| Ծունչ | 4877 | 2773 | 2000 | 870 | մոտ 4200 |

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԱՐԵՎԵԼՅԱՆ ՇԻՐԱԿԸ XIX ԴԱՐԻ 30-40-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Ա) Շորագյալի գավառի վարչատարածքային կառուցվածքը XIX դարի առաջին երեսնամյակին

²²⁸ АКАК, т. 4, стр. 24-25.

²²⁹ Кондю М., նշվ. аշխ., Кавказский сборник, т. XXII, стр. 19.

Թեև, ինչպես վերևում ասվեց, Շորագյալի միացումը Ռուսաստանին իրավաբանորին ամրագրվեց միայն 1813 թ.՝ Գյուղատանի պայմանագրով, այնուամենայնիվ արդեն 1805 թ. սկսած՝ այն, իբրև ռուսական տարածք, բնականաբար ենթակա դարձավ ռուսական իշխանությունների կողմից ամբողջ XIX դ. ընթացքում պարբերաբար կատարվող վարչատարածքային բաժանումներին, որոնց բազմաքանակությունը հետևանք էր Անդրկովկասը ռուսների կողմից ոչ միանգամից, այլ աստիճանաբար՝ մաս-մաս յուրացնելու:

Այդ բաժանումներից առաջինը, որ ուղղակիորեն առնչվում էր Շորագյալի Հետ, Վրաստանի կազմում 1805 թ. Փամբակ-Շորագյալի դիստանցիայի ստեղծումն էր Ռուսաստանին ավելի վաղ (1801 թ.) միացած Լոռու, Փամբակի և Շորագյալի միավորմամբ²³⁰: Այն հյուսիսից սահմանակից էր Բորչալուկի դիստանցիային, Հարավից՝ Երևանի խանությանը, Հարավ-արևելքից՝ Ղազախի դիստանցիային, արևմուտքից՝ Կարսի և մասամբ էլ Ափալցիսայի փաշայություններին: Փամբակ-Շորագյալի դիստանցիան ուներ 8440 քառ. վերստ տարածք, որից 5000 քառ. վերստը Լոռունն էր, 2150 քառ. վերստը՝ Փամբակինը, իսկ 1290 քառ. վերստը՝ Շորագյալինը²³¹: Նորաստեղծ դիստանցիայում պահպանվում էր վարչական նախկին համակարգը: Դիստանցիան կազմող գավառներում ներքին իշխանությունը նորից մնաց նախկին տերերի՝ սուլթանների և մոռուրավների ձեռքին: Շորագյալի գավառում ևս ցարական կառավարությունը ոչ միայն չվերացրեց սուլթանական իշխանությունը, այլև, ինչպես վերևում ասվել է, վերեվարված Բուղազի փոխարեն սուլթան Հոչակեց վերջինիս որդի Համբ-բեկին²³²: Ավելին՝ կարճ շամանակ անց գերությունից հետ վերադարձած և կրկին իր սուլթանական «գահին»²³³ բազմած Բուղազ սուլթանը, իսուստանալով վճարել տարեկան 2000 ու. Հարկ՝ ռուսական իշխանություններից սուլթանության ներքին գործերին տնօրիններու իրավունք է ստանում: Գավառի ներքին կանքի տնօրինման գործում լիակատար ազատություն ստանալու համար սուլթաններին խանգարում էր թերևս մոռուրավների իշխանությունը, որոնք գավառներում կարգված էին գեռևս վրացական շրջանից և զբաղվում էին Հարկերի չափի ճշումամբ, դրանց գանձմամբ և տեղական աղալարների և վրաց արքունիքի միջև միջնորդություններով: Ռուսական տիրապետության սկզբնական շրջանում սրանք ոչ միայն

²³⁰ Потто В., Кавказская война..., т. 1, стр. 360; Зубов Платон, Картина Кавказского края принадлежащего России, и сопредельных оному земель; в историческом, статистическом, этнографическом, финансовом и топографическом отношении, ч. 1, СПб., 1834, стр. 101; История Азербайджана, т. 1, Баку, 1958, стр. 349-350.

²³¹ Обозрение российских владений за Кавказом..., ч. 2, СПб., 1836, стр. 293-294.

²³² АКАՀ, т. 2, стр. 574.

²³³ АКАՀ, т. 2, 577-578.

պահեցին իշխանությունն իրենց ձեռքում, այլև ընդայնեցին իրենց գործունեության շրջանակները։ Այժմ բայց հարկերի սահմանումից ու գանձումից, նրանք զբաղվում էին նաև գաղթականների տեղաբաշխմամբ և նույնիսկ կարանտինների ու պահակակետերի ստեղծմամբ²³⁴, իսկ 1809 թ. սկսած՝ մոռլրավների իշխանությունը, կապված Հյուսիսային Հայաստանի Հայաշատ շրջանների մարդաթափ լինելու հետ, սկսեց տարածվել ոչ թե մեկ, այլ միանգամբ մի քանի գավառների վրա։ Օրինակ, 1809թ. մարտի 16-ից կոմս Գուգովիչի առաջարկով ամբողջ Փամբակ-Շորապյալի գիտանցիքայում Հարկերի հավաքման մենաշնորհը տրվեց Փամբակի մոռլրավին²³⁵։ Այս քայլը առաջ բերեց ժողովրդի կտրուկ դժբոհությունը։ Նույն թվականի նոյեմբերի սկզբներին արդեն գեներալ-մայոր Համբարդովը (Համբարդյան) տեղեկացնում էր գեներալ Տորմասովին, թե Շորապյալի բնակիչները հրաժարվել են Փամբակի մոռլրավին որևէ տեսակի Հարկ վճարելուց։ Շորապյալցիների այս բողոքը, ինչպես նաև Հենց ոռուսական իշխանությունների Հանդեպ Փամբակի մոռլրավի 1805-1811 թթ. կատարած բազմաթիվ զանցանքները տեղի տվեցին մտածելու մոռլրավին պաշտոնից հեռացնելու մասին։ Պատճառաբանելով Փամբակի և Շորապյալի գավառներում բնակչության թվի կտրուկ նվազումը՝ գեներալ-մայոր Ստալ Բ-ն 1811թ. սեպտեմբերի 30-ին մարկիզ Պաուլուչչին ներկայացրած զեկուցագրում առաջարկեց պաշտոնից հեռացնել Փամբակի մոռլրավ Մելքոնովին, նրա տեղում նշանակել տեղի ոռուսական բանակի սպաններից մեկին, և եթե մոռլրավի տարեկան աշխատավարձու կազմում էր 900ռ. արծաթով, ապա սպային վճարել երեք անգամ քիչ։

Շուտով՝ 1814թ., մոռլրավներին փոխարինեցին պրիստաները, որոնք նշանակվում էին ոռուս սպաններից, և որոնց գործունեության բուն նպատակը տեղական կառավարիչներին՝ խաներին ու սուլթաններին վերահսկելն էր։

1813 թ. Գյուլիստանի պայմանագրով ոռուսներին անցան մի շարք նոր տարածքներ։ Յարական կառավարությունը մեծ նվերներ էր անում բոլոր այն խաններին, որոնք պատերազմի ժամանակ անցել էին ոռուսների կողմը։ Պատերազմից հետո այդպիսի տարածքների համար նշանակվեցին չնչին Հարկեր, իսկ գորքերն էլ աշխատում էին Հնարավորին չափ չխանգարել տեղական բնակչությանը։ «Թըրքում է, գրում էր Մ. Կոցեբուն, - թե խանների Համար սկսվում է մի երանելի ժամանակաշրջան։ Իռուսական տիրապետությունն ինքնակամ ընդունած մահմեղական «տիրակալները» չունեին միայն մահապատիժ

²³⁴ АКАԿ, т. 4, стр. 476.

²³⁵ АКАԿ, т. 3, стр. 228.

²³⁶ АКАԿ, т. 4, стр. 483.

²³⁷ АКАԿ, т. 5, стр. 155.

իրականացնելու «իրավունք»²³⁸: Բայց նրանք գաղտնի և՝ մահապատիժներ էին իրականացնում, և՝ այլ դաժանություններ գործում, բացի այդ մկնել էին թաքուն բանակցություններ վարել պարսիկների հետ: Ահա այս ամենին վերջ դնելու նպաստակով էլ կառավարությունը խաներին ու սուլթաններին կից նշանակել էր պրիատավիներին: Բայց սրանց նշանակումը չբերեց էական արդյունքների, և կառավարությունն անցավ ավելի լուրջ քաղաքականության: Սկսեցին փոխել անհնագանդ խաներին: Առաջինը փոխվեց Ղուբայի Շահ-Ալի խանը: 1819 թ. վերջերին մահացավ Շաքիի կյամայիլ խանը՝ առանց հետնորդների, և կառավարությունը այնտեղ նշանակեց պարետ, որը դիմանի քարտուղար էր և բացի քրեական հարցերից մնացած գործերում կառավարում էր տեղական օրենքներով: Մի քանի տարի անց առանց լուրջ պատճառների Պարսկաստան են փախչում Շիրվանի և Ղարաբաղի խաները, մտցվում է ոռուսական կառավարման սիստեմ, խանությունները, որ սկսեցին անվանվել պրովինցիաներ, կառավարվում էին գեներալի կողմից²³⁹: Շիրվանի և Ղարաբաղի խաների ճակատագրին արժանացավ նաև Շորպայալի տիրակալ Բուղազար սուլթանը: Ոռուսական բանակի գնդապետ, Փամբակի գալառապետ Սևարսենիձերի զեկույցի համաձայն՝ Բուղազը Փոքր Բեքանդ գյուղից Երևան էր փախել 1826 թ. Հուկիսի 11-ին, ոռուսարսկական պատերազմը սկսվելուց հինգ օր առաջ²⁴⁰:

Բուղազի փախուստից հետո գավառի տարածքում այլևս սուլթանական իշխանությունը չվերականգնվեց: Գավառի ներքին գործերի տնօրինումը մնաց պրիատավի ձեռքում, որը նատում էր Փամբակի Ղարաբիլիսա վյուղում: Սա Վրաստանի քաղաքացիական նահանգապետ Զավիլեյսկու՝ կայսրին ուղղված 1829 թ. Հոկտեմբերի 23-ի զեկույցի համաձայն՝ իրենից ներկայացնում էր միաժամանակ և ոստիկանություն, և՝ դատական մարմին, և՝ Հարկահավաք, և՝ կառավարիչ²⁴¹:

Մրանով մի առ ժամանակ ավարտվում են վարչական նորամուծությունները թաթարական դիմասանցիաներում, այդ թվում նաև՝ Շորպայալի գավառում:

Անդրկովկասյան նվաճված տարածքների հաջորդ վարչատարածքյին բաժանման համար (1829 թ.) Հիմք ծառայեցին մի շարք նոր պատմաքաղաքական իրադարձություններ, որ տեղի ունեցան տարածաշրջանում սկսած 1826 թվականից: Երևանը գրավելուց անմիջապես հետո, նախկին Երևանի և Նախիջևանի խանությունների տարածքներում կարգ ու կանոն հաստատելու և տեղի տնտեսական պոտենցիալ պատերազմի նպատակներին ծառայեցնելու համար գեներալ Պամկեիչը 1827 թ. Հոկտեմբերի 6-ին Երևանում կազմակերպում է «Ժամա-

²³⁸ Кондебу М. Е., նշվ. աշխ., Կավказский сборник, т. XXII, стр. 6.

²³⁹ Նույն տեղում, էջ 8:

²⁴⁰ Потто В., Материалы по истории персидской войны 1826-1828гг., Кавказский сборник, т. XXIII, Тифлис, 1902, стр. 15.

²⁴¹ АКАՀ, т. 7, Тифлис, 1876, стр. 24.

²⁴² Նակավոր վարչություն»՝, բաղկացած երեք մարդուց՝ այստեղ գտնվող զորքերի հրամանատար գեներալ լիյտենանտ Կրասովսկուց, որը համարվում էր վարչության նախագահ, Ներսես Աշտարակեցուց, որն իբրև տեղացի բնակչության մեջ մեծ զեղինակություն ունեցող և երկրի պայմաններին քաջածանոթ անձնավորություն, և Երևանի բերդի պարետ փոխվնդապետ Բորովինից²⁴³: Ժամանակավոր վարչությունը ամբողջովին ենթարկվում էր Կովկասյան զորքերի գիսավոր հրամանատար Պասկեիչին և կառավարվում նրա կարգադրությունների հիման վրա: Ժամանակավոր վարչության նախագահին իջեցված հրահանգում ասվում էր, թե վարչության գիսավոր նպատակը պետք է հանդիսանա հարկավոր միջոցառումների կիրառումը հանգստի ու բարեկարգության հաստատման և երկրամասը թշնամական հարձակումներից ու ներքին անկարգություններից պաշտպանելու համար:

Միանգամայն իրավացիորեն է նկատում Ալ. Երիցյանը. «Պասկեիչը իրոք որ ծանր պարտականություններ դրեց այդ վարչության վրա»²⁴⁴: Նա ժամանակավոր վարչությունից պահանջում էր լուծել պատերազմի և խաղաղ կյանքի հետ առնչվող այնպիսի հարցեր, որոնք քայլայված երկիրը ամենակին էլ ի վիճակի չէր իր ողբանելի տնտեսությամբ ապահովել: Հստ երևույթին Պասկեիչն ինքն էլ գիտեր, որ իր հանձնարարած գործերի մեծագույն մասն այդ պայմաններում անհնար էր իրավուրծել, ուստի անչափ գժգոհ էր ժամանակավոր վարչության չորս ամիսների գործունեությունից²⁴⁵, չնայած առևանց այդ էլ արքունիքում արդեն վաղուց նախագիծ էր մշակվում Երևանի մարզի մնայուն վարչածեկի մասին: Մարզային վարչության կանոնադրության այդ նախագիծը 1827 թ. դեկտեմբերի 15-ին գիսավոր շտաբի պետ Դիբեչի կողմից ուղարկվում է Պասկեիչին: Վերջնան նախագիծ մեջ անհրաժեշտ փոփոխություններ մտցնելու նպատակով 1828 թ. ապրիլի 2-ին գրավոր գեկուցագիր է ներկայացնում Ս. Պետերբուրգ և ինդրում, որպեսզի գրանք հաստատվեն բարձրագույն հրամանավորով²⁴⁶: Սակայն Պասկեիչի՝ գեկուցագիր ներկայացնելուց 13 օր առաջ, Թուրքմենչայի

²⁴² АКАР, т. 7, стр. 432; В. И. Иваненко, նշվ. աշխ., էջ 241:

²⁴³ АКАР, т. 7, стр. 480-481; Պարսամյան Վ., Հայ ժող. պատմություն 1830-1850 թթ., Եր., 1956, էջ 57:

²⁴⁴ Երիցյան Ալ., Ամենայն Հայոց կարողիկոսությունը և Կովկասի Հայք 19-րդ դարում, մաս Ա, Թիֆլիս, 1894, էջ 339:

²⁴⁵ Այդ մասին ավելի մանրանասն տես Աղաբեզյան Մ., Խնդիր կարողիկոսության Ամենայն Հայոց, Քննություն 1836թ. սահմանադրության (Պոլոժենիայի), Կ. Պոլիս, 1865, էջ 12-14; Գեղամյան Ե., Պատմական քաղվածքներ, պրակ 4, մաս 2, Բարոյ, 1909, էջ 277-279; Կոստանեանց Կ., Տ. Ներսես Ե Աշտարակեցի՝ Կարողիկոս Ամենայն Հայոց, Ալեքսանդրապոլ, 1909, էջ 9-10:

²⁴⁶ Հակոբյան Թ., նշվ. աշխ., էջ 364:

պայմանագիրը վավերացվելուց մեկ օր անց՝ 1828 թ. մարտի 21-ին, Հրապարակվում է կայսեր Հրամանագիրը նոր գրավված տարածքներում՝ Երևանի և Նախիջևանի խանություններում ու Օրբուբաղի օկրուգում Հայկական մարզ կազմակերպելու մասին.

«Բարձրագույն Հրամանագիր կառավարող սենատին
21-ը մարտի 1828 թ., N 1888

Պարսկաստանի հետ կնքված այս պայմանագրով (Թուրքմենչայի պայմանագրով-Ա.Հ.) Պարսկաստանից Ռուսաստանին անցած Երևանի խանությունն և Նախիջևանի խանությունը բոլոր գործերում Հրամանով այժմվանից կոչել Հայկական մարզ և այն մտցնել Մեր ափառուի մեջ: Այս մարզի կառուցվածքի և նրա կառավարման կարգի մասին Կառավարող սենատը ժամանակին կստանա անհրաժեշտ Հրամանները:

Նիկոլայ»²⁴⁷:

Այսպիսով Երևանի ժամանակավոր վարչությանը գալիս էր փոխարինելու վարչական մեկ այլ մարմին, նորաստեղծ մարզի կառավարման գործը փոխանցվում էր մարզային վարչությանը, որի պետի պաշտոնում հեռացված Կրասովսկու փոխարեն նշանակվեց Երևանում ուստական զորքերի հրամանատար Ալեքսանդր Ճավճակաձեն:

Վերս ասվածից դժվար չէ եղրակացնել, և այդ են Հաստատում նաև պատմական աղբյուրները²⁴⁸, որ վերոհիշյալ վարչատարածքային բաժանումը ուստական իշխանությունների կողմից գերազանցապես լուծել է մեկ առաջնաշերթ իննդիր՝ 1813-1829 թթ. Ռուսաստանին անցած Անդրկովկայան նոր տարածքների վրա վարչական նոր միավորների ձևավորման Հրատապ Հարցը և նպատակ չի հետապնդել կատարելու նախկինում արդեն ստեղծվածների ներքին վերաձևումներ կամ վերջիններիս կազմի մեջ մտնող տարածքների (դրանց թվում նաև Շորագյալի գավառի) փոխադրումներ նոր ձևավորվող վարչական միավորների մեջ:

Բ) Պարսկահպատակ Հայերի և արևմտահայերի գաղթը Արևելյան Շիրակ 1828-1831 թվականներին

XIX դ. սկզբներին ավերվել ու ամայացել էին ինչպես Վրաստանի Հարավային սահմանները, այնպես էլ Արևելյան Հայաստանի Հյուսիսային շրջանները՝ Լոռին, Փամբակը, Շորագյալը: Ուստի ցարական կառավարության համար առաջնաշերթ իննդիր էր դրանց վերա-

²⁴⁷ Договоры России с Востоком..., стр.217; Собрание актов, относящихся к обозрению истории армянского народа, ч. 1, М., 1833, стр. 278-279.

²⁴⁸ Иваненко В. Н., նշվ. աշխ., стр. 241.

²⁴⁹ Историческая записка об управлении Кавказом, т. 1, С. Эзов, Тифлис, 1907, стр. 65.

բնակեցումն ու շինացումը: Ուստաների շահագրգռվածությունը նորանվաճ մարզերի բնակեցման գործում թելադրվում էր նաև Թուրքիայի հետ պատերազմի կանխորչմամբ: Այդ պատճառով էլ ցարական կառավարությունը ցանկանում էր գրավված տարածքները առաջին հերթին բնակեցնել իրեն հուսալի տարրով, որպիսին լինելու էին ուստի վերաբնակիչները: Փաստորեն ազատելով Հայաստանը պարսկական լծից՝ ցարական կառավարությունը որոշել էր այն բնակեցնել կազակներով՝ ստեղծելով «գինվորական բնակավայրեր», այսպես կոչված՝ Արաքսի կազակություն²⁵⁰: Սակայն կապված մեծ ծախսերի և ծրագիրն իրականացնելու համար պահանջվող երկար ժամանակի հետ՝ ցարական կառավարությունը Պատկեչի այս նախագծի իրագործումը հետաձգեց մինչև XIX դ. 40-ական թվականները: Փոխարենը որոշվեց դեպի Երևանի և Նախիջևանի խանություններ քրիստոնյաների գաղթ կազմակերպել Պարսկաստանից: Ուստանական կառավարությունը քաջատեղյակ էր Անդրկովկասի և մանավանդ Արևելյան Հայաստանի գրավման գործում Հայերի ունեցած դերի մասին: Դեռևս գեներալ Ռատի-շչեն էր գրում, թե Հայերը Կովկասում ապրող երևկ թե միակ ազգն են, որ իրոք Հավատարիմ են Ուռւսաստանին²⁵¹: Սակայն Հայերի ներգաղթին ուսւական կառավարության ցուցաբերած դրական վերաբերմունքը, անտարակույս, առաջին հերթին բխում էր նրա ուազմաքաղաքական և գաղութային շահերից: Այդ մասին գեներալ Պասկեիչն ուղղակիորեն է ասում իր գեկուցագրերից մեկում. «Մեր սահմանների ամայի Հողերի բնակեցումը Հնազանդ, աշխատասեր և Հավատով մեզ նվիրված ժողովրդով մեծ օգուտ կարող է բերել»²⁵²: Սակայն Հակառակ Պասկեիչի այս կարծիքին՝ ուստի պարսկական պայմանագրի սկզբնական նախագծում, ինչպես իրավացիորեն նշում է Լ. Սեմյոնովին իր «Հայաստանի պատմության Համար Թուրքմենչայի պայմանագրի նշանակութան Հարցի շուրջը» Հողվածում²⁵³, Հայաստանի ու Հայերի մասին պայմաններ չէին նշված: Մինչդեռ դրանք առաջադրվել էին Խաչատուր Լազարյանի, Ալեքսանդր Խուլգաբաշյանի և Կոնստանտին Արդությանի կողմից 1827թ. վերջերին և 1828 թ. սկզբներին «Մի քանի ենթադրություններ Վրաստանի և նրան սահմանակից մարզերի մասին»²⁵⁴ խորագրով նախագծում և Ն. Աշտարակեցու «Գրառումներ Հայերի մասին Հաշտության բանակցություններում մտցնելու համար» փաստաթղթում:

²⁵⁰ АКАК, т. 7, стр. 322, 339-340.

²⁵¹ Братская помоц пострадавшим в Турции Армянам, М., 1898, стр. 508.

²⁵² Մաշտոցի անվան Մատենադարան, Լազարյանների արխիվ, թղթ. 106, գործ 51, փալ. 93-95: Присоединение..., т. 2, док. 286, стр. 496;

²⁵³ Семенов Л. С., К вопросу о значении Туркменчайского договора для истории Армении, ԹԲՀ, Եր., 1959, N 4:

²⁵⁴ Մաշտոցի անվան Մատենադարան, Լազարյանների արխիվ, թղթ. 106, գործ 51, փալ. 93-95:

Ի վերջո ընդունվում է Ն. Աշտարակեցու ծրագիրը, որի աշխարհիկ և Հոգեոր ողջ գործունեությունը ուղղված էր Ռուսաստանի Հովանու ներքո Հայաստանի վերածնունդին: Արդեն 1827թ. դեկտեմբերին նա պաշտոնական գրություն է ուղարկում «Պասկեիչին «պարսկական տիրույթներից Ռուսաստանին պատկանող պրովինցիաները Հայերի գաղթելու վերաբերյալ», որով առաջարկում էր պարտավորեցնել պարսից կառավարությանը գաղթող Հայերի կալվածքները վերցնել գանձարանի տրամադրության տակ, որոշակի հատուցում տալով գրանց տերերին, կամ էլ թույլատրել պարսիկ մասնավոր անձանց գնել գրանք էժան գներով: Աշտարակեցին առաջարկում էր նաև միջոցներ ձեռնարկել գաղթին պարսից կառավարության կողմից հարուցվող արգելքների գեմ:

Ալկավեռվ 1828թ. մարտի սկզբներին, պարսկահպատակ Հայերի գաղթը դեպի Արևելյան Հայաստան ընթացավ Համաձայն 1828 թ. փետրվարի 26-ին գաղթի Հանձնաժողովի նախագահ Ե. Լազարեկի (Լազարյանի)²⁵⁵ Պասկեիչից ստացած գաղթականներին տրվող իրավունքների և արտոնությունների մասին Հրահանգի: Գաղթելու իրավունք արվում էր միայն Աստրավատականի քրիստոնյաներին, որոնք բնակվելու էին Երևանի, Նախիջևանի և Ղարաբաղի անմարդաբնակ գյուղերում: Նոր բնակավայրերում գաղթականները վեց տարով պատառվում էին Հարկերից և երեք տարով պարհակներից²⁵⁶: Կարիքավոր գաղթականներին օգնելու նպատակով Պասկեիչը Հատկացրեց 25000ռ.՝ ընտանիքին 10-ական ոռությի:

Պարսկական կառավարությունը եռանդուն միջոցներ էր գործադրում Հայերի գաղթը խափանելու համար: Թուրքմենչայի պայմանագրի XV հոդվածով նախատեսվում էր, որ Պարսկաստանի Սպահանական մարզի բոլոր բնակիչներին «տրամադրվելու է... մեկ տարի ժամկետ... գուրս տանելու և վաճառելու շարժական գույքը՝ առանց կառավարության ու տեղական պետերի կողմից որևէ խոշնդուս հարուցելու և... գուրս տարվող կամ վաճառվող գույքը և իրերը որևէ մաքսի ու Հարկի ենթարկելու»²⁵⁷: Վերջնիներս թեև պարտավորվել էին թույլ տալ քրիստոնյաներին ազատ ու անարգել գաղթելու ուստական մարզերը, բայց չէին կարող անստարբերությամբ դիմել, թե գյուղերն ու քաղաքները մենք մյուսի հետեւ ինչպես են դատարկվելում աշխատասեր Հայերից: Համատարած գաղթը խոչընդունելու համար պարսից թագաժառանգի և դեսպան Մակրոնալդի խորհրդով հայաբնակ գյուղեր

²⁵⁵ АКАИ, т. 7, стр. 588-589.

²⁵⁶ Մաշտոցի անվան Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 58, վավ. 133; ՀՀ ՊԿՊԱ, ֆոնդ 151, ցուցակ 1, գործ 25, էջ 2-4:

²⁵⁷ Глинка С., Описание переселения армян азфербайджанских в пределах России, М., 1831, стр. 65; «Նկարագիր գաղթականութեան հայոց ի Պարսկաստանի ի Ռուսաստան», Սոսկվա, 1832, էջ 71:

²⁵⁸ Договоры России с Востоком..., стр. 222:

են մեկնում անդիլիական դիվանագետներ Մոնտիսը, Վիլոքը, Շիհն, Փրանսիացի Սևարնոն ու պարսիկ աստիճանավորներ՝ տեղում ստուգելու, թե գաղթականների նկատմամբ ոռումներն արդյո՞ք բռնություններ չեն գործադրում: Միևնույն ժամանակ Աբաս-Միրզան Պասկևիչին գրում էր, թե գաղթը Ն. Աշտարակեցու և Ե. Լազարեկի կողմից իրականացվում է բռնի: Պարսից թագաժառանգը գրում էր, թե Աշտարակեցին եկեղեցականներից պահանջել է «Հօսերով» շտապել Հայկական մարզ: Զնազանդվելու դեպքում Ներսեսը սպառնացել է զրկել նրանց եկեղեցականի սահմանից և հետապնդել մինչև «այն աշխարհ» ու նույնիսկ «այն աշխարհում» էլ: «Ինչ վերաբերում է Լազարեին, - գրում էր թագաժառանգը, - ապա նա բոլոր չգաղթողներից փող է վերցնում և բաժանում է գաղթողներին: Բացի այդ, նրա հրամանով ոռու զինվորները տեղափորում են գաղթել չցանկացողների Հողերում և քայլայում նրանց տնտեսությունները»²⁵⁹: Նմանատիպ զրաբարտություններ ոռումների հասցեին պարսից կառավարությունը տարածում էր պարսկահպատակ Հայերի գաղթի ամբողջ ընթացքում: Այդ կապակցությամբ 1828 թ. ապրիլի 2-ին Լազարել Պասկևիչին գրում էր. «ՈՒրմրայում իմ գործողությունների գեմ Հանդիպեցի բազմաթիվ արգելվների և լսեցի անհեթեթ լուրեր մեր մասին, որոնք տարածում է պարսկական կառավարությունը: Գաղթականներին ահարեկելու համար նրանց համոզում են, որ Արաքսի այն կողմում նրանց սպասում է վաս կիմա, սով, և որ թագավորի հապատակները վաճառվում են»²⁶⁰: Ցարիզմի գաղթեցման քայլաքականությանը խոչընդունում էին նաև որոշ Հայ Հոգևորականներ²⁶¹, մանավանդ Խորայել եպիսկոպոսը, որն իր քարոզներով Սալմաստի շրջանի մի քանի հազար Հայ ընտանիքների հետ պահեց ոռուսական տարածքներ գաղթելուց²⁶²: Եպիսկոպոսի վարքագիծը վրդովմոնք է առաջ բերում էջմիածնում: Ն. Աշտարակեցին հրամայում է ձերքակալել Խորայելին²⁶³, սակայն, հրամանը կատարելն անհնար էր: Աբաս-Միրզան, Խորայել եպիսկոպոսին հրավիրելով թավրիզ, նշանակում է Ատրպատականի թեմի առաջնորդ:

Զնայած պարսկական կառավարության և Ատրպատականի հայության առանձին ներկայացուցիչների (Խորայել եպիսկոպոս, Նազար

²⁵⁹ Бороздин К. А., Переселенцы в Закавказье, СПб., 1891, стр. 184.

²⁶⁰ АКАԿ, т. 7, стр. 590.

²⁶¹ Մաշտոցի անվան Մատենադարան, Ն. Աշտարակեցու արխիվ, թղթ. 166, վավ. 1084, 1085, 1122:

²⁶² Երիցյան Ալ, նշվ. աշխ., հ. Ա, էջ 330:

²⁶³ Հովհաննիսյան Կ., Պարսկահայերի գաղթը և Ներսես Աշտարակեցին, Աշխատոյններ Հայաստանի պատմության Պետական թանգարանի, Երևան, 1975, N 4, էջ 78:

²⁶⁴ Մաշտոցի անվան Մատենադարան, Ն. Աշտարակեցու արխիվ, թղթ. 166, վավ. 1016:

Շահնազարյան և ուրիշներ) Հարուցած բազմաթիվ արգելքներին, 1828 թ.-ին Հիմնականում Մարտաղյոց, Սալմաստից, ՈՒրմիայից, Խոյից, Մակուից, Ղարաղաղից, ինչպես նաև Պարսկաստանի մյուս գավառներից ու Թալիրիկ քաղաքից Հայկական մարզ ու Ղարաբաղ գաղթեցին ավելի քան 8000 ընտանիք Հայեր: Նշված շրջաններից Հայերի գաղթը կազմակերպելու գործում մեծ էր Հատկապես Ա. Գրիբոյեդովի և Ն. Աշտարակեցու ավանդը: Թուրքմենչայի պայմանագրի կնքումից հետո Պարսկաստանում Ռուսաստանի արտակարգ և լիազոր դեսպան նշանակված Ա. Գրիբոյեդովն իր ուսերին վերցրեց գաղթականների թողած անշարժ գույքի պահպանման ու վաճառքի ծանր գործը: «Մեր կողմն անցավ մինչև 8000 ընտանիք,- գործ էր նա,- և ես հիմա նրանց մնացած գույքն անվթար պահպանելու Համար գիշեր-ցերեկ քուն ու Հանդիսատ չունեմ, պահպանում եմ նրանց ունեցվածքն ու եկամուտները»²⁶⁵:

Ներգաղթի նախապատրաստման ու իրագործման մեջ անչափ մեծ էր Հայ ազատագրական շարժման ոռուսական կողմնորոշման շերմեռանդ պաշտպան Ն. Աշտարակեցու դերը²⁶⁶: Ներգաղթին տալով Հայրենասիրական մեծ նշանակություն, նրա հաջող իրագործման համար Աշտարակեցին գործի է դնում իր անսպառ եռանդը, բարձրաստիճան Հոգեռորականի Հեղինակությունն ու ազգեցությունը, ինչպես նաև իր կապերը Ասոկայան Հատուկ կորպուսի հրամանաստրության հետ²⁶⁷: Օտարադաշնաների նախարար Բյուդրովին Հղած Պասկալիչի գրություններից մեկում կարդում ենք. «Դեռևս այս պատերազմի սկզբին, նա (Ն. Աշտարակեցին-Ա. Հ.) անդուկ կերպով հավաստիացնում էր, թե Հենց որ Երևանի ու Նախիջևանի խանությունները գրավվեն մեր զորքերի կողմից, այնժամ Հազարավոր Հայեր կգան Պարսկաստանից, Թուրքիայից և Նույնիսկ Հնդկաստանից»²⁶⁸: 1828թ. փետրվարի 25-ին դիմելով Ատրապատականի Համայն Հայությանը Ն. Աշտարակեցին կոչ էր անում. «...Հասել է ահա փրրկութիւն... անմահ, աներկիւդ, ամենասապահով պաշտպանութեամբ յաղթօղ զօրաց Ռուսաց անցանել միայն ընդ Երասխ գետ, յետ որոյ ունիք վայելել զերկիր խաղաղութեան, ինչ ամենայն միխիթարութեան և մեծ ապահովութեամբ ըստ մեծ ողորմածութեանց և բարի գութ հովանաւորութեանց հասարակախնամ հայր... և մեծ կայսեր անհնայն Ռուսաց...»²⁶⁹: Նմանատիպ կոչերով նաև դիմում է նաև Ատրպատականի առանձին վայրերի հայ բնակչությանը առա-

²⁶⁵ Грибоедов А. С., Полное собрание сочинений, т. 3, СПб., 1917, стр. 237.

²⁶⁶ Այդ մասին մանրամասն տես Z. Z., Պատրիարք Ներսես V և Պերսկա война 1827 թա, Մ., 1898; Երկով Ա., Ներսես V և Վորոնցով, Տիֆլիս, 1898.

²⁶⁷ ՀՀ ՊԿՊԱ, ֆոն 332, ցուցակ 1, գործ 816:

²⁶⁸ АКАԻ, թ. 7, стр. 560.

²⁶⁹ Մաշտոցի ամիսն Մատենադարան, Ն. Աշտարակեցու արխիվ, թղթ. 166, գլ. ԼԲ, վավ. 1071:

Հարկելով ազատվել «ի Հագարամենայ տառապանաց և յամենայն հոգեւոր և մարտնաւոր վնասուց»՝ անցնելով Արաքսի Հանդիպակած ավրը²⁷⁰:

Ինչևէ, 1828թ. մարտի 12-ից սկսվում է պարսկահպատակ Հայերի ներգաղթը և առաջինը գաղթում են ՈՒրմիայի Կարավերան գյուղի Հայերը²⁷¹: Սկզբնական շրջանում գաղթն ընթանում էր չափազանց դանդաղ: Պատճառը ոչ այնքան Պարսկական կառավարության գործողություններն էին, որքան դաժան սառնամանիքներն ու հույսը, թե ըոլոր գրաված տարածքները ի վերջո կմնան ոռուսներին: Սակայն, երբ Հայտնի դարձավ, որ ոռուսները շուտով հեռանալու են այդ տարածքներից, քրիստոնյանները ձեռնամուխ եղան գաղթի արագ իրականացմանը: Արդեն 1828 թ. ապրիլի 2-ին գնդապետ Լազարել Պասկելիչին գեկուցում էր. «... Մարազայի խանությունում այլև քրիստոնյա չկա..., իսկ Թավրիզի ամբողջ հայ բնակչությունից գաղթելու ցանկություն չի հայտնել միայն 6 ընտանիք »²⁷²: Ընդամենը մեկ ամիս անց՝ 1828 թ. մայիսի 9-ին, նույն Լազարել Պասկելիչին Խոյից գեկուցում էր, թե Արաքսը բարեհաջող կերպով անցել են շուրջ 4500 ընտանիքներ, և որ շուտով սահմանն անցնելու էին ևս 2000 ընտանիքներ²⁷³:

Գաղթի ընդունած լայն ծավալներից վախենալով և այն դադարեցնելու նպատակով Աբաս-Միրզան օրենք է հանում, ըստ որի արգելվում էր գնել քրիստոնյաների ունեցվածքն այն պատճառաբանությամբ, որ դա հետո պետականացվելու կամ տրվելու է զանազան աստիճանավորների²⁷⁴: Թեև Պասկելիչի և Լազարելի նախնական ենթադրությունների համաձայն՝ գաղթականների թիվը չէր անցնելու 5000 ընտանիքից, պարսկական կողմի հարուցած բազմաթիվ դժվարություններին ու խոշնդուններին հակառակ՝ 3.5 ամավա ընթացքում Արաքսն անցան 8000-ից ավելի գաղթական ընտանիքներ՝ Արևելյան Հայաստանի ազգաբնակչության թիվը համարելով գրեթե 40000 քրիստոնյա հպատակներով:

Պատճական գրականության մեջ և այլ աղյուրներում պարսկահպատակ հայ գաղթականների թիվը տարբեր է հիշատակված և տատանվում է 7-11 Հազար ընտանիքների միջև: Եթե մինչև գաղթի սկսվելը Ն. Աշտարակեցին կարծիք էր հայտնում դեպի Երևանի և Նախիջևանի պրովինցիաներ գաղթելու ցանկություն հայտնած հայերական

²⁷⁰ Նույն տեղում, վավ. 1119:

²⁷¹ Դարրինյան Մ., Պարսկահայերի գաղթը և նրանց բնակեցումը (1828-1829 թթ.), ԼՀԳ, Եր., 1973, N 8, էջ 15-16:

²⁷² Потто В., Материалы к истории персидской войны 1826-1828 гг., Кавказский сборник, т. XXX, Тифлис, 1910, стр. 46.

²⁷³ Тавакалиян Н., Переселение армян из Персии и Турции в Закавказье после присоединения Восточной Армении к России, ՊԲՀ, Եր., 1976, N 3, էջ 32:

²⁷⁴ ՀՀ ՊԿՊԱ, ֆոնդ 90, ցուցակ 1, գործ 365, էջ 9:

մոտ 5000 և ասորի նեստորական 10000 ընտանիքների քանակի մասին, ապա գաղթի ավարտից հետո նույն ինքը հաշվում էր ընդամենը 8000 ընտանիք նորեկներ՝²⁷⁵ : Երա կողմից Աստրապատական ուղարկված Ստեփան եպիսկոպոսի և Նիկողայոս վարդապետի տվյալներով գաղթականների թիվը 10000 ընտանիք էր:²⁷⁶ : Աստրապատականի թեմի առաջնորդ Բարսեղ եպիսկոպոսը գաղթականների թիվի մասին գրում էր, թե ութի ամիսների ընթացքում «ի քաղաքաց և ի գաւառացն Դաւրիժու, Մարաղայու, Խոյա, Սալմաստու, ՈՒրմիայ, Աչօքմէնաւաւայու, Զալարանայ, Աւաճուղայ և յայլոց նահանգացյորս գտանիւր յազգէն մերմէ Հայոց, ի գումար արկաներով մետասան Հազար տունս հանաք և չուեցուցաք զնոսին յայսկոյս երասին գետոյ»²⁷⁷, իսկ Լազարևն էլ տեղեկացում էր, թե արդեն 1828թ. հունիսի 14-ի գրությամբ Աստրապատականից Արևելյան Հայաստան գաղթել է ընդհանուր առմամբ 6126 ընտանիք, որից 2323-ը՝ ՈՒրմիայի և 698-ը՝ Մարաղայի խանություններից, 1812-ը՝ Սալմաստի, 582-ը՝ Խոյի և 382-ը՝ Մակուի շրջաններից, 329 ընտանիք էլ Թավրիզից ու շրջակա գյուղերից²⁷⁸: Գյուսավոր Հրամանաստարին ներկայացրած իր Հաջորդ զեկուցագրում Լազարեր նշում էր թե ուստական տիրույթներում հաստատված պարսկահպատակ Հայ գաղթականների թիվը հասել է 7458 ընտանիքից, որից 3900-ը՝ Հաստատվել է Երևանի, 2363-ը՝ Նախիջևանի շրջաններում, 535-ը՝ Ղարաբաղում, իսկ 660 ընտանիքներ էլ գաղթել են առանց պետական օգնություն և փաստաթղթեր ստանալու ու տեղակորվել են տարբեր վայրերում²⁷⁹: Ավելի ուշ, արդեն պարսկահպատակ Հայերի գաղթի մասին ներկայացրած իր ընդհանուր Հաշվետվության մեջ Լազարեր գրում էր. «... ավելի քան 8000 Հայկական ընտանիքներ իմ կողմից գաղթեցվել է Հայկական մարզ»²⁸⁰:

Այս վերջին թվին մոտ է Մատենադարանի արխիվային փաստաթղթերի քննության հիման վրա ընդունվածը (8510 ընտանիք), իսկ եթե հիմնվենք 1829-1832 թթ. գաղթականների տեղափորման մասին պետական վիճակագրական տվյալների վրա, ապա ներդադիր էր ընդա-

²⁷⁵ Սաշտոցի անվան Մատենադարան, Կորողիկոսական դիվան, թղթ.59, վավ. 578:

²⁷⁶ Խոյի տեղում, Ն. Աշտարակեցու արխիվ, թղթ. 167ա, վավ. 19:

²⁷⁷ Խաչատրյան Մ., Պարսկահայերի ներգաղթի կազմակերպումն ըստ Ժամանակի փաստաթղթերի, ԼՀԳ, Եր., 1978, N 10, էջ 108:

²⁷⁸ ՀՀ ՊԿՊԱ, ֆոնդ 332, ցուցակ 1, գործ 815:

²⁷⁹ Сборник газеты Кавказ, изд. О. Константиновым, первое полугодие, Тифлис, 1847, стр. 62

²⁸⁰ ՀՊԿՊԱ, ֆոնդ 151, ցուցակ 1, գործ 25, էջ 4; Глинка С., Описание переселения..., приложение IV, стр. 114, 131.

²⁸¹ Սաշտոցի անվան Մատենադարան, Կորողիկոսական դիվան, թղթ.59, վավ. 546:

մենը 8249 ընտանիք, որից 2-3 տարի անց մնացել էր 6946 ընտանիքը (35560 մարդ):²⁸²

Ե. Գեղամյանցը գաղթականների թիվը նշում է 8249 ընտանիք կամ 45000 մարդ,²⁸³ Լեռն հաշվում է 45-50000 մարդ,²⁸⁴ Հայտնի պատմաբան-կովկասագետ Վ. Պոտտոն նշում է 8249 ընտանիք կամ 40000 մարդ:²⁸⁵ Պոտտոյի հետ համակարծիք է նաև Ալ. Երիցյանը, որն ի հավելումն նաև գրում է, թե «եթե դոքա և հետևյալ 1829-1830 թուին Տաճկահայաստանից գաղթողները չինեին, Հայոց թիվն Արարատեան աշխարհում պիտի մնար շատ աննշան և միանգամայն կորչեր տիրապետող մահմեղական տարրի մեջ»:²⁸⁶

Մեր ունեցած այս և այլ տվյալների հաշվառմամբ (նկատի ունենք նաև Ղարաբաղ, Վրաստան և Հայաստանի Հյուսիսային շրջաններ գաղթած պարսկահայտակ հայերի քանակը, գաղթի ճանապարհին ու դրանից հետո ահավոր զրկանքների, վատ պարենավորման, ամենատարբեր հիվանդությունների և այլ պատճառներով գաղթածների մի բավականին ստվար զանգվածի, մինչև 1300 ընտանիք, մահանալը և այլն) կարելի է համաձայնվել այն պնդման հետո, որ Արևելյան Հայաստանի ազատագրումից և Ռուսական կայսրությանը միանալուց հետո ընդամենը 3.5 ամսում, Արաքսն անցավ և ոռուսական հպատակություն ընդունեց պարսկահայ գաղթականների 8000-ից ավելի ընտանիք կամ 45000 մարդուց ոչ պակաս, որն Ասրպատականի հայության ճնշող մեծամասնությունն էր:

XIX դ. 20-ական թվականների վերջերին լրջորեն սրվել էին հարաբերությունները նաև Ռուսաստանի և Թուրքիայի միջև: Վերջինս դեռևս ոռուս-պարսկական պատերազմի (1826-1828թթ.) ալզրից ակտիվորեն նախապատրաստվում էր Ռուսաստանի դեմ պատերազմի: Ռուս-թուրքական հարաբերությունների սրման գործում հատկապես մեծ էր արևմտակելքուղական տերությունների՝ Անդիխայի, Ֆրանսիայի և Ավստրիայի գերը, որոնք ամեն կերպ ձգտում էին հեռու պահել Ռուսաստանին Բուժորի ու Դարդանելի նեղուցներից և հատկապես Կ. Պոլսից՝ խոշնդոտելով նրա ազատ մուտքը Միջերկրական ծով, ինչը մեծ չափով կնպաստեր Ռուսաստանի համախմարհային տնտեսական կապերի ուժեղացմանը և կապահովեր երկրի հարավային սահմանների ապահովությունը թուրքական հետագա ոտնձգություններից: Դրան

²⁸² Ռուս. Ի., Աշվ. աշխ., էջ 540:

²⁸³ Գեղամյան Ե., Հայերի ազատագրական շարժումները Ժմ դարում, Բաքու, 1915, էջ 139:

²⁸⁴ Լեռ, Հայոց պատմություն, նորագոյն շրջան, մաս Բ, Եր., Պետական համալ-սարամի ապակետիպ, 1927, էջ 116:

²⁸⁵ Պոտտո Բ., Կավказская война..., թ. 3, գ. 4, стр. 732.

²⁸⁶ Երիցյան Ալ, Աշվ. աշխ., հ. Ա, էջ 333:

²⁸⁷ Ռուս. Ի., Աշվ. աշխ., էջ 132:

Հաջորդած դեպքերը, մասնավորաբար, Հունաստանի՝ կրկին իրեն անկախ հռչակելը, նրա դեմ ուազմական գործողությունները դադարեցնելու դաշնակիցների պահանջի մերժումը թուրքիայի կողմից, ապա Նավարինի մոտ 1827 թ. Հոկտեմբերի 20-ին դաշնակիցների՝ 27 նավերով թուրք-եղիպտական նավատորմին (126 նավ) ջախջախիչ պարտության մասնելը առավել բորբոքեցին թուրքական կառավարող շրջանների թշնամանքը ոռուսների հանդեպ՝ առիթ տալով սովորական 1828 թ. գեկտեմբերի 18-ին չեղալ համարել ոռուսների հետ մինչ այդ կնքված բոլոր պայմանագրերն ու նախապատրաստվել նոր պատերազմի: Միևնույն ժամանակ ոռուսական կառավարությունը ևս՝ հաջողությամբ ավարտելով պատերազմը Պարսկաստանի դեմ, չուտափոյթ կերպով պատրաստովում էր նորին՝ ընդդիմ թուրքիայի: Այն սկսվեց 1828 թ. ապրիլի 14-ին՝ Պ. Վիտքենշտեյնի 92000-ոց գորքի Պրուտն անցնելով ու Դանուբյան իշխանությունները զավթելով²⁸⁸:

Կովկասյան ճակատում ոռուսական զորքերը հարձակողական գործողությունները սկսեցին մի փոքր ավելի ուշ՝ Հունիսի կեսերին: Այս ուղղությամբ պատերազմական գործողությունների վիճակոր ասպարեզ դարձան Կարսի, Բայազետի, Էրգորումի ու Մուշի փաշայությունների տարածքները: 1828 թ. ապրիլին սկսված պատերազմը Կովկասյան ճակատում թուրքիային հաջողություններ չըերեց: Արդեն Հունիսի 23-ին ոռուսական զորքերը գրավեցին Կարսի²⁸⁹, Հուկիսի 23-ին՝ Ախալքալաքի բերդերը²⁹⁰, օգոստոսի 15-ին՝ Ախալցիսան, 22-ին՝ Արդահանը, 28-ին՝ Բայազետը²⁹¹, իսկ սեպտեմբերի 12-ին՝ Ալաշկերտը²⁹² և 1828 թ.-ին ուղղական գործողությունները Կովկասյան ճակատում ավարտեցին ոռուսական գենքի փայուն հաղթանակով: Ռազմական գործողությունները վերսկվեցին միայն 1829 թ. գարնանը, և արդեն Հունիսի 24-ին ոռուսները գրավեցին Վերին Բասինի փարչական կենտրոն Հասան կալան՝ «Արգրումի բանալին»²⁹³, իսկ Հունիսի 27-ին՝ նաև Էրզրումը: Հուլիս-օգոստոս ամիսներին ոռուսները խոշոր հաջողությունների հասան նաև Բալկանյան ճակատում՝ գրավելով Սիլիստրիան, Բուրգասը, Աղրիանապոլիսը և ստիպելով Սովորան Մաշմուդ Բ.-ին անհապաղ Հաշտություն խնդրել: 1829 թ. սեպտեմբերի 2-ին կնքված Աղրիանապոլսի

²⁸⁸ 1828-1829 թթ. ոռու-թուրքական պատերազմի մասին մանրամասն տե՛ս История военных действий в Азиатской Турции в 1828-1829 гг., ч. 2. Варшава, 1848. Шеремет В., Турция и Адрианопольский мир 1829 г., М., 1975.

²⁸⁹ Стіу Потто В., Осада и штурм Карса, изд. II, СПб., 1903.

²⁹⁰ АРАԿ, т. 7, стр. 757.

²⁹¹ Потто В., Кавказская война..., т. 4, Тифлис, 1887, стр. 28.

²⁹² Մելքոնյան Ա., նշվ. աշխ., էջ 134:

²⁹³ Пушкин А., Путешествие в Арзрум во время похода 1829 года, Поли. соб. соч., изд. 4, т. 4, Ленинград, 1978, стр. 466.

²⁹⁴ Հաշտության պայմանագրի՝ Համաձայն՝ Թուրքիան ճանաչում էր Անդրկովկասի՝ Գյուլիստանով և Թուրքմենչայով Հաստատագրված միացումը Ռուսաստանին, ինչպես նաև ոռուսներին էր զիջում Դանուբի գետաբերանն իր կղզիներով, Սև ծովի արևելյան ափը՝ Կուբանի գետաբերանից մինչև սր. Նիկողայի նավամատուցյօք, Անապա և Փոթի նավահանգիստները, իսկ Անդրկովկասում Ախալցիսայի փաշայության մի մասը՝ Ախալքալաք ու Ախալցիս բերդերով: Միևնույն ժամանակ պայմանագիրը Թուրքերին էր վերաբարձում ոռուսների գրաված Կարս, Բայրակետ, Էրզրում, Բաբերդ, Մուշ, Արդահան, Օլմի, Ալաշկերտ և Խնուս քաղաքներն ու Հայրուրավոր Հայաբնակ գյուղեր: Ռուսաստանը չկարողացավ օգտվել Հաղթանակի պատուղներից: Արևմտաելքոսական տերությունները, որոնք չին ուղում տեսնել Ռուսաստանի դիրքերի ամրապնդումն Արևմտյան Հայաստանում, ուղղմական և գիշանագիտական ճանապարհներով ստիպեցին Հաղթող կողմին Համաձայնելու թուրքերի Համար անհամեմատ ձեռնտու Հաշտության պայմանագրին, որից միամտաբար մեծ ակնկալություններ ունեցող Հայ ժողովորի հուսահատական վիճակի մասին վ. Պոտտոն գրում էր. «Այսեղ, Հայաստանի ճիշտ սրտում, այդ Հաշտության մասին լուրը խորը ճիամթափության մեջ է դրել մի ամբողջ ժողովուրդ, որը դեպի իրեն է ձգում իր դարավոր արհավիրքներով և բոցավառ սրտառուչությամբ, որ նպաստել է ոռոսական զննքի Հաջողությանն ու վերջապես այն լուսավոր հույսերով, որոնք նա իր ապագայի Համար կապել է ոռոսական իշխանության հետ»:²⁹⁵

Օսմանյան կայսրության լծի տակ հեծող Հայության վիճակն օրհասական էր: Թուրքական հրամանատարությունն իր կրած պարտության վիճակոր պատճառ Համարելով Հայությանը, պատրաստվում էր ոռոսական զորքերի հեռանալուց հետո Հաշվեհարդար տեսնել նրա հետ: Ինչ խոսք, թուրքերը Հայերի մասին նման կարծիքի իրավունքն ունեին: Այն, որ Հայերը դավաճանելով Թուրքական պետության շահերը, պատերազմների ժամանակ անցնում էին ոռուսների կողմն ու գործում ընդում թուրքերի, փաստ էր: Ռուս-պարսկական (1826-1828 թթ.) պատերազմը դեռ չէր ավարտվել, սակայն արևմտահայ զանազան գավառներից ստացվում էին գեներալ Պասկեվիչն, Եփրեմ կաթողիկոսին և Ն. Աշտարակեցուն ուղղված բազմաթիվ նամակներ, որոնց Հեղինակներն իրենց նվիրվածությունն էին Հայտնում ոռոսական տերությանն ու խնդրում իրենց ևս ազատագրել թուրքական լծից:²⁹⁶

Պարսկահայաստակ Հայերի գաղթից հետո Արևելյան Հայաստանը 20000 ընտանիք կազմելով բնակեցնելու ծրագիրը անժամկետ

²⁹⁴ «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քառականության փաստաթղթերում (1828-1923)», Եր., 1972, էջ 73-82:

²⁹⁵ Պոտո Բ., նշվ. աշխ., էջ 471:

²⁹⁶ Սելրունյան Ա., նշվ. աշխ., էջ 133:

Հետաձգված էր²⁹⁷, և Պասկեիչն առաջարկում էր ամայի մնացած տարածքները բնակեցնել արևմտահայերով, մանավանդ որ Ազգիանապղոսի պայմանագրի XIII հոդվածը ժույլ էր տալիս 18 ամսվա ընթացքում կատարել բնակիչների վերաբնակեցում «իրենց ամբողջ ընտանիքներով ու շարժական գույքով» ինչպես Թուրքիայից, այնպես էլ Հակառակը²⁹⁸: 1829 թ. Հունվարի 5-ին կայսերը գրած իր նամակում նա առաջարկում էր արևմտահայ գաղղթականներին վերաբնակեցնել հետեւյալ կերպ. «Ախալցիայի փաշայությունից գաղղթեցնել նրան սահմանակից Քարթի, Թրիպալեթ և Սոմիսեթ, Կարսի փաշայությունից՝ Փամբակի և Շորագյալի գիտանցիաներ ու Հայկական մարզի վերին մասեր՝ Արքաչայից մինչև Թալին և վերջապես Բայազետի փաշայությունից՝ Հայկական մարզի այն մասը, որը գտնվում է Արաքսի ձախ ափին»²⁹⁹:

Կարճ ժամանակ անց Հավանություն տալով Պասկեիչի առաջարկությանը, կայսրը միաժամանակ խորհուրդ էր տալիս ոռուսական սահմանամերձ շրջանների բնակեցումը գաղղթականներով կատարել քաղաքական առումով գրուշորեն և տեղական պայմաններին համապատասխան³⁰⁰. Արևմտյան Հայաստանից քրիստոնյաների գաղղթը կազմակերպելու նպատակով Պասկեիչի կարգադրությամբ Թիֆլիսում հիմնվում է Հաստուկ կոմիտե գաղղթականների ընդունման, տեղապորման և բնակեցման հետ կապված Հարցերը լուծերու համար³⁰¹: Գաղղթականական կոմիտեի նախագահ է նշանակվում Վրաստանի քաղաքացիական նահանգապետ Զավիլեյսկին, անդամաներ՝ Կալինովսկին և Մազկնամագֆը: Կոմիտեն գործենու էր Պասկեիչի՝ 13 կետից բաղկացած Հաստուկ Հրահանգի Համաձայն³⁰²: Ինչպես պարզվում էր այդ հրահանգի բովանդակությունից, արևմտահայերի ներգաղթը կազմակերպվելու էր 1828 թ. պարսկահպատակ Հայերի գաղթի պայմաններով, և Կոմիտեն պարտավոր էր մինչև 1830 թ. գարուն մանրամասն տեղեկություններ Հավաքել ինչպես Վրաստանում և Արևելյան Հայաստանում, այնպես էլ Անդրկովկասի մյուս ոռուսական պրովինցիաներում պետական ամայի Հողատարածությունների վերաբերյալ: Քրիստոնյաների վերաբնակեցման կոմիտեի ընդհանուր կանոններով՝ «բոլոր գաղղթականները բաժանվում էին երեք կարգի՝ 1. վաճառականների կամ առևետով գրադլողների, 2. արհեստավորների կամ որևէ արհեստով գրադլողների, 3. Հողագործների կամ գյուղացիների»: Կոմիտեն պետք է

²⁹⁷ АКАИ, т. 7, стр. 774.

²⁹⁸ Պերպելեան Ա., Պատմոթին հայոց, Կ. Պոլիս, 1871, էջ 212; Розен Д., История Турции от победы реформы в 1826 году до Парижского трактата в 1856 году, ч. I, От истребления яничар до смерти Махмеда II, СПб., 1872, стр. 118-120.

²⁹⁹ АКАИ, т. 7, стр. 774.

³⁰⁰ Նոյն տեղում:

³⁰¹ АКАИ, т. 7, стр 831-832:

³⁰² Նոյն տեղում, էջ 832:

ղեկավարվեր այս դասակարգմամբ նաև գաղթականների տեղաբաշխման ժամանակ: Այնուհետև առաջարկվում էր «գաղթող քրիստոնյաներին տեղափորել բացարձակապես պետական հողերի վրա, ամբողջական գյուղերով այնպես, ինչպես նրանք առաջ ապրել են...» և նրանց հատկացնել «բավարար քանակությամբ հողեր... ղեկավարվելով այս առթիվ հրապարակված ընդհանուր օրենսդրությամբ»: Գաղթականները, համաձայն 1819 թ. հոկտեմբերի 22-ի օրենքի, վեց տարով «ազատվում էին պետական հարկերի, և երեք տարով՝ զեմստվային պարտքերի վճարումը»³⁰³:

Քրիստոնյաների գաղթը Օսմանյան Թուրքիայից Ոռուսական կայսրության տարածք սկսվելու էր 1830 թ. գարնանը և ավարտվելու էր մինչև ոռուսական բանակների՝ Թուրքիայից հեռանալը, որոնք Արդիանապոլսի պայմանագրի IV հոդվածի համաձայն՝ Թուրքիայում էին մնալու մինչև 1830 թ. ամառը:

Ստանալով Հաշտության պայմանագրով գրավված տարածքները թուրքերին թողնելու բոթը և համոզվելով, որ ոռուսական զորքերը շուտով հեռանալու են գրավված տարածքներից՝ Հայերը զանգվածաբար սկսում են դիմել ոռուսական զորահրամանատարությանը՝ Հայցերով գաղթելու թույլտվություն: «Անհնար էր, - գրում է ժամանակակիցը, - առանց դժվարության անցնել գյուղերի միջով, ամբողջ ընտանիքներ ամբոխներով խմբվում էին զիմավոր հրամանատարի շուրջը, ինսդրելով իրենց գուշ չթողնել թուրքերի վրիժառությանն ու քրդերի թալանին»³⁰⁴: Շատերը միայն գաղթելու թույլտվություն էին խնդրում՝ չպահանջելով ոռուսական կառավարությունից ոչ մի օգնություն: Գաղթելով Ռուսաստան, իրավացիորեն նկատել է Լեռն «...Հայ ժողովուրդը ինքնարերաբար, իր սեփական բնագդի թելազրությամբ միակերպ է լուծել իր Փիղիկական գոյության պահպանան առեղծվածը, ... դա ոռուսաց տիրապետության տակ գոնե կյանքի և գոյքի երաշխավորությունն էր»³⁰⁵:

Այդ էր պատճառը, որ չսպասելով գաղթի պաշտոնական թույլտվությանը, (Պասկեիչն այն ստացավ միայն 1829 թ. նոյեմբերի 10-ին) և չսպասվինելով ոռուսական կառավարության նյութական ու ռազմական օգնությանը՝ Բայազետի, Ալաշկերտի, Էրզրումի և Կարսի շրջաններից գաղթականների առանձին խմբեր արդեն բռնել էին գաղթի ճանապարհը: Սա 1829 թ. ղեկատեմբերի 3-ին առկիթ էր տարու Պասկեիչին գրելու, թե քրիստոնյաներն այնքան են հոգնած թուրքերից,

³⁰³ Դյօլօրիե, Արման և 1854 году, Кавказ, Тифлис, 1854, 20 октября, N 22, стр. 332; АКАК, т. 7, стр. 833-838.

³⁰⁴ История военных действий в Азиатской Турции в 1828-1829 годах, ч. 2, Варшава, 1848, стр. 290-291.

³⁰⁵ АКАК, т. 7, стр 831.

³⁰⁶ Լեռ, Հայոց պատմություն, նորագույն շրջան, մաս II, էջ 15:

որ միայն Բայազետի փաշայության եթե ոչ ամբողջ քրիստոնյա ազգաքնակչությունը, ապա գոնե նրա ճնշող մեծամասնությունը պատրաստ է գաղթելու ուսւական տարածքներ՝ : Իուսաստանում քիչ թե շատ բարեկեցիկ կյանք գտնելու ցանկությունն այնքան մեծ էր, որ զոհերով շարժական դրվքի մի մասը, 1829-1830 թթ. ձմռան սառնամանիքների պայմաններում, կրելով բազմաթիվ դժվարություններ՝ ոմանք անցնում էին ուսութուրքական նորահաստատատ սահմանն ու բնակություն հաստատում Արևելյան Հայաստանի ուսւահպատակ շրջաններում։ Այսպես, 1829 թ. Հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին Գյումուշխաններից Ծալկա էին գաղթել 85 ընտանիք Հույներ, էրզրումի փաշայությունից Փամբակի գավառում 59 ընտանիք Հայկաթողիկներ, Բայազետի փաշայությունից Հայկական մարզ՝ 200 ընտանիք Հայեր՝ ³⁰⁷ Նույն նոյեմբերի վերջին Պասկեփչը թույլատրում է ուսւական գորքերի հրամանատարներին գաղթել ցանկացող և նպաստ չպահանջող ընտանիքներին անցագրեր տալ ուսւական սահմանն անցնելու համար, իսկ գեկտեմբերի 3-ին տեղեկացնում էր Վրաստանի քաղաքացիական նահանգապետ Զավլիելյակուն, թե Պանկրատևը Կարսի փաշայությունից 95 ընտանիքների անցագրեր է տվել Լոռիում ընակվելու համար։ Եվս 400 ընտանիքներ, անցագրեր ստանալով գեներալ-մայոր Բերգմանից, ուղևորվել էին Գյումրի՝ ³⁰⁹ Զապասիկով գարնան գալում, Եփրեմ Սեմի գլխավորությամբ, 560 ընտանիքի գաղթելու թույլատրում ստանալու նպատակով գեներալ-լեյտենանտ Պանկրատևին էին դիմել նաև էրզրում քաղաքի և փաշայության մի շարք շրջաններում ապրող Հայկաթողիկները :

Ընդհանուր առմամբ մինչև 1830 թ. հունվար ամիսը բավականին մեծ թվով արևմտահայեր անցան ուսութուրքական սահմանը և տեղավորվեցին Փամբակի, Շորավայի և Ախալցիայի գավառների դատարկված գյուղերում։ 1830 թ. հունվարի 22-ին ուսկմական նախարար Զերնիշևին ներկայացրած գեկուցագրում Պասկեփչը գրում էր, թե Կարսից և այդ փաշայությունից գուրս եկած 2500 ընտանիքներն իր հրամանով տեղավորվել են Ալավայի մոտական դատարկ գյուղերում, 95 ընտանիք էրզրում ցիներ էլ տեղավորվել են Լոռիում։ Եվս 2000 ընտանիք էրզրում ցիներ պատրաստ էին գաղթելու Ախալցիա։ Պասկեփչը նաև Հայտնում էր, թե գարնան բացվելու պես ուսւական տարածքներ կգաղթեն 1143 ընտանիքներ Բայազետ քաղաքից և 2000 ընտանիք էլ Համանուն փաշայությունից, որոնք կտեղավորվեն Հայկական մարզում կամ Ղարաբաղում³¹¹։

³⁰⁷ АКАԲ, т. 7, стр 831.

³⁰⁸ Դարբինյան Մ., Արևմտահայերի 1829-1830 թթ.-ի գաղթը Հայկական մարզ և հարավից շրջաններ, ԹԲՀ, Եր., 1974, N 2, էջ 93։

³⁰⁹ АКАԲ, т. 7, стр 831.

³¹⁰ Присоединение..., т. 2, док. 367, стр. 601-602.

³¹¹ АКАԲ, т. 7, стр 832-833; Присоединение..., т. 2, док. 368, стр. 602.

1830թ. գարնանը սկսվում և հունիսին իր բարձրակետին է հասնում արևմտահայերի արտօնված ներդադիր, որը, բայց Պամլիկի հաշվարկների, ուստական տարածքներ էր բերելու մոտ 8000 ընտանիք, և այս ամբողջ գործընթացը գաղթականական կոմիտեն պարտավոր էր իրականացնելու ընդամենը 90000 չերվոնեցով³¹²: Արդեն 1830 թ. հունիսին պարզ էր, որ կերպի ոչ թե 8000, այլ մոտ 13-14000 ընտանիքներ, ինչը 90000 չերվոնեցով իրականացնելն անհնար էր: Տրամադրված դրամի սակալության հատակ գիտակցումը Պասկևիչին ստիպում է ցարին համոզել, որ «գաղթողները աշխատասեր և արդյունագործող ժողովուրդ են: Այս ժողովուրդը, որից ափսոսանքով զրկվեց Թուրքիան, բուն սկզբում միայն կարիք ունի օգնության և ապահովման, գոնե անհրաժեշտ բաներում: Հետագայում նրանք այդ բոլորը կփոխաստուցեն»³¹³: Ենելով այդ նկատառումներից՝ կառավարությունը 1831թ. գաղթականների կարիքների համար բաց է թողնում ևս 380000ռ. արծաթով, «որպեսզի փոխարինաբար բաժանվի գաղթականների վրա... պայմանով, որ Հետ է վերադարձվելու արդեն չորս տարի անց, վեց տարվա ընթացքում, ամեն տարի հավասարաշափ մասով՝ առանց տոկոսի»³¹⁴:

Թուրքական իշխանությունները ամեն կերպ խոշնդուսներ էին հարուցում հայերի գաղթի գեափի Ռուսաստան: Կառավարության գաղտնի կարգադրությամբ (ինչպես և Պարսկաստանում) արգելվում էր գնել հայերի կալվածքները: Ինե հունվարին Պասկևիչը մտավախություն էր հայտնում արքունիք, թե մահմեդականները պայմանագրի կնքումից հետո «ամեն ինչում հայերի գաղթադիեն մեզ և նոյնիսկ կդիմեն թշնամական գործողությունների»³¹⁵: Այդուհանդերձ հայերը թողնում էին իրենց ամբողջ շարժական գույքն ու տեղափոխում Ռուսաստան: 1830 թ. հունիսի 12-ին էրզրումի ժամանակավոր կառավարության ղեկավար Պանկրատիք զեկուցում էր Պասկևիչին, որ թուրք աղալարները դժկամությամբ են նայում հայերի գաղթին, «որովհետև նրանց գրեթե բոլոր հողերը մշակում էին վյագուրները, և գրեթե բոլոր արհեստներն ու ամբողջ առևտուրը գտնվում էին քրիստոնյաների ձեռքում..., իսկ հպարտ թուրքերը ցալով տեսնում էին, որ պայմանագրով թույլատրված գաղթը նրանց նշանակալից վնասներ է պատճառում..., սկսում են զանազան անմիտ հերցուգանքներ տարածել»³¹⁶:

Ցանկանալով ապացուցել, որ հայերը կամովին են Ռուսաստան գաղթում, գեներալ Պանկրատիք էրզրումից մինչև Հասան-դալա իրեն

³¹² История военных действий в Азиатской Турции в 1828-1829 годах, ч. 2, СПб., 1836, стр. 291.

³¹³ АКАК, т. 7, стр 846-847.

³¹⁴ Собрание актов..., ч. 1, стр. 61.

³¹⁵ АКАК, т. 7, стр 775.

³¹⁶ АКАК, т. 7, стр 842.

ուղեկից է վերցնում սովորականի հանձնարարականով Կ. Պոլսից էրզրում ուղարկված Բարդուղիմեոս եպիսկոպոսին՝ նրան թույլ տալով ճանապարհին համոզել ուղարկան տարածքներ գաղթող քրիստոնյաներին հետ վերադառնալ: Եպիսկոպոսը գրեթե բոլոր Հայերից ստացավ հետևյալ հիշարժան պատասխանը. «Եթե Քրիստոսն ինքն էլ իջներ երկնքից մեզ ներշնչելու թուրքական տիրապետություններում մնալու ցանկությունը, ապա մենք չենք հետևի նաև նրա խորհրդին»³¹⁷: Հայերին տեղում պահելու համար թուրքերը դիմում էին նաև բունի միջոցների: Օրինակ, Երզնկայից Եղիա վարդապետը 1830 թ. ապրիլի 1-ին հայտնում էր, որ նահանգապետ Հաջին Հասան փաշան ստիպում է իրենց գրել Կարնո առաջնորդ Կարապետ արքեպիսկոպոսին, թե ինքը երաշխավորում է Կարնո հայերի անվտանգությունը, եթե նրանք չգաղթեն»³¹⁸:

ՈՒ չնայած թուրքերի կողմից քրիստոնյաներին տեղում պահելու համար թափված ջանքերին՝ գաղթն ինտենսիվ կերպով շարունակվում էր: Զմռան նախապատրաստություն-ներից հետո, 1830 թ. վաղ գարնանից այն ստացավ զանգվածային բնույթ: Հաշված ամիսների ընթացքում Հայաթափ եղան թուրքական կայսրության Կարսի, Բայազետի և Էրզրումի փաշայությունները: Ուստական տարածքներ գաղթող քրիստոնյաները պայմանականորեն բաժանվում էին երեք խմբերի: Էրզրումցիներ՝ Կարապետ արքեպիսկոպոսի³¹⁹, Կարսեցիներ՝ Ստեփան եպիսկոպոս Խածականի և բայազետցիներ՝ պատվավոր քաղաքացի Մկրտիչ Արծրունու վիսավորությամբ: 1830 թ գարնանը առաջինն Արաքսն անցան Կարսեցիները՝ շորջ 2464 ընտանիք: Ընդ որում, միայն Կարս քաղաքից Արևելյան Հայաստանի վերոհիշյալ շրջաններ և մասնավանդ Գյումրի գաղթեցին ավելի քան 600 տուն քրիստոնյաներ³²⁰: Եվս 200 ընտանիք կարսեցիներ բնակվեցին Թալինում³²¹: Այնպես, որ գաղթից հետո Կարս քաղաքում ժամանակակցի Հաշվումներով մնացել էր ութ հայկական ընտանիք՝ «Դօխիկենք, Եաղօղօնք, Բոնոթօնք, Ճթչի-Գալոն, Ղոլծի-Կարոն, Մահտեսի Յակոբը, Ավշարենց Յովհաննեսը և Քիւլհանճի Յովհաննեսը»³²²:

³¹⁷ Նոյն տեղում, էջ 880:

³¹⁸ Մաջտողի անվան Մատենադարան, Դիվան Կարապետ արքեպիսկոպոսի, թղթ. 163q, վագ. 1173:

³¹⁹ Կարնո առաջնորդ Կարապետ արքեպիսկոպոսի կյանքի ու գործունեության մասին մանրանասն տես Գեղամյանց Ե., Կարապետ արքեպիսկոպոս, «Փորձ», Տիվիս, 1876, N 1, էջ 163-206:

³²⁰ Աղանեան Գ. ք., Կարնոյ գաղթը (1829-1830), Թիֆլիս, 1891, էջ 24-25:

³²¹ Մանուկյան Ե., Հայ ժողովրդի ազգահավաքման գործընթացն Արևելյան Հայաստան 20-ական թվականների վեցերին-30-ական թվականների սկզբներին, Ատեն. պատ. գիտ. թեկ., Եր., 1991, էջ 130:

³²² Կարս, Կարս քաղաքը, Մոսկվա, 1893, էջ 101:

Համեմատաբար արագ և առանց բարդությունների անցալ նաև շուրջ 4215 ընտանիք (պաշտօնական վարկածի համաձայն) բայց բայց ինքին գաղթն ու տեղաբաշխումը նոր չըջաններում: Դրանցից 2000-ը տեղափորփում են Սևանի ավազանում՝ Բասարգեչարում, Կրիստովախում, Ազրիջայում, Սատանախաչում և այլ վայրերում, իսկ մնացած բայց ետքիները՝ Բաշ-Ավարանում, Դարաչիչակում, մասսամբ նաև Սուրմալուում³²³: Գաղթից հետո Բայազետ քաղաքում մնացել էր ընդամենը չորս հայկական ընտանիք:

Դանդաղ և ծանր պայմաններում անցավ էրզրումցիների գաղթը: Դեռևս 1829թ. վերջերին նրանք դիմել էին Պանկրատիկին և թույլտվություն էին ստացել Հաստատվելու Ախալքալաքում և Ախալցիսյում: «Կարնո գաղթը» մկանում է ձմռան նախապատրաստական աշխատանքներից հետո՝ 1830 թ. մայիսի 15-ին: Հաշված օրերի ընթացքում մինչև Հունիսի 5-ը, դատարկվում են էրզրում, Բարերտ, Գյումուշանե, Քդի քաղաքներն ու Դերջան, Թորթում, Վերին ու Ներքին Բասեն, Սպեր և Թիքման գավառները: Ընդհանուր առմամբ 1829-1831 թթ. ընթացքում էրզրումի փաշայությունից գաղթեց և ուստական տիրույթներում հաստատվեց շուրջ 7298 ընտանիք: Երեմնի 20000 հայ բնակիչ ունեցող էրզրում քաղաքում գաղթից հետո մնաց ընդամենը 128 հայկական և 4 հայ-կաթողիկական ընտանիք³²⁴: 5107 ընտանիք էրզրումցիներ տեղափորվեցին Ախալցիսայի գավառում³²⁵: Միայն Ախալցիսա քաղաքում տեղափորվեցին շորջ 2500 ընտանիք էրզրումցիներ և 67 ընտանիք արդահանցիներ³²⁶: 277 ընտանիք հաստատվեց Ազգորում, 262 ընտանիք՝ Խերթվիսի ամրոցում, իսկ մնացածները՝ Ախալցիսայի և Ախալքալաքի 75 գյուղերում: Եվս 1050 ընտանիք էրզրումցիներ, այդ թվում 600 ընտանիք հույներ, տեղափորվեցին Շալկայում³²⁷:

Անհամեմատ ծանր վիճակում հայտնվեցին էրզրումցի գաղթականների վերջին խմբերը: Սրանք հասնելով Կարս՝ դադար առան քաղաքի վիմաց գտնըվող Վանանդա գաշտում: Թուրք սայլապանները իրենց գործն ավարտված համարելով հետացան՝ բաց երկնքի տակ թողնելով շորջ 1800 ընտանիքների: Ստեղծված ծանր իրավիճակից դուրս գալու համար գաղթերի վերակացու Անոսովը առաջարկեց նրանց բնակավայրեր ընտրել իրենց ցանկությամբ: Արդյունքում մոտ 1248

³²³ՀՀ ՊԿՊԱ, ֆոն 90, ցուցակ 1, գործ 44, էջ 336-338:

³²⁴Աղանեանց Գ. ք., նշվ. աշխ., էջ 20; Պէրպէրյան Ա., նշվ. աշխ., էջ 211-212:

³²⁵Աղանեանց ք. գ., Կարսն զատքը, Արձագանք, Թիֆլիս, 1899, N 11, էջ 167:

³²⁶ԱԿԱԿ, թ. 7, էտր 847.

³²⁷Դարքինյան Մ., Եջեր Ախալցիսայի և Ախալքալաքի հայերի 1829-30թթ. գաղթի պասմությունից, Բանքեր Երևանի համալսարանի (այսուհետև՝ ԲԵՀ), Եր., 1973, N 2, էջ 214:

ընտանիք տեղափորվեց Փամբակի և Շորագյալի գավառներում³²⁸ (Հստ Գ. քահանա Աղանյանի, միայն 200 ընտանիք տեղափորվեց Մեծ Ղարաքիլխասյում), ևս մի քանի հարյուր ընտանիք Ստեփանոս արքեպիսկոպոսի առաջնորդությամբ բնակություն հաստատեց Արագածի փեշին՝ Ղփչաղ (Ղառիճ) գյուղում, իսկ մյուսները ցրվեցին Շորագյալի մերձակա գյուղերում³²⁹:

1829-1831 թթ. արևմտահայերի գեեսի Ռուսական կայսրության տարածք զանգվածային տեղաշարժի նկարագրումն այսքանով կարելի էր համարել ավարտված, եթե չիներ ոչ պակաս կարևոր մի խնդրի՝ արևմտահայ գաղթականների վերջնական թվի պարզաբանման հարցը, որի վերաբերյալ պատմագրության մեջ արտահայտվել են տարբեր տեսակինոներ: Որոշ հայ և ռուս պատմաբաններ (Ալ. Երիցյանց, Յ. Գեղամյանց, Զ. Գրիգորյան, Վ. Խոջաբեկյան, Մ. Դարբինյան, Վ. Պոտոսո, Շչերբատով և ուրիշներ) նրանց թիվը հասցնում են մինչև 85-95000 մարդու կամ 14000 ընտանիքի³³⁰: Գաղթած արևմտահայերի թիվը մոտ 1000 ընտանիքով պակաս է Կ. Բորովովինի, Ս. Գիննկայի և «Հայ ժողովրդի պատմության մեջնաբանությանը բերաբերող ժողովածուն» կազմողների մոտ, որոնք նշում են, թե Թուրքիայից գաղթել է մոտ 13000 ընտանիք՝ «Էրզրումից և փաշայությունից՝ 6500, Բայսպետից և փաշայությունից՝ 4200, Կարսից և փաշայությունից՝ 2255 ընտանիք-ներ»:

Իսկ ինչպիսին էր այդ թիվն ըստ պաշտոնական տվյալների: Հստ Վրաստանի զինվորական նահանգապետ Ստրեկալովի Պասկեիչին ներկայացրած զեկուցագրի, 1830 թ. Հոկտեմբերի 10-ի դրությամբ Արևմտյան Հայաստանից ռուսական տարածքներ գաղթած քրիստոնյաների ընդհանուր թիվը 14000 ընտանիք կամ մոտ 83000 մարդ էր, որից 344 ընտանիքը (1682 մարդ) գաղթել էր մինչև 1829 թ. վերջը, իսկ 13700 ընտանիքը (79532 մարդ)՝ 1830 թ. Հունվարից մինչև

³²⁸ Документы и материалы по истории армянского народа. Социально-политическое и экономическое положение Восточной Армении после присоединения к России (1830-1870), Ер., 1993, док. 16, стр. 76.

³²⁹ Աղանյանց Գ. քահանայ, Կարմոյ գաղրը (1829-1830), էջ 24-25: Նոյեմբ Կարմոյ գաղրը, «Արձագանք», Թիֆլիս, 1899, N 11, էջ 166-167:

³³⁰ Երիցյանց Ալ. Աշվ. աշխ., նաև Ա, էջ 442; Գեղանյան Ե., Պատմական քաղվածքներ, 4, էջ 376; Գրիգորյան Զ., Աշվ. աշխ., էջ 298; Խոջաբեկյան Վ., Աշվ. աշխ., էջ 28; Դարբինյան Մ., Նոր վավերագրեր պարսկահայերի և արևմտահայերի 1828-1831թթ. գաղրի մասին, ԲՀԱ, Եր., 1977, N 3, էջ 20-21; Պոտո Բ., Կավկазская война..., т. 3, ч. 4, стр. 668; Ռեբատօվ, Աշվ. աշխ., т. 3, СПб., 1891, стр. 228.

³³¹ Бороздин К., Աշվ. աշխ., էջ 128-131; Глинка С., Աշվ. աշխ., էջ 140-142; Собрание актов..., ч. 2, стр. 182.

Հոկտեմբերի սկիզբը³³²: Նոյն փաստաթղթի համաձայն էրգումից և շրջակա գավառներից գաղթածների թիվը կազմում էր 7298 ընտանիք կամ 41000 մարդ, որից 144 ընտանիք կամ 832 մարդ (Գյումուշանեից Բորչալուի գիստանցիա 85 ընտանիք կամ 502 մարդ և էրգումի փաշայությունից Փամբակ՝ 59 ընտանիք կամ 331 մարդ Հայ-կաթովիկ) Արևելյան Հայաստան էին գաղթել մինչև 1830 թ. Հունվար ամիսը, իսկ ևս 7154 ընտանիք՝ Հունվարից մինչև Հոկտեմբեր ամիսները: Ուուսական տարածքներում վերը նշված 7298 ընտանիք էրգորումցիները տեղափոխել էին հետևյալ կերպ. 5000 ընտանիք Ախալցիսայի և Ախալքալաքի գավառներում, 1050 ընտանիք Բորչալուում և Մալկայում, 1248 ընտանիք էլ Փամբակ-Շորագյալի գիստանցիայում:

Որոշ դժվարություններ առաջացան կարսեցի գաղթականների թվաքանակի պարզաբանման ժամանակ: Վերջիններիս թիվը տարբեր աղբյուրներում նշվում է տարբեր՝ նվազագույն 2255 ընտանիքից³³³ մինչև առավելագույն 2467 ընտանիք³³⁴: Պատճառը հետևյալն էր: Կարսեցիների գաղթից հետո, նահանգի գաշտերի բերքը ոստական կառավարության կողմից հայտարարվեց գնված, այնպես որ կարսեցիներից շատերը ոռուս զինվորների ուղեկցությամբ հետ էին գնում բերքահավաքի: Այնուամենայնիվ պետական պաշտոնական փաստաթղթերում կարսեցի գաղթականների թվաքանակի մասին նշվում է իրականությանն ավելի մոտ թիվ՝ 2464 ընտանիք կամ մոտ 14500 մարդ, որից 2264 ընտանիքը կամ շուրջ 13935 մարդը տեղափոխեց Փամբակի և Շորագյալի գավառներում, իսկ 200 ընտանիք էլ Հայկական մարզում և Թալինի մահարլում³³⁵:

Պաշտոնական տվյալները ստույգ են նաև Ախալցիսայում էրգորումցիների հետ տեղափորված արդահանցիների թվաքանակի հարցում՝ ընդամենը 67 ընտանիք կամ 357 մարդ: Կասկածի տեղիք է տալիս միայն Բայազետի փաշայությունից գաղթած քրիստոնյաների թիվ՝ 4215 ընտանիք կամ շուրջ 25290 մարդ, որն առաջացել է Հայկական մարզի կառավարիչ Վ. Բեհբութովի և գաղթականներին ուղեկցող ենթասպա Արդութինսկու (Արդության) ներկայացրած տվյալների հիման վրա³³⁷: Նոյն Ստրեկալովի գեկուցում Բայազետի փաշայությունից գաղթածների մասին կա մեկ այլ՝ անուշադրության մատնված թվային տվյալ (2528 ընտանիք կամ 14948 մարդ), որ ներկայացվել էր շուրջ երեք տասնը Բայազետում ու նրա գավառում ապրած և իրերին

³³² Дарбиян М., Новые документы о переселении персидских и западных армян в 1828-1830 гг., РՀԱ, Еր., 1977, N 3, էջ 20-21:

³³³ «Նկարագիր գաղթականութեան...», էջ 103-104:

³³⁴ Երիցյանց Ալ., նշվ. աշխ., մաս Ա, էջ 442; Գեղամյան Ե., նշվ. աշխ., էջ 819:

³³⁵ АКАԿ, т. 7, стр 847.

³³⁶ Документы и материалы по истории армянского народа..., док. 16, стр. 76.

³³⁷ Նոյնը:

քաղաքությակ գեներալ Ունուտի կողմից և արդյունք է գաղթականների թվի ճշգրիտ հաշվառման³³⁸:

Հօգուտ Ունուտի հաշվարկների կան նաև այլ փաստարկներ: Այսպես, արևելյան գաղթականների թվաքանակի պարզաբանման հարցում Ա. Մելքոնյան հանգում է հետևյալ տրամաբանական եղբակացությանը: Քանի որ 1828թ. սեպտեմբերի վերջին լիվա-փաշայությունում ապրում էր բայազետցի մոտ 3200 ընտանիք, ապա ընականաբար մեկ-երկու տարի անց այնտեղից չէր կարող արտագաղթել 4215 ընտանիք, և դա այն դեպքում, երբ 1829 թ. ընթացքում ընակչության թիվն ամենի էր նվազել հունիսին՝ Բայազետի պաշտպանության ընթացքում սաստկացած համաճարակի հետևանքով³³⁹:

Վ. Բեհրութովի և Արդրութինսկու թույլ տված սխալը ակնհայտութեան երեսում է նաև 1829-1832 թթ. անցկացված կամերալ ցուցակագրման տվյալների ուսումնաբիությունից, համաձայն որոնց՝ Հայկական մարզում (Բայազետի փաշայությունից գաղթածների հանգրվանած երկրամասում) ընակություն են հաստատել ընդամենը 3682 ընտանիք կամ 21666 մարդ: Հայտնի է նաև, որ սրանց մեջ բայի բայազետցիներից եղել են նաև կարտացիներ, էրզրումցիներ, բասենցիներ և այլ շրջաններից գաղթածներ: Այնուամենայնիվ, եթե սրանց բոլորին նույնպես համարենք բայազետցիներ, էլի չենք ստանա գաղթած ընտանիքների 4215 թիվը: ՈՒրեմն պարզ է, որ այս փաշայությունից գաղթածների թիվը չափազանցված է և իրականում կազմում է 2528 ընտանիք կամ 14948 մարդ: Հետևաբար, 1829-1831 թթ.-ին Արևելյան Հայաստանից գաղթել և ուստական տարածքներում հաստատվել է ոչ թե 14044 ընտանիք կամ 85-90000 մարդ, այլ 12357 ընտանիք կամ մոտ 73-78000 մարդ, որից 7298 ընտանիքը՝ էրզրումից և նրա փաշայությունից, 2464 ընտանիքը՝ կարսից և նրա փաշայությունից, 2528 ընտանիքը՝ Բայազետից և նրա փաշայությունից, և 67 ընտանիքը Արդահանից:

Այսպիսով, 1828-1831 թթ. ընթացքում Հաջորդաբար ուսումնական, ապա նաև ուսումնաբական սահման անցան և Ուսուաստանի հովանավորության տակ մտան թուրք-պարսկական բռնակալների լծից ազատված ավելի քան 20606 պարսկահպատակ և արևելյան գաղթականության շուրջ 125000 մարդ:

Դ) Գաղթականության տեղաբաշխումը Արևելյան Շիրակում

³³⁸ Դարբինյան Մ., նշվ. աշխ., էջ 8-10:

³³⁹ Մելքոնյան Ա., նշվ. աշխ., էջ 143:

³⁴⁰ Շուռուն Ի., նշվ. աշխ., էջ 539-540:

Այժմ անդրադառնանք մի այնպիսի կարևոր հարցի, ինչպիսին է պարսկահպատակ և, մանավանդ, արևմտահայ գաղթականների տեղաբաշխումը մեր կողմից ուսումնասիրվող Շորագյալի գավառում ըստ բնակավայրերի՝ փորձելով բացահայտել նաև այն բացթողումներն ու թերությունները, որոնք առկա եղան գաղթականությանը գավառի գյուղերում տեղաբաշխելիս։ Ինքնին դժվարին այս խնդրի իրազորումն էլ ավելի է բարդանում ձեռքի տակ եղած պատմական աղբյուրների սակավաթիվ և մեծամասամբ թերի լինելու պատճառով։ Վերջնիներս մենք պայմանականորեն բաժանել ենք երկու խմբերի. առաջին խմբին պատկանող աղբյուրներում («Արևելյան մամուլ»³⁴¹, Ս. Զարայան³⁴², Ս. Էփրիկյան³⁴³, Ղ. Ալիշան³⁴⁴, «XIX դարակեսի եկեղեցական չափաբերական մատյաններ»³⁴⁵, մասամբ նաև «Հայաստանի և Հարակից շրջանների տեղանունների բառարան»³⁴⁶) տրվում են միայն աշխարհագրական տվյալներ, այսինքն նշվում է գաղթականների որտեղից լինելն ու Շորագյալի գավառի որ գյուղում հաստատվելը. այսպես օրինակ՝ Կարսի փաշայության Ինչե-Սու գյուղից Շորագյալի գավառի Ղումնի-Ղըշաղ (Ղումտաշեն) գյուղ կամ Էրզրումի փաշայության Ներքին Բասենի Ղատիճվան գյուղից Շորագյալի գավառի Իլիսիաթի (Այգաբաց) գյուղ³⁴⁷ և այլն։ Բայց նմանօրինակ կոնկրետ նշումներ տրվել են Շորագյալի գավառի 76 գյուղերից միայն 34-ում հաստատված գաղթականների մասին։ Եվս 32 գյուղերում տեղաբորժածներին անդրադառնալիս այդ նույն աղբյուրները բաց են թողնում գաղթականների որտեղից լինելու մասին մանրամասները և ուղղակի նշում՝ Արևմտյան Հայաստանի (կամ Ատրպատականի) այս կամ այն փաշայությունից (կամ խանությունից) Շորագյալի գավառի այս կամ այն գյուղ. օրինակ՝ Կարսի, Բասենի, և Ալշակերտի շրջաններից Շորագյալի գավառի Սվան-Վերդի (Լուսաղբյուր) գյուղ կամ Էրզրումի ու Կարսի գյուղերից Շորագյալի գավառի

³⁴¹ Տեղեկագրական պատափիկներ. Արևելյան մասն Շիրակայ, «Արևելյան մամուլ», Զմիւնիս, 1898-1899:

³⁴² Զապահեան Ս., ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Ա-Բ, Տփիսիս, 1842-1858:

³⁴³ Էփրիկյան Ս., Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ. Ա-Բ, Վենետիկ 1903-1907:

³⁴⁴ Ալիշան Ղ.. Շիրակ, Վենետիկ, Ս. Ղազար, 1881:

³⁴⁵ ՀՀ ՊԿՊԱ ֆոնդ 47, ցուցակ 1, գործ 659-663, 859, 860, 863, 865, 920-923, ցուցակ 2, գործ 1, 18, 20-23, 37, 39, 46-48, 69, 70, 73-75, 79, 81-83, 89-92, 98, 102, 103, 107-115, 120, 121, 128-135, 138-140, 146-150, 153-158, 195, 201, 225, 237, 415, 516, 530, 621, 626, 630, ցուցակ 3, գործ 199, ցուցակ 6, գործ 37, 59, 119, 152, 167, 179, 248:

³⁴⁶ Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, կազմեցին՝ Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախչյան, Հ. Բարսեղյան, հ. 1-5, Եր., 1986-2001:

³⁴⁷ Էփրիկյան Ս., նշվ. աշխ., հ. Բ, էջ 68:

Օրթա-քիլիսա (Մայիսյան) գյուղու³⁴⁸ և այն: Ինչ վերաբերում է գավառի մնացած 10 գյուղերին, ապա սրանցից միայն մեկը՝ Թաթարական Գյողալիքարան (Գողադիր), չհամարվեց գաղթականներով, իսկ մնացած ինը՝ Ղուլիջանը (Սպանդարյան), Եսաուլը (Հովունի), Փալութլին (Արփենի), Մեծ Քեթին, Շիշթափան (Սեպասար), Դարբանդը (Կարմրաքար), Ղըրի-Դագիրմանը (Հնաբերդ), Թոփառլին (Հացիկ) և Երրորդ Արբանիալին (Լեռնուտ) թեև ստացան գաղթականների իրենց բաժինը, բայց թե Արևմտյան Հայաստանի կամ թե Ատրպատականի որ շրջաններից էին սրանք, նույն աղբյուրների թերիության պաճառով անհնարին է պարզել:

Երկրորդ խմբին պատկանող աղբյուրներն արխիվային նյութեր են կամ այսպես կոչված՝ «Օ տիքեպիս ութեանուածական»³⁴⁹ ստվարածավալ աշխատությունը, որն ի հակադրություն վերը նշվածների՝ շրջանցում է արևմտահայ գաղթականների որտեղից լինելու և Շորագյալի գավառի որևէ գյուղում հաստատվելու կարեորագրույն հարցը՝ շեշտը դնելով միայն թվային տվյալների ներկայացման վրա, և այն էլ՝ ոչ միշտ և ոչ լրիվ: Բանն այն է, որ պետական պաշտոնական փաստաթուղթ ճանաչող այս աշխատության մեջ («Օ տիքեպիս ութեանուածական») տեղ գտած թերիությունների ու բացթողումների պատճառով է, որ մենք չենք կարող կոնկրետ նշել, թե Ատրպատականի կամ Արևմտյան Հայաստանի ո՞ր շրջաններից և մանավանդ ո՞ր գյուղերից կամ քաղաքներից ի՞նչ թվով գաղթականներ են տեղափորի Շորագյալի գավառում: Այսինքն, աղբյուրի թերիության պատճառով չենք կարող նշված շրջաններից Շորագյալ գաղթածների քանակի մեջ անել այնքան կարեոր թվային սահմանագատումներ՝ ըստ գաղթածների բնակավայրերի: Այսպես, մեր կողմից արդեն հիշված առաջին խմբի աղբյուրները նշում են, թե Պարսկաստանից Արևելյան Հայաստան անցած գաղթականների մի զգայի զանգված՝ շուրջ 660 ընտանիք, որ գաղթել էր առանց պետական օգնության ու փաստաթղթեր ստանալու, Հաստատվեցին ոչ թե գաղթականական կոմիտեի կողմից նախօրոք ընտրված վայրերում Երևանի ու Նախիջևանի նախկին խանություններում և Ղարաբաղի տարածքում, այլ, նշված շրջաններից էլ ավելի հեռանալով, Հասան մինչև Վրաստան, ընդ որում նրանց մի որոշ մաս հաստատվեց Շորագյալի գավառի Երեք գյուղերում՝ Փոքր Ղարաբիլիսայրում³⁵¹, Մեծիսլիում (Նոր կյանք)³⁵² և Աղքիլիսայրում (Կրաշեն)³⁵³: Բայց թե կոնկրետ քանի ընտանիք կամ թե քանի շունչ տեղափորվեց նշված երեք գյուղերում, պարզելի անհնար է: Պատճառն հետևյալն է. նշված դեպքերից ընդամենը մեկ-երկու տարի

³⁴⁸ «Արևելյան մանուք», թի 6, 15 մարտի, Զմիւռնիա, 1899, 29-րդ տարի, էջ 239:

³⁴⁹ ՀՀ ՊԿՊԱ, ֆոնդ 93, ցուցակ 1, գործ 85, 86:

³⁵⁰ Сборник газеты Кавказ, 6 ср. аշխ., էջ 62:

³⁵¹ ՀՀ ՊԿՊԱ, ֆոնդ 47, ցուցակ 3, գործ 920:

³⁵² Նույն տեղում, ցուցակ 2, գործ 128:

³⁵³ Նույն տեղում, գործ 18; Էփրիլյան Ա., նշվ. աշխ., Հ. Ա., էջ 5, 479:

անց սկսվում է արևմտահայերի գաղթը, որի հետևանքով Շորագյալի գավառում հաստատվում են մեծ թվով կարսեցիներ, էրզրումցիներ, բայրագետցիներ և Արևմտյան Հայաստանի այլ շրջաններից գաղթածներ: Ինչ խոսք, վերոհիշալ երեք գյուղերը ևս բացառություն չեն: Այստեղ նույնպես հաստատվում են արևմտահայ գաղթականներ: Եվ կրկին առաջանաւմ է նոյն Հարցը՝ քանի ընտանիք կամ թե քանի շոնչ էին նորեկները: Պետական պաշտոնյաները, որոնք կարգված էին Հսկելու գաղթականների տեղափորման և Հաշվառման դորձընթացը, և որոնց ներկայացրած նյութերի հիման վրա հետաքայում կազմվել են «Օ տիրեպսիք ու ուժուակա» մատյանները, մեծապես թերացել են իրենց պարտականությունները կատարելիս և Թուրքիայից գաղթած ու Շորագյալի գավառի գյուղերում բնիկ շորագյացիների և պարսկահպատակ Հայ գաղթականների հետ հաստատվածներին առանձին-առանձին հաշվելու փոխարեն տվել են մեկ ընդհանուր թվային տվյալ: Այսպես, օրինակ՝ վերոհիշալ փաստաթուղթը տալիս է, որ 1828-1830 թթ. գաղթերի արդյունքում Շորագյալի գավառի Փոքր Ղարաբիլսա գաղթել է 100 ընտանիք կամ 537 մարդ (293-ը արական, 244-ը իգական սեռի), Մեծիտի՛ 17 ընտանիք կամ 159 մարդ (97-ը արական, 62-ը իգական սեռի) և Աղքիլիսա՝ 37 ընտանիք կամ 217 մարդ (117-ը արական, 100-ը իգական սեռի)³⁵⁴: Բայց թե դրանց մեջ կոնկրետ որքա՞նն էին պարսկահպատակներ և որքա՞նը արևմտահայեր, ի՞նչ վայրերից էին գաղթել, այս մասին փաստաթուղթը լրում է:

Պետական պաշտոնյանների կողմից թույլ տրված բացթողումները շատ ավելի ակնառու են, երբ խոսքը վերաբերում է Արևմտյան Հայաստանի տարբեր շրջաններից գաղթած և Շորագյալի գավառի միևնույն գյուղում հաստատված գաղթականների զատ-զատ հաշվառմանն ու պարզաբանմանը: Այսպես, գաղթականների ընդհանուր թվից ոչ միայն չեն առանձնացվել պարսկահպատակ հայերն ու Երևանի, Ապարանի, Սարդարապատի, Լոռու և Վրաստանի գյուղերից Շորագյալի գավառի գյուղերում հաստատվածները, այլ թույլ է տրվել նաև մի այլ բարձրականին կոպիտ սիսակ՝ Նիատի ունենք գավառի գյուղերում գաղթականներին տեղաբաշխելիս ու հաշվառում անցկացնելիս Արևմտյան Հայաստանի տարբեր շրջաններից գաղթածներին առանձին-առանձին չաշվարկելը: Այսպիսի թերացումներն իրենց հերթին առաջ բերեցին նոր բարդություններ:

Այսպես, Շորագյալի գավառում գաղթականների տեղաբաշխումը նկարագրելիս առաջին խմբի աղբյուրները Արևմտյան Հայաստանի այս կամ այն փաշայությունը (շրջանը, վիճակը) նշելուց բացի հիշել են նաև 51 կոնկրետ ընակավայրեր՝ գյուղեր, ագարակներ կամ քաղաքներ, որոնց քրիստոնյա ընակավայրեր՝ գյուղեր, ագարակներ կամ քաղաքներ,

³⁵⁴ ՀՀ ՊԿՊԱ, գոնդ 93, ցուցակ 1, գործ 86, էջ 339-361, 197-206, գործ 85, էջ 223:

Հաստատվել էր Շորագյալի գավառի 34 գյուղերում: Այդ թվում 21 գյուղերում գաղթականները տեղափորկեցին Համաձայն գյուղից գյուղ օրենքի, այսինքն ամբողջական գյուղերով, առանց միմյանցից անջատվելու, այնպես, ինչպես բնակվելիս են եղել մինչև գաղթը: Օրինակ՝ Կարսի փաշայության Վալի գյուղից Շորագյալի գավառի Սարիբաշ (Հայկասար) գյուղ է գաղթել 8 ընտանիք կամ 42 մարդ (21-ը արական, 21-ը իգական սեռի)³⁵⁵ կամ Ալաշկերտի Բաղնոց գյուղից Շորագյալի գավառի Ղողաթ (Գեղանիսատ) գյուղ՝ 23 ընտանիք կամ 122 մարդ (64-ը արական, 58-ը իգական սեռի)³⁵⁶: Եվս 14 գյուղերում միաժամանակ հաստատվել են կամ Արևմտյան Հայաստանի միենույն փաշայության տարբեր գյուղերից գաղթածները կամ էլ միանգամից տարբեր փաշայություններից գաղթածները, և ինչպես առաջին դեպքում՝ նշվում է գաղթականների նախկին բնակության վայրը, այսինքն Արևմտյան Հայաստանի այս կամ այն գյուղը կամ քաղաքը: Օրինակ՝ Կարսի փաշայության Զոմուշյու, Շահնալար, Փալդրվան և Քյուրուկլարա գյուղերից գաղթել և Շորագյալի գավառի Դուզքենդ (Ախուրյան) գյուղում են հաստատվել 46 ընտանիքներ կամ 378 մարդ (187-ը արական, 191-ը իգական սեռի)³⁵⁷ կամ Կարսի Բնալիք-Ահմեդ և Կանի գյուղերից ու Կարնո Կան գյուղից Շորագյալի գավառի Արթիկ գյուղ են գաղթել 100 ընտանիքներ կամ 643 մարդ (334-ը արական, 305-ը իգական սեռի)³⁵⁸: Շորագյալի գավառի մասին 32 գյուղերի մասին (Հաշված թափարական Գյողալդարան և այն ինը գյուղերը, որոնցում տեղափորվածների մասին աշխարհագրական բնույթի որևէ տեղեկություն գոյություն չունի), ինչպես արդեն նշել ենք, չկա որևէ մանրամասն տվյալ, բացի առաջին խմբի աղբյուրներում եղած նշումներից և դրանց ավելացրած թվային տվյալներից: Օրինակ Դերջանից ու Կարսի վիճակից 31 ընտանիք կամ 174 մարդ (99-ը արական, 75-ը իգական սեռի) տեղափորվել էին Շորագյալի գավառի Դիրաքլար (Կառնուտ) գյուղում կամ Կարսի գյուղերից ու Ալաշկերտից 17 ընտանիք՝ 94 մարդ (63-ը արական, 31-ը իգական սեռի) տեղափորվեցին Շորագյալի Սոնցուուլի (Հայրենյաց) գյուղում³⁵⁹:

Այժմ տեսնենք, թե գավառի գյուղերում տեղափորված գաղթականներին առանձին-առանձին չհաշվեն ինչ բարդություններ առաջացրեց: Բանն այն է, որ Շորագյալի գավառի գյուղերում հաստատված գաղթականների ընդհանուր թվի մեջ մենք միայն մասնավոր ճշտությամբ կարող ենք, թե քանի՞սն էին կարսեցիները, բայց ետքիները կամ էրզրումցիները: Գաղթը, ինչպես գիտենք, ընթացեած էր բարեկ գյուղերում՝ առաջինը գաղթեցին կարսեցիները, ապա

³⁵⁵ ՀՀ ՊԿՊԱ, ֆոնդ 93, ցուցակ 1, գործ 85, էջ 106-108:

³⁵⁶ Նույն տեղում, գործ 86, էջ 163-168:

³⁵⁷ ՀՀ ՊԿՊԱ, ֆոնդ 93, ցուցակ 1, գործ 86, էջ 362-378:

³⁵⁸ Նույն տեղում, էջ 311-338:

³⁵⁹ Նույն տեղում, գործ 85, էջ 98-105:

բայազեսցիները, և երրորդն ու վերջինը՝ էրգորումցիները։ Նույնպիսի փուլերով անցկացվեց նաև գաղթականների տեղակրուման գործընթացը, այնպես որ կար իրական հնարավորություն թե՛ մինչև նրանց տեղավորվելը, և թե՛ տեղավորվելուց հետո տարբեր փաշայություններից գաղթածներին հաշվառելու առանձին-առանձին։ Ավելին, երբ ավարտվեց գաղթականների տեղակրուման գործընթացը, պարզվեց, որ Շորագյալի գավառի գաղթականներով համարված 75 գյուղերից (բացառություն էր կազմում միայն մահմեղականներով բնակեցված թաթարական Գյողալբարան) 32-ում Արևմտյան Հայաստանի տարբեր փաշայություններից գաղթածները տեղակրովել էին խառը։ Օրինակ՝ Կարսից, Ալաշկերտից, Խնուսից և Սեբաստիայից ընդհանուր առմամբ գաղթած 28 ընտանիքներ կամ 141 մարդ (79-ը արական, 62-ը իգական սեռի) հաստատվել էին Շորագյալի գավառի Աղին գյուղում³⁶⁰ կամ 27 ընտանիքներ՝ 158 մարդ (92-ը արական, 66-ը իգական սեռի) Բասենից ու Ալաշկերտից գաղթելով Հաստատվել էին Շորագյալի գավառի թափառլակ (Արևկիկ) գյուղում³⁶¹։ Եվս 9 գյուղերում հաստատվածների մասին, ինչպես արդեն նշել ենք, բացի թվային տվյալներից որևէ այլ տեղեկություն չկա։ Մնացած 34 գյուղերից յուրաքանչյուրում հաստատվեցին Արևմտյան Հայաստանի միայն այս կամ այն շրջանից գաղթածները։ Օրինակ՝ Կարսի վիճակից Շորագյալի գավառի Բայանդուր գյուղ են գաղթել 52 ընտանիքներ կամ 303 մարդ (165-ը արական, 138-ը իգական սեռի)³⁶², կամ Կարսի վիճակից Շորագյալի գավառի ձլով-խանսի (Բենիամին) գյուղ՝ 19 ընտանիք կամ 125 մարդ (74-ը արական, 51-ը իգական սեռի)³⁶³, և կամ Բայազետից Շորագյալի Կասր գյուղ՝ 26 ընտանիք կամ 156 մարդ (85-ը արական, 71-ը իգական սեռի)³⁶⁴։ Այսինքն՝ ծատիվ պարզել, թե գավառի տարածք գաղթածների ընդհանուր թվից՝ 2341 ընտանիքից կամ 13465 մարդուց քանի՞սն էին կարսեցիներ, քանի՞սը բայազետցիներ և քանի՞սը էրգորումցիներ՝ անհնար է, քանի որ այդպիսիք առանձին-առանձին տեղակրովել էին միայն վերջին 31 գյուղերում այսպիսի թվային հարաբերությամբ։ 19 գյուղերում միայն կարսեցիներ, 5-ում բայազետցիներ, 7-ում էրգորումցիներ։

Այսպիսին են մեր կողմից օգտագործված աղբյուրների երկու խմբից յուրաքանչյուրի միակողմանիությունները։ Այնպես որ, Շորագյալի գավառի տարածքում գաղթականների տեղաբաշխումը կարելի է նկարագրել միայն այս երկու խմբերի աղբյուրների համապրությամբ, ինչն էլ կփորձենք իրագործել։

³⁶⁰ ՀՀ ՊԿԱ, ֆոնդ 93, ցուցակ 1, գործ 85, էջ 60-66։

³⁶¹ Նույն տեղում, գործ 86, էջ 125-133։

³⁶² Նույն տեղում, գործ 85, էջ 13-21։

³⁶³ Նույն տեղում, էջ 240-244։

³⁶⁴ Նույն տեղում, գործ 86, էջ 280-288։

1828 թ. մարտի սկզբներին սկսվեց պարսկահպատակ Հայերի գանգվածային գաղթը, որի արդյունքում շուրջ 8249 ընտանիքներ տեղափոխվեցին Արևելյան Հայաստանի տարածք։ Նախ անդրադառնանք գաղթականների ընդհանուր թվից առանձնացած այն 660 ընտանիքների Հարցին, որոնք ոռուս-պարսկական սահմանն անցան առանց պետական օգնության և փաստաթղթեր ստանալու և տեղափորկեցին ոչ թե նախապես որոշված բնակավայրերում, այլ Հասան մինչև Վրաստան։ Սրանց մի մասը՝ ամենայն Հավանականությամբ 40-50 ընտանիքից ոչ ավելի, առանձնանալով Հաստատվեց նաև Շորագյալի գավառում։ Այն մասին, որ սրանց կոնկրետ թիվն անհնար է պարզել, վերևում արդեն խոսվեց մեր կողմից աղբյուրների տեսովիշյան քննության մեջ, ուր նշվեցին նաև գաղթականների ճշգրիտ թիվը որոշելու անհնարինության պատճառները։ Ինչ վերաբերում է գավառում Հաստատված պարսկահպատակ Հայ գաղթականների թվաքանակի փոքր լինելուն, ապա 40-50 ընտանիքի մասին մեր արտահայտած կարծիքի օգտին են խոսում Հետևյալ փաստերը։ Նախ որ, ինչպես գիտենք, պարսկահպատակ Հայերը «Հիշվում են» ընդամենը երեք գյուղերի (Մեծիալի, Փոքր կամ Խըլի Ղարաքիլիսա) առիթով։ Ընդ որում դրանցից առաջինում պարսկահպատակ Հայերը տեղափորկեցին բնիկ շորագրայցիների Հետ, երկրորդը վերակենդանացրին, իսկ երրորդը՝ հիմնեցին³⁶⁵։ Երկրորդ, մեր ձեռքի տակ եղած 1829-1832 թթ. կամերալ ցուցակագրման տվյալներով փաստվում է, որ Հաջորդ՝ 1829-31 թթ. արևմտահայերի գաղթից հետո, վերոհիշյալ երեք գյուղերում առկա 154 ընտանիքների (Փոքր Ղարաքիլիսայում՝ 100 ընտանիք, Մեծիալիում՝ 17 ընտանիք, Աղբեկիսայում՝ 37 ընտանիք)³⁶⁶ գեռակշող մեծամասնությունը արևմտահայեր էին։ Հետևաբար մնում է ենթադրել, որ իրոք նշված գյուղերում տեղաբաշխված պարսկահպատակ Հայ ընտանիքների թիվը չպետք է ավելին լիներ 40-50-ից։

Պարսկահպատակ Հայերի Հետ միաժամանակ կամ գուցե մի փոքր ավելի շուրջ՝ գեռևս մինչև ոռուս-պարսկական 1826-1828 թթ. պատերազմի ավարտը, գաղթել և Շորագյալի գավառի Փոքր Բերանդ (Փոքր Պարնի), Ղզըլ-Քիլիսա (Կարմրավան), Մահմուղջուղ (Պեմզաշեն), Սոգութիլի (Սառնաղբյուր) և Չոռպի (Լեռնապյուղ) գյուղերում էին Հաստատվել նաև որոշ՝ Հավանաբար ոչ մեծ թվով գաղթականներ Երևանից, Ապարանից, Լոռուց, Սարդարաբարդից ու Վրաստանից։ Սրանց կոնկրետ թիվը, ինչպես և պարսկահպատակ Հայերինը աղբյուրների թերիության պատճառուիլ, բացառությամբ Սարդարապատից Սոգութիլիում Հաստատվածների թվի (18 ընտանիք), ճշտեն անհնար է։ Մեր

³⁶⁵ Ի գետքի անվան մեջ Խըլի մասնիկն ըստ «Արևելյան մամուկի» (թիւ 15, 1 օգոստոսի, Զմիւռնիա, 1898, 28-րդ տարի, էջ 584) ավելացվել է ի հիշատակ Պարսկահպատակ Հայաստանից գաղթածների Հայրենի Ղըլի գյուղի։

³⁶⁶ Եփրիկան Ս., նով. աշխ., հ. Ա., էջ 479։

³⁶⁷ ՀՀ ՊԿՊԱ, ֆոնդ 93, ցուցակ, 1, գործ 86, էջ 197-206, 339-361։

կարծիքով նշված շրջաններից գաղթած և Շորապյալի գավառի այս հինգ գյուղերում հաստատված ընտանիքների թիվը չէր կարող գերազանցել 50-60-ը: Ինչն է մեզ թույլ տալիս նման ենթադրության անելու: Բանն այն է, որ Արևելյան Հայաստանի և Վրաստանի տարածքից գաղթածները Շորապյալի գավառում հաստատվեցին հետևյալ կերպ՝ Փոքր Բէքանդում Երևանի գյուղերից, ³⁶⁸ Սոգութիւնում՝ Սարդարապատից, ³⁶⁹ Ղզըր-Քիլիսայում՝ Ապարանի Համբ-զայիր գյուղից, ³⁷⁰ Չոռլիում՝ Վրաստանից, ³⁷¹ Մահմուդյուղում Լոռուց, գաղթածները, ընդ որում, Փոքր Բէքանդում Երևանի գյուղերից գաղթածները տեղափորվեցին բնիկ շորագյուղիների հետ միասին, իսկ ինչ վերաբերում է մնացած չորս գյուղերին, ապա սրանք Հիմնվեցին լուսեցիների, ապարանցիների, սարդարապատիցիների և Վրաստանից գաղթածների կողմից: Երբ 1829-30 թթ արևմտահայերի գաղթի պատճառով Շորապյալի գավառում հաստատվեցին նաև մեծ թվով կարսեցիներ, բայազետցիներ, էրզրումցիներ և Արևմտյան Հայաստանի այլ շրջաններից գաղթածներ, գավառի վերոհիշյալ հինգ գյուղերում գրանցվեցին ազգաբնակչության թվաքանակի հետևյալ ցուցանիշներով՝ Փոքր Բէքանդում բնիկ շորագյացի 14 ընտանիքի կամ 90 մարդու (47-ը արական, 43-ը իգական սեռի) ³⁷² կողքին հաստատվեցին Երևանի գյուղերից, Կարսի, Մուշի և Ալաշկերտի վիճակներից գաղթած 12 ընտանիքներ՝ 88 մարդով (49-ը արական, 39-ը իգական սեռի) ³⁷³: Նոր հրմանդրված գյուղերից ևս երեքում պատկերը հետևյալն էր.

Աղյուսակ 3

| գյուղեր | ընտան. | ար. | իգ. | մարդ. | որտեղից են գաղթել |
|----------------|--------|-----|-----|-------|---|
| 1. Ղցր-Քիլիսա | 26 | 86 | 69 | 154 | Մեծամասամբ Խոչշավանքից և Պողտաշինից, մասամբ նաև Համբայլիրից |
| 2. Մահմուդյուղ | 60 | 212 | 137 | 349 | Լոռուց, Կարսից, Ալաշկերտից, Բասենից |
| 3. Չոռլի | 5 | 19 | 8 | 27 | Վրաստանից, Կարսից, Բա - սենից |
| Ընդամենը | 91 | 317 | 213 | 530 | |

Ինչ վերաբերում է նշված հինգ գյուղերից վերջինում՝ Սոգութիւնում հաստատված սարդարապատցիներին, ապա մենք դրանց մասին չհիշեցինք հետևյալ պատճառով. Սոգութիւնին ամբողջ Շորապյալի գավառի երեսի թե միակ գյուղն է, ուր տարբեր շրջաններից գաղթածնե-

³⁶⁸ «Արևելյան մամուլ», թիւ 23, 1 դեկտեմբերի, Զմիւռնիա, 1898, 28-րդ տարի, էջ 890:

³⁶⁹ Նույն տեղում, թիւ 19, 1 հոկտեմբերի, էջ 737:

³⁷⁰ Նույն տեղում, թիւ 17, 1 սեպտեմբերի, էջ 657-658:

³⁷¹ ՀՀ Պետական գործադրության մասին օրենք, գործ 47, ցուցակ 2, գործ 134:

³⁷² ՀՀ Պետական գործադրության մասին օրենք, գործ 47, ցուցակ 2, գործ 134, թիւ 22, 15 նոյեմբերի, էջ 855:

³⁷³ ՀՀ Պետական գործադրության մասին օրենք, գործ 93, ցուցակ 1, գործ 87, էջ 108-112:

³⁷⁴ Նույն տեղում, գործ 85, էջ 187-194:

ըր, թեկուզ և մասնակիորեն, առանձնացվել են աղբյուրների կողմից: Այսպես, ըստ 1829-32 թթ. կամերալ ցուցակագրման տվյաների՝ Սոգութիւնում Հավանաբար Սարդարապատ-Կարս-Ալաշկերտ-Մուշ-Բասեն Հերթագայությամբ Հաստատվել է 74 ընտանիք կամ շուրջ 422 մարդ (229-ը արական, 193-ը իգական սեռի): Այդ թվից առաջին 18 ընտանիքը, ինչպես գրում է «Արևելյան մամուլը» գաղթել է Սարդարապատից, 40 ընտանիքը՝ Կարսից, իսկ մնացած 16 ընտանիքների մասին նույն աղբյուրն ուղղակի նշում է. «...մասսամբ կան նաև Ալաշկերտից, Մուշից և Բասենից գաղթածները»³⁷⁵: Այսինքն՝ մեզ ստուգապես Հայտնի է Շորագյալի գավառում 18 արևելյանյա գաղթական ընտանիքների (սարդարապատցիներ) Սոգութիւնում տեղափորկելու փաստը: Այդ գեպքում ինչո՞ւ ենք հիմնավորում Արևելյան Հայաստանի և Վրաստանի տարածքներից գաղթած ու Շորագյալի գավառում Հաստատվածների թվաքանակի (50-60 ընտանիք) մասին վերևում արտահայտած մեր կարծիքը: Սոգութիւն Շորագյալի գավառի վերոհիշյալ հինգ գյուղերից ամենամեծն էր՝ 74 ընտանիքներով, որոնից միայն 18-ն էին արևելյանայեր: Հետեւաբար քիչ Հավանական է թվում, որ մնացած չորս գյուղերում, որոր 1829-32 թթ. կամերալ ցուցակագրման տվյալներով ունեին ընդհանուր առմամբ 143 ընտանիք (820 մարդ՝ 481 արական և 339 իգական սեռի): գաղթած հիմնականում Արևմտյան Հայաստանից (տե՛ս աղյուսակ 3), երեսնցիների, լոռեցիների, ապարանցիների և Վրաստանից գաղթածների թվաքանակը գերազանցեր 35-40 ընտանիքից: Այստեղից էլ մեր այն ենթադրությունը, որ Շորագյալի գավառում մինչև արևմտահայերի գաղթը Հաստատված արևելյանյա գաղթական ընտանիքների թվիը չէր կարող 50-60 ընտանիքից ավելին լինել:

ԱՀավասիկ այն ամենը, ինչ կարելի է ներկայացնել 1827-1828 թթ. Պարսկաստանի, Արևելյան Հայաստանի և Վրաստանի տարածքներից գաղթած և Շորագյալի գավառի գյուղերում Հաստատվածների վերաբերյալ:

1829թ. սեպտեմբերի 2-ին Աղբիանապոլսի Հաշտության պայմանագրով ավարտվեց 1828-29թթ. ուսումնական պատերազմը, իսկ նոյեմբերին սկսեց և մեկ-երկու ամսից զանգվածային բնույթ ստացավ թուրքահպատակ քրիստոնյաներից գաղթը գեպի ոռուական տարածքներ: Այժմ պարզէնք, թե արևմտահայ գաղթականների ընդհանուր թվի ո՞ր մասը Հաստատվեց Շորագյալի գավառում և ի՞նչ թվային Հարաբերությամբ: Բայց մինչև այս բարդ ինդիքին անցնելը կարճ դադար տանք ու տեսնենք, թե ինչպիսի՞ն էր ժողովրդագրական դրությունը Շորագյալի գավառում արևմտահայերի գաղթի նախօրեին:

Ինչպես արդեն առաջին գլխում նշել ենք, XIX դ. 20-ական թվականների սկզբներից սկսած, կապված տարածաշրջանում ստեղծված

³⁷⁵ ՀՀ ՊԿՊԱ, ֆոն 47, ցուցակ 2, գործ 85, էջ 187-194:

Կայուն ռազմաքաղաքական իրազրության, ռուսական կառավարության կողմից ընտրված ճիշտ հարկային քաղաքականության (Հարկերի ծայրաստիճանն նվազեցման) և Փամբակի ու Շորագյալի գավառների սահմանադիման ամրոցի կառուցման հետ՝ Շորագյալի գավառի ազգաբնակչության թիվը նորից, թեև բավականին դանդաղ տեմպերով, մկնեց աճել և արդեն 1824-25 թթ. կեսերին հասավ մինչև 705 ընտանիքի, որից 529-ը՝ Հայկական, իսկ 176-ը՝ թափարական: Ցավոք, գավառի ազգաբնակչության թվի այս թեկուզ դանդաղ վերելքը երկար չտևեց: Արդեն 1826 թ. սկզբներին, կապված ռուս-պարսկական փոխհարաբերությունների ծայրաստիճանն սրման հետ, գավառի տարածքը լրեցին կամ ավելի ճիշտ կիներ ասել՝ Շորագյալից փախան գրեթե բոլոր մահմեդականները, որի հետևանքով գավառի 25 գյուղերում ազգաբնակչության թիվը 1826-28 թթ. ռուս-պարսկական պատերազմի նախօրեին իջավ մինչև 496 ընտանիքի կամ 3040 մարդու (1617-ը արական, 1423-ը իրական սեռի)³⁷⁶: Ազգաբնակչության թվաքանակի նվազումը շարունակվեց մինչև 1826 թ. կեսերը՝ մեր կարծիքով այդ պահին համակերպ ընդամենը 175 ընտանիքի կամ 980 մարդու (540-ը արական, 440-ը իրական սեռի): Պատճառն այն էր, որ ռուս-պարսկական պատերազմի արդեն առաջին երկու ամիսների ընթացքում, կապված Երևանի Հասան խանի թալանչական արշավանքի ու իրականացրած գերեզմանումների հետ, լրիվ մարդաթափ եղան Շորագյալի համեմատաբար մարդաշատ գյուղերից հինգը՝ Հոռոմը, Փոքր Ղարաքիլիսան, Բայանողուրը, Թավշան-Ղշաղը և Վերին (Փոքր) Ղանջիան (Վաշրամաբերդը)³⁷⁷: Որոշ աղբյուրների համաձայն՝ այս հինգ գյուղերից մեկը՝ Հոռոմը, ամբողջությամբ մարդաթափ չեղավ, և մինչև գաղթն այստեղ կար 30 ընտանիք՝ կեսը Հայկական («Արևելյան մամուլ», թիւ 22, 15 նոյեմբերի, Զմիւռնիա, 1898, էջ 758): Սննդ սույն հարցի վերաբերյալ Հակված ենք կարծելու, թե արևմտահայերի գաղթի նախօրեին Հոռոմը ևս մյուս չորս գյուղերի նման լրիվ ամայացած էր, որովհետև «Արևելյան մամուլի» վերոհիշյալ Հաղորդման իսկությունը որևէ արխիվային փաստաթղթով չի հաստատվում:

Դրույթունը փոխվեց միայն 1826 թ. վերջերին՝ կապված ռուսական գործերի Հաջողված ՀակաՀարձակման, Փամբակի ու Շորագյալի գավառների ազատազրման և ռազմական գործողությունները Երևանյան թատերաբեմ տեղափոխվելու հետ: Արդյունքում, մինչև պատերազմի ավարտը Արևելյան Հայաստանի և Վազաստանի տարածքներից գաղթեցին ու Շորագյալում Հաստատվեցին շուրջ 50-60 ընտանիքներ: Եվս 40-50 ընտանիքներ գավառում Հաստատվեցին արդեն պատերազմից հետո՝ ռուսական տարածքներ գաղթած պարսկահայտակ

³⁷⁶ ՀՀ ՊԿՊԱ, փոնդ 93, ցուցակ 1, գործ 87, էջ 1-157:

³⁷⁷ «Արևելյան մամուլ», թիւ 15, 1 օգոստոսի, Զմիւռնիա, 1898, 28-րդ տարի, էջ 584, թիւ 22, էջ 758:

Հայերից, այնպես որ արդեն 1828-29 թթ. Շորագյալի գավառում կար 26 հին ու նոր հիմնադրված գյուղ՝ մոտ 280-300 ընտանիք ազգաբնակչությամբ:

Այսպիսին էր ժողովրդագրական գրությունը Շորագյալի գավառում մինչև արևմտահայերի գաղթը: Առաջինը, ինչպես արդեն գիտենք, Արաքսն անցան և ոռուական տարածքներում հաստատվեցին Կարսի փաշայության քրիստոնյաները: Սկսվեով 1829 թ. գելտեմբերի սկզբին՝ նպաստ չպահանջող 400 ընտանիքների Գյումրիում հաստատվելու համար գեներալ-մայոր Բերգմանի կողմից անցագրեր տալու պահից, այն շարունակվեց մեկ-երկու ամիս և համարյա ափարտվեց արդեն 1830թ. Հունվարի վերջերին: Արդյունքում շուրջ 2464 ընտանիք կարսեցիներ, գաղթելով երեք փուլերով՝ նախ 400 ընտանիք, ապա 1840 ընտանիք և վերջապես, 224 ընտանիք, դեռևս 1829թ. Հունվարի 5-ին ցարին ներկայացված նախագծի համաձայն տեղափոխվեցին Փամբակ-Շորագյալի դիստանցիայում, Հայկական մարզում և Թալինի մահալում: Ընդ որում, կարսեցիների մեծագույն մասը՝ ըստ պաշտոնական փաստաթղթերի ավելի քան 2264 ընտանիքը (փաստաթղթերում թիվը տատանվում է 2263-2267-ի միջև) հաստատվեց հենց Փամբակ-Շորագյալում, իսկ մնացած 200 ընտանիքը՝ թալինում և Հայկական մարզում³⁷⁸:

Փորձենք պարզել, թե Փամբակ-Շորագյալի դիստանցիա գաղթած կարսեցիների ընդհանուր թիվը ո՞ր մասը հաստատվեց միայն Շորագյալի գավառում: Ինչպես ասվելով, արևմտահայերի գաղթի նախօրեին Շորագյալի գավառում բացի Գյումրուց կար 26 գյուղ, որից 8-ում կամ առանձին-առանձին, կամ էլ ընիկ շորագյալցիների հետ միասին բնակվում էին Արևելյան Հայաստանի, Վրաստանի և Պարսկաստանի տարածքներից գաղթածները, իսկ մնացած 18 գյուղերում՝ միայն շորագյալցիները: Արգեն արևմտահայերի գաղթի առաջին փուլի ավարտին, երբ գաղթել ու ոռուական տարածքներում հաստատվել էին դեռևս միայն կարսեցիները, գավառում գյուղերի թիվը հասավ 56-ի: Այսինքն, միայն կարսեցիների գաղթի հետևանքով Շորագյալի գավառում գյուղթյուն ունեցող 26 գյուղերից բացի Հիմնվեցին կամ «վերակենդանացան» ևս 30 բնակավայր: Ավելի մանրամասն կարսեցիների տեղաբաշխումը Շորագյալում նկարագրելու համար վերջիներին նախ բաժանենք երեք խմբի՝ ա. կարսեցիներ, որոնք հաստատվեցին Գյումրիում, բ. կարսեցիներ, որոնք հաստատվեցին գավառի արդեն գյուղթյուն ունեցող գյուղերում և գ. սեփական ուժերով գյուղեր հիմնած կարսեցիներ: Ի դեպ, նոյնպիսի տարբերակում կանենք նաև Արևմտյան Հայաստանի այլ շրջաններից գաղթած և Շորագյալի գյուղերում հաստատված բոլոր գաղթականների համար:

³⁷⁸ Документы и материалы по истории армянского народа..., док. 16, стр. 76; АКАК, т. 7, стр. 847.

Եկ այսպես, 1829-30 թթ. գաղթից Գյումրիի բերեց Կարս քաղաքի գլուխեցի ողջ քրիստոնյա ազգաբնակչությանը, որն ըստ Կրպեի հաղորդած տվյանների՝ Ստեփանոս արքեպիսկոպոս Խաժակյանի առաջնորդությամբ գաղթել էր միանգամից ու կազմում էր 693 ընտանիք կամ մոտ 5000-5500 մարդ³⁷⁹, և որը մեր կողմից պայմանականորեն նշվում է որպես Շորագյալ գաղթած կարսեցիների առաջին խումբ: Բայց ոչ բոլոր Հեղինակներն են կարսեցիների այս թվաքանակի ու նրանց՝ ամբողջությամբ Գյումրիում հաստատվելու հարցում համակարգիք Կրպեի հետ: Հայ պատմագրության մեջ այս հարցի վերաբերյալ ընդունված վարկածի համաձայն, որ առաջ է քաշվել Գյումր քահանա Աղանյանցի և Եփրեմ Սեթի կողմից, կարսեցիները կազմել են ոչ ավելի քան 600 տուն և գաղթել են ոչ միանգամից, այլ նախապես բաժանվելով երեք մասերի³⁸⁰: Ավելին, Եփրեմ Սեթի վկայությամբ՝ Գյումրիում հաստատվել էին միայն Կանցի Մարտիրոսի առաջնորդությամբ գաղթածները, իսկ կարսեցիների այլ երկու խմբեր Մխատեսի Ակոյի և Ստեփանոս արքեպիսկոպոսի գլխավորությամբ տեղափորկել էին առաջինը Փամբակի Ղարաքիլասայում, իսկ երկրորդը՝ Շորագյալի Ղփչաղ (Ղառիճ) գյուղում³⁸¹: Այսպես, որ արդեն 1830 թ. օգոստոսին Կարս քաղաքում, մատենադարանի մի վավերագրի համաձայն՝ մնացել էին ընդամենը 10³⁸², իսկ ըստ մեկ այլ վավերագրի՝ մինչեւ 50-60 տուն հայեր³⁸³: Խնդրո առարկայի՝ կարսեցիների թվի և ամբողջությամբ Գյումրիում նրանց հաստատված լինելու վերաբերյալ մենք ունենք մեր առանձնակի կարծիքը: մասսամբ համամիտ լինելով Կրպեի հետ՝ մենք ամբողջապես չենք ժխտում նաև Գ. քահանա Աղանյանցի ու Եփրեմ Սեթի վկայությունների ծշմարտացիությունը: Այսպես, ճիշտ համարելով Կրպեի այն Հայտարարությունը, թե Կարսից գաղթածների ընդհանութ թիվը 693 ընտանիք էր կամ մոտ 5000-5500 մարդ, մենք միանգամանակ չենք կարող համամիտ չինել նաև Գ. քահանա Աղանյանցի և Եփրեմ Սեթի հետ այն հարցում, թե կարսեցիները գաղթի նախօրեկին բաժանվեցին երեք խմբերի, բայց տեղավորվեցին ոչ թե Ղարաքիլասայում, Գյումրիում և Ղփչաղում, ինչպես նշում են նրանք, այլ՝ Ղարաքիլասայում, Գյումրիում և Սոգութիում, ինչպես գոնում ենք: Այսպիսով, Գ. Աղանյանցի ու Եփրեմ Սեթի հետ մեր ունեցած տարածայնության գիսավոր պատճառը ոչ այնքան կարսեցիների թվի վերաբերյալ է, որքան Ստեփանոս արքեպիսկոպոսի և կարսեցիների՝ Սոգութիի փոխարեն Ղփչաղում հայտնվելու մասին: Սեր

³⁷⁹ Կրպե, Կարս քաղաքը, Սոսկվա, 1893, էջ 56, 97:

³⁸⁰ Աղանյանց Գ. թ., նշվ. աշխ., էջ 24-25; Կարապետյան Մ., Եփրեմ Սեթը արևմտահայության 1829-30թթ.-ի գաղթի մասին, Թթվ., Եր., 1997, N 2, էջ 292:

³⁸¹ Կարապետյան Մ., նշվ. աշխ., էջ 292:

³⁸² Մաշտոցի անվան Մատենադարան, Կաքողիկոսական դիվան, թղթ. 74, վավ. 246, էջ 1:

³⁸³ Նոյն տեղում, թղթ. 66, վավ. 54:

կարծիքով՝ Ստեփանոս արքեպիսկոպոսը ու նրա կարսեցիները՝ Ղփչաղ չեն մտել: Գաղթելով՝ Ստեփանոս արքեպիսկոպոս Խաժակյանը հաստատվել է Գյումրիում և մինչև 1837 թ. մարտի 27-ը կաթողիկոսի Հրամանով եղել տեղի գաղթականների առաջին Հոգևոր առաջնորդը³⁸⁴, ինչի մասին էլ հենց ինքը՝ արքեպիսկոպոս տեղեկացրել էր 1834թ.³⁸⁵ Հուլիսի 3-ին Կարսապետ արքեպիսկոպոսին ուղղված իր նամակով՝ ինչ վերաբերում է կարսեցիների՝ Ղփչաղ գյուղում հաստատվել-չհաստատվելուն, ապա նշենք, որ մեր ունեցած տվյալներով 1829-31 թթ. գաղթի ողջ ընթացքում Շորագյալի գավառի վերոհիշյալ գյուղում որևէ կարսեցի չի հաստատվել: Գյուղը վերակենանացել է միայն ի հաշիվ Բասենի Մենկերտից գաղթածների³⁸⁶: Հետևաբար կարելի է պնդել, որ կարսեցիների երրորդ խումբը, տեղափորվել է Սոգութիւնում³⁸⁷:

Այսպիսով, 1829-30 թթ. ընթացքում Կարս քաղաքից գաղթել ու Փամբակի Ղարաքիլիսա գյուղում և Շորագյալի Գյումրի ու Սոգութիլի գյուղերում են հաստատվել շուրջ 693 ընտանիքներ, ընդ որում սրանց մեծագույն մասը՝ մոտ 600 ընտանիքներ, (այդ թվում նաև 150 ընտանիք հույներ)³⁸⁸ Հաստատվել են Գյումրիում, 40 ընտանիքներ Սոգութիլիում, իսկ մնացած 53-ը՝ Ղարաքիլիսայում:

Մեր կողմից առանձնացված կարսեցիների երկրորդ խումբը Շորագյալում հաստատվեց արդեն գյուղուն ունեցող 26 գյուղերից 16-ում, ընդ որում, նրանց քանակի վերջնական հաշվառման ժամանակ (խոսքը գնում է «Արևելյան մամուլի») և Ս. Եփրիկյանի և 1829-32 թթ. կամերալ ցուցակագրման տվյալների մեր կատարած համադրության մասին) պարզվեց, որ նշված գյուղերից միայն հինգում են կարսեցիները հաստատվել բնիկ շորագյալցիների հետ և կազմում էին ընդամենը 99 ընտանիք կամ 749 մարդ:

Աղյուսակ 4

| գյուղերը | ընտան. | ար. | իդ. | ընդամ. | որտեղից են գաղթել |
|------------|--------|-----|-----|--------|-------------------|
| 1. Բանդևան | 25 | 103 | 93 | 196 | Կիկոռ գյուղից |
| 2. Ղամամակ | 14 | 46 | 37 | 83 | Քեչե-Պօա գյուղից |

³⁸⁴ Կրպե, նշվ. աշխ., էջ 79:

³⁸⁵ Մաշտոցի անվան Սատենատարան, Դիվան Կարսապետ արքեպիսկոպոսի, թոք. 163դ, վավ. 1407:

³⁸⁶ ՀՀ ՊԿՊԱ, ֆոն 47, ցուցակ 2, գործ 108; «Արևելյան մամուլ», թիւ 24, 15 դեկտեմբերի, Զմիւռնիս, 1898, 28-րդ տարի, էջ 934:

³⁸⁷ «Արևելյան մամուլ», թիւ 18, 15 մետամբերի, 1898, 28-րդ տարի, էջ 737:

³⁸⁸ Օրեստ Евницкий, Статистическое описание Закавказского края, с присовокуплением статьи; Политическое состояние Закавказского края в исходе XVIII века и сравнение оного с нынешним, СПб., 1835, стр. 152.

Արմեն Հայրապետյան

| | | | | | |
|-----------------|----|-----|-----|-----|--|
| 3. Թալիբողի | 17 | 59 | 53 | 112 | Մյուլիքրան գյուղից |
| 4. Ղուժնի-Ղըշաղ | 5 | 22 | 9 | 31 | Ինձե-Սու գյուղից |
| 5. Դուզենդ | 38 | 158 | 169 | 327 | Զոմուշու, Շահնալար, Քյուրու կղարա և Փալդրվան գյուղերից |
| Ընդամենը | 99 | 388 | 361 | 749 | |

Ինչ վերաբերում է մնացած 11 գյուղերին՝ թաքնալի (Գողահովիտ), Չրախիլի, Փոքր Բեքանդ, Քյավլիտառլի (Փանիկ), Մեծ Քյափանակ (Մուսայիլյան), Իլլի-Քիլիսա (Իլլի), Ալթիկ, Ղղու-Քիլիսա, Չոռլի, Մահմուղջուղ և Մոգութի, ասպա սրանցում բնիկ չորագյացիների ու կարսեցիների հետ միաժամանակ արևմտահայերի ներգաղթի հաջորդ փուլերի ընթացքում հաստատվել էին որոշ թվով գաղթականներ Արևմտյան Հայաստանի նաև այլ շրջաններից, որի հետևանքով էլ այս գյուղերում հաստատված կարսեցիների թիվը պարզելն անհնար է։ Շորագյալի գավառ գաղթած կարսեցիների երրորդ և վերջին խումբն այսպես կոչված նոր գյուղեր հիմնողներն էին, որոնք սուս-թուրքական սահմանն անցնելուց հետո, Շորագյալի արդեն գոյություն ունեցող գյուղերում հաստատվելու փոխարեն նախընտրեցին հիմնել նորերը (այս խմբի կարսեցիների կողմից վերականգնվեցին ու հիմնվեցին ավելի քան 30 գյուղեր): Հետագայում՝ մինչև 1831 թ. նշված գյուղերից զուտ կարսեցիներով բնակեցված մնացին միայն 15-ը.³⁸⁹

Աղյուսակ 5

| գյուղերը | ընտան | ար. | իդ. | ընդամ. | որակի՞ց են գաղթել |
|---------------|-------|-----|-----|--------|---------------------------------|
| 1. Շիրվաջուղ | 56 | 169 | 152 | 331 | Ք.աջերունյաց Ղըզըլ-Ղարա գյուղից |
| 2. Դահարլի | 64 | 183 | 160 | 343 | Արևմտյան Շիրակից |
| 3. Քյաղալի | 12 | 42 | 32 | 74 | Կարսի Վիճակից |
| 4. Բողզողան | 13 | 34 | 36 | 70 | Փոքր Բեղիկլեր |
| 5. Մարիբաշ | 8 | 21 | 21 | 42 | Վալի գյուղից |
| 6. Եգանդար | 34 | 112 | 93 | 205 | Զոմուշուից ու Բուրիկից |
| 7. Բողզ-Քեսան | 35 | 101 | 82 | 183 | ՈՒղուղու գյուղից |
| 8. Թոմարտաշ | 32 | 112 | 90 | 202 | Բերնա և Ղարաքիլիսե գյուղերից |
| 9. Ճղիկար | 24 | 102 | 82 | 174 | Քեղիկեր գյուղից |
| 10. Փոքր Քեթի | 18 | 39 | 64 | 103 | Ղըզըլ-Զախչախիկից |
| 11. Բայանդուր | 52 | 165 | 138 | 303 | Կարսի Վիճակից |

³⁸⁹ ՀՀ ՊԿՊԱ, ֆոն 93, ցուցակ 1, գործ 85, էջ 1-12, 27-30, 70-73, 81-83, 106-108, 167-176, 259-265, 283-291, գործ 86, էջ 28-36, 45-47, 91-106, 108-114, 218-227, 306-309:

| | | | | | |
|--|------------|-------------|-------------|-------------|---|
| 12. Դոնախողան | 40 | 130 | 95 | 225 | Ենի-Գեոյ, Զային-Մազիրա և Ղարագան |
| 13. Մեծ (Ներքին) Ղանիջա | 23 | 66 | 45 | 111 | Ինչեւր գյուղից |
| 14. Ջրավիլի | 17 | 68 | 48 | 116 | Անիից և Հարևան ձալար գյու- ղից |
| 15. Ալլահ Քիլիսա | 7 | 22 | 6 | 28 | Գյուղելիսանից |
| Ընդամենը | 435 | 1366 | 1134 | 2500 | |

Հնդ որում, գրանցից մեկում գրանցվեց գավառի համար աննա-
խադեպ իրադարձություն։ Այն ժամանակ, երբ քրիստոնյաների գաղթը
թուրքիայի տարածքից ընդունել էր զանգվածային բնույթ, Կարսի
փաշայության Գյուղելիսան գյուղից գաղթեցին և Շորագյալի գավառի
Ալլահ-Քիլիսա (Բայթար) գյուղում հաստատվեցին 7 ընտանիք
թաթարներ (28 մարդ)³⁹⁰։ Սույն բացառիկ (գոնե Շորագյալի գավառի
համար) իրադարձությունը մեր կարծիքով ունի միայն մեկ բացատրու-
թյուն։ Շատ հավանական է, որ Ալլահ-Քիլիսա գաղթած այս 7 ընտանիք
թաթարները, որոնք ըստ էության դարձան այս գյուղի եթե ոչ
հիմնադրիները, ապա գոնե վերականգնողները, ոչ վաղ անցյալում ապ-
րել են Շորագյալի գավառի մահմետական գյուղերից որևէ մեկում, և
Կարսի փաշայության տարածքում էին հայտնվել միայն 1825 թ.
վերջերին՝ ուսւապարական հարաբերությունների սրման պատճառով
Շորագյալի գավառից մահմետականների արտագաղթի ժամանակ, իսկ
ուզմական գործողությունների ավարտից հետո, չհամակերպվելով նոր
ընակավայրում ստեղծված պայմաններին, հետ էին վերադարձել Ալլահ-
Քիլիսայում։

Նոր հիմնադրված գյուղերից մնացած 15-ում՝ Ղազարապատ (Ի-
սահակյան), Սվան-Վերդի, Աղին, Ղեղաչ, Մոնտուրի, Սարիբաշ, Ղազանչի,
Մոլլա-Գյուկչա (Մարալիկ), Փոքր Քյափանակ, Նորաշեն, Օրթաքիլիսա,
Դիրաքլար, Թավշան-Ղշաղ, Հոռոմ և Փոքր Ղանիջա, հետագա գոր-
ծողությունները ընթացան համաձայն արդեն ծանոթ սցենարի։ Մինչև
1831 թ., այսինքն մինչև գաղթի ժամկետի պաշտոնական ավարտը
սրանցում կարսեցիներից բացի տեղափորկեցին նաև Արևելյան
Հայաստանի այլ շրջաններից գաղթածներ։ Ցավոք, ձեռքի տակ եղած
աղբյուրների սակավությունը թույլ չի տալիս հստակություն մտցնել
այդ գյուղերում հաստատված կարսեցիների, այնպես էլ այլ շրջաններից
գաղթածների թվաքանակի հարցում։

Կարսեցիների հետ միաժամանակ Արևելյան Հայաստանի տա-
րածքից գաղթեցին նաև Բայազետի փաշայության քրիստոնյանե-
րը։ Հնդամենը երկու-երեք ամիսների ընթացքում, համաձայն բա-
յազետից գաղթականների թվի ու տեղաբաշխման շրջանների վերա-

³⁹⁰ «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան», հ. 1, Եր.,
1986, էջ 70։

բերյալ պիտական պաշտոնական մեկնաբանության, որ ձեւափորվել է Հայկական մարզի կառավարիչ Վ. Բեհրութովի և գաղթականներին ուղեկցող ենթասպա Արդութինսկու տվյալներով³⁹¹, չուրջ 4215 ընտանիք բայազետցիներ գաղթեցին ու հաստատվեցին Գյոկչայի, Ապարանի, Դարաչչակի և Սուրբարուի գավառներում³⁹²: Մինչդեռ իրականում ոռուս-թուրքական սահմանն անցած բայազետցիների թվի և տեղափորման վայրերի վերաբերյալ իրականությունն այլ է. Բայազետի փաշայությունից գաղթել է ընդամենը 2528 ընտանիք (14948 մարդ)³⁹³, ընդ որում, նրանցից ոչ բոլորն են հաստատվել Հայկական մարզում: Բայազետցիների մի բավականին մեծ զանգված ոռուս-թուրքական սահմանն անցնելուց հետո Հայկական մարզում հաստատվելու փոխարեն նախընտարել է տեղափորվել Փամբակի և Շորապյալի գավառներում: Մինչդեռ պաշտոնական փաստաթղթերն այդ մասին ոչինչ չեն ասում:

Բայազետցիների գաղթի նախօրեին Շորապյալի գավառում կար տեղաբնակներով, արևելահայերով, պարսկահպատակ Հայերով ու արևմտահայերով (առայժմ միայն կարսեցիներով) բնակեցված 56 գյուղ: Գաղթած բայազետցիները, մասնավորապես ալաշկերտցիները, տեղափորվեցին Գյումրուց բացի ևս 21 գյուղերում, որոնցից երկուսը հիմնեցին սեփական ուժերով, այնպես որ, արդեն նրանց գաղթից հետո գավառում գյուղերի թվը հասակ 58-ի: Բայազետի փաշայությունից գաղթած և Շորապյալի գավառում տեղափորվածների առաջին խոռոք՝ հենց Բայազետ քաղաքից գաղթածները, հաստատվեցին Գյումրիում և հիմնեցին Կապս գյուղը:³⁹⁴ Ըստ որում, եթե Կապսը հիմնադրած բայազետցիների թվը ստույգ հայտնի է՝ 31 ընտանիք կամ 118 մարդ (64-ը արական, 54-ը իգական սեռի), ապա նույնը չի կարելի ասել Գյումրի գաղթածների վերաբերյալ, քանզի սրանց մասին որևէց թվային տվյալ գյուղերուն չունի: Համաձայն 1829-32 թթ. կամերալ ցուցակագրման տվյալների՝ արևմտահայերի գաղթի արդյունքում Գյումրու բնակչության թվիը հասակ 1350 ընտանիքի կամ մոտ 7250 մարդու³⁹⁵, որից 100 ընտանիքը, համաձայն Կարնու գաղթականների պատմածի բնիկ գյումրեցիներն էին՝ «տեղափորված Զերկեզի Ճորի» գլխին³⁹⁶ (Արևմտահայերի գաղթի նախօրեին Գյումրու բնակչության

³⁹¹ Մելքոնյան Ա., նշվ. աշխ., էջ 142:

³⁹² ՀՀ ՊԿՊԱ, ֆոն 90, ցուցակ 1, գործ 44, էջ 336-337:

³⁹³ Նույն տեղում, էջ 144:

³⁹⁴ «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան», հ. Բ, Եր., 1988, էջ 951:

³⁹⁵ ՀՀ ՊԿՊԱ, ֆոն 93, ցուցակ 1, գործ 86, էջ 280-288:

³⁹⁶ ՀՀ ՊԿՊԱ, ֆոն 93, ցուցակ 1, գործ 83, 84:

³⁹⁷ Նիկողոսյան Ն., Գյումրի-Լենինականի անցյալը (1935թ.), ձեռագիր, ՊՀԱ, գործ 103, Ն. Նիկողոսյանի նյութերը, ներածություն:

թիվը տարրեր Հեղինակների մոտ տատանվում է. նվազագույնը 50 ընտանիքից³⁹⁸ մինչև առավելագույնը 300 ընտանիք:³⁹⁹ Մենք առավել ստույգ ենք համարում ն. Նիկողոսյանի վարկածը՝ 100 ընտանիք): Եվս 800 ընտանիք կարսեցիներ ու կարինցիներ էլ այստեղ էին հաստատվել մինչև 1832 թ.⁴⁰⁰: Այսպիսով, Գյումրու բնակչության ընդհանուր թվից՝ 1350 ընտանիքից փոքրիշատե կոնկրետ տեղեկություններ կային միայն 900-ի մասին: Մնացած 450 ընտանիքների հարցում, որոնց մեջ բայց գետցիներից զատ մտնում էին նաև մշեցիներ, վանեցիներ և Արևելյան Հայաստանի այլ շրջաններից գաղթածներ, որում թվային տվյալ չկա: Մինչդեռ կարծում ենք՝ հնարավոր է գոնե մոտավոր ճշտությամբ պարզություն մտցնել այս հարցի մեջ: Կ. Մատինյանի հաղորդմամբ գաղթից հետո Գյումրու բնակչության մեջ բայց գետցիները թվով երկրորդն էին կարսեցիներից (600 ընտանիք) հետո և էրզրումցիներից (200 ընտանիք) առաջ և կազմում էին Գյումրիում տեղավորված կարսեցիների քանակի կեսը:⁴⁰¹ Այս հաղորդման հիման վրա կարեի է եղանակացնել, որ Գյումրի գաղթած բայց գետցիների մոտավոր թիվը 300-ից ոչ ավելի և 200-ից ոչ պակաս ընտանիք է: Սա է այն ամենը ինչ մեզ հաջողվեց պարզել Գյումրիում հաստատված բայց գետցիների հավանական թվի մասին:

Երկրորդ գյուղը, որ Շորագյալում հիմնեցին բայց գետցիները⁴⁰² Ղողթն էր, որ Ալաշկերտի Բաղմոց գյուղից գաղթեց 23 ընտանիք:⁴⁰³ Ի դեպ, այստեղ ևս Ալաշ-Քիլիսայի օրինակով գրանցվեց մահմեդականների ներգաղթ: Այսպես, գյուղը հիմնած 23 ընտանիքներից կամ 122 մարդուց (64-ը արական, 58-ը իբրական սեռի) երկուսը մահմեդականներ էին, որոնք հավանաբար ալլահ-քիլիսեցիների պես նախկինում շորագյալցիներ լինելով, այժմ՝ խաղաղության հաստատումից և գաղթի պաշտոնական թույլտվությունից հետո հետ վերադառնալով, կրկին հաստատվել էին իրենց հայրենի գավառում: Մնացած 19 գյուղերում՝ Փոքր Ղարաբիլսա, Ղափլի, Հոռոմ, Զրախլի, Փոքր Բեքանդ, Քյալթապի, Մեծ Քյափանակ, Հայթ-Նազար-Ղուկի (Կամո), Ղազարաբաղ, Մվան-Վերդի, Աղին, Ղեղաչ, Սոնգուտի, Արմութի (Տուֆաչեն), Մահմուդջուղ, Մոլլա-Գյոկչա, Բողադ-Քեսան (Չորակապ), Մողութի, Նո-

³⁹⁸ Թամրազյան Ս., Հիշողություններ XIX դարի Ալեքսանդրապոլի անցյալից մինչև մեր օրերը, (1938թ.), ձեռագիր, ՊՀԱ.գործ 103, Թամրազյանի նյութերը, տեսող 1:

³⁹⁹ Ալբակես, Ալեքսանդրապոլի ապագան, «Ախորեան», Ալեքսանդրապոլ, 1907, 30 հունվարի, թիվ 3, էջ 1:

⁴⁰⁰ Մաշտոցի անվան Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 74, վավ. 227, էջ 2:

⁴⁰¹ Մահմնեանց Կ., Ալեքսանդրապոլի վաճառականները, «Մերու Հայաստանի», 2 փետրվարի, N 5, Թիֆլիս, 1874, էջ 3:

⁴⁰² «Արևելյան մամուլ», թիվ 3, 1 փետրվարի, Զմիւնիա, 1899, 29-րդ տարի, էջ 109:

⁴⁰³ ՀՀ ՊԿՊԱ, ֆոն 93, ցուցակ 1, գործ 86, էջ 163-168:

լրաշեն, թափառողակ, բայազետցիները տեղափորփել էին բնիկ չորագյալցիների, պարսկահայերի ու կարսեցիների հետ համատեղ, և այդ պատճառով էլ վերջիններիս իրական թիվն այդ գյուղերում պարզելն անհնարէ: Ի դեպ, արդեն բայազետցիների գաղղթից հետո, Շորագյալի գավառում նմանօրինակ գյուղերի թիվը, որոնցում անհնարէ է Արևմտյան Հայաստանի այս կամ այն շրջանից գաղղթածներին առանձին-առանձին հաշվառել, հասավ մինչև երեք տասնյակի: Եվ քանի որ հետպատու ևս, ինչպես պարզվեց քննության ընթացքում, նման զեպքերը կրկնվում են, իսկ մանավանդ էրզրումցիների պարագայում ընդունում են բավականին մեծ ծավալներ, մեր կարծիքով ավելորդ չի լինի ևս մեկ անգամ անդրադառնալ այս հարցին, մանավանդ, որ աղբյուրների թերությունը այս գործում միակ խանգարիչ Հանգամանքը չէ, այլ գոյություն ունի մեկ ուրիշ, շատ կարևոր գործոն ևս: Նկատի ունենք գաղղթականների տեղաբաշխման կանոնների կոպիտ խախտումները: Որպես պարսկահայատակ Հայերի գաղղթի տրամաբանական շարունակություն, արևմտահայերի տեղահանումն ու վերաբնակեցումն անդրկովկասյան երկրամասում ըստ էության ընթացավ համաձայն արդեն նախօրոք մշակված ու կիրաւված ծրագրի: Նորից, այս անգամ արդեն թիվֆիսում, Վրաստանի քաղաքացիական նահանգապետ Զավիլեյսկու նախագահությամբ ստեղծվեց Գաղղթականական կոմիտե, որի պարտականությունն էր գաղղթականների ընդունման ու տեղաբարձրման հետ կապված բոլոր հարցերի լուծումը: Կոմիտեն մինչև 1830 թ. գարունը պարտավոր էր Հավաքել մանրամասն տեղեկություններ Վրաստանի և Արևելյան Հայաստանի տարածքներում պետական ամայի Հողատարածությունների վերաբերյալ, ինչպես նաև մշակել մուրքիայից քրիստոնյաներին գաղղթեցներու և ոռոսական տարածքներում վերաբնակեցներու ընդհանուր կանոնները: Այժմ, երբ ինդիր ունենք պարզաբանելու Շորագյալում գաղղթականների տեղաբաշխման ընթացքում թույլ արված սիսալները, հարկ ենք համարում մեջբերել այդ կանոններից մի քանիսը:

Դրանցից մեկը ներգաղթ կազմակերպող Հանձնաժողովին՝ Գաղղթականական կոմիտեին, ցուցում էր տալիս եկվորներին բնակության նոր տեղեր Հասոկացներու ժամանակ նկատի ունենալ նրանց նախկին բնակավայրերի բնակիմայական պայմանները, նաև «Հրահանգված էր, որ գաղղթականները բնակվեին ամբողջական գյուղերով, առանց միայանցից անջատվելու, այնպես, ինչպես բնակվեիս են եղել մինչև գաղղթը»⁴: Այս և այլ կանոնների ըստ ամենայնի կիրառումը մեծ բարգությունների հետ կապված չէր: Մակայն իրականում այն գործնական կիրառություն ունեցավ Շորագյալի գավառի՝ գաղղթականներով համալրված 75 գյուղերից միայն 36-ում, ընդ որում ամբողջությամբ ու

⁴⁰⁴ Երիցյան Ալ, նշվ. աշխ., հ. Ա, էջ 328:

անթերի՝ միայն 20-ում⁴⁰⁵: Վերջիններիս վերաբերյալ կարելի է առանց վարանելու ճշտիվ նշել, թե Արևմտյան Հայաստանի ո՞ր փաշայության ո՞ր պյուղից քանի՞ ընտանիք է գաղթել և Շորագյալի ո՞ր պյուղում է հաստատվել.

Աղյուսակ 6

| Գյուղերը | Ընտան. | ար. | իգ. | ընդամ. | որտեղից են գաղթել |
|------------------|--------|------|------|--------|-------------------------------|
| 1. Բանդասն | 25 | 103 | 93 | 196 | Կարսի Տիկոս Գյուղից |
| 2. Ղամալի | 14 | 46 | 37 | 83 | Կարսի Պեչե-Պօս գյուղից |
| 3. Թալիրօղի | 17 | 59 | 53 | 112 | Կարսի Քյուզիրան |
| 4. Դութնի-Դշաղ | 5 | 22 | 9 | 31 | Կարսի Ինձե-Սուր գյուղից |
| 5. Բողոքան | 13 | 34 | 36 | 70 | Կարսի Փոքր Քեադիկեր գյուղից |
| 6. Մարիբաշ | 8 | 21 | 21 | 42 | Կարսի Վալի գյուղից |
| 7. Ղիչաղ | 13 | 37 | 46 | 83 | Բասենի Մժնկերտ ավանից |
| 8. Բաշպուղ | 18 | 87 | 62 | 149 | Մուշից |
| 9. Իմրիսանի | 30 | 104 | 86 | 190 | Բասենի Քեոփիր-Քեորեից |
| 10. Գյուղի-Ցոլ | 27 | 104 | 76 | 180 | Բասենից |
| 11. Բողադ-Քեսան | 35 | 101 | 82 | 183 | Կարսի Ոհորդպուր գյուղից |
| 12. Ճղիսլար | 24 | 102 | 72 | 174 | Կարսի Մեծ Քեադիկեր գյուղից |
| 13. Ալլահ-Քիլիսա | 7 | 22 | 6 | 28 | Կարսի Գյուղերան գյուղից |
| 14. Ջելաբ-Լեշուտ | 33 | 110 | 97 | 207 | Բասենից |
| 15. Մարիար | 42 | 115 | 101 | 216 | Բասենի Նուրիման-Ագրակից |
| 16. Շիրվանջուղ | 56 | 169 | 152 | 321 | Քաջբերունյաց Ղզը-Ղարալից |
| 17. Իլիհարի | 69 | 203 | 131 | 334 | Ներքին Բասենի Պատիճան գյուղից |
| 18. Ղողզաթ | 23 | 64 | 58 | 122 | Ալաշկերտի Բաղնոց գյուղից |
| 19. Ջաջուռ | 72 | 236 | 148 | 384 | Խնուրի Խովուր գյուղից |
| 20. Կապս | 31 | 64 | 54 | 118 | Բայազեսից |
| Հնդամենը | 562 | 1803 | 1420 | 3223 | |

⁴⁰⁵ՀՀ ՊԿՊԱ, ֆոն 47, ցուցակ 2, գործ 46, 82, 107, 112, 138, ինչպես նաև «Արևելյան մամուլ», թի 17, 1 սեպտեմբերի, Զմինիս, 1898, 28-րդ տարի, էջ 659, թի 19, 1 հոկտեմբերի, էջ 738, թի 22, 15 նոյեմբերի, էջ 855-858, թի 23, 1 դեկտեմբերի, էջ 889-890, թի 24, 15 դեկտեմբերի, էջ 934-935, թի 3, Զմինիս 1899, 29-րդ տարի, 1փետրվարի, էջ 109-112, թի 5, 1 մարտի, էջ 196-198, թի 6, 15 մարտի, էջ 235:

Գավառի մնացած 16 գյուղերում գաղթը կարգափորող վերոհիշյալ կանոնները կիրառվել են միայն մասնակիորեն: Այսպես, ուժ՝ գյուղերում արևմտահայերը տեղափորվել էին ոչ թե համաձայն ընդունված «գյուղից գյուղ» կարգի, այլ գեռևս գաղթի ճանապարհին կամ արդեն տեղափորվելու պահին կիսվել էին ու հաստատվել տարբեր գյուղերում: Իսկ քանի որ գաղթի հետագա փուլերի ընթացքում, այդ գյուղերից մի քանիսում հաստատվել էին նաև Արևմտյան Հայաստանի այլ շրջաններից գաղթածներ, ապա պարզելթե առաջին եկորները քանիսն էին, հնարավոր է միայն մասսամբ: Օրինակ Կարսի փաշայության հնջելեր գյուղից գաղթածները, բաժանվելով երկու մասերի, հաստատվել էին Շորագյալի գավառի Մեծ ու Փոքր (Վերին և Ներքին) Ղանլիջաններում, ընդ որում, վերջինում նույն փաշայության Պեշիլիսու ագարակից, Դերջանից և Մուշից գաղթածների հետ համատեղ: Այդ պատճառով էլ հայոնի է միայն Մեծ Ղանլիջայում հաստատված ինջելերցիների թիվը՝ 23 ընտանիք կամ 111 մարդ (66-ը արական, 45-ը իգական սեռի)⁴⁰⁷: Նույնը կրկնվեց նաև զգր-չախչախցիների հետ: Սրանք հաստատվել էին Մոլլա-Գյոկչայում և Փոքր Քեթիում, ընդ որում, առաջնում ինուսցիների, բասենցիների ու արակերտցիների հետ: Այդ պատճառով էլ Շորագյալի գավառ գաղթած զգր-չախչախցիներից կարող ենք ստուգապես հայտնի համարել միայն Փոքր Քեթիում հաստատվածների թիվը՝ 18 ընտանիք կամ 103 մարդ (39-ը արական, 64-ը իգական սեռի)⁴⁰⁸: Եթե ինձելերցիների և զգր-չախչախցիների թիվը գոնե մասսամբ հայտնի է, ապա նույնը չի կարելի ասել Զոմուշուկից գաղթածների մասին, քանի որ առանք հաստատվել էին Շորագյալի գավառի Դուղքենդ և Եգանլար (Արևշատ) գյուղերում, առաջնում՝ Կարսի փաշայության Շահնալարից, Փալդրվանից, Քյուրուկդարայից, երկրորդում՝ Բուփից գաղթածների հետ համատեղ⁴¹⁰: Մեր ունեցած վերջին տեղեկությունը վերաբերում է էրգրումի փաշայության Խնուսի գավառի Զելիբրմէ գյուղից գաղթածների Շորագյալի գավառի Մեծ ու Փոքր Արքիւֆալիներում (Մեծ ու Փոքր Մանթաշներ) հաստատվելուն⁴¹¹: Ընդ որում, առ միակ գեպքն է, երբ հայտնի է և՛ Զելիբրմէից գաղթածների ընդհանուր թիվը՝ 52 ընտանիք կամ 287 մարդ (168-ը արական, 119-ը իգական

⁴⁰⁶ Նիկողոսյան Ն., Շիրակի գյուղական կյանքից, «Արարատ», թի Է-Ը, Էջմիածին, 1904, էջ 692; Էփրիկյան Ս., նշվ. աշխ., հ. Բ, էջ 10, 43:

⁴⁰⁷ ՀՀ ՊԿՊԱ, ֆոն 93, ցուցակ 1, գործ 86, էջ 299-305:

⁴⁰⁸ «Արևելյան մամուլ», թի 19, 1 հոկտեմբերի, Զմիտրիա, 1898, 28-րդ տարի, էջ 738, թի 5, 1 մարտի, էջ 198:

⁴⁰⁹ ՀՀ ՊԿՊԱ, ֆոն 93, ցուցակ 1, գործ 86, էջ 108-114:

⁴¹⁰ Քաջերերումի, Հիշողություններ, «Լումա», Թիֆլիս, 1903, N 3, մայս-հունիսի, էջ 107; Նույնի, Ալեքսանդրապոլից դեպի Կարսին, «Փորձ», N 5, մայիս, Տիֆլիս, 1879, էջ 180-182:

⁴¹¹ ՀՀ ՊԿՊԱ, ֆոն 47, ցուցակ 2, գործ 21: Էփրիկյան Ս., նշվ. աշխ., հ. Ա, էջ 301:

սեռի), և՝ Շորագյալի գավառի երկու տարբեր գյուղերից յուրաքանչյուրում հաստատվածների թիվը: Այսպես, Չեփրմեկց գաղթած 52 ընտանիքներից (287 մարդ) 39 ընտանիքը կամ 215 մարդը (127-ը արական, 88-ը իգական սեռի) հաստատվեց Մեծ Արքխավայիռում⁴¹², իսկ մնացած 13 ընտանիքը կամ 72 մարդը (41-ը արական, 31-ը իգական սեռի)՝ Փոքր Արքխավայիռում⁴¹³:

Նշված 16 գյուղերից ևս ութում Բայանդուր, Դահարի (Գետք), Քյալալի (Նորաբեր), Չիրպիլի (Զույգաղըյուր), Ճլովիսանլի, Թումարտաշ (Վարդաքար), Հայկական կամ Վարին Գյողարդարա (Գեղաձոր), Ղոնախղուան (Շիրակ), մեր կողմից արձանագրվեց գաղթականների տեղաբաշխման կարգի խախտման մեկ այլ ձև,⁴¹⁴ որն ի դեպ, առկա է նաև վերևում հիշված առաջին ութ գյուղերից երկուսում՝ Դուզքենդում և Եգանլարում: Խոսքն այն մասին է, որ եթե առաջին դեպքում միւսնույն գյուղից ելածները, գեռևս զաղթի ճանապարհին բաժանվելով մասերի, Շորագյալի գավառում հաստատվում էին տարբեր գյուղերում, ապա այս անգամ տեղի է ունենում ուղղակի Հակառակը՝ Շորագյալի գավառի միւսնույն գյուղ էին գաղթում նույն փաշայության միանգամից մի քանի գյուղերից.

Աղյուսակ 7

| Գյուղերը | ընտան. | ար. | իգ. | ընդամ. | որակից են գաղթել |
|------------------------|--------|-----|-----|--------|---|
| 1. Բայանդուր | 52 | 165 | 138 | 303 | Կարսի փաշայության գյուղերից |
| 2. Դահարի | 64 | 183 | 160 | 343 | Արևմտյան Շիրակից |
| 3. Քյալալի | 12 | 42 | 32 | 74 | Կարսի վիճակից |
| 4. Չիրպիլի | 17 | 68 | 48 | 116 | Անիից և Հարևան ձալար գյուղից |
| 5. Ճլովիսանլի | 19 | 74 | 51 | 125 | Կարնո գյուղերից |
| 6. Թումարտաշ | 32 | 112 | 90 | 202 | Կարսի Բերնա և Դարաքելիսի գյուղերից |
| 7. Հայկական Գյողարդարա | 16 | 56 | 45 | 101 | Բասենի շրջանի Հաջիսալի և Ղոյրաթ գյուղերից |
| 8. Ղոնախղուան | 40 | 130 | 95 | 225 | Կարսի Ենի-Գեոյ, Ջային-Մագիս և Ղարազան գյուղերից |
| 9. Դուզքենդ | 38 | 158 | 169 | 327 | Կարսի Զոմուշու, Շահմալար, Փարգրսիս և Քյուրուկդարա գյուղերից |

⁴¹² ՀՀ ՊԿՊԱ, ֆոն 93, ցուցակ 1, գործ 85, էջ 148-154:

⁴¹³ Նոյն տեղում, էջ 155-165:

⁴¹⁴ «Արևելյան մասնու», թի 15, 1 օգոստոսի, 1898, 28-րդ տարի, էջ 585,586, թի 17,1 սեպտեմբերի, էջ 657-658, թի 22, 15 նոյեմբերի, էջ 757-758, թի 24, 15 դեկտեմբերի, էջ 935-936, թի 5,1 մարտի, Զմիւնիս, 1899, 29-րդ տարի, էջ 196: Մասսամբ նաև ՀՀ ՊԿՊԱ, ֆոն 47, ցուցակ 2, գործ 37, 70, 121,153:

Արմեն Հայրապետյան

| 10. Եգանլար | 34 | 112 | 93 | 205 | Կարսի Զոմուշու և Բուկի գյուղերից |
|-------------|-----|------|-----|------|----------------------------------|
| Ընդամենը | 324 | 1100 | 921 | 2021 | |

Այդ պատճառով էլ վերջնական հաշվառման ժամանակ նշվել է Շորագյալի տվյալ գյուղերում հաստատվածների միայն ընդհանուր թիվը: Բայց և այնպես, անկախ այն բանից, որ միևնույն գյուղից գաղթածները գավառի տարածքում հաստատվելիս բաժանվել են մասերի, կամ թե մի քանի գյուղերից եկածները գումարվել ու տեղափորվել են միևնույն գյուղում, այնուամենայնիվ նշված 36 գյուղերում հնարավոր է հաշվել, թե Արևմտյան Հայաստանի որ փաշայությունից քանի ընտանիք է գաղթել, ինչը մեզ համար առաջնային կարևորության խնդիր է: Այլ է գյուղերում գավառի՝ գաղթականներով համալրված մնացած գյուղերում և այդ թիվում նաև արդեն հիշված Վերին կամ Փոքր Ղանլիջայում և Մոլլա-Գյուղիչայում: Սրանցից յուրաքանչյուրում միանդամից հաստատվեցին Արևմտյան Հայաստանի մի քանի շրջաններից գաղթածներ, ընդ որում առանց նախնական հաշվառման⁴¹⁵, ինչի պատճառով էլ անհնար է նշել, թե Շորագյալի տվյալ գյուղերում հաստատվածների ընդհանուր թիվը դրանցից յուրաքանչյուրում Արևմտյան Հայաստանի ո՞ր շրջանից քանի՞ ընտանիք է տեղափորվել.

Աղյուսակ 8

| Գյուղերը | Ընտան. | ար. | իգ. | Ընդամ. | որաեղից են գաղթել |
|--------------------|--------|-----|-----|--------|--|
| 1. Փոքր Ղարաքիլիսս | 100 | 293 | 244 | 537 | Պարսկաստանի Ղըլի գյուղից, Արաշկերտից, Մուշից |
| 2. Թաքնալի | 17 | 51 | 56 | 107 | Կարսի ու Կարինի փաշայությունից |
| 3. Ղափի | 18 | 22 | 17 | 39 | Արաշկերտի ու Մուշի գյուղից |
| 4. Թալշան-Ղյաղ | 27 | 78 | 64 | 142 | Կարսի ու Բասենի գյուղերից |
| 5. Հոռոմ | 59 | 167 | 145 | 312 | Կարսից, Կարինից, Բայրակերտից, 4 բնա. բոշա |
| 6. Ջրախի | 14 | 58 | 37 | 95 | Կարսի Փարգիտ գյուղից, Բասենից, Արաշկերտից |
| 7. Փոքր Բերանդ | 12 | 49 | 39 | 88 | Երևանի, Կարսի, Մուշի, |

⁴¹⁵ «Արևելյան մամուլ», թի 15,1 օգոստոսի, Զմիւնիս, 1898, 28-րդ տարի, էջ 584, 586-587, թի 16,15 օգոստոսի, էջ 623-626, թի 19,1 հոկտեմբերի, էջ 737-738, թի 22,15 նոյեմբերի, էջ 855-858, թի 23, 1 դեկտեմբերի, էջ 889-892, թի 24,15 դեկտեմբերի, էջ 934-936, թի 3,1 փետրվարի, Զմիւնիս, 1899,9-րդ տարի, էջ 109-112, թի 6,15 մարտի, էջ 236,239; Էփրիլյան Հ., նշվ. աշխ., հ. Ա, էջ 5, 293, 320, 444, 479, 500, 518, հ. Բ, էջ 33, 67; Ս. Զարյալյան, նշվ. աշխ., հ. Ա, էջ 217; Գալյան Ս., Շիրակից հայերի գաղթը դեսպի Ամերիկա, Լու-Անգելես, 1950, էջ 69, 72:

| | | | | | Ալաշկերտի գուղքերից |
|-----------------------|-----|-----|-----|-----|--|
| 8. Քյալթառվի | 15 | 52 | 40 | 92 | Կարսից, Կարինից, Ալաշկերտից |
| 9. Մեջտիփի | 17 | 97 | 62 | 159 | Պարսկաստանից և Խնուռից |
| 10. Մհծ Քյափանակ | 51 | 167 | 96 | 263 | Կարսից և Ալաշկերտից |
| 11. Հայի-Նազար-Ղույփի | 12 | 31 | 8 | 39 | Մշո Բուշանըլից ու Ալաշ-կերտից |
| 12. Իլլ-Քիլիսա | 31 | 89 | 71 | 160 | Կարսից, Կարինից |
| 13. Փոքր Ղանլիջա | 14 | 44 | 40 | 84 | Կարսի Պեղիլիսա ազարկից, Խնձեկերից, Դերջանից, Մուշից |
| 14. Արթիկ | 100 | 334 | 305 | 639 | Կարսի Կանի և Պենքի Աչմեղ գյուղերից, Կարնո Կան գյուղից |
| 15. Ղազարապատ | 54 | 194 | 28 | 322 | Կարսից, Ալաշկերտից |
| 16. Մվան-Վերդի | 42 | 138 | 119 | 257 | Կարսից, Ալաշկերտից, Բասենից և Իլանուրից |
| 17. Աղին | 28 | 79 | 62 | 141 | Կարսից, Ալաշկերտից, Խնուռից և Սեբաստիայից |
| 18. Ղեղաչ | 17 | 50 | 44 | 94 | Կարսից, Կարինից, Ալաշ-կերտից |
| 19. Ղզլ-Քիլիսա | 26 | 86 | 68 | 54 | Խորավանքից, Պողտաշենից և Ապարանի Հայի-զայիրից |
| 20. Մոնղուռի | 17 | 63 | 31 | 95 | Կարսից և Ալաշկերտից |
| 21. Արմութիլի | 23 | 62 | 52 | 14 | Կարսի Թեքնիգ, Վազի, Ալաշկերտի Տութագ, Բասենի և Եալան գյուղերից |
| 22. Մահմուդջուղ | 60 | 212 | 137 | 349 | Լոռոց, Կարսից, Բասենից և Ալաշկերտից |
| 23. Ղազանչի | 52 | 168 | 113 | 281 | Կարսի Բաշ-Շորապյալ և Բասենի Պղաստն գյուղերից |
| 24. Մոլլա-Գյուկչա | 59 | 225 | 146 | 371 | Կարսի Ղզլ-Զախչախից, Բասենից, Խնուռից, Ալաշ-կերտից |
| 25. Մողութիլի | 74 | 229 | 193 | 422 | Կարս 40 տուն, Մարտարապատ 18 տուն, Ալաշկերտ, Մուշ, Բասեն |
| 26. Փոքր Քյափանակ | 17 | 68 | 50 | 118 | Կարսի և Կարինի վիճակ-ներից |
| 27. Զոռիփի | 5 | 19 | 8 | 27 | Վրաստանից, Բասենից, Կարսից |
| 28. Նորաշեն | 33 | 93 | 70 | 163 | Կարսի Քեափաճի, Զեր-մուկ գյուղերից, Ալաշկերտից, Դերջանից |
| 29. Թափալուրակ | 27 | 92 | 66 | 158 | Բասենից և Ալաշկերտից |
| 30. Աղ-Քիլիսա | 37 | 117 | 100 | 217 | Կարնո Պրգտի-Դսապից և |

Արմեն Հայրապետյան

| | | | | | Պարսկաստանից |
|---------------|------|------|------|------|--------------------|
| 31. Օրթաքիլսա | 35 | 109 | 78 | 187 | Կարսից և Էրզրումից |
| 32. Դիրաքլար | 31 | 99 | 75 | 174 | Դերջանից և Կարսից |
| Ընդամենը | 1114 | 3635 | 2764 | 6399 | |

Շորագյալի գավառում տեղափորված գաղթականների վերջնական հաշվառում անցկացնելիս նույն այդ պատճառով չենք կարող նաև նշել, թե ընդհանուր առմամբ գավառի գյուղերում տեղաբաշխվածների ո՞ր մասը Արևմտյան Հայաստանի ո՞ր շրջանից է գաղթել և ի՞նչ տոկոս է կազմում Փամբակ-Շորագյալի դիստանցիա գաղթածների ընդհանուր թվի մեջ:

Արևմտահայերի գաղթը կարգավորելու գործում թույլ տրված երկրորդ և ոչ պակաս կոպիտ թերացումը վերաբերում է գաղթող քաղաքային դասի՝ Շորագյալի գավառում տեղափորվելուն։ Այսպես, Գաղթականական կոմիտեի որոշմամբ բոլոր գաղթողները բաժանվելու էին երեք խմբերի՝ «ա. վաճառականներ կամ առևտորով զբաղվողներ, բ. արհեստավորներ կամ որևէ արհեստով զբաղվողներ և գ. հողագործներ կամ զյուղացիներ»⁴¹⁶։ Կոմիտեն գաղթականներին տեղաբաշխելիս պարտավոր էր խստիվ զեկվարվել այս դասակարգմամբ։ Դա թույլ կտար առաջին երկու խմբերին, որոնք մեծամասամբ քաղաքաբնակներ էին, գաղթելուց հետո տեղափորվել քաղաքներում, իսկ երրորդ խմբի գաղթականներին՝ գյուղերում։ Մինչդեռ գաղթականների վերոհիշյալ դասակարգումը Հակասության մեջ էր մտնում դեռևս 1829 թ. հունվարի 5-ին Պասկվիչ՝ ցարին ներկայացրած նախագծի հետ, որի Համաձայն՝ Փամբակ-Շորագյալի դիստանցիայում հաստատվելու էին Կարսի փաշայությունից գաղթած քրիստոնյա ազգաբնակչությունը, նաև քաղաքաբնակները Կարսից (Հետագայում նաև Բայազետ, Կարին, Բասեն և այլ քաղաքներից)⁴¹⁷։ Արդյունքում ստեղծվեց մի պարագորսալ իրավիճակ, երբ շուրջ 1399 ընտանիքներ կամ մոտ 7454 նախկինում քաղաքաբնակներ Հաստատվելու էին մի տարածքում, ուր որևէ քաղաքատիպ բնակվայր գոյություն չուներ։ Եվ այնուամենայնիվ միայն Գյումրիում հաստատվեց Շորագյալ գաղթած արևմտահայ քաղաքաբնակների մեծամասնությունը (ավելի քան 1250 ընտանիք կամ մոտ 6600-6800 մարդ) և ժամանակակցի խոսքերով ասած՝ «դիմանալով ճակատագրի Հարվածներին՝ ժանտախտին, մորեխին ու անբերրիությանը, Գյումրին վերածեց քաղաքի»⁴¹⁸։ Անբացատրելի է մնում մնացած 149 նախկին

⁴¹⁶ Потто В., Кавказская война..., т. 4, стр. 474-475.

⁴¹⁷ АКАР, т. 7, стр. 774.

⁴¹⁸ Գեղամենաց Յ.Ախալցիայից մինչև Անի, «Փորձ», Տփխիս, 1880, N4, ապրիլէջ 56:

Քաղաքաբնակ ընտանիքների կամ 854 մարդու՝ գավառի հինգ այլ գյուղերում Հայտնվելու փաստը⁴¹⁹:

Աղյուսակ 9

| Գյուղերը | Ընտան. | ար- | իդ. | Ընդամ. | գաղթած քաղաքը |
|-----------------|--------|-----|-----|---------|---------------|
| 1. Բաշբյուղ | 18 | 87 | 62 | 149 | Մուշից |
| 2. Սոգութիւն | 40 | -- | -- | մոտ 200 | Կարսից |
| 3. Գյուղի-Յող | 27 | 104 | 76 | 180 | Բասենից |
| 4. Ջելաբ-Կեչուտ | 33 | 110 | 97 | 207 | Բասենից |
| 5. Կապս | 31 | 85 | 55 | 118 | Բայազետից |
| Ընդամենը | 149 | | | 854 | |

Եթե նույնիսկ ի արդարացումն Գյուղմիում քաղաքաբնակներն տեղավորելու մասին Գաղթականական կոմիտեի որոշման՝ ընդունենք, որ արդեն XIX դ. 20-ական թվականների վերջերից սկսած, կառավարական շրջանակներում կարծիք էր ձևավորվում բնակավայրը քաղաքի վերածելու մասին⁴²⁰, ասպա ուղղակի անհնար է որևէ ինելամիտ բացատրություն գտնել կոմիտեի՝ արևմտահայ քաղաքաբնակ գաղթականներին գավառի ևս հինգ գյուղերում տեղավորելու որոշմանը համար: Վերջապես, արևմտահայերի գաղթը կազմակերպելիս կոմիտեի թույլ տված թերությունների գագաթնակետը մեր կարծիքով բայազետցիներից հետո բավականին մեծ թվով էրզրումցի գաղթականների՝ Փամբակ-Շորապյալի վաստանցիայում Հայտնվելը եղավ: Դա այն դեպքում, երբ սույն գավառներն ի սկզբանե նախատեսված էին միայն կարսեցիներով վերաբնակեցվելու համար, թեև գործնականում արդեն ընդունել էին նաև մեծ թվով բայազետցիների: Մնում է պարզել Փամբակ-Շորապյալում էրզրումցի գաղթականների Հայտնվելու պատճառը:

Թեև աչքի առաջ էին պարսկահպատակ Հայերի գաղթի կազմակերպման սիսակներն ու բացթողումները, սակայն ոռոսական կառավարությունն և մանավանդ՝ Կովկասյան կորպուսի գյխավոր Հրամանատար Պատկեհը նոր գաղթը կազմակերպելիս չփորձեցին անգամ դրանք վերացնել: Ժամանակին Պասկեիչն այն սիսակ կարծիքն ուներ, թե կգաղթեն ընդամենը 5000 պարսկահպատակ Հայ ընտանիքներ, մինչդեռ իրականում գաղթածների թիվը հասավ 8249 ընտանիքի: Թե այդ սիսակ Հաշվարկն ինչի հանգեցրեց, Հայտնի դարձավ 1829-32 թթ. կաստարված կամերալ ցուցակագրման ժամանակ, երբ պարզ դարձավ, որ ընդամենը երկու-երեք տարի հետո պարսկահպատակ Հայերի ներգաղթած 8249

⁴¹⁹ ՀՀ ՊԿՊԱ, ֆոն 93, ցուցակ 1, գործ 85, էջ 139-147, 266-282, գործ 86, էջ 13-21, 58-69, 280-288:

⁴²⁰ Ակոպյան Տ., Развитие Еревана после присоединения Восточной Армении к России, Сборник документов, 1801-1917 гг., Ер., 1978, стр. 79.

ընտանիքներից մնացել է 6946 ընտանիք կամ շուրջ 35560 մարդ⁴²¹: Նոյն սխալը Պասկվիչը կրկնեց նաև արևմտահայերի գաղթը կազմակերպելու: Դուռևս 1829 թ. հունվարին նա կարծում էր, թե գաղթելու են ընդամենը 8000 ընտանիքից ոչ ավելի և Գաղթականական կոմիտեին կարգադրեց պետական ամայի Հողատարածություններից բնակության վայրեր ընտրել միայն 8000 ընտանիքի համար⁴²²: Այդ պատճառով էլ գլխավոր Հրամանատարի կարգադրությունը կատարելիս Փամբակի և Շորագյալի գավառները տրամադրվեց միայն կարսեցիների վերաբնակեցման համար: Դրությունը բարդացավ 1830 թ. ապրիլի վերջերից, երբ Կարսի և Բայազետի փաշայություններից գաղթել էին արդեն ավելի քան 4880 ընտանիքներ, իսկ 7000-ից ավելի ընտանիքներ էլ պատրաստվում էին գաղթել էրզրումի փաշայությունից: Ահա այս ժամանակ էլ կոմիտեն որոշեց էրզրումցի գաղթականներից մի փոքր մասին տեղակորել Փամբակ-Շորագյալի դիստանցիայում⁴²³ կարսեցիների հետ համատեղ: Եվ երեկի թե այստեղ գաղթականների տեղակորումը սրանով էլ կավարտվեր, եթե չինեին էրզրումցիների գաղթի և նրանց տեղակորման ժամանակ առաջացած գժվարությունները: Բանն այն է, որ էրզրումցի գաղթականների վերջին խումբը (1800 ընտանիք, այդ թվում նաև 150 հայ-կաթոլիկներ) հասնելով Կարս, գաղթի վատ կազմակերպված լինելու պատճառով չկարողացավ շարունակել իր ճանապարհը դեպի Ախալցիսայի գավոտ և ստիպված եղավ սայրերի սպասելով ամիսներ շարունակ մնալ բաց երկնքի տակ: Ուստի ձմռան մոտենալու վտանգից զրդված՝ գաղթերի վերակացու Անսոսովի առաջարկով սրանք անցան Արաքսն ու բնակության վայրեր ընտրեցին ըստ իրենց ցանկության. մոտ 200 ընտանիք մեկնեց Փամբակի Մեծ Ղարաբիլիսա գյուղը, մյուսները ցրվեցին Շորագյալի գավառում: Բարդություններ առաջացրեց նաև էրզրումցի գաղթականների տեղակորումը: Կոմիտեի մշակած գաղթի կանոններից մեկը պարտավորեցնում էր քրիստոնյաններին տեղակորել միայն պետական Հողերի վրա: Արդեն գաղթականներին տեղակորելու ժամանակ պարզվեց, որ շատ հողեր, որ Գաղթականական կոմիտեի կողմից հաշվառվել էին որպես պետական ու ամայի, տերեր ունեն: Բանն այն է, որ տեղի մահմետականների մի մասն իր հողերը վաճառել էր մինչեւ պատերազմը, մյուս մասն էլ վաճառեցին պատերազմից հետո: Նոր Հողատերերն էլ իրենց էրթին ցանկանում էին դրանք նորեկներին տալ միայն մշակության համար: Օրինակ՝ Ախալցիսայում գաղթականների 1600 ընտանիքներ տեղակորվել էին իրը թե պետական Հողերի վրա, բայց հետագայում պարզվեց, որ այդ հողերը տերեր ունեն: Նորեկների ու հողատերերի միջև ծագած վեճը լուծվեց միայն ի. Պասկվիչի միջնորդությամբ, երբ վերջինս ստիպված եղավ պետական գումարներով

⁴²¹ Шопен И., Աշվ. աշխ., էջ 540; Երիցյան Ալ., Աշվ. աշխ., մաս Ա, էջ 333:

⁴²² История военных действий в Азиатской Турции в 1828 и 1829 годах, ч. 2, с. 291.

⁴²³ Դարրինյան Մ., Աշվ. աշխ., ԲՀԱ, Խ 3, Եր., 1977, էջ 8:

երկու անգամ թանկ գնով գնել այս հողերը կալվածատերերից և տալ գաղթականներին⁴²⁴:

Շորագյալի գավառում էրզրումցիները տեղափողվեցին Հետևյալ կերպ. առաջին խումբը (ինչպես արդեն նշել ենք, սույն բաժանումը պայմանական է և կատարվել է մեր կողմից), մոտ 200 ընտանիքներ, գաղթած հենց Կարին քաղաքից, տեղափողվեցին Գյումրիում և մեծամասամբ լինելով հայ-կաթոլիկներ, հիմնեցին «Ֆրանգների մաշլեն»⁴²⁶: Գյումրուց բացի էրզրումցիները տեղափողվեցին նաև Շորագյալի գավառի ևս 35 գյուղերում, Հետևյալ Հարաբերությամբ: Գավառի տարածք գաղթածների երկրորդ խումբը տեղափողվեց արդեն գոյություն ունեցող 56 գյուղերից 24-ում՝ Թաքնալի, Թավշան-Ղյաղ, Հոռոմ, Ջրախի, Քյալթառի, Մեծիտի, Իլի-Քիլիսա, Փոքր Ղանլիջա, Արթիկ, Սվան-Վերդի, Աղին, Ղեղաչ, Արմութի, Մահմուղուղ, Ղաղանջի, Մոլա-Գյոկսա, Սոգութի, Փոքր Քյափանակ, Չոռիկ, Նորաշեն, Թափառլլակ, Աղ-Քիլիսա, Օրթաքիլիսա, Դիրաքլար, և քանի որ նշված բոլոր գյուղերում էրզրումցիները տեղափողվել էին բնիկ շորագյալցիների, պարսկահպատակ Հայերի կամ էլ Արևմտյան Հայաստանի այլ շրջաններից գաղթածների հետ, ապա պարզել, թե այդ 24 գյուղերից յուրաքանչյուրում առանձին-առանձին կամ բոլորում միասին քանի ընտանիք էին նրանք, անհնար է: Էրզրումցի գաղթականների երրորդ խումբ՝ թվով 373 ընտանիք կամ 2107 մարդ (1207-ը արական, 900-ը իգական սեռի)⁴²⁷, հիմնականում գաղթած Բասենի, Խնուսի և Դերջանի գավառներից, Շորագյալի գավառում հիմնեց 11 գյուղ:

Այլուսակ 10

| Գյուղերը | ընտան. | ար. | իդ. | ընդամ. | որտեղից են գաղթել |
|------------------|--------|-----|-----|--------|-------------------------|
| 1. Ղիչաղ | 13 | 37 | 46 | 83 | Բասենի Մժնկերտ ամանից |
| 2. Մեծ Արրիսալի | 39 | 127 | 88 | 215 | Խնուսի Զեյուրմե գյուղից |
| 3. Փոքր Արրիսալի | 13 | 41 | 31 | 72 | Խնուսի Զեյուրմե գյուղից |
| 4. Իմիրիսանլի | 30 | 104 | 86 | 190 | Բասենի Քեռվիլ-Քեռբերից |
| 5. Ճլովիսանլի | 19 | 74 | 51 | 125 | Կարսո գյուղերից |
| 6. Գյուղի-Ցոլ | 27 | 104 | 76 | 180 | Բասենից |

⁴²⁴ Գեղամյանց Ե., Պատմական քաղվածքներ, պրակ 4, մաս 2, էջ 385-386:

⁴²⁵ Մաշտոցի անվան Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 74, վավ. 227, էջ 2:

⁴²⁶ Տեր-Դավթեանց Գ., Ալեքսանդրապոլ, «Մեղու Հայաստանի», 24 փետր., N 7, թիվիս, 1873, էջ 3:

⁴²⁷ ՀՀ ՊԿՊԱ, ֆոն 93, ցուցակ 1, գործ 85, էջ 131-138, 148-154, 155-165, 226-233, 240-244, գործ 86, էջ 13-21, 58-69, 79-90, 134-152, 169-171, 172-196:

Արմեն Հայրապետյան

| | | | | | |
|-------------------------------|-----|------|-----|------|--|
| 7. Զելաբ-Կեչուտ | 33 | 110 | 97 | 207 | Բասենից |
| 8. Սարիար | 42 | 115 | 101 | 216 | Բասենի Նուրիման Ագրակից |
| 9. Իլիհարի | 69 | 203 | 131 | 334 | Ներքին Բասենի Պատիճան գյուղից |
| 10. Հայկական Գյու- գարդարա | 16 | 56 | 45 | 101 | Վերին Բասենի Հաջի-Խա- լի և Ղոյշաթ գյուղերից |
| 11. Զաշուռ | 72 | 236 | 148 | 380 | Խնուսի Խողու գյուղից |
| Ընդամենը | 373 | 1207 | 900 | 2107 | |

Ընդ որում, դրանցից մեկում գրանցվեց գավառի Համար աննա-
խաղեա իրազարձություն, ինչի մասին Սրբազն Սինոդին Հայտնում էր
գաղթականների հոգեոր առաջնորդ Կարապետ արքեպիսկոպոսը 1837
թ. փետրվարի 7-ի իր նամակով «.... քրիստոնյաների Համատարած
գաղթի պայմաններում, էրզրումի փաշայության Խնուսի գավառի Զելիր-
մե գյուղից ի թիվս այլոց գաղթել և Շորագյալի գավառի Մեծ Արքունիքի
գյուղում են Համատափել նաև 25 ընտանիք բողոքականներ (ամենայն
Հավանականությամբ՝ նախկին թոնդրականներ-Ա. Հ.)»⁴²⁸: Նամակին ի
պատասխան՝ Սինոդը պարտավորեցնում է Կարապետ և Ալեքսան-
դրապոլի Ղուկաս արքեպիսկոպոսներին Համագործակցելով արմատա-
խիլ անել աղանդը Հայկական գյուղերից: Վերջիններիս Սինոդի
հրահանգն իրավործել Հավանաբար չի հաջողվել, քանզի արդեն 1837թ.
գեկտեմբերին Գյումրու հոգեոր Կառավարությունը Երևանի կոնսիստո-
րիայի միջոցով Սինոդին տեղեկացնում էր աղանդի՝ արդեն Գյումրիում
Հայոնվերու մասին և նույնիսկ նշում առանձին քաղաքացիների
անուններ, իսկ 1838 թ. փետրվարի 4-ին վերոհիշյալի մասին տեղեկաց-
վում է նաև Կովկասի կառավարիչը⁴²⁹: Այնուամենայնիվ, չնայած բոլոր
միջոցների գործադրմանը, այն արմատախիլ անել չի հաջողվում: Պաշտո-
նական փաստաթղթերից երևում է, որ այն գյուղերուն է ունեցել և՝ 1841
թ., և՛ դրանից հետո՝⁴³⁰:

Էրզրումցիների հետ միաժամանակ կամ մի փոքր ավելի ուշ Շո-
րագյալի գավառում Հայտնվեցին նաև որոշ թվով գաղթական բոշաներ:
Ընդ որում, 4 ընտանիք տեղավորվում է Հոռոմում⁴³¹, իսկ մնացածները
(Հավանաբար մոտ 30-40 ընտանիք)՝ Գյումրիում, ուր և Հիմնում են

⁴²⁸ Մաշտոցի անվան Մատենադարան, Ալ. Երիցյանի արխիվ, թղթ. 154, վավ. 28, էջ 1:

⁴²⁹ Նույն տեղում, էջ 2:

⁴³⁰ Նույն տեղում, էջ 3:

⁴³¹ Վանցյան Գրիգոր, Պատմական ակնարկ բոշաների անցյալից, «Սուրճ», N 7-8, Թիֆլիս, 1894, էջ 1074:

«Բոշի մահեն»⁴³²: Ազինում՝ կարսեցիների, ալաշկերտցիների ու խնուցիների հետ համատեղ հաստատվել էին սերաստացիներ, իսկ գավառի և յոթ գյուղերում Խլի Ղարաքիլիսա, Ղափլի, Փոքր Բեքանդ, Հաջի-Նազար-Ղուլի, Փոքր Ղանլիջա, Ղազարապատ, Սոգութիլի, այլոց հետ՝ միաժամանակ նաև մշեցիներ: Եվս մեկ գյուղ՝ Բաշգյուղը (Սարալանջ), մշեցիները հիմնեցին սեփական ուժերով՝ 18 ընտանիք կամ 149 մարդ⁴³³: Բացի այդ մշեցիներ կային նաև Գյումրիում, բայց թե կոնկրետ քանի՞ ընտանիք՝ անհայտ է:

Ամփոփենք մեր խոսքը Շորագյալի գավառում հաստատված պարսկահպատակ Հայերի և արևմտահայերի ընդհանուր թվաքանակի վերաբերյալ: 1828-31 թթ. ընթացքում Արևելյան Հայաստանից, Վրաստանից, Պարսկաստանից և մանավանդ Օսմանյան Թուրքիայից գաղթելով՝ Շորագյալի գավառում տեղափորկեցին ավելի քան 3591 ընտանիքներ կամ մոտ 20006 մարդ, որից 1250 ընտանիք կամ 6600-6800 մարդ (600 ընտանիք կարսեցիներ, 200 ընտանիք էրզրումցիներ, մոտ 300 ընտանիք բայազետցիներ, 30-40 ընտանիք բոշաներ և մոտ 100-120 ընտանիք էլ բասենցիներ ու մշեցիներ) հաստատվեց միայն Գյումրիում և դարձավ 1837թ.-ին Հիմնված Ալեքսանդրապոլ քաղաքի ազգաբնակչության կորիգը: Մնացած 2341 ընտանիքը կամ 13465 մարդը (7560-ը արական, 5905-ը իգական սեռի), այդ թվում՝ 4 ընտանիք բոշաներ, 25 ընտանիք բողոքականներ և 9 ընտանիք կամ 36 մարդ (27-ը արական, 9-ը իգական սեռի) մահմեղականներ տեղալիրվեցին գավառի գյուղերում՝ դրանց թիվը՝ 20-ից հասցնելով 76-ի: Գաղթականների տեղաբաշխումը գավառի գյուղերում միակերպ չեղափ. 32 գյուղերում Արևելյան Հայաստանի, Վրաստանի, Պարսկաստանի և Թուրքիայի տարրեր տարածքներից գաղթածները՝ թվով 1114 ընտանիք կամ 6399 մարդ (3635-ը արական, 2764-ը իգական սեռի) տեղափորկեցին միասին՝ դրանով անհնարին դարձնելով վերոհիշյալ գյուղեր գաղթածների թվի առանձին-առանձին պարզումը ըստ գաղթավայրերի: Սա հնարավոր եղավ միայն գավառի 34 գյուղերի համար և ներկայացնում է հետևյալ պատկերը: Շորագյալի գավառի 20 գյուղերում տեղալիրվել էին գուտ կարսեցիներ և կազմում էին 534 ընտանիք կամ 3249 մարդ (1754-ը արական, 1495-ը իգական սեռի): Երկու գյուղեր ընակեցվել են միայն բայազետցիներով, որ 54 ընտանիք էին կամ 240 մարդ (128-ը արական, 112-ը իգական սեռի): Իսկ մեկ գյուղ՝ միայն մշեցիներով՝ 18 ընտանիք կամ 149 մարդ (87-ը արական, 62-ը իգական սեռի): Գավառում համեմատաբար մեծաթիվ էին նաև բոլորից առանձին տեղափորկած էրզրումցիները, որ հաստատվել էին 11 գյուղերում և կազմում էին 373 ընտանիք կամ 2017 մարդ (1207-ը արական, 900-ը

⁴³² Հայրապետյան Ա., Գյումրի-Ալեքսանդրապոլ Հայաստանի առաջին կեսին, գԱԱ ԸՀՀԿ «Գիտական աշխատություններ», հատոր 4, Գյումրի, 2001, էջ 110-111:

⁴³³ ՀՀ ՊԿՊԱ, ֆոն 93, ցուցակ 1, գործ 85, էջ 139-144:

իրական սեռի): Ինչ վերաբերում է գավառի և 9 գյուղեր գաղթած-ներին, ապա ինչպես արդին նշել ենք, բացի նրանց քանակից՝ 248 ընտանիք կամ 1258 մարդ ուրիշ ոչինչ հայտնի չէ:

Դ) Ժողովրդագրական իրավիճակը գավառում ներգաղթից հետո

Թուրքմենչայի և Ադրիանապոլսի հաշտության պայմանագրերը իրավունք ընձեռեցին քրիստոնյաներին արտագաղթելու Պարսկաստանից և Օսմանյան Թուրքիայից: Զանգվածային այդ գաղթերը հիմնովին վերականգնեցին Արևելյան Հայաստանի բնակչության ժողովրդագրական պատկերը: Դրանք, իրենց կազմակերպման և իրականացման լուրջ թերություններով հանդերձ, օբյեկտիվորեն նպաստեցին Արևելյան Հայաստանի տարածքում և մասնավորապես Արևելյան Շիրակում կրկին հայահավաքման գործընթացին:

Հարցի նման կարևորությամբ է բացատրվում այն լուրջ հետաքրքրությունը, որ այդ իրադարձությունների նկատմամբ հանդես են բերել ինչպես ոռուս, այնպես էլ Հայ պատմաբանները: Այսպեսքարձր գնահատելով պարսկահպատակ Հայերի ներգաղթի նշանակությունը՝ Ս. Գլինկան գտնում է, թե քրիստոնյա բնակչության թվական աճը Ուռուսաստանի հարավային սահմաններում նպաստեց դրանց պաշտպանունակության ամրապնդմանը, ինչպես նաև տրնտեսական մեծ նշանակություն ունեցավ, քանի որ նորանվաճ ամայի տարածությունները բնակեցվեցին աշխատանք ժողովրդով, իսկ ինչ վերաբերում է պայմանագրի՝ Հայ ժողովրդին՝ բերած նպաստին, ապա «իրականացան Հայերի բերկալից հուսերը»⁴³⁴: Պարսկահպատակ Հայերի գաղթը Գլինկան դիտում է «ոչ թե անհատ մարդկանց, այլ հոգիների և սրտերի գաղթ», որպես «մինչև այժմ իր տեսակի մեջ միակ իրադարձությունը համաշխարհային տարեգության մեջ», իսկ արդեն արևմտահայերի արտագաղթը՝ որպես նախորդի՝ «նախասկզբնական գաղթի հետևանքն ու շարունակությունը»⁴³⁵:

Վերոհիշյալ պայմանագրերի, ինչպես նաև Արևելյան Հայաստանի և մասնավորապես Արևելյան Շիրակի ազգաբնակչության համար գաղթերի ունեցած ժողովրդագրական կարևոր նշանակության մասին Հայ պատմագրության մեջ, անշուշտ, անդպատճառումներ եղել են: Այսպես, Ե. Գեղամյանցը, Գ. Ք. Աղանյանը⁴³⁶ և ուրիշներ, հետեւելով ցարական պաշտոնական պատմագրության տեսակետին, ընդհանուր առմամբ դրական են գնահատել ինդրու առարկա պայմանագրերը, իսկ

⁴³⁴ Գլինկա Ը., նշվ. աշխ., էջ 44:

⁴³⁵ Նույն տեղում, էջ 49:

⁴³⁶ Նույն տեղում, էջ 141:

⁴³⁷ Գեղամյանց Ե., Կարապետ արքավիսկոպոս, «Փորձ», Տփխիս, 1876, N 1;

Աղանեան Գ., նշվ. աշխ.:

դրանցով արտոնված գաղթերն ուղղակի համարել ցարի «ողորմածությունը» հայ ժողովրդին: Սակայն չեն զացել նաև քննադատելու գաղթի կազմակերպման մեջ տեղ գտնած թերությունները: Ավելին, Եղեղամյանցը նույնիսկ հակված է այն մտքին, թե գաղթը իրագործվել է Հարկադրաբար և բոնի⁴³⁸: Ալ. Երիցյանը ևս նախորդ հեղինակների նման գտնում է, որ ոռուական կառավարության համար ակնհայտ էին հայերի ներգաղթից սպասվող օգուտները. «Ունենալ մի այնպիսի աշխատահր ու հոգով և մարմնով ոռուաներին նվիրված բազմաթիվ ժողովուրդ, որոնք կարող էին գալ և ծաղկեցնել Կովկասի ամայի տեղերը...»⁴³⁹: Առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում խնդրո առարկա հարցերի վերաբերյալ հայ ականավոր պատմաբան Լեոյի հայտնած տեսակետները: Վերջինս, ի տարբերություն մյուս հեղինակների, Հարցը քննում է պատմական ավելի լայն կտրվածքով: Բարձր գնահատելով գաղթերի գերն ու նշանակությունը հայահավաքման գործում Լեոն միաժամանակ նշում է, որ դրանք նախևառաջ թելադրված էին ոռուական պետովթյան շահերով, որը լրջորեն մտահոգված էր նոր դրաված տարածքները բնակեցնելու կայսրությանը հավատարիմ տարրով: Լեոն արևմտահայերի գաղթը բնորոշում է որպես «ժողովրդական ձգտման մի հզոր արտահպտություն՝ համաձարակ տարերային, որին ոչինչ չէր կարող կասեցնել»⁴⁴⁰: Լեոյի կարծիքով՝ այդ գաղթերը հայ ժողովրդի համար ունեցան և՛ դրական, և՛ բացասական նշանակություն, քանի եթե ներգաղթի հետևանքով կրկին մնեանում էր հայ ազգաբնակչությունը Արևելյան Հայաստանի տարածքում, փոխվում էր նրա բնակչության ազգագրական պատկերը հօգուտ հայ ժողովրդի, Հայերը նորից մեծամասնություն էին դառնում իրենց բնօրրանում, ապա մյուս կողմից՝ սահմանամերձ շրջանները հայ բնակչության արտագաղթերի հետևանքով աղետալիորեն դատարկվում էին հայերից⁴⁴¹: Եթե Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միացման նախօրեին ապագա Հայկական մարզում հայերը կազմում էին ազգաբնակչության ընդամենը 25%-ը⁴⁴² կամ մոտ 25150 մարդ, մինչդեռ օտարազգիները գերազանցում էին ավելի քան երեք անգամ՝ 81750 մարդ⁴⁴³: Հայաստանի Հանրապետության այժմյան տարածքի վրա 1827 թ. ապրում էր ընդամենը 97420 մարդ, որից հայեր էին միայն 45700-ը⁴⁴⁴: Արդեն 1831 թ. գաղթերի շնորհիվ միայն Հայկական մարզում հայերի թիվը

⁴³⁸ Գեղամյանց Ե., Պատմական բաղվածքներ, պրակ 3, էջ 240:

⁴³⁹ Նոյն տեղում, էջ 433:

⁴⁴⁰ Լեոն, Երկերի ժողովածու, հ. Դ, էջ 429:

⁴⁴¹ Լեոն, Երկերի ժողովածու, հ. Դ, էջ 484:

⁴⁴² Ավելաբեկյան Խ., նշվ. աշխ., էջ 16:

⁴⁴³ ՀՀ ԳԱԱ ՊԻ, Լեոյի ֆոնդ 1, ցուցակ 1, գործ 413, էջ 169:

⁴⁴⁴ Գրիգորյան Զ., Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միավորման նշանակությունը հայ ժողովրդի ազգահավաքման և գոյատևման համար, ՊԲՀ, Եր., 1978, N 3, էջ 21:

Հասավ 82377 մարդու, ⁴⁴⁵ ընդ որում, ներկայիս Հայաստանի Հանրապետության տարածքի վրա ապրողների ընդհանուր թիվը ⁴⁴⁶ նույն 1831 թ. կազմեց 161747 մարդ (այդ թվում՝ 110671-ը Հայեր), իսկ մեկ տարի անց՝ 168530 մարդ (116816-ը Հայեր)՝⁴⁴⁷:

Բնակչության թվական աճի և նրա կազմի խոշոր փոփոխություն նույն տարիներին գրանցվեց նաև մեր կողմից ուսումնասիրվող Շորագյալի գավառում: Այսպես, եթե 1826 թ. ուսումնաբանական պատերազմի նախօրեին, համաձայն արխիվային փաստաթղթերի տվյալների, գավառի 25 գյուղերում (Գյումրին նշված գյուղերի ցանկի մեջ չի մտել) ապրում էր ընդամենը 496 ընտանիք կամ 3040 մարդ (25 ընտանիք կամ 92 մարդ մահմեղականներ և 471 ընտանիք կամ 2948 մարդ Հայեր)՝⁴⁴⁸, ապա 1832 թ. գավառում գյուղերի թիվը հասավ 76-ի, ազգաբնակչությանը՝ մինչև 2516 ընտանիքի կամ 14445 մարդու (մահմեղականներ էին միայն 34 ընտանիքը կամ 128 մարդը, մնացածները Հայեր էին՝ թվով 2482 ընտանիք կամ 14317 մարդ՝⁴⁴⁹), իսկ երեք-չորս տարի անց այդ թիվը կազմեց 2830 ընտանիք կամ 15867 մարդ (ընդ որում, մահմեղականների թիվը մնաց անփոփոխ, փոխարենը՝ 314 ընտանիքով կամ 1422 մարդով գավառում ավելացավ Հայերի թիվը՝⁴⁵⁰):

Այժմ փորձենք ավելի մանրամասն ներկայացնել ժողովրդագրական իրավիճակը Շորագյալի գավառում գաղթերից հետո: XIX դարի 20-ական թվականների սկզբներից, կապված ցարական կառավարության խելամիտ ու շրջահայաց քաղաքականության և տարածաշրջանում տիրող ու ազմաքաղաքական փոքրիշատե կայուն իրավիճակի հետ, գավառի տարածքում նկատվեց բնակչության թվի նկատելի աճ (1817 թ. նվազագույն 174 ընտանիքի կամ 870 մարդու փոխարեն 1825 թ. կեսերին գավառի ազգաբնակչության թիվը հասավ 705 ընտանիքի, ընդ որում մեծամասնություն կազմում էին Հայերը հետեւյալ թվային հարաբերությամբ՝ 529 Հայկական ընտանիք մահմեղական 176 ընտանիքի դիմաց՝⁴⁵²): Սակայն, ինչպես նշել ենք, գավառի ազգաբնակչության թվի թեկուղ գանդաղ վերելքն էլ Հարատեւ չեղավ, քանի որ արդեն 1826 թ. սկզբներին ուսումնաբանական հարաբերությունների ծայրաստիճան սրումը հանգեցրեց գավառից գրեթե բոլոր մահմեղականների զանգվածային փախուստին: 1826 թ. հովհանների 11-ին՝ պատերազմը սկսվելուց 5 օր առաջ, Փոքր Բեքանդ (Փոքր Պարնի) գյուղից փախել էր Շորագյալի

⁴⁴⁵ Երիշեան Ա., նշվ. աշխ., մաս Ա, էջ 337:

⁴⁴⁶ Կորկուսյան Զ., նշվ. աշխ., էջ 182:

⁴⁴⁷ Ավելաբելյան Խ., նշվ. աշխ., էջ 26:

⁴⁴⁸ ՀՀ ՊԿՊԱ, ֆոն 93, ցուցակ 1, գործ 87:

⁴⁴⁹ Նոյն տեղում, էջ 85, 86, 87:

⁴⁵⁰ ՀՀ ՊԿՊԱ, ֆոն 93, ցուցակ 1, գործ 85, 86, 87:

⁴⁵¹ Նոյնը:

⁴⁵² Կուզեյ Մ. Ե., նշվ. աշխ., Կավազական սերունակ, տ. XXII, стр. 19.

Բուզաղ սովորանք՝ իր հետ Երևան տանելով մոտ 18 թաթարական և հայ ընտանիքներ: Պատերազմի առաջին խոկ օրը՝ Հուլիսի 16-ին, 30 ընտանիք թաթարների հետ Հոռոմ գյուղից փախուստի էր դիմել նաև Բուզաղի որդի Խալիֆա Ղուկի Աքուլը: Ի դեպ, վերջինս փոխուստի ժամանակ Ղարաքիլիսա գյուղի մոտ թալանվում է պարսիկների կողմից և ստիմված է լինում նույն այդ 30 ընտանիքների հետ վերադառնալ Արթիկ⁴⁵³: Միևնույն ժամանակ Գյումրուց թաթարական ընտանիքների մի փոքր խմբի հետ հեռացել էին այդ գյուղի թաթարական կառավարիչներ Մահմեդ Ալաբան բեկն ու նրա որդի Ուսահմ աղան, Ղուլիջանից՝ Բայթար-Օղին 40 թաթարական ու Հայկական ընտանիքներով, 99 թաթարական ընտանիքներ (59-ը Թավշան-Ղյաղ, իսկ 40-ը Թումարդաշ գյուղերից) լքել էին իրենց բնակավայրերը՝ Հեռանալով գետի թուրքական սահման, Հավանաբար Կարսի փաշայովթյան ուղղովթյամբ⁴⁵⁴: Մի զեկուցագրում, որ թագոված է 1826 թ. Հուլիսի 16-ով, նշում է, թե Շորապյալի շրջանի ամբողջ թաթարական ազգաբնակչությունը փախալ, բացառությամբ Գյումրու թաթարների, քանզի վերջիններիս փախուստի Համար խոչընդուռ Հանդիսացան այստեղ տեղակայված ոռուսական զորքերը⁴⁵⁵:

Մեր կարծիքով՝ ոչ բոլոր մահմերականներն են լքել գավառը: Միայն Գյումրիում տարբեր աղբյուրների ներկայացրած տվյալների համաձայն, նրանց թիվը տատանվում էր 20-ից 50 ընտանիքների միջև⁴⁵⁶: Եվ 25 ընտանիք մահմերականներ (92 մարդ) մնացել էին գավառի այլ չորս գյուղերում՝ թաթարական Գյոզալդարայում, Ղուլիջանում, Ղամալիիում և Ղութնի-Ղյաղում (Ղովտաշեն): Այնուամենայնիվ մահմերական տարրի համընդհանուր արտագաղթի հետևանքով գավառի 25 գյուղերում ազգաբնակչության թիվը 1826-1828 թթ. ուսու-պարակական պատերազմի նախօրյակին իջապ մինչեւ 496 ընտանիքի կամ 3040 մարդու (1617-ը արական, 1423-ը իգական սեռի):

Աղյուսակ 11. Շորապյալի գավառի ազգաբնակչության թիվը 1826թ.-ին

| գյուղերը | ընտան. | ար- | իդ. | ընդամ. | դավանանքը |
|--------------------|--------|-----|-----|--------|-------------------------|
| 1. Փոքր Ղարաքիլիսա | 157 | 461 | 452 | 913 | Հայ-առաքել, Հայ-կաթողիկ |
| 2. Թաքնալի | 3 | 13 | 10 | 23 | Հայ-առաքելական |
| 3. Բայանդուր | 46 | 173 | 152 | 325 | — |
| 4. Ղավկի | 16 | 48 | 40 | 88 | — |
| 5. Թավշան-Ղյաղ | 32 | 134 | 128 | 262 | — |

⁴⁵³ Поого В., Материалы к истории персидской войны 1826-1828гг., Кавказский сборник, т. ХХIII, стр. 15.

⁴⁵⁴ Поого В., նշվ. աշխ., Кавказский сборник, т. ХХIII, стр. 15.

⁴⁵⁵ Присоединение..., т. 2, док 133, стр. 209.

⁴⁵⁶ ՀՀ ԳԱԱ Թիւ, գործ 103, Ս. Թաճրապյանի նյութեր, տեսոր 1; Ն. Նիկողոսյանի նյութեր, տեսոր 1, գլ. 2:

Արմեն Հայրապետյան

| | | | | | |
|-----------------------------------|------------|-------------|-------------|-------------|-----------------------|
| <i>6. Բանդեան</i> | <i>2</i> | <i>4</i> | <i>3</i> | <i>7</i> | <i>—</i> |
| <i>7. Թաթարական Գյողադարս</i> | <i>15</i> | <i>33</i> | <i>28</i> | <i>61</i> | <i>մահմեդական</i> |
| <i>8. Հռում</i> | <i>63</i> | <i>236</i> | <i>194</i> | <i>430</i> | <i>Հայ-առաքելական</i> |
| <i>9. Ջրախիլ</i> | <i>2</i> | <i>3</i> | <i>2</i> | <i>5</i> | <i>—</i> |
| <i>10. Ղուփջան</i> | <i>6</i> | <i>12</i> | <i>10</i> | <i>22</i> | <i>մահմեդական</i> |
| <i>11. Ղասմալի</i> | <i>2</i> | <i>2</i> | <i>2</i> | <i>4</i> | <i>մահմեդական</i> |
| <i>12. Թալիբօղիլ</i> | <i>1</i> | <i>1</i> | <i>1</i> | <i>2</i> | <i>Հայ-առաքելական</i> |
| <i>13. Փոքր Բեքանդ</i> | <i>14</i> | <i>47</i> | <i>43</i> | <i>90</i> | <i>—</i> |
| <i>14. Քյաֆթառիլ</i> | <i>8</i> | <i>22</i> | <i>20</i> | <i>42</i> | <i>—</i> |
| <i>15. Մեջիսլի</i> | <i>14</i> | <i>38</i> | <i>34</i> | <i>72</i> | <i>—</i> |
| <i>16. Ղութնի-Ղլալ</i> | <i>2</i> | <i>3</i> | <i>2</i> | <i>5</i> | <i>—</i> |
| <i>17. Մեծ Քյափանակ</i> | <i>20</i> | <i>68</i> | <i>54</i> | <i>122</i> | <i>—</i> |
| <i>18. Հաջի-Նազար-Ղուփի</i> | <i>30</i> | <i>106</i> | <i>82</i> | <i>188</i> | <i>—</i> |
| <i>19. Եսաուլ</i> | <i>24</i> | <i>93</i> | <i>74</i> | <i>167</i> | <i>—</i> |
| <i>20. Իլի-Քիլսաս</i> | <i>1</i> | <i>2</i> | <i>2</i> | <i>4</i> | <i>—</i> |
| <i>21. Փոքր Ղուլիչան</i> | <i>23</i> | <i>73</i> | <i>57</i> | <i>130</i> | <i>—</i> |
| <i>22. Փալութիլ</i> | <i>1</i> | <i>5</i> | <i>1</i> | <i>6</i> | <i>—</i> |
| <i>23. Դուգենդ</i> | <i>8</i> | <i>29</i> | <i>22</i> | <i>51</i> | <i>—</i> |
| <i>24. Արթիկ</i> | <i>1</i> | <i>2</i> | <i>2</i> | <i>4</i> | <i>—</i> |
| <i>25. Մեծ Քեթի</i> | <i>5</i> | <i>9</i> | <i>8</i> | <i>17</i> | <i>—</i> |
| <i>Ընդամենը</i> | <i>496</i> | <i>1617</i> | <i>1423</i> | <i>3040</i> | |

Հայ պատմագրության մեջ Զ.Կորկոսյանից մկսած ձևավորվել է մի ոչ ճիշտ կարծիք, թե Շորապյալի գավառում 496 ընտանիք կամ 3040 մարդ կար ոչ թե 1826 թ., ինչպես մենք ենք գտնում, այլ 1828 թ. վերջերին՝ արևմտահայերի գաղթի նախօրեին։ Թյուրիմացության պատճառը՝ Հայաստանի Հանրապետության Պատմության պետական կենտրոնական արխիվի 93ֆոնդում պահպանվող 87 համարանիշը կրող փաստաթուղթն է,⁴⁵⁷ որ թվագրված չյինելով՝ առիթ է տվել Զ.Կորկոսյանին Հանգելու այն եզրակացությանը, թե վերոհիշյալ փաստաթուղթը վերաբերում է Շորապյալի գավառի ժողովրդագրական դրությանը արևմտահայերի գաղթի նախօրեին։⁴⁵⁸ Իսկ որպես ապացույց մեր այն կարծիքի, թե վերոհիշյալ թվերը արտացոլում են գավառի ազգաբնակչության իրական պատկերը 1826 թ. կեսերին, նշենք Հետևյալը.

⁴⁵⁷ ՀՀ ՊԿՊԱ, ֆոնդ 93, ցուցակ 1, գործ 87, էջ 1-157:

⁴⁵⁸ Կորկոսյան Զ., նշվ. աշխ., աղյուսակ N 2, էջ 102-104, 108-110, 122-124:

ՀՀ ՊԿՊԱ նույն 93 ֆոնդում պահպատճեն նաև արևմտահայերի գաղթից հետո Շորագյալի գավառի ժողովրդագրական իրավիճակը ներկայացնող 1842 թ. թվագրված երկու փաստաթղթեր «Պրաերկա կամբալինոց ուսումնական շատրվածք»⁴⁵⁹ վերնագրով՝ որ տալիս են բնիկ չորագյալցիների, 1828-1831թթ. ընթացքում գավառ գաղթածների և 1830-1840 թթ. արանքում Շորագյալում հաստատվածների ընդհանուր թիվը՝ 2830 ընտանիք կամ 15867 մարդ (8896-ը արական, 6971-ը իդական սեռի):

Աչա նախորդ և այս փաստաթղթերի համեմատական վերլուծությամբ պարզ է դառնում, որ պարսկահպատակ հայերի և արևմտահայերի գաղթերի պայմաններում Շորագյալի գավառի հինգ գյուղերում՝ Փոքր Ղարաբիլիսայում, Բայանդուրում, Թավշան-Ղշաղում, Հոռոմում և Փոքր Ղանլիջայում ազգաբնակչության թիվն աճելու փոխարեն նվազել է:

Աղյուսակ 12

| Ժողովրդագրական գրությունը 1826թ.-ին | | | | | Ժող. գրությունը 1829-32թթ.-ին | | | | |
|-------------------------------------|--------|------|-----|--------|-------------------------------|-----|-----|--------|--|
| Վուղերը | ընտան. | ար. | իգ. | ընդամ. | ընտան. | ար. | իգ. | ընդամ. | |
| 1. Փոքր Ղարաբիլիսա | 157 | 461 | 452 | 913 | 100 | 293 | 244 | 537 | |
| 2. Բայանդուր | 46 | 173 | 152 | 325 | 52 | 165 | 138 | 303 | |
| 3. Թավշան-Ղշաղու | 32 | 134 | 128 | 262 | 27 | 78 | 64 | 142 | |
| 4. Հոռոմ | 63 | 236 | 194 | 430 | 59 | 167 | 145 | 312 | |
| 5. Փոքր Ղանլիջա | 23 | 73 | 57 | 130 | 14 | 44 | 40 | 84 | |
| Ընդամենը | 321 | 1077 | 983 | 2060 | 252 | 747 | 631 | 1378 | |

Այսինքն նախկինում այստեղ բնակվող 321 ընտանիքի կամ 2060 մարդու⁴⁶⁰ փոխարեն, գաղթից անմիջապես հետո մնացել էր ընդամենը 252 ընտանիք կամ 1378 մարդ,⁴⁶¹ և դա այն դեպքում, երբ այս հինգ գյուղերում հաստատվել էին նաև մեծ թվով գաղթականներ Պարսկաստանից, Կարսից, Բայազետից, Կարինից և Արևմտյան Հայաստանի այլ շրջաններից: Վերոհիշյալ գյուղերում բնակչության թվի նվազման պատճառը մեր կարծիքով միայն մեկն է. ինչպես գիտենք, 1826-1828 թթ. ոռու-պարսկական պատերազմում պարսկական կողմից առաջին հարվածն իրենց վրա ընդունեցին Փամբակի և մանավանդ Շորագյալի գավառները: Արդեն 1826 թ. հունիսի 16-ին Հասան խանի երեք հազարանոց բանակը, հետապնդերով գյումրու ուղղությամբ նահանջող ոռուական զորքերին, մտավ Փոքր Ղարաբիլիսա և չնայած գյուղացիների համառ դիմադրությանը, չորսժամյա ճակատամարտից

⁴⁵⁹ ՀՀ ՊԿՊԱ, ֆոն 93, ցուցակ 1, գործ 85, 86:

⁴⁶⁰ Նոյն տեղում, գործ 87, էջ 2-29, 42-56, 62-74, 83-102, 144-151:

⁴⁶¹ Նոյն տեղում, գործ 85, էջ 13-21, 31-35, 84-97, գործ 86, էջ 306-309, 362-378:

Հետո զրավեց այն⁴⁶²: Նկարագրելով Փոքը Ղարաքիլիսայում պարսկական զորքերի գաղանությունները՝ Խ. Աբովյանը գրում է, թե նրանք սրախողող արեցին բոլոր ծերունիներին, այլրեցին բոլոր տները, թալանեցին նրանց ամբողջ ունեցվածքը, իսկ 200 դեռահամերի էլ գերի տարան⁴⁶³: Ժամանակակիցների ու ականատեսների վկայությամբ՝ պարսիկները, Հարձակման Հանկարծակիլության չնորհիվ, միայն Փոքը Ղարաքիլիսայից գերի տարան 1200 մարդ կամ 200 ընտանիքից ավելի՝ Այս մասին կան նաև այլ թվային տվյալներ: Այսպես, Կ. Հովհաննիսյանը վերոհիշյալ գեղաքերը նկարագրելիս գրում է, թե միայն Ղարաքիլիսայում գոհկել է 1115 մարդ (600-ը արական, 515-ը իբական սեռի): Նույն խնդրին անդրադառնալով՝ Գ. քաջանա Աղանյանը Ղարաքիլիսայում սոււժածների թիվը հասցնում է 2000 մարդու, այդ թվում 70 սպանված, 200 վիրավոր և 1730 գերի⁴⁶⁴: Այնուամենայնիվ, չնայած թվային տվյալների տարբերությանը, փաստ է մնում այն, որ պարսկական այս Հարձակումից հետո Շորագյալի գավառի Փոքը Ղարաքիլիսա գյուղը դարձավ զրեթե ամայի:

Մեր կարծիքով՝ ոռու-պարսկական պատերազմի ընթացքում Փոքր Ղարաբիլսայի ճակատագրին են արժանացել նաև մնացած չորս գյուղերը՝ Բայանդուրը, Թավշան-Ղյաղը, Հոռոմը և Փոքր Ղանիշխան, քանզի միայն այս կերպ է կարելի բացատրել պարսկահպատակ Հայերի ու արևմտահայերի զանգվածային գաղթերից հետո վերոհիշյալ հինգ գյուղերում բնակչության թվի պակասելը սկզբնական ցուցանիշը՝ 321 ընտանիքով կամ 2060 մարդով։

Ահա այս նկատառումներից ենելով է, որ մենք պնդում ենք, թե ՀՀ ՊԿՊ արխիվի 93 փոնդում պահպող 87 Համարանիշը կրող փաստաթուղթը վերաբերում է Շորագյալի ժողովրդագրական դրությանը ուսուաբարսկական պատերազմի նախօրեին:

Հետապայում՝ մինչև արևմտահայերի գաղթը, գավառում գրբանց-
վեց ազգաբնակչության թիվի հետևյալ ցուցանիշը: Արգեն 1826 թ.
վերջերին, կապված վերոհիշյալ հինգ գյուղերի ամայացման հետ,
գավառում գյուղերի թիվը հասավ 20-ի, միևնույն ժամանակ ազգա-
բնակչության թիվը նվազելով հասավ գրեթե 1817 թ. մակարդակին
(տե՛ս այլուսակ 2). 1826 թ. վերջերին՝ 1827 թ. սկզբներին մնացել էր
ընդամենը 175 ընտանիք կամ 980 մարդ (540-ը արական, 440-ը իգական
սեռի): Դրությունը փոխվեց միայն 1827 թ. սկզբներից, երբ ուսական
գորքերի հաջողված հակահարձակման և Փամբակ-Շորագյալի

⁴⁶² Конебу М. Е., Աշխարհագիր, Кавказский сборник, т. XXII, стр. 101.

⁴⁶³ Արովյան Խ., ճշգ. աշխ., 1999:

⁴⁶⁴ Утверждение русского владычества на Кавказе, т. 4, ч. 1, стр. 250.

⁴⁶⁵ Հայութեալ բառու պատմական համակած, Դ. Դ., Ա. Դ., էր. 250.

⁴⁶⁶ ՀՀ ՊԿՊԱ, ֆոնդ 332, գուցակ 1, գործ 120, էջ 1:

դիստանցիայի ազգատպրման հետևանքով ուղղմական գործողությունները տեղափոխվեցին երևանյան թատերաբեմ։ Արդեն այդ շրջանում Արևելյան Հայաստանի ու Վրաստանի տարածքներից գաղթեցին և Շորագյալի գավառում հաստատվեցին 50-60 ընտանիքներ։ Եվս 40-50 ընտանիքներ էլ գավառում հաստատվեցին ուսու-պարսկական պատերազմից հետո Արևելյան Հայաստան գաղթած պարսկահայատակ հայերի թվից, այնպես որ 1828 թ. վերջերին՝ արևմտահայերի գաղթի նախօրեին, գավառում արդեն կար 26 գյուղ՝ 280-300 ընտանիք բնակչությամբ։

Այսպիսին էր ժողովրդագրական իրավիճակը Շորագյալի գավառում մինչև արևմտահայերի գաղթը։ 1829-1831 թթ. Արևմտյան Հայաստանի տարբեր փաշայություններից Շորագյալի գավառ գաղթեցին շուրջ 3480 ընտանիքներ, գրանցվեց գավառի բնակչության թվի կտրուկ աճ։ Նախկին 20 կիսասպեր ու գրեթե անմարդաբնակ գյուղերի փոխարեն 1832 թ. գավառի գյուղերի թիվը հասավ 76-ի, իսկ բնակչությունը՝ 3866 ընտանիքի կամ 21695 մարդու, լնդ որում 1350 ընտանիքը կամ 7250 մարդը (3980-ը արական, 3270-ը իգական սեռի) բնակիում էր միայն Գյումրիում⁴⁶⁷, իսկ մնացած 2516 ընտանիքը կամ 14445 մարդ՝ գավառի 76 գյուղերում⁴⁶⁸։

Աղյուսակ 13. Շորագյալի գավառի ժողովրդագրական դրությունը 1832թ. ըստ «Պրօվերքա կամերանոց ուսուածական աշխատանք Ալեքսանդրովսկոց յեզարանու կամ 1842 թ. հայության համար» գրքի մատյանների

| գյուղի անունը | բնակչությունը | | | | գավառի նախքը | այդ թվում մահմեղական | | | |
|-------------------|---------------|-----|-----|------|--------------|----------------------|-----|-----|------|
| | ընտ. | ար. | իգ. | ընդ. | | ընտ. | ար. | իգ. | ընդ. |
| 1. Դահարլի | 64 | 183 | 160 | 343 | Հ-առաք. | — | — | — | — |
| 2. Բայանդուր | 52 | 165 | 138 | 303 | — | — | — | — | — |
| 3. Ղափի | 24 | 70 | 57 | 127 | — | — | — | — | — |
| 4. Քյալալի | 12 | 42 | 32 | 74 | — | — | — | — | — |
| 5. Թալշան-Ղըշ-լալ | 27 | 78 | 64 | 142 | — | — | — | — | — |
| 6. Ղաղարապատ | 54 | 194 | 128 | 322 | — | — | — | — | — |
| 7. Ավան-Վերդի | 42 | 138 | 119 | 257 | — | — | — | — | — |
| 8. Աղին | 28 | 79 | 62 | 141 | — | — | — | — | — |
| 9. Ղեղաչ | 17 | 50 | 44 | 94 | — | — | — | — | — |
| 10. Զիրպիլի | 17 | 68 | 48 | 116 | — | — | — | — | — |
| 11. Բողոքողան | 13 | 34 | 36 | 70 | — | — | — | — | — |

⁴⁶⁷ ՀՀ ՊԿՊԱ, ֆոն 93, ցուցակ 1, գործ 83, 84:

⁴⁶⁸ Նույն տեղում, գործ 85, 86, 87:

Արմեն Հայրապետյան

| | | | | | | | | | |
|---------------------------------------|----|-----|-----|-----|---------------------------------------|---|----|----|----|
| <i>12. Դպր-Քիլի-սա</i> | 26 | 86 | 68 | 154 | — | | | | |
| <i>13. Հոռոմ</i> | 59 | 167 | 145 | 312 | — | | | | |
| <i>14. Սոնգուովի</i> | 17 | 63 | 31 | 94 | — | | | | |
| <i>15. Սարիբաշ</i> | 8 | 21 | 21 | 42 | — | | | | |
| <i>16. Արմութիլի</i> | 23 | 62 | 52 | 114 | — | | | | |
| <i>17. Մահմուդ-</i> <i>ջուղ</i> | 60 | 212 | 137 | 349 | — | | | | |
| <i>18. Դիչաղ</i> | 13 | 37 | 46 | 83 | — | | | | |
| <i>19. Բաշզյուղ</i> | 18 | 87 | 62 | 149 | — | | | | |
| <i>20. Փոքր Արքիս-</i> <i>պալի</i> | 13 | 41 | 31 | 72 | — | | | | |
| <i>21. Մեծ Արքիսլա-</i> <i>լի</i> | 39 | 127 | 88 | 215 | — | | | | |
| <i>22. Եղանլար</i> | 34 | 112 | 93 | 205 | — | | | | |
| <i>23. Ղովիչան</i> | 34 | 99 | 80 | 179 | <i>Հ-առաք.</i> և <i>մահմեդ.</i> | 6 | 12 | 10 | 22 |
| <i>24. Ղասմալի</i> | 16 | 48 | 39 | 87 | | 2 | 2 | 2 | 4 |
| <i>25. Փոքր Բերա-</i> <i>նդ</i> | 26 | 96 | 82 | 178 | <i>Հ-առաք.</i> | | | | |
| <i>26. Քյափթառի</i> | 23 | 74 | 60 | 134 | — | | | | |
| <i>27. Ղազանչի</i> | 52 | 168 | 113 | 281 | — | | | | |
| <i>28. Մեջիսի</i> | 31 | 135 | 96 | 231 | — | | | | |
| <i>29. Ղովինի-Ղըշ-</i> <i>յադ</i> | 7 | 25 | 11 | 36 | <i>Հ-առաք.</i> <i>մահմեդ.</i> | 2 | 3 | 2 | 5 |
| <i>30. Իմիրիսանլի</i> | 30 | 104 | 86 | 190 | <i>Հ-առաք.</i> | | | | |
| <i>31. Թալիբօղի</i> | 18 | 60 | 54 | 114 | — | | | | |
| <i>32. Ճլովխանլի</i> | 19 | 74 | 51 | 125 | — | | | | |
| <i>33. Մոլլա-Գյոկ-</i> <i>չս</i> | 59 | 225 | 146 | 371 | — | | | | |
| <i>34. Բոլաղ-Քեսան</i> | 35 | 101 | 82 | 183 | — | | | | |
| <i>35. Սոկոթիլի</i> | 74 | 229 | 193 | 422 | — | | | | |
| <i>36. Թոմարսոսչ</i> | 32 | 112 | 90 | 202 | — | | | | |
| <i>37. Մեծ Քյափա-</i> <i>նալի</i> | 71 | 235 | 150 | 385 | — | | | | |
| <i>38. Զրախիլի</i> | 16 | 61 | 39 | 100 | — | | | | |
| <i>39. Փոքր Քյափա-</i> <i>նալի</i> | 17 | 68 | 50 | 118 | — | | | | |
| <i>40. Զոռուի</i> | 5 | 19 | 8 | 27 | — | | | | |
| <i>41. Փալութիլի</i> | 13 | 26 | 34 | 60 | — | | | | |

| | | | | | | | | | |
|--|-----|-----|-----|-----|---------------------|---|----|---|----|
| <i>42. Համի-Նազար-Ղուկի</i> | 42 | 137 | 90 | 227 | — | | | | |
| <i>43.Գյուրջի-Ցոլ</i> | 27 | 104 | 76 | 180 | — | | | | |
| <i>44.Շիշմակա</i> | 10 | 34 | 30 | 64 | — | | | | |
| <i>45.Ճղվար</i> | 24 | 102 | 72 | 174 | — | | | | |
| <i>46.Թաքնապի</i> | 20 | 64 | 66 | 130 | — | | | | |
| <i>47.Ալլահ-Քիլի-</i> <i>սս</i> | 7 | 22 | 6 | 28 | մահմեդ. | 7 | 22 | 6 | 28 |
| <i>48.Բանդեան</i> | 27 | 107 | 96 | 203 | Հ-առաք. | | | | |
| <i>49.Ջելար-Կե-</i> <i>չուտ</i> | 33 | 110 | 97 | 207 | — | | | | |
| <i>50.Դարբանդ</i> | 25 | 91 | 70 | 161 | — | | | | |
| <i>51.Սարիար</i> | 42 | 115 | 101 | 216 | — | | | | |
| <i>52.Շիրվանջուլ</i> | 56 | 169 | 152 | 321 | — | | | | |
| <i>53.Փոքր Քեթի</i> | 18 | 39 | 64 | 103 | — | | | | |
| <i>54.Նորաշեն</i> | 33 | 93 | 70 | 163 | — | | | | |
| <i>55.Թափաղոլ-</i> <i>լակ</i> | 27 | 92 | 66 | 158 | — | | | | |
| <i>56.Իլիսաբի</i> | 69 | 203 | 131 | 334 | — | | | | |
| <i>57.Ղըրիւ-Դագիր-</i> <i>ման</i> | 37 | 107 | 75 | 182 | — | | | | |
| <i>58.Ղողաթ</i> | 23 | 64 | 58 | 122 | Հ-առաք., մահմեդ. | 2 | 5 | 3 | 8 |
| <i>59.Հայկական</i> <i>Գյուղալբարա</i> | 16 | 56 | 45 | 101 | Հ-առաք. | | | | |
| <i>60.Ջաջուռ</i> | 72 | 236 | 148 | 384 | — | | | | |
| <i>61.Ար-Քիլիսա</i> | 37 | 117 | 100 | 217 | — | | | | |
| <i>62.Արքիալի Յ-</i> <i>րդ</i> | 32 | 92 | 78 | 170 | — | | | | |
| <i>63.Դմախողուսն</i> | 40 | 130 | 95 | 225 | — | | | | |
| <i>64.Թոփառի</i> | 52 | 141 | 98 | 239 | — | | | | |
| <i>65.Օրթաքիլիսա</i> | 35 | 109 | 78 | 187 | — | | | | |
| <i>66.Մնձ Փեթի</i> | 47 | 136 | 96 | 232 | — | | | | |
| <i>67.Եասուլ</i> | 34 | 108 | 75 | 183 | — | | | | |
| <i>68.Կաւու</i> | 31 | 64 | 54 | 118 | — | | | | |
| <i>69.Իլիւ-Քիլիսա</i> | 32 | 91 | 73 | 164 | — | | | | |
| <i>70.Փոքր Ղանիւ-</i> <i>ջա</i> | 14 | 44 | 40 | 84 | — | | | | |
| <i>71.Մնձ Ղանիւ-</i> <i>ջա</i> | 23 | 66 | 45 | 111 | — | | | | |
| <i>72.Արթիկ</i> | 101 | 336 | 307 | 643 | — | | | | |

Արմեն Հայրապետյան

| | | | | | | | | | |
|---------------------|------|------|------|-------|---------|----|----|----|-----|
| 73.Փոքր Ղարաբիսաս | 100 | 293 | 244 | 537 | — | | | | |
| 74.Դուզքենդ | 46 | 187 | 191 | 378 | — | | | | |
| 75.Դիրաքլար | 31 | 99 | 75 | 174 | — | | | | |
| 76.Թաթար-Գյողաղլարա | 15 | 33 | 28 | 61 | մահմեդ. | 15 | 33 | 28 | 61 |
| Ընդամենը | 2516 | 8100 | 6345 | 14445 | | 34 | 77 | 51 | 128 |

Գավառի գյուղական բնակչության ճնշող մեծամասնությունը՝ 2482 ընտանիքը կամ 14317 մարդը, որ կազմում է գավառի գյուղաբնակների 98.6% -ը, հայեր էին և բնակվում էին Շորագյալի 74 գյուղերում, այդ թվում չորսում՝ Ղուլիջանում, Ղասմալիում, Ղութնի-Ղյաղում և Ղողղաթում՝ 12 ընտանիք կամ 39 մարդ (22-ը արական, 17-ը իգական սեռի) կազմող մահմեղականների հետ համատեղ: Գավառի ևս երկու գյուղերում՝ Թաթարական Գյուղարքարայում և Ալյահ-Քիլիսայում բնակվում էին միայն մահմեղականներ և կազմում էին 22 ընտանիք կամ 89 մարդ (55-ը արական, 34-ը իգական սեռի): 1828-1831 թթ. գաղթերի հետևանքով գավառի գյուղաբնակների թիվը նվազագույն 175 ընտանիքից կամ 980 մարդուց (1828 թ.), որից 25 ընտանիքը կամ 92 մարդը մահմեղականներ էին (50-ը արական, 42-ը իգական սեռի), աճեց մինչև 2516 ընտանիքի կամ 14445 մարդու, որում մահմեղականների թիվը պակասելու կամ գոնե անփոփոխ մնալու փոխարեն հասավ մինչև 34 ընտանիքի (128 մարդու) և կազմեց գավառի գյուղերում ապրողների միայն 1,4 %:

Հատկանշական է, որ այս խնդրին՝ պարակահպատակ հայերի և արևմտահայերի ներգաղթից հետո Շորագյալի գավառի ժողովրդագրական գրությանը անդրադառնալիս Հ. Սարգսյանն իր «Население Восточной Армении в XIX-начале XXв.» աշխատության մեջ, օգտվելով այն նույն աղբյուրներից, ինչ և մենք⁴⁶⁹, գրում է, թե 1828-1831 թթ. գանգվածային գաղթերի արդյունքում, Շորագյալի գավառի ազգաբնակչության թիվը հասավ 4220 ընտանիքի կամ 23050 մարդու (13450-ը արական, 9600-ը իգական սեռի), որից 2870 ընտանիքը կամ 15800 մարդը (9470-ը արական, 6330-ը իգական սեռի) հեղինակի կարծիքով գավառի գյուղական ազգաբնակչությունն էր, իսկ մնացած 1350 ընտանիքը կամ 7250 մարդը՝ Գյումրունը⁴⁷⁰: Համակարծիք լինելով Հ. Սարգսյանի հետ Գյումրու ազգաբնակչության թիվի հարցում, այնուամենայնիվ չենք կիսում նրա կողմից առաջ քաշված տեսակետը Շորագյալի գավառում արդեն 1832 թ. ընդհանուր առմամբ 4220 ընտանիքի և այդ թվից 2870 ընտանիքի՝ գավառի 76 գյուղերում

⁴⁶⁹ ՀՀ ՊԿՊԱ, ֆոնդ 93, գործ 83, 84, 85, 86, 87:

⁴⁷⁰ Саркисян Г., Население Восточной Армении в XIX-начале XXв., Еր., 2002, стр. 93.

առկայության մասին: Տարրընթերցման պատճառը, կարծում ենք, հետեւյան է. ՀՀ ՊԿՊ արխիվում պահպող 85 և 86 համարանիշերը կրող փաստաթղթերը ունեն երկու վերնագրեր՝ «Պրօվերկա կամեֆալունոց ուսումնական շնորհած աշխատավայրում 1842 թվականին» և «Օ Տյրեպիկան ուսումնական շնորհած աշխատավայրում 1842 թվականին»:

Համարանիշը կողմնորոշվել է նշված վերնագրերից վերջինով և 1842-ով թվագրված «Կամերալ ցուցակագրման վերստուգման» արդյունքներն ամբողջությամբ վերագրել է միայն 1832 թվականին, քանզի միայն այս կերպ կարելի է բացատրել Շորագյալի գավառում 1832 թ. ազգաբնակչության թվի նման բարձր ցուցանիշը: Այսուհետև շարունակելով իր խոսքը, հեղինակը նշում է, թե ևս մեկ աշխարհագիրը Շորագյալի գավառում անցկացվել է արդեն 1842 թվականին⁴⁷¹:

Նախեառաջ նշենք, որ 1842 թ. Շորագյալի գավառում նոր աշխարհագիր չի անցկացվելուրեմն, 1842-ով թվագրված «Պրօվերկա կամեֆալունոց ուսումնական շնորհած աշխատավայրում» առաջարկության համարանիշը չեն: ՈՒղղակի 1842 թվականից առաջ կատարվել է «Կամերալ ցուցակագրման վերստուգում», որի արդյունքները, Հասոր առ Հասոր հավաքվելով, կազմվել են 1842 թ.: Իսկ որպես մեր ասածի ապացույց՝ նշենք, որ Զ. Կորկոտյանն իր «Խորհրդագյուղին Հայաստանի բնակչությունը վերջին Հարյուրամյակում» աշխատաթյան մեջ սույն խնդրի մասին գրում է. «Լենինսկան քաղաքի Բ աշխարհագիրի յերկատոր ձեռագրերի կողքի վրա գրված է «1842 թ.», բայց ներսում գրված է «Կամեֆալունոց ուսումնական թվականի մեջ սույն խնդրի մասին գրում»⁴⁷²:

Այժմ անդրագաղանակ ներգաղթերից հետո Շորագյալի գավառի ժողովրդագրական լրությունը նկարագրելիս մեր և Հ. Սարգսյանի կողմից ներկայացված թվային տվյալների տարբերության հարցին: Զնայած այն բանին, որ 1830-ական թվականներին անցկացված աշխարհագրերի ժամանակ բացթղումներն անխուսափելի են. կափոքրահասակների ակնբախ թերհաշվառում, երբ տասնյակ ընտանիքների շարքում 1-5 տարեկան երեխանների կարելի է հանդիպել Հազիկ մեկ-երկուսում, իսկ «Օ» տարեկաններ ընդհանրապես գրյություն չունեն, աշխարհագրի մեջ չեն մտել արտոնյալ դասակարգերը (ազնվականներ, հոգևորականներ և այլն), ինչպես նաև ոչ պիտական հողերի վրա բնակվողները և այն: Բայց և այնպես կար մի ողերիչ փաստ՝ 1842-ով թվագրված «Պրօվերկա կամեֆալունոց ուսումնական թվականի մեջ սույն խնդրի մասին գրում» աշխարհագրի վերաբերյալ տեղեկության վերջում գրված են «Հօթու ուսումնական թվականի մեջ սույն խնդրի մասին գրում»:

⁴⁷¹ Նոյն տեղում, էջ 101-103:

⁴⁷² Կորկոտյան Զ., նշվ. աշխ., էջ XXVIII:

ուագրերը, ինչպես արդեն մեկ անգամ նշել ենք, թույլ են տայիս միաժամանակ առանձնացնելու 1828-1831 թթ. գաղթածներին և 1830-1840 թթ. ընթացքում վերաբնակվածներին:

Հավանաբար հմուտ ազգագրագետի աչքից վրիակել է ձեռագրերում գրյուղյուն ունեցող վերոհիշյալ բաժանումը, ինչն էլ հիմք է հանդիսացել փաստաթղթերի թվային տվյալներն ամբողջությամբ վերագրելու միայն բնիկ շորապյացիներին և 1828-1831 թթ. ընթացքում գաղթածներին և 1832 թ. Շորապյալի գավառի ժողովրդագրական դրության վերաբերյալ ստանալու հետեւյալ պատկերը. 4220 ընտանիք կամ 23050 մարդ (ավելի ճշգրիտ ենք համարում նույն ձեռագրերն ուսումնամասիրելիս մեր ստացած 4180 բնտանիք կամ 23117 մարդ թիվը): Սա մի թիվ է, որ մեր կարծիքով ներկայացնում է գավառի ժողովրդագրական իրավիճակն արդեն 1830-ական թվականների վերջերին և 1840-ական թվականների սկզբներին, այսինքն վերոհիշյալ ձեռագրերի կազմակորման ուղղակի նախօրեին: Իսկ մինչ այդ տեղի ունեցան հետեւյալ գեպերերը: 1828-1831 թթ. գանգվածային ներգաղթերից անմիջապես հետո գեալի Շորապյալի գավառ սկսվեց ներգաղթի մի նոր փուլ և՝ արդեն Արևելյան Հայաստանի տարածքից՝ Ապարանից, Փամբակից, Ծալկայից: Այսպես, 1833 թ. սկզբներին Ապարանի մահալի Թաքառի գյուղի բնակիչ Հակոբ Բաղդասարովի մահից հետո, Շորապյալի գավառի Մեծ Ղանլիջա գյուղ են գաղթում նրա այրին՝ Գյուղգաղը, որիին՝ Թորոսը և դուստրը՝ Մարիամը⁴⁷³: Նույն թվականին Զանգիի մահալի Զանգիթափիա գյուղից գաղթում և Շորապյալի գավառի Մարիբաշ (Հայկասար) գյուղում է Հաստատվում Միլիտիչ Ամիրովն իր Հարազատներով՝ 5 ընտանիք կամ 21 մարդ⁴⁷⁴, իսկ 1834 թ. ապրիլի վերջերին Ապարանում գաղթականների պրիստավ Կուրգանովի թույլտվությամբ Շորապյալի գավառի Ղազարապատ և Աղին գյուղերում են վերահաստատվում Ապարանի մահալի Կոնդակսագ գյուղից ելած 50 ընտանիքներ կամ 216 մարդ (118-ը արական, 98-ը իգական սեռի)⁴⁷⁵: 1834թ. մայիսի 23-ին Ապարանի Մարիբուղաղ գյուղից Շորապյալի գավառի Ավան-Վերդի գյուղում են տեղափորվում նախկինում Պարսկաստանից գաղթած Մարկոս Մարգարովի, Օհան և Մարգիս Հարությունովների ընտանիքները՝ 22 մարդ⁴⁷⁶: Ապարանի մահալից գեալի Շորապյալի գավառ նախկին պարսկահապատակ Հայերի վերաբնակեցումը շարունակվում է նաև Հաջորդ ամիսներին: Հունիսի սկզբներին Բաշ-Ապարանից Շորապյալի Փոքր Քյափանակ գյուղում է վերահաստատվում 1828 թ. Պարսկաստանից գաղթած Հովհան Հախնազարովն իր ընտանիքով (5

⁴⁷³ՀՀ ՊԿՊԱ, ֆոն 90, ցուցակ 1, գործ 445, էջ 68-70:

⁴⁷⁴Նույն տեղում, էջ 76-80:

⁴⁷⁵Նույն տեղում, գործ 447, էջ 7:

⁴⁷⁶Նույն տեղում, էջ 1-4:

մարդ՝⁴⁷⁷, 7 մարդ՝ Հայրապետ Թորոսովի ընտանիքը, Փոքր Բեքանս է տեղափոխվում Ապարանի Աքմաքենսո գյուղից, 5 ընտանիքներ էլ՝ Հովհաննես Հազրանովի, Սիմոն Սարգսովի, Մուրադ Հակոբովի, Գասպար Մելիքովի և Սարգսո Թաթոսովի գլխավորությամբ, Համաձայն Ապարանում գաղթականների պրիստավ Կուրգանովի 1834 թ. հունիսի 29-ին Հայկական մարզի կառավարությանը ներկայացրած գեկոյցագրի, Զանգիի մաշալի Մալիքենդ գյուղից տեղափոխվել էին Գյումրի գյուղ՝⁴⁷⁸ Նույն այդ ժամանակահատվածում Գյումրիում էին վերահաստատվել նաև Փամբակի Ղարաբիլսա գյուղից գաղթած մոտ 100-110 ընտանիք նախկին Էրզրումցիներ՝⁴⁷⁹, իսկ գավառի գյուղերում՝ 182 ընտանիք կամ 674 մարդ (տվյալները վերաբերում են միայն արական սեռին), գաղթած Ծալկայի շրջանից:

1830-ական թվականների կեսերին գրանցված այս նոր ներգաղթը դեպի Շորապյակի գավառ, մեր կարծիքով պիտի որ ընդունած լիներ շատ ավելի մեծ մասսաբներ, քանզի 1842-ով թվագրված «Կամերալ ցուցակագրման վերատուգում» ձեռագրերում նորեկ բնակչությամբ համարված գյուղերի թիվը հասնում էր 30-ի, իսկ դրանցում տեղափորվածների թիվը՝ 314 ընտանիքի կամ 1422 մարդու (796-ը արական, 626-ը իգական): Այս ամենի հետևանքով է, որ արդեն XIX դ. 30-ական թվականների վերջին գավառի ազգաբնակչության թիվը հասավ ընդհուպ մինչև 4180 ընտանիքի կամ 23117 մարդու (12876-ը արական, 10241-ը իգական սեռի), որից գավառի միայն գյուղական ազգաբնակչությունը կազմում էր 2830 ընտանիք կամ 15867 մարդ (8896-ը արական, 6791-ը իգական սեռի):

Աղյուսակ 14. Շորապյակի գավառի ժողովրդագրական դրությունը XIX դարի 30-ական թվականների վերջերին

| գյուղի անունը | 1830-1840թթ.-ին գաղթածներ | | | | գավառ-նանք | 1842թ. կամերալ ցուցակա- գրման տվյալներով | | | |
|---------------|------------------------------|-----|-----|------|------------|---|-----|-----|------|
| | ընտ. | ար. | իգ. | ընդ. | | ընտ. | ար. | իգ. | ընդ. |
| 1.Դահարլի | | | | | Հ.-առաք. | 64 | 183 | 160 | 343 |
| 2.Բայսանուր | | | | | — | 52 | 165 | 138 | 303 |
| 3.Ղափի | | | | | — | 24 | 70 | 57 | 127 |

⁴⁷⁷ Նոյն տեղում, էջ 11-12:

⁴⁷⁸ Նոյն տեղում, զործ 447, էջ 32-33:

⁴⁷⁹ Քաջքերումի, Ղարաբիլսա, «Մեղու Հայաստանի», 27 հունվարի, N 3, Թիֆլիս, 1873, էջ 3-4:

⁴⁸⁰ Օճօրնության ռուսական ազգագրական շարժումների պատմությունից, Եր., 1958, էջ 85:

⁴⁸¹ ՀՀ ՊԿՊԱ, ֆոնդ 93, ցուցակ 1, զործ 85, էջ 29-30, 35-37, 83, 103-105, 107-108, 114, 135-138, 144-147, 162-165, 193-194, 200-202, 233, 314-316, 321-323, զործ 86, էջ 3-5, 12, 36, 304-305, 336-338:

Արմեն Հայրապետյան

| | | | | | | | | | |
|--------------------------|-----------|-----------|-----------|------------|-----------------------------|-----------------|-------------------|-------------------|-------------------|
| 4.Քելալի | 11 | 29 | 25 | 54 | — | 23 | 71 | 57 | 128 |
| 5.Ղաղաղասպատ | 30 | 71 | 62 | 133 | — | 84 | 265 | 190 | 455 |
| 6.Թագչան-Ղաղաղ | 16 | 36 | 31 | 67 | — | 43 | 114 | 95 | 209 |
| 7.Սլան-Վերդի | 8 | 26 | 21 | 47 | — | 42 | 138 | 119 | 257 |
| 8.Աղին | 20 | 47 | 36 | 83 | — | 28 | 79 | 62 | 141 |
| 9.Ղեղաչ | 3 | 4 | 3 | 7 | — | 17 | 50 | 44 | 94 |
| 10.Զիրպիլի | 8 | 19 | 8 | 27 | — | 17 | 68 | 48 | 116 |
| 11.Ղզլ-Քիլսաս | 22 | 55 | 41 | 96 | — | 26 | 86 | 68 | 154 |
| 12.Բողոքողան | 8 | 23 | 16 | 39 | — | 13 | 34 | 36 | 70 |
| 13.Հոռոմ | | | | | Հ.-առաք. բոշ | 55 4 | 167 -- | 145 -- | 312 -- |
| 14.Սոնգուռի | 12 | 27 | 26 | 53 | Հ.-առաք. | 29 | 90 | 57 | 147 |
| 15.Սարիբաշ | 5 | 14 | 7 | 21 | — | 13 | 35 | 28 | 63 |
| 16.Արմութիլի | 2 | 5 | 3 | 8 | — | 25 | 67 | 55 | 122 |
| 17.Մահմուդիուղ | | | | | — | 60 | 212 | 137 | 349 |
| 18.Ղփչաղ | 17 | 50 | 30 | 80 | — | 30 | 87 | 76 | 163 |
| 19.Բաշյուղ | 16 | 47 | 36 | 83 | — | 34 | 134 | 98 | 232 |
| 20.Փոքր Արբիկալա- | 13 | 44 | 40 | 83 | — | 26 | 85 | 71 | 156 |
| 21.Մեծ Արբիկալի | 17 | 39 | 27 | 66 | — | 56 | 166 | 115 | 281 |
| 22.Եղմնար | | | | | — | 34 | 112 | 93 | 205 |
| 23.Ղովիչան | | | | | Հ.-առաք. մահմեդ. | 28 6 | 87 12 | 70 10 | 157 22 |
| 24.Ղասմալի | 4 | 8 | 7 | 15 | Հ.-առաք. մահմեդ. | 18 2 | 54 2 | 44 2 | 98 4 |
| 25.Փոքր Բեքանդ | 9 | 24 | 15 | 39 | Հ.-առաք. | 35 | 120 | 97 | 217 |
| 26.Քյաֆթառի | 9 | 19 | 20 | 39 | — | 32 | 93 | 80 | 173 |
| 27.Ղաղանչի | | | | | — | 52 | 168 | 113 | 281 |
| 28.Մեջիսիլի | | | | | — | 31 | 135 | 96 | 231 |
| 29.Ղուժնի Ղըշաղ | 3 | 8 | 4 | 12 | Հ.-առաք. մահմեդ. | 8 2 | 30 3 | 13 2 | 43 5 |
| 30.Իմբիրմանիլի | 3 | 8 | 6 | 14 | Հ.-առաք. | 33 | 112 | 92 | 204 |
| 31.Թալիբօղիլի | | | | | — | 18 | 60 | 54 | 114 |
| 32.Ճողիսանիլի | | | | | — | 19 | 74 | 51 | 125 |
| 33.Մոլլա-Կյոկչա | | | | | — | 59 | 225 | 146 | 371 |
| 34.Բողադ-Քեսան | | | | | — | 35 | 101 | 82 | 183 |

| | | | | | | | | | |
|----------------------------|----|----|----|----|---------------------|---------|---------|---------|----------|
| 35.Սոգութիթի | | | | | — | 74 | 229 | 193 | 422 |
| 36.Թոմարտաշ | | | | | — | 32 | 112 | 90 | 202 |
| 37.Մեծ Քյափանակի | | | | | — | 71 | 235 | 150 | 385 |
| 38.Ջրախովի | 9 | 28 | 34 | 62 | — | 25 | 89 | 73 | 162 |
| 39.Փոքր Քյափանակի | 12 | 33 | 30 | 63 | — | 29 | 101 | 80 | 181 |
| 40.Ջողիկի | 9 | 36 | 31 | 67 | — | 14 | 55 | 39 | 94 |
| 41.Գյուրջի-Յովի | | | | | — | 27 | 104 | 76 | 180 |
| 42.Փալութիթի | 9 | 36 | 31 | 67 | — | 22 | 62 | 65 | 127 |
| 43.Հաջի-Նազար-Ղույի | | | | | — | 42 | 137 | 90 | 227 |
| 44.Շիլթափա | | | | | — | 10 | 34 | 30 | 64 |
| 45.Ճպիլար | 1 | 1 | 3 | 4 | — | 25 | 103 | 75 | 178 |
| 46.Թաքնալի | | | | | — | 20 | 64 | 66 | 130 |
| 47.Ալլահ-Քիլիսա | | | | | մահմեդ. | 7 | 22 | 6 | 28 |
| 48.Բանդևան | | | | | Հ.-առաք. | 27 | 107 | 96 | 203 |
| 49.Զելաբ-Կէջուտ | | | | | — | 33 | 110 | 97 | 207 |
| 50.Դարբանդ | | | | | — | 25 | 91 | 70 | 161 |
| 51.Սարիփար | | | | | — | 42 | 115 | 101 | 216 |
| 52.Շիրվանջուղ | | | | | — | 56 | 169 | 152 | 321 |
| 53.Փոքր Քեթի | | | | | — | 18 | 39 | 64 | 103 |
| 54.Նորաշեն | | | | | — | 33 | 93 | 70 | 163 |
| 55.Թափաղովակի | | | | | — | 27 | 92 | 66 | 158 |
| 56.Իլիփարի | | | | | — | 69 | 203 | 131 | 334 |
| 57.Լըրին-Դափիրման | | | | | — | 37 | 107 | 75 | 182 |
| 58.Ղոլզաթ | | | | | Հ.-առաք. մահմեդ. | 21 2 | 59 5 | 55 3 | 114 8 |
| 59.Հայկ.Գյողալդարա | | | | | Հ.-առաք. | 16 | 56 | 45 | 101 |
| 60.Զաջուռ | | | | | — | 72 | 236 | 148 | 384 |
| 61.Աղ-Քիլիսա | | | | | — | 37 | 117 | 100 | 217 |
| 62.Արբիսալի Յ-րդ | | | | | — | 32 | 92 | 78 | 170 |
| 63.Ղոնախղուան | | | | | — | 40 | 130 | 95 | 225 |
| 64.Թոփառվի | | | | | — | 52 | 141 | 98 | 239 |
| 65.Օրթաքիլիսա | | | | | — | 35 | 109 | 78 | 187 |
| 66.Մեծ Քեթի | | | | | — | 47 | 136 | 96 | 232 |

Արմեն Հայրապետյան

| | | | | | | | | | |
|--|-----|-----|-----|------|----------|------|------|------|-------|
| <i>67. Եսաուլ</i> | | | | | — | 34 | 108 | 75 | 183 |
| <i>68. Թաթար·</i> <i>Գորգարարա</i> | | | | | մահմեդ. | 15 | 33 | 28 | 61 |
| <i>69. Իլլ-Քիլսա</i> | | | | | Հ.-առաք. | 32 | 91 | 73 | 164 |
| <i>70. Փոքր Ղանղջա</i> | | | | | — | 14 | 44 | 40 | 84 |
| <i>71. Արթիկ</i> | 10 | 22 | 18 | 40 | — | 111 | 358 | 325 | 683 |
| <i>72. Մեծ Ղանղջա</i> | 8 | 19 | 10 | 29 | — | 31 | 85 | 55 | 140 |
| <i>73. Փոքր Ղարաքիլի-</i> <i>սա</i> | | | | | — | 100 | 293 | 244 | 537 |
| <i>74. Դուզբենդ</i> | 15 | 37 | 25 | 62 | — | 61 | 224 | 216 | 440 |
| <i>75. Դիլաքլար</i> | 5 | 15 | 9 | 24 | — | 36 | 114 | 84 | 198 |
| <i>76. Կապս</i> | | | | | — | 31 | 64 | 54 | 118 |
| <i>Ընդամենը</i> | 314 | 796 | 626 | 1422 | | 2830 | 8896 | 6971 | 15867 |

Այսպիսին էր Շորագյալի գավառի ժողովրդագրական վիճակը 1828-1831 թթ. գաղթերից հետո և մինչև 30-ական թվականների վերջերը, այսինքն՝ Ալեքսանդրապոլի գավառի ստեղծման նախօրեին:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

**ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԳԱՎԱՌԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ
ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԱՆՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ**

**Ա) Ակերսանդրապոլի գավառի կազմավորումն ու վարչատարածքային
սահմանները XIX դարի 30-40-ական թվականներին**

Տարածաշրջանում կուտակված ուազմաքաղաքական, տնտեսական, սոցիալական, ազգային և Հոգևոր խնդիրների առավել նպատակահարմար լուծումների որոնման հրամայական անհրաժեշտությունը հանգեցրեց Ռուսաստանի Անդրկովկասյան տիրույթների վարչատարածքային նոր բաժանումների, որոնք սկսեցին կյանքի կոչվել 1840 թ. սկսած:

Ի դեպ, XIX դարի 30-ական թվականները հիրավի նշանակալից եղան Շիրակի և ամբողջ Արևելյան Հայաստանի պատմության մեջ՝ շատ բանով կանխորոշելով խնդրո առարկա տարածքի տեղն ու նշանակությունը Անդրկովկասի հետագա վարչատարածքային բաժանումների համակարգում: Այս տեսակենտից XIX-ր. 30-ական թվականները նշանավորվեցին մի քանի իրադարձություններով, որոնք մեր կարծքով էական ազդեցություն ունեցան և նախապատրաստեցին 1840-ական թվականների վարչաբաղաքական այնքան կարևոր բարեփոխումները:

Այսպես, արդեն կոմս Պատկեչը ցարին ներկայացրած 1829թ. մայիսի 19-ի իր գեկուցագրում առաջինն ահազանգեց անդրկովկասյան երկրամասում գոյություն ունեցող կառավարման մեխանիզմի անարդյունավետության վերաբերյալ⁴⁸²: «Գավառներում և դիստանցիաներում, -գրում էր Պատկեչը, - ժղովուրդը շատ մեծ հալածանքներ է կրում, պաշտոնատներում գործերն ընթանում են դանդաղ և կողմնակալորեն, բնակիչները օրենքներում առհասարակ քիչ են գտնում հովանավորություն և իրենց կարիքների նկատմամբ ուշադրություն, իսկ վրացական դիստանցիաներում և մահմեդական սլրովինցիաներում գլխավոր պրիստավներն ու պարետներն իրենց համարում են «սեփական կալվածքների ինքնիշխան կալվածատերեր»»⁴⁸³:

Անդրկովկասյան երկրամասը վարչականորեն բաժանված էր վեց միանգամայն տարաբնոյթ միավորների՝ 1. Վրաստան՝ բաղկացած վեց գավառներից, 2. Հինգ դիստանցիաներ՝ Բորչարդու, Ղազախի, Շամշադինի, Փամբակի և Շորապյակի, 3. յոթ պրովինցիաներ՝ Ղարաբաղի, Շաքիի, Շիրվանի, Ղուլայի, Ախսալցխայի, Դերբենդի և Բարզի, 4. չորս մարզեր՝ Խմերեթիայի, Մինգրելիայի, Գուրիայի և Զայկական, 5. Թալիշի խանություն, 6. լեռնային տարրեր ժողովրդների զբաղեցրած տարածքները⁴⁸⁴:

⁴⁸² АРАԿ, т. 7, стр. 18-20.

⁴⁸³ Տունյան Վ. Ղ., Վորոշական Արմենիա և Հայաստան 1828-1840 թվականների պատմություն. Երևան, 1989, 29 էջ:

⁴⁸⁴ Էսաձե Ս., Իсторическая записка из управления Кавказом, т. 1, Тифлис, 1907, стр. 65.

Սրանք իրարից տարբերվում էին ոչ միայն Ռուսաստանին անցնելու ժամանակով, այլև իրենց վարչաձևերով։ Վրաստանի ամեն մի գավառ ուներ իր վարչությունը։ Իմերեթիան, որպես առանձնահատուկ մարզ, կառավարվում էր առանձին գինվորական պարետի կողմից։ Գուրիան կառավարում էր ուստական գինվորական պետին առջնթեր իշխանների խորհությունը։ Աղբբեջանական պրովինցիաներում կառավարում գինվորական պարետների ձեռքում էր։ Թալիշին նախկին խանությունը ղեկավարվում էր ուստական բանակի սպաներից կազմված մարզային վարչությունը։ Հայկական մարզում հիմնվել էր ժամանակավոր վարչություն՝ մարզային պետի գլխավորությամբ, իսկ տեղերում իշխանությունն իրականացնում էին նայիբները (տեղապահները)։ Եթե այս ամենին ավելացնենք պաշտոնատար անձանց իրավունքների ու պարտականությունների կատարյալ անորոշակիությունն ու խառնաշփոթությունը, ինչպես նաև տարբեր մարզերում և օկրուզներում Հարկերի անհամաշափությունն ու անմիօրինակությունը, ապա պարզ կդառնա անդրկովվասյան երկրամասի կառավարման համակարգի ողջ տհաճ պատկերը։ Այս ամենի վերաբերյալ իր մտահոգությունը ցարին ուղղված 1830թ. ապրիլի 24-ին իր զեկուցագրում բավականին իրատեսորեն էր ներկայացնում Պասկեիչը՝ շեշտելով, թե Անդրկովվասյան «միասնություն չկա ո՛չ կառավարման ձևերում, ո՛չ օրենքներում, ո՛չ էլ Փինանսական համակարգում»։ Այդ պատճառով էլ... ժողովուրդն ընտելանում է կասկածի տակ առներու մեր կառավարման կայունությունը և չի վստահում... կառավարության միջոցառումներին»⁴⁸⁵։ Որպես իշխանությունների կորսված հեղինակության ու վստահության վերականգնման լավագույն միջոց, Պասկեիչն առաջարկում էր արմատապես փոխել Անդրկովվասի մինչ այդ գործող վարչատարածքային կառուցվածքը և ներկայացնում էր իր կազմած նախագիծը, ըստ որի բոլոր գրավկած տարածքների վրա ստեղծվելու էր երկու նահանգ և մեկ մարզ⁴⁸⁶։ Նահանգներից մեկը կոչվելու էր Վրացական և իր կազմում ունենալու էր 10 գավառներ՝ 1. Թիֆլիսի, 2. Սղնախի, 3. Թելավի, 4. Դուչեթի, 5. Իմերեթի, 6. Գորիի, 7. Գուրիի, 8. Ախացիայի, 9. Ախալքալաքի, 10-րդ գավառը կազմվելու էր Ղագախից և Բորչալուի մի մասից։ Մյուս նահանգը կոչվելու էր Ինքնակալ կայսեր ցանկությամբ և ունենալու էր 8 մահմեդական գավառ՝ 1. Ելիզավետպոլի գավառ՝ Շամշադինի դիստանցիայով, 2. Ղարաբաղի, 3. Թալիշի, 4. Շաքիի, 5. Շիրվանի, 6. Բաքվի, 7. Ղուբայի և 8. Դերբենդի։ Երրորդ վարչատարածքային միավորը, ըստ նախագծի հեղինակի, հանդիսանալու էր Հայկական մարզ՝ 4գավառներով։ 1. Փամբակ-

⁴⁸⁵ Колониальная политика российского царизма в Азербайджане в 20-60-х гг. XIXв., ч. 1, М.-Л., 1936, стр. 233-234.

⁴⁸⁶ Документы и материалы по истории армянского народа..., док. 6, стр. 56; АКАР, т. 7, стр. 37-38.

Շորագյալի, 2. Երևանի, 3. Կողբի և 4. Նախիջևանի Հնդ որում, վերոհիշյալ վարչական երեք միավորները ունենալու էին հետևյալ քաղաքները: Վրացական նահանգում կենտրոն՝ Թիֆլիս, գավառներում՝ Դուշեթ, Թեղավ, Սղնախ, Գորի, Քութայիս, Օզուրգեթ, Ախալցիխա, Ախալքալաք: Երկրորդ նահանգի կենտրոն առաջարկվում էր Հին Շամախին կամ Բաքուն, իսկ գավառակենտրոններ՝ Ելփավետպոլը, Նուբին, Շուշին, Լենքորանը, Ղուբան և Դերբենդը: Հայկական մարզի կենտրոն էր լինելու Երևանը, գավառակենտրոններ՝ Գյումրին կամ Փոքր Ղարաբիլիսան, Կողբն ու Նախիջևանը:

Վերոհիշյալ նախագծի ստեղծման գործում իրենց գերակատարում ունեցան նաև սենատորներ Պ. Քութայիսովն ու Ե. Մեչնիկովը, որ տվյալ պահին գտնվում էին Անդրկովկասում և զբաղված էին տեղական չինունիկների անօրինությունների բացահայտմամբ⁴⁸⁷: Գրյանավոր հրամանատարին ներկայացրած իրենց հաշվետվության մեջ նրանք նշում էին, թե «ստացված տեղեկությունները պարզորեն ու համոզիչ կերպով բացահայտում են, որ...այն օրենքները, որոնց վրա այստեղ հիմնվում են բոլոր գործերի վերաբերյալ բնդումված որոշումները, հետևյալն են՝ ոռուսական, Վախթանգ Թագավորի, Հայկական, Հունական օրենքներ, իսկ մահմեդական պրովինցիաներում հրամայված է հետևել այն օրենքներին ու վարմունքներին, որոնք կային խաների ժամանակի: Հազիկ թե գոյություն ունենա նման քառոսի մեկ այլ օրինակ»⁴⁸⁸: Սենատորները ստեղծված իրավիճակից դրվս գալու լավագուն միջոց էին դիտում Պասկեչի առաջարկությունն Անդրկովկասում ոռուսական օրենսդրություն և կառավարչածել մտցնելու և երկրամասը երկու նահանգների ու մեկ մարզի բաժանելու վերաբերյալ: Նախագիծը 1830 թ. ապրիլի վերջին ներկայացվեց Նիկոլայ Ա.-ին, բավականին տևական մի ժամանակահատվածի մեջ քննարկվեց տարբեր ատյաններում և 1833 թ. մայիսի 12-25-ին սենատորներ Պ. Քութայիսովի և Ե. Մեչնիկովի դիտողություններով ներկայացվեց Պետական խորհուրդ⁴⁸⁹: Սակայն Պասկեչի առաջարկը, որն ավելի ընդունելի էր Հայերիս համար մասնավորապես Հայաշատ տարածքները մեկ վարչական միավորի կազմում ներառելու նրա ցանկության տեսակետից, անհրաժեշտ պաշտպանություն չփոնելով մերժվեց, իսկ ողջ Անդրկովկասում այնքան անհրաժեշտ բարեփոխումների հարցն էլ մի տեսական ժամանակով հետաձգվեց: Փոխարենը 1833 թ. մայիսի 25-ին Պետական խորհրդի որոշումով ռազմական նախարար Ա. Զերնիշեկի գլխավորությամբ ստեղծեց «Երկրամասի կառուցվածքի» Հարցերը քննելու իրավասու «Անդրկովկասայան երկրամասի բարեկարգման կոմիտե», որն առաջարկեց երկրամասն անվանել «Անդրկովկասայան Ոռուսաստան» և բաժանել

⁴⁸⁷ АКАА, т. 7, стр. 461-465.

⁴⁸⁸ Колониальная политика российского царизма в Азербайджане..., ч. 1, стр. 208.

⁴⁸⁹ Նույն տեղում, էջ 280-294:

երկու պրովինցիաների՝ Արևելյան, որ կազմված էր լինելու բացառապես քրիստոնյա բնակչություն ունեցող շրջաններից, այդ թվում նաև Հայկական մարզից՝ Թիֆլիս կենտրոնով և Արևելյան (մահմեղական)՝ Բաքու գլխավոր քաղաքով: 1834 թ. վերջերին այս նախագիծը քրննարկման դրվեց Պետական խորհրդում և նույնպես մերժվեց: Այսուհետև տարածաշրջանում տեղի ունեցան բավկանին հետաքրքիր իրադարձություններ՝ կապված մասնավորապես Հայ եկեղեցու հետ, որը Հայոց պետականության կորսորդ հետո դարեր շարունակ եղել և մնում էր որպես Հայ ժողովրդի տարանջատված ու տարբեր պետությունների տիրապետության տակ գտնվող Հատվածները շաղկապող Համազգային միակ կառույցը:

1836 թ. մարտի 11-ին Նիկոլայ Ա.-ի կողմից Հաստատվեց Հայ եկեղեցու կանոնադրություն⁴⁹⁰, որը պատմության մեջ մտավ «Պոլոմենիե» անունով: Այն դժողովությամբ ընդունվեց Հայ եկեղեցու ու ժողովրդական լայն զանգվածների կողմից և որպես եկեղեցու իրավունքները սահմանափակող ու ազգային ավանդույթները ուսնահարող օրենք, բացասաբար գնահատվեց ժամանակակիցների կողմից: Հայ եկեղեցու «բարենորոգության» վերոբերյալ ծրագիրը ոչ այլ ինչ էր, եթե ոչ ևս մի քայլ՝ Արևելյան Հայաստանում և առհասարակ ամբողջ Անդրկովկասում ցարական կառավարության դիրքերն ամրապնդելու համար ամուր հենարան ստեղծելու և տեղական ժողովուրիների վարչական ու օրենսդրական կյանքում իրեն անհրաժեշտ նորամուծություններն աստիճանաբար մացնելու վորձ՝ գործընթաց, որը որոշ ընդհատումներով շարունակվեց գրեթե ողջ XIX դարի ընթացքում:

1840 թ. ապրիլի 10-ին բարձրագույն Հրամանով Հաստատվեց ամբողջ անդրկովկասայան երկրամասի բարեկոփնման ծրագիրը: Հետայսու այն բաժանվելու էր երկու Հակայական Հաստատների: Դրանցից առաջինը Վրացահիմերեթական նահանգն էր, որն ընդուրվում էր երկրամասի մեծ մասը, ունենալու էր 11 գավառներ՝ Թիֆլիսի, Գորիի, Թելավի, Բելոկանի, Քութայիսի, Ելիզավետպոլի, Արեքսանդրապոլի, Երևանի, Նախիջևանի, Ալիալցխայի, Գուրիայի և 1 նահանգական, 8 գավառային, 3 արտաշտատային քաղաքներ ու 3251 գյուղեր: Երկրորդը Կասպիական մարզն էր՝ Նախազգիքի Հեղինակների պնդմամբ՝ երկրամասի իր թե մահմեղական մասը, որ ունենալու էր 7 գավառներ՝ Շիրվանի, Ղարաբաղի, Շաքիի, Բաքվի, Թալիշի, Ղուբայի, Դերբենդի և 1 մարզային, 6 գավառական քաղաքներ ու 2232 գյուղեր: Անդրկովկասայան տարածքների վերաձեռնումը երկու Հակայական Հաստատների

⁴⁹⁰ ՀՀ ՊԿԱ, Փոնդ 57, ցուցակ 1, գործ 85, էջ 1-14 (Ամենայն Հայոց կաթողիկոսի գիշան); Կտորյան Արքեն, Նախագիծ Հայաստանեաց եկեղեցու սահմանադրության, Արքանդրապոլ, 1908; Աղաբեյլյան Մ., Խնդիր կաթողիկոսության Ամենայն Հայոց, Քննություն 1836թ. սահմանադրության (Պոլոմենիայի), Կ. Պոլիս, 1865:

⁴⁹¹ Տայքի Բ. Ղ., նշվ. աշխ., էջ 39:

և ամբողջ երկրամասում ընդհանուր հաշվով 18 գավառների և 72 տեղամասերի (գավառակներ, շրջաններ) առանձնացումն արմատապես փոխեց երկրամասի վարչատարածքային կառուցվածքը՝ հանգեցնելով նախկինում գոյություն ունեցած մի շարք միավորների կամ լուծարման, կամ դրանց տարածքային նկատելի ձևափոխումների: Ասպածի լավագույն վիճայությունը հենց Արեքսանդրապոլի գավառն է, որը որպես Վրացականիմերեթական նահանգի կազմում վարչատարածքային միավոր, ձևափոխվեց Փամբակ-Շորավայի դիստանցիային նախկին Բորչալուի գավառի մի հատվածի՝ Լոռու գավառակի (տեղամասի) հավելմամբ⁴⁹²: 1840 թ. ապրիլի 10-ի օրենքը նաև կոչված էր լրջորեն օժանդակելու Անդրկովկասում կառավարման ուստական ձևեր մտցնելուն: Ինչպես նահանգական և մարզային, այնպես էլ գավառային ատյանները կազմավորվելու էին Ուստաստանի ներքին նահանգների օրինակով և սկսելու էին գործել կայսրության համար ընդհանուր օրենքներով: Սկսվեց տեղական պաշտոնյաների՝ բեկերի, աղալարների ու մելիքների մասսայական փոխարինումը ուստի չինովնիկներով, ինչի հետևանքով վերջիններիս թիվն երկրամասում միանգամբ կրկնապատկվելով, 704-ից հասնում է 1311-ի, 1839 թ. եղած դատական գործերի թիվը 2461-ից 1841 թ. հասնում է մինչև 4846-ի⁴⁹³: Այդ տեսակետից խիստ բնութագրական է պատկերը նաև մեր քննության առարկա Արեքսանդրապոլի գավառում: Գավառային վարչության գրասենյակում մինչև 1841 թ. եղած 278 գործի փոխարեն, միայն 1841 թ. ընթացքում, կուտակվում է 1601 գործ, որից 267-ը մնում է անկատար: Քաղաքային ոստիկանատանը, որտեղ ուելիքորների վիճայությամբ՝ «գործերն ու նրանց կատարումը»⁴⁹⁴, մինչև 1840 թ. քննված գործերի թիվը 60-ից 1841 թ. հասնում է 266-ի: Նույն էր իրավիճակը նաև գավառի դատարանում, որի վարույթում գործերի թիվը 1840-ի 53-ի փոխարեն 1841 թ. հասնում է 233-ի, իսկ շրջանային վարչությունում տնտեսական գործերի թիվը 1840 թ. 133-ի դիմաց 1841 թ. կազմում է 409⁴⁹⁵:

Ընդունենք վեց տարի անց՝ 1846 թ. իրավործվեց Անդրկովկասի Հաջորդ՝ թվով չորրորդ վարչատարածքային ձևափոխությունը (Ա. Շահամաթունյանը Անդրկովկասայն երկրամասի առաջին վարչատարածքային բաժանումը է Համարում 1801 թ. Ուստաստանի կազմում Վրաստանի նահանգի ստեղծումը, հետևաբար 1846 թ. վարչատարածքային ձևափոխությունը կարելի է համարել չորրորդը)⁴⁹⁶: Արանում, անշուշտ,

⁴⁹² Административные отделы Кавказского края, (без мест. и дат.), стр.17-18.

⁴⁹³ Из записок М. А. Корфа, Русская старина, т. 101, СПб., 1900, стр. 43.

⁴⁹⁴ Պարամիան Վ., Ցաղիզմի գաղութային քաղաքականությունը Հայաստանում, Եր., 1940, էջ 156:

⁴⁹⁵ Պարամիան Վ., Նույն տեղում:

⁴⁹⁶ Տե՛ս Ռախատունյան Ա., Административный передел Закавказского края, Тифл. ис, 1918.

Էսկան գեր իսպաց նաև 1844 թ. Կովկասի փոխարքայության ստեղծումը: Թեև վերջինիս ստեղծման իրական պատճառները ոչ մի տեղ չեն նշվում, այնուամենայնիվ, այդ մասին ակնարկ կա Նիկոլայ Ա-ի 1844 թ. նոյեմբերի 17-ով թվագրված մի նամակում, ուր փոխարքայության ստեղծումն Անդրկովկասում ներկայացվում է որպես ցարի կողմից «լիակատար վաստակության նշան» Ո. Վորոնցովին⁴⁹⁷: Իր փոխարքայության արդեն երկրորդ տարում Վորոնցովը որոշեց իրականացնել Անդրկովկասի վարչատարածքային նոր վերաձեռում, որի նախագիծը 1846 թ. նոյեմբերին քննարկվեց «Կովկասյան կոմիտեի» կողմից, իսկ դեկտեմբերի 14-ին հրամարակվեց «Կանոնադրություն» Անդրկովկասը չորս նահանգների բաժանելու մասին⁴⁹⁸: Դրանք էին՝ Թիֆլիսի, որի մեջ էր նաև Ալեքսանդրապոլի գավառը, Քութայիսիի, Շամախու և Դերբենդի նահանգները:

Ընդամենք երեք տարի անց երկրամասը հայտնվեց այս անգամ արդեն թվով Հինգերորդ վարչատարածքային բաժանման փաստի առջև. 1849 թ. հունիսի 9-ին փոխարքայի հրամանով Թիֆլիսի ու Շամախու նահանգների որոշ տարածքների միավորումով ստեղծվեց երկար սպասված Երևանի նահանգը: Այս նոր նահանգի ստեղծումը պայմանապահած էր կողմից նրանով, որ նախկին Հայկական մարզի տարածքն իրըև գավառներ այլ նահանգների մեջ մտցնելն աղաղակող հակասության մեջ էր գտնվում տեղական պայմանների հետ, մյուս կողմից՝ անհրաժեշտություն էր պատմականորեն ու ծողովրդական տնտեսության առումով շատ թե քիչ ընդհանուրություն կազմող այդ լայնատարած մարզը ճանաչել որպես մի ավելի մեծ վարչական միավոր՝ նահանգ: Այնուամենայնիվ Հայկական հողերը մեկ վարչական միավորի մեջ մտցնելու առաջին նախագծերն ի հայտ եկան միայն 1848 թ. վերջերին-1849 թ. սկզբներին՝ կապված ուսացած թագաժառանգի՝ երկրամաս կատարելիք այցելության առթիվ նախապատրաստությունների ետ: Արդեն 1849 թ. փետրվարի 5-ին, զեկուցելով այս ուղղությամբ կատարվող աշխատանքների մասին, Վորոնցովը ցարին նաև տեղեկացնում էր երկրամասում գոյություն ունեցող չորս նահանգներից բացի ևս մեկ վարչական միավոր ստեղծելու իր ցանկության մասին, ինչը պատճառաբանում էր 1846 թ. կազմավորված Թիֆլիսի նահանգի տարածքի մեծությամբ, բազմազգությամբ ու դժվար կառավարելի լինելով: Դրա փոխարենը Վորոնցովն առաջարկում էր արդեն գոյություն ունեցող նահանգներից որոշ շրջաններ առանձնացնելով ստեղծել կոմպակտ, գերազանցապես հայկական տարրով բնակեցված Երևանի նահանգը, որը կազմվելու էր հետևյալ կերպ: Թիֆլիսի նահանգից

⁴⁹⁷ Այդ մասին մանրամասն տե՛ս Էսաձե Ս., նշվ. աշխ., էջ 82-85:

⁴⁹⁸ АКАК, т. 10, Тифлис, 1885, стр. 875; Князь Воронцов и А. П. Ермолов, Их переписка о Кавказе, Русский архив, 1890, кн. 1, стр. 195-197.

⁴⁹⁹ ՀՀ ՊԿԱ, փոնդ 332, ցուցակ 1, գործ 715, էջ 1-2:

վերցվելու էին Երևանի, Նախիջևանի և Աղբքանդրապոլի գավառները, իսկ Շամախու նահանգի Շուշիի գավառից՝ Մեղրիի գավառակն ու Կապան գյուղը, և նորաստեղծ նահանգը բաժանվելու էր Հինգ գավառների՝ Երևանի, Աղբքանդրապոլի, Նախիջևանի, Օրբուբաղի և Նոր Բայազետի⁵⁰⁰: Խնդրո առարկա Աղբքանդրապոլի գավառի մեջ էին լինելու Փամբակն ու Շորապյալը և Բորչալուի գավառի մի հատվածը՝ Լոռին: Նախագծով նաև առաջարկվում էր Ախալքալաքի գավառակն անջատել Աղբքանդրապոլի գավառից՝ միացնելու համար Քութայիսի գավառին⁵⁰¹: Անդրկովկասի վարչատարածքային նոր բաժանման վերոհիշալ նախագիծը Ս. Պետերբուրգում բավականին ջերմ ընդունելության արժանացավ: 1849 թ. Հունիսի 9-ին բարձրագույն Հրամանագրով կազմավորվեց Երևանի նահանգը:

Սրանք էին Անդրկովկասիան երկրամասում անցկացված վարչատարածքային այն բարենորոգումները, որոնք արդեն XIX դարի 40-ական թվականների վերջերին Հանգեցրին Երևանի նահանգի կազմի մեջ Հայկական Հողերի մի մասի միավորմանը: Այժմ ավելի մանրամասն անդրադառնանք ուսումնասիրվող ժամանակահատվածում Շորապյալի գավառի կենսագործունելության, ինչպես նաև Լոռու, Փամբակի և Շորապյալի գավառակների միավորմամբ արդեն XIX դարի 40-ական թվականների մկրեներին Աղբքանդրապոլի գավառի կազմավորման, վարչատարածքային կառուցվածքի, սահմանների և այլ հարցերին:

Ինչպես արդեն նշել ենք, առաջին վարչատարածքային ձևափոխությունը, որն ուղղակիորեն առնչվում էր Պատմական Շիրակ գավառի արևելյան հատվածի Հետ, 1805թ. Վրաստանի կազմում Փամբակ-Շորապյալի դիստրանցիայի ստեղծումն էր՝ Ուռասական կայսրության ավելի վաղ (1801թ.) միացած Լոռու, Փամբակի և Շորապյալի միավորմամբ: Հաջորդ վարչատարածքային բաժանումը, որը ինչ-որ չափով առնչվում էր Շորապյալի գավառի Հետ, տեղի ունեցավ միայն 1840 թ., երբ Արևելյան Շիրակը՝ Փամբակի և Լոռու գավառակների Հետ, Աղբքանդրապոլի գավառ անվանումով տեղավորվեց Վրացակիմերեթական նահանգի մեջ: Աղբքանդրապոլի գավառի ստեղծման վերաբերյալ առաջարկություններ եղել էին նաև մինչ այդ: Այսպես, դեռևս 1830թ. ապրիլին Անդրկովկասյան գրավված տարածքների վարչատարածքային վերածեության առաջարկով Հանդես էր եկել գեներալ Պասկալչը, և նրա ծրագրի իրականացումը ենթադրում էր ստեղծվելիք Հայկական մարզի մեջ ի թիվս Երևանի, Կողբի և Նախիջևանի շրջանների, նաև Փամբակ-Շորապյալի շրջանի գոյությունը⁵⁰²: Բայց, ինչպես ասվել

⁵⁰⁰ Документы и материалы по истории армянского народа..., док.55, стр. 199.

⁵⁰¹ Подесаул Ив., Позаровский, Материалы для военного обозрения Эриванской губернии, ч. 1, вып.1, Тифлис, 1890, стр. 14-15; К Столетию присоединения Грузии к России. Утверждение русского владычества на Кавказе, т. 12, Тифлис, 1901, стр. 378.

⁵⁰² АКАՀ, т. 7, стр. 37-38.

է, այս նախագիծը, որ երկրամասում հանդեցնելու էր միանգամայն արմատական փոփոխությունների, մերժվեց: Փոխարենը ցարական կառավարությունն ընդունեց երկրամասում վարչական բարենորոշմանների ուղղենքան տարբերակը՝ Անդրկովկասն աստիճանաբար ուստականացնելու մասին: Իսկ թե վերոհիշյալ քաղաքականությունը, որ թույլ էր տալիս Անդրկովկասում միաժամանակ գործելու և ուստական և տեղական օրենքներն ու սովորույթները, ինչ հետեւանքներ ունեցավ ամբողջ երկրամասի, և մասնավորապես Շորագյալի գավառի համար, իր բոլոր թերություններով ի հայտ եկավ արդեն XIX դարի 30-ական թվականների վերջերին՝ ցարի Անդրկովկասյան ուղևորության ժամանակ:

1837 թ. աշնանը Անդրկովկասում իր ուղևորությունը սկսեց Նիկոլայ Ա-ն⁵⁰³: ՈՒղևորություն, որի շնորհիվ ցարը գոնե իր համար պարգևց այն իրողությունը, որ «Անդրկովկասի երկրամասում տեղական պետերն ավելի շատ օրենքների խախտման տիպար են, քան կարգ ու կանոնի պահպաններ...»⁵⁰⁴, քանզի իր ամբողջ ճամփորդության ընթացքում նա ականատես եղավ ուսւ չինովնիկների ու տեղական պետերի կամայականությունների, անօրինությունների, տեղական ժողովուրդների անողոք կեղեքման և որպես պատասխան ուեալցիա՝ ժողովրդական հուզումների ու ապստամբությունների բազմաթիվ դեպքերի: Ի դեպ, օրինականության բացակայության պայմաններում հուզումներն ու ապստամբությունները Անդրկովկասի գյուղական ազգաբնակչության շրջաններում XIX դարի 30-ական թվականների վերջերին նորություն չէին և ցարի այցելությունից հետո էլ չդադարեցին, այլ շարունակվեցին մինչև XIX դարի 60-ական թվականների վերջերը: Ցարական չինովնիկների կամայականությունների պատճառով գյուղացիական ապստամբություններ բարձրացան դեռևս 1804թ. Քարթլիում, 1812թ.: Կախեթիում, 1819-1820 թթ.: Խմբեթիայում, որ հետագայում տարածվեց նաև Գուրիայում և Աբխազիայում: 1829 թ. ապստամբեցին աղբբեջանական գյուղացիները, նույն թվականին՝ Ախալցխայի գավառի գյուղացիները, 1840թ.: Հարավային Օսեթիայի, 1844-1845 թթ.: Ելիզավետպոլի գավառի գյուղացիները և այլն⁵⁰⁵:

XIX դարի մինչև 40-ական թվականները երկրամասում ծագած վերջիշյալ գյուղացիական եկույթների մեջ իննդրո առարկայի ուսումնասիրության տեսանկյունից մեզ համար կարևորվում է հատկապես այն, որ բռնկվեց 1837թ. վերջերին Փամբակ-Շորագյալի դիստանցիայում, մասնավորապես Շորագյալի գավառում և ազգակ հան-

⁵⁰³ Ցարի Անդրկովկասյան ուղևորության մասին մանրամասն տե՛ս Բերժե Ա., Император Николай на Кавказе в 1837г., Русская старина, т. 8, СПб., 1884.

⁵⁰⁴ Колониальная политика российского царизма в Азербайджане..., ч. 1, стр. 262; АКАР, т. 8, Тифлис, 1881, стр. 11.

⁵⁰⁵ Хачапуридзе Г. В., К истории Грузии XIXв., Тбилиси, 1950, стр. 149-156.

դիսացավ՝ Հետագայում Գյորկչյայում և Նոր Բայազետում ծավալված գյուղացիական հուզումների համար:

Փամբակ-Շորապյալի դիստանցիայում 1837 թ. վերջերին ծագած գյուղացիական հուզումների պատճառը ցարական պաշտոնական վաստավայի անառաջարկում գյուղացիականների ու բնիկների շրջանում «անըարեհույս մարդկանց դրդումները»՝ ուղղված ցարական կառավարության ու տեղական իշխանությունների գեմ։ Համեմայն գեպս այս կարծիքին էր Կովկասի գյուղավոր կառավարիչ բարոն Ռոզենբոր, որ հիմնվելով Փամբակ-Շորապյալի դիստանցիայի գյուղոր պիհստավ՝ Շիփենբախի հայտնած տվյալների վրա՝ 1838թ. հունվարի 21-ին ուղամական նախարար Ա. Զերնիչյանի գրում էր, թե անկարգությունների գաղափարը գալիս է Թիֆլիսից՝ ոմն Եգոր Խսակի կողմից, իսկ արդեն տեղերում (Փամբակ-Շորապյալի դիստանցիայում-Ա.Հ.) այն իրականացվում է կաթողիկական քահանա տեր Գրիգորի, նրա որդի Սահակի, հայ Պետրոս Կովալյովի և նրանց հետ համախոհ, տարբեր գյուղերից Հավաքագրված 30 երիտասարդների կողմից⁵⁰⁶։ Վերոհիշյալ անկարգություններին վերջ տալու և սահմանամերձ դիստանցիայում վերստին խաղաղություն հաստատելու նպատակով Փամբակ-Շորապյալ է ուղարկվում Կրաստանի քաղաքացիական նահանգապետ Փալավանդով։ Ալեքսանդրավոր ժամանելուն պես նա բարոն Ռոզենին տեղեկացնում է, թե «գյուղերի բնակիչներն Աստծո և թագավորի չնորհիվ գոհ են իրենց վիճակից և տեղական իշխանության վրա ոչ մի գանգատ չունեն, իսկ եթե որոշ գյուղերում հանգըստությունը խանգարված է, դրա համար պատասխանատու են միայն որոշ մարդիկ»։ Ռոզենին ներկայացնելով այդ «որոշ մարդկանց»՝ խոռվարարների ցուցակները՝ Փալավանդովը դրամով ի չիք էր դարձնում գյուղացիների՝ հին տանուտերերից ազատվելու բոլոր փորձերը։ Մինչդեռ իրականում խոռվությունների պատճառը այն ծայրաստիճան աղքատությունն ու տնտեսական խիստ ծանր կացությունը էր, որի մեջ գտնվում էր դիստանցիայի բնակչությունը և մանաւանդ նրա՝ Արևմտյան Հայաստանից գաղթած մասը, որ կարավարության կողմից սահմանված արտոնաժամկետի լրանալուց հետո միանգամից ընկել էր ծանրագույն Հարկերի տակ։ Ճիշտ է, Նիկոլայ Ա.-ի կարգադրությամբ Հարկերից ու տուրքերից ազատ լինելու գաղթականների արտոնաժամկետը երկարացվեց ևս մեկ տարով՝ մինչև 1838թ.⁵⁰⁸, այնուամենայնիվ ցարական կառավարության այս քայլը բավականին ուշացած էր և լուրջ արդյունքներ չտվեց, որովհետև արդին 1837 թ. վերջերին խոռվություններ բռնկվեցին Շորապյալի գավառի

⁵⁰⁶ Ներսիսյան Ա., Հայ Ժողովրդի նոր պատմության Էջերից, Եր., 1982, էջ 334-336:

⁵⁰⁷ Ո-շտունի Վ. Հ., ՈՒրվագծեր Հայաստանի գյուղացիության պատմության, մաս Ա (1828-1870թք.), Եր., 1960, էջ 139-140:

⁵⁰⁸ Պարսամյան Վ. Ա., Գյուղացիական հուզումները, Փամբակ-Շորապյալի դիստանցիայում 1838 թ.-ին, Երևանի պետական համալսարանի գիտական աշխատություններ», պր. 3, հ. 62, Եր., 1958, էջ 74:

Փոքը Ղարաբիլիսա, Բայանդուր, Թամշան-Ղըլաղ, Ղազարապատ, Հռում և մի շարք այլ գյուղերում:

Կարելի է հաստատապես նշել, որ XIX դարի 30-ական թվականների վերջերին ինչպես ամբողջ Արևելյան Հայաստանում, այնպես էլ Փամբակ-Շորագյալի դիստանցիայում բռնկված գյուղացիական խոռվությունները պատճեն էին ոչ թե ինչ-ինչ անբարեհույս մարդկանց սաղբանքների, այլ պայմանավորված էին առաջին հերթին հայ գաղթականների տնտեսական ծանր դրությամբ ու տեղական պաշտոնյանների անօրինական գործողություններով ու կամայականությամբ։ Եվ վերջապես, որպես ասվածի լավագույն ապացույց մեջբերենք մի հատված տեղական չինովնիկների ու ցարական հարկային քաղաքականության գեմ Գյումրու բնակչության 1837 թ. գեկտեմբերի 6-ի դիմումը՝ ուղղված Նիկոլայ Ա-ին. «... Ապա թող յայտնի լինի Քո Կայսերական Մեծութեանդոր... մեր գլխավոր ցավը նրա մէջն է, որ Քո նշանակած գլխավորի համար Հերկում ենք, չնձում, կալսում և հատիկը շտեմարան հասցնում։ Բացի դրանից հւրաքանչիւր տարի վճարում ենք 40 չետվերտ ցորեն։ Հացից զատ նրան հւրաքանչիւր տարի տափա ենք վեց փուժ ձէթ և վեց փուժ կովի հւզ։ ... Գյալաւորի համար կատարած այդ ծառայութիւնները մնացած տուրքերից ծանր են. իմացիր այժմ, որ մենք... ստրկութեան մեջ ենք գտնուու ստիկանութեան ձեռքին»⁵⁰⁹։

Ցարի՝ Անդրկովկաս ժամանելը, գյուղացիական խոռվությունների ալիքը, նախապայմաններ էին, որոնք ամենայն հավանականությամբ նպաստավոր նշանակություն ունեցան երկրամասի նոր վարչատարածքային բաժանման (1840 թ.) մեջ Արևելյան Շիրակի տեղի և դերի հետզհետե որոշակիացման տեսակետից, որի վերջնական արդյունքն Ալեքսանդրապոլի գավառի ձևավորումն եղավ։

Ժամանակագրական առումով Ալեքսանդրապոլի գավառի ստեղծման հարցին առաջինն առաջինն անդրաբարձել է Ն. Նեֆելյար, որը գեռևս 1838 թ. Հոկտեմբերի 2-ին «Անդրկովկասի երկրամասի բարեկարգման կոմիտեում» երկրամասի նոր վարչատարածքային բաժանման Գանի նախագծի քննարկման ժամանակ առաջարկում էր Հայկական մարզի տարածքը բաժանել երկու գավառների՝ Նախիջևանի, որի մեջ էին մտնելու արդեն գյուղերը ունեցող Նախիջևանի և երևանի գավառները, և Ալեքսանդրապոլի, որ կազմավորվելու էր գերազանցապես Հյուսիսային Հայաստանի հայաշատ տարածքներից⁵¹⁰։ Թեև Հայկական մարզի բարենորոգման Ն. Նեֆելյար նախագիծը մերժվեց, այնուամենայնիվ

⁵⁰⁹ Егиазаров С., Исследования по истории учреждении в Закавказье, ч. 2, Гародские цехи, Казань, 1891, стр. 254; Անանուն Դ., Ուսանալիքի հասարակական զարգացումը XIX դարում (1800-1870), հ. Ա, Բարու, 1916, էջ 179-180; Պարսամյան Վ., Առաջին ժանդարմական գործն Ալեքսանդրապոլում, Եր., 1936, էջ 22-23։

⁵¹⁰ Տունյան Բ. Գ., նշվ. աշխ., էջ 38։

Փամբակ-Շորապյալի գիտանցիայի հիման վրա նոր, ավելի մեծ վարչական միավոր ստեղծելու գաղափարը մնաց և ի կատար ածվեց արդեն 1840 թ. երկրամասն երկու խոշոր հատվածների՝ Վրացահմերեթական նահանգի և Կասպիական մարզի բաժանելիս։ Միայն վերոհիշյալ կառուցվածքային վերափոխման շնորհիվ էր, որ Անդրկովկասում ի հայտ եկավ նոր վարչատարածքային միավոր՝ Ալեքսանդրապոլի գավառը, որն ի թիվս տարր այլ գավառների մտավ Վրացահմերեթական նահանգի կազմի մեջ⁵¹¹։ Վերջինս տարածքային տեսակետից գրեթե ամբողջովին պարփակվում էր նախկին Փամբակ-Շորապյալի դիստանցիայի սահմանների մեջ (արևմուտքում սահմանակից էր Կարսի փաշյառթյանը, հյուսիսում և արևելքում Բորչալուի գավառին, իսկ Հարավում՝ Երևանի գավառին)⁵¹²։ Այնուամենայնիվ նոր՝ Ալեքսանդրապոլի գավառի ստեղծումն ինքնին նշանակալի առաջադիմական քայլ էր տեղական կառավարման արդյունավետության բարձրացման, ինչպես նաև Հայաստանի հյուսիսային հատվածում Հայաշատ հողերը մեկ վարչական միավորի կազմում ունենալու տեսակետից։

Այս առումով առավել նշանակալից եղավ Կովկասի փոխարքա Վորոնցովի գլխավորությամբ 1846 թ. անցկացված նոր վերաձևումը, որի արդյունքում երկրամասը տրոնվեց նախկին երկումի փոխարեն չորս առավել հեշտ կառավարելի նահանգներին։ Սույն վարչատարածքային բաժանումը ինչդրու առարկայի քննության տեսանկյունից կարևորվում է Հատկապես նրանով, որ այժմ արդեն Թիֆլիսի նահանգին անցած Ալեքսանդրապոլի գավառն իր Լոռու, Փամբակի և Շորապյալի գավառակներին ի հավերում ստացավ նաև գերազանցապես Հայ տարրով բնակեցված Ախալքալաքի գավառակիր։ Ցարական կառավարությունը, ենելով երկրամասում ունեցած իր իսկ շահերից, բավականին արագ արձագանքեց առանձին հմերեթական նահանգ ստեղծելու մասին իմերեթական ազնվականության դեռևս 1842 թ. առաջ քաշած պահանջնին։ Արդեն 1846 թ. հուլիսի 22-ին ներկայացվեց Կովկասի փոխարքայի կազմած նախագիծը Դաշտանի և Իմերեթիայի մարզերի ստեղծման վերաբերյալ։ Առաջարկվում էր Իմերեթիայի մեջ առնել նաև Ախալցիսայի գավառի մի մասը։ Աբասթուման և Խերթիս գավառամասերով ու Ախալցիս քաղաքով, իսկ գավառի մնացած մասը՝ Ախալքալաքի գավառակը, մտցնել արդեն գոյություն ունեցող

⁵¹¹ Կավկազский календарь на 1852 год, Тифлис, 1851, отд. III, стр. 273.

⁵¹² Ալիշան Ղ., Տեղագիր Հայոց Մեծաց, Զ.Հ.Գ.-ն տիտղոսաթերթ չունի, Սր. Ղազար, 1855, էջ 63-64; Միհեղեան Ա., Մեծ Ղարաբիլսայի ներկայ վիճակը, «Մուրճ», N 10, հոկտեմբեր, Թիֆլիս, 1893, էջ 1579-1581:

⁵¹³ Մելքոնյան Ա., Ջավախիր XIX դարում XX դարի առաջին քառորդին, Եր., 2003, էջ 203; Սարգսյան Հ., Ալեքսանդրապոլի գավառի երնաշխարհագրական բնուրագրի ՀIX դարի վերջերին, ՀՀ ԳԱԱ ԸՆՀԿ «Գիտական աշխատություններ», հ. 1, Գյումրի, 1998, էջ 141-143

Ալեքսանդրապոլի գավառի մեջ⁵¹⁴: Նախագիծը հաստատվեց, և ամրագրվեց Ախալքալաքի գավառակի մուտքը Ալեքսանդրապոլի գավառի մեջ, որով գրեթե ավարտին հասցվեց Հյուսիսային Հայաստանում Հայկական հողերը մեկ վարչական միավորի կազմում հավաքելու դրդնթացը: Հարկ ենք համարում ընդգծել, որ Անդրկովկասի 1846 թ. վրոնցովվան վարչատարածքային բաժանումն այս առումով միակն էր, որ նպաստեց ոչ վաղ անցյալում կազմավորված Ալեքսանդրապոլի գավառի տարածքի ընդայնմանն ի հաշիվ գերազանցապես էրզրումցի գաղթականներով բնակեցված Ախալքալաքի գավառակի, որովհետեւ հետայսու երկրամասում անցկացված վարչատարածքային ձևափոխությունները, որոնք ինչ-որ չափով առնչվեցին Ալեքսանդրապոլի գավառի հետ, միայն տարածքային կորուստներ պատճառեցին նրան:

Այսպես, 1849թ. սկզբներին, «տոչորված» Հայկական նահանգ ստեղծելու հույժ հրատապ խնդրով, Կովկասի փոխարքա Վորոնցովը ցարին նախագիծ ներկայացրեց Երևանի նահանգ ստեղծելու վերաբերյալ: Այն հաստատվեց արդեն նույն տարվա հունիսի 9-ին և կոչված էր Անդրկովկասի Հայաշատ տարածքները մեկ նահանգի մեջ հավաքելու խնդրի իրացմանը, մասնավանդ, որ նորաստեղծ Երևանի նահանգի մեջ մտցվեց նաև Շուշիի գավառի առավել Հայաշատ մասը՝ Զանգեզուրյան հատվածը: Այնուամենայնիվ այս նոր վերածեումը, իր նպատակադրմանը հակառակ, ունեցավ նաև ակնհայտորեն բացասական լուծումներ. այսպես, անհասկանալի պատճառներով Ալեքսանդրապոլի գավառի կազմից հանվեց⁵¹⁵ և Քութմայիսիի գավառին միացվեց Ախալքալաքի գավառակը⁵¹⁶: Ի դեպ, այդքանով չվերջացան գավառի տարածքային ձևափոխությունները. Ախալքալաքի ոստիկանական տեղամասի կորստից ընդամենը 13 տարի անց Ալեքսանդրապոլի գավառից անջատվեց և թիֆլիսի նահանգին միացվեց Լոռին, որ Ալեքսանդրապոլի գավառի գավառի Փամբակ ոստիկանական տեղամասի մեծագույն մասն էր կազմում⁵¹⁷:

Մրանք էին Անդրկովկասյան երկրամասում անցկացված այն վարչատարածքային բարեփոխումները, որ իրագործվելով գրեթե կես դարի ընթացքում, XIX դարի 40-ական թվականների սկզբներին հանգեցրեցին նախ Ալեքսանդրապոլի գավառի ստեղծմանը, ապա նաև 1849թ. նրա՝ նորակազմ Երևանի նահանգի մեջ մտնելուն: Դարասկզբին մարդաթափ ու կիսափեր Փամբակի և Շորապյալի սուլթանությունների հիմքի վրա ստեղծված Ալեքսանդրապոլի գավառը արդեն XIX դարի կեսերին բաժանվում էր չորս ոստիկանական տեղամասի մեծագույն մասն էր չորս ոստիկանական տեղամասերի⁵¹⁷ և 27 գյուղական

⁵¹⁴ Գալոյան Գ., նշվ. աշխ., էջ 247:

⁵¹⁵ Документы и материалы по истории армянского народа..., док. 55, стр. 200.

⁵¹⁶ Ռախատունյան Ա., նշվ. աշխ., էջ 108-109:

⁵¹⁷ Свод статистических данных о населении Закавказского края извлеченных из посемейных списков 1886г., Издан по распоряжению Главноначальствующо-

Համայնքների⁵¹⁸. 1. Աղբաբյախ ոստիկանական տեղամաս՝ կազմված 6 գյուղական համայնքներից (պրիստավլը նստում էր Ալեքսանդրապոլից 22 վերստ Հեռու գտնվող Աղբաբյալում), 2. Ճղվարի ոստիկանական տեղամաս՝ կազմված 5 գյուղական համայնքներից (պրիստավլը նստում էր Ալեքսանդրապոլում), 3. Հոռոմի ոստիկանական տեղամաս՝ կազմված 5 գյուղական համայնքներից (պրիստավլը նստում էր Ալեքսանդրապոլից 14 վերստ Հեռու՝ Հոռոմ գյուղում), 4. Մեծ Ղարաբիլիսայի ոստիկանական տեղամաս՝ կազմված 11 գյուղական համայնքներից (պրիստավլը նստում էր Մեծ Ղարաբիլիսայում):

Գավառը ուղղմագրագրական և սոցիալ-տնտեսական մի շարք կարեւոր և էական հանգամանքների բերումով XIX դարի կեսերին վերածվեց նոր ձևակերպված երևանի նահանգի հայշատ գավառներից մեկի,⁵¹⁹ որը զբաղեցնում էր նահանգի տարածքի 13%-ը (3680 քառ. կմ), հյուսիսից և հյուսիս-արևելքից սահմանակցելով Թիֆլիսի նահանգին ձըղվարի (Յողամարդ) և Մեծ Ղարաբիլիսայի (Վանաձոր) տեղամասերով, Ղարաբիլից՝ Էջմիածնի գավառին Աղբուլաղի (Լուսաղբյուր) տեղամասով, արևելքից՝ Նոր Բայազետի գավառին Հոռոմի ու Մեծ Ղարաբիլիսայի տեղամասերով և արևմուտքից՝ Կարսի գավառի մաշայությանը՝ սահմանագիծ ջրբաժան ունենալով Ախուրյան գետը⁵²⁰:

Բ) Գավառի էթնոգորովրագրական և կրոնագավանաբանական պատկերը 1830-1850թթ.

Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին խոշոր իրադարձություն էր, որ նոր, լուսավոր էջ բացեց Հայ ժողովրդի գարավոր պատմության մեջ: Միավորումը վերացրեց արևելահայության Փիգիկական գոյությանը սպառնացող վտանգը, ապահովեց Հայ բնակչության աճ, որին մեծ չափով նպաստեց պարսկահայատակ Հայերի ու արևմտահայերի ներգաղթը: Տեղի ունեցավ ազգահավաքման ու ազգային Համախմբման գործընթաց, որը մեծ նշանակություն ունեցավ նրա Հետագա ճակատագրի համար: Եթե պարսկական տիրապետության վերջին տարում Արևելյան Հայաստանում բնակչության ընդհանուր թիվը 169155մարդ էր, որից Հայերը 57305 մարդ կամ 33.8% էին,

го гражданской частью на Кавказе, Закавказским статистическим комитетом, Тифлис, 1893, стр. IX-X; ՀՀ ԳԱԱ ՊԻ, Լեռյի ֆոնդ 1, ցուցակ 1, գործ 388, էջ 1-2:

⁵¹⁸ Էջմիածն Ս. նշվ. աշխ., Հ. Ա. էջ 47:

⁵¹⁹ Սարգսյան Հ., նշվ. աշխ., էջ 132-133:

⁵²⁰ Թոփինան Ե., Ալեքսանդրապոլի գավառ, «Աղբյուր», N 7, 14-րդ տարի, Թիֆլիս, 1896, էջ 268-269; Հակոբյան Թ. Խ., Մելիքբարսիցան Ս. Տ., Բարսեղյան Հ. Խ., Հայաստանի և Ղարական շրջանների տեղանունների բառարան, Հ. Ա., Եր., 1986, էջ 74-ի քարտեզ:

թուրք-մահմեդականները՝ 84089 մարդ կամ 49.7%, իսկ քրդերը՝ 26911 մարդ կամ 16%, ապա 1830 թ. սկզբներին բնակչության ընդհանուր թիվը Հասավ 241112 մարդու, որից Հայերն արդեն 141682 էին կամ 58.8%, թուրք-մահմեդականները՝ 83165 մարդ կամ 34.5%, իսկ քրդերը՝ միայն 15415 մարդ կամ 6.4%⁵²¹: Նմանատիպ գործընթաց, այն է՝ պարսկահայ և արևմտահայ գաղթականության շնորհիվ Հայկական տարրի զգալի աճ գրանցվեց նաև մեր ուսումնասիրության առարկա Աղքասանդրապողի գավառը կազմող նախկին Փամբակի, Շորագյալի և Լոռու գավառակներում, միայն այն տարրերությամբ, որ սույն շրջաններում, չնայած թուրք-պարսկական տիրապետության ամբողջ դաժանությանն ու միջանց հաջորդող թարանչիական պատերազմներին, Հայ տարրն ի սկզբանե գերակշող էր: Այսպես, Շորագյալի գավառում 1804-1805 թթ. ապրում էր ընդամենը 808 ընտանիք կամ 4877 մարդ, որից 660 ընտանիքը կամ 4096 մարդը Հայեր էին և կազմում էին գավառի ընդհանուր բնակչության 81,6%-ը: Գավառում ապրում էին նաև 89 ընտանիք կամ 476 մահմեդականներ, որ կազմում էր բնակչության 11.1%-ը և 59 ընտանիք՝ 305 մարդ կամ 7,3% այլազգիներ: Նոյն ժամանակահատվածում Հարեւան Փամբակի գավառում ապրում էր 514 ընտանիք կամ 3886 մարդ, այդ թվում Հայերը 401 ընտանիք կամ 3297 մարդ էին և կազմում էին գավառի բնակչության 78,1%-ը, իսկ մասցած 21,9%-ը՝ 113 ընտանիքը կամ 589 մարդը, մահմեդականներ էին⁵²²: Սակայն XIX դարասկզբին այս երեք գավառներից իր միաստարրությամբ աչքի էր ընկերում Հատկապես Լոռին (խոսքը վերաբերում է Լոռու գիստանցիայի այն Հատվածին, որ 1840 թ. մտավ նորաստեղծ Աղքասանդրապողի գավառի մեջ որպես վերջինիս Լոռու գավառակ և այդ կարգավիճակում մնաց մինչև 1862 թ.)⁵²³ իր 780 ընտանիք կամ 3908 մարդ գերազանցապես հայ ազգաբնակչությամբ՝ Այսպիսով Հյուսիսային Հայաստանի վերոհիշյալ երեք գավառներում XIX դարասկզբին՝ Ռուսական կայսրության հետ միավորվելու պահին, ապրում էր ընդամենը 2102 ընտանիք կամ 12671 մարդ, որից 1841 ընտանիքը կամ 11301 մարդը Հայեր էին և կազմում էին ընդհանուր բնակչության 87,6%-ը: Մնացած 12,4%-ի մեջ 202 ընտանիքը կամ 1065 մարդը՝ երեք գավառների ընդհանուր բնակչության 9,6%-ը մահմեդականներ էին, իսկ 59 ընտանիքը (305 մարդ) կազմող 2,8%-ը՝ այլազգիներ:

⁵²¹ Այդ մասին մանրամասն տե՛ս Ռուսու Ի., նշվ. աշխ., էջ 468, 540-542; Երիցյան Ալ., նշվ.աշխ., մաս Ա, էջ 331; Ռշտունի Վ. Հ., նշվ. աշխ., էջ 65-66; Խոջաբեկյան Վ., Հայաստանի բնակչությունը և նրա վասպածությունը, Եր., 1979, էջ 15, 57:

⁵²² Աղքալիքան Խ. Հ., նշվ. աշխ., էջ 17:

⁵²³ XIX դարասկզբի ամբողջ Լոռու գիստանցիայի ժողովրդագրական դրության մասին մանրամասն տե՛ս Սարկիսյան Ռ., նշվ. աշխ., էջ 90-91:

⁵²⁴ Կավказական կալենդար 1851 թ., Տիֆլիս, 1850, օդ. III, ստ. 82.

Վերոհիշյալ գավառներում էթնոծորովրդագրական և կրօնադավանաբանական պատկերի զգալի փոփոխություններ գրանցվեցին արդեն հաջորդ երկու տասնամյակների ընթացքում։ Շուրջ մեկ տասնամյակ տևած ոռւս-պարսկական և ոռւս-թուրքական պատերազմների, գավառների սահմանամերձ դիրքի և դրանցով պայմանագործած մշտական թաղանի, ավերի և գերեբարության հետևանքով վերոհիշյալ շրջաններում նկատվեց ազգաբնակչության թվի կտրուկ նվազում (1817 թ. Փամբակի և Շորագյալի գավառներում ապրում էր ընդամենը 500 աղքատացած ընտանիք)⁵²⁵։ Դրությունը փոփոխեց միայն XIXդարի 20-ական թվականների սկզբներից, երբ ոռւսների համար հաջորդությամբ ավարտված պատերազմների, երկրամասում տիրող խաղաղության, նաև ցածր հարկերի հետ կապված, սույն շրջաններում նորից գրացվեց ազգաբնակչության թվի վերելք, այնպես, որ արդեն 1824-1825 թթ. սկզբներին Փամբակի, Շորագյալի և Լոռու գավառներում բնակչության ընդհանուր թիվը, գերազանցելով 1804-1805 թթ. ցուցանիշը (2102 ընտանիք), հասավ մինչև 2150 ընտանիքի։ Միևնույն ժամանակ լուրջ փոփոխություններ նկատվեցին նաև ազգաբնակչության լրոնադավանաբանական պատկերում։ Ազգաբնակչության թվի աճն եղավ հօգուստ մահմեղական և ի վնաս քրիստոնեական և մասնավորապես հայկական տարրի. Փամբակի, Շորագյալի և Լոռու գավառներում գրեթե եռապատիկ անդամ աճեց մահմեղականների թիվը։ 1804-1805 թթ. ցուցանիշ՝ 202 ընտանիքի դիմաց, որ ընդհանուր բնակչության միայն 9.6%-ն էր, 1824-1825 թթ. վերոհիշյալ երեք շրջաններում մահմեղականների թիվը հասավ 612 ընտանիքի, որն արդեն ընդհանուր բնակչության 28.5%-ն էր։

Հյուսիսային Հայաստանի վերոհիշյալ երեք գավառների պատմության մեջ հիրավի նշանակալից եղան XIX դ. 30-40-ական թվականները, երբ պարսկահպատակ Հայերի ու արևմտաՀայերի զանգըվածային գաղթի, ապա դրան հաջորդած Գյումրու բերդի շինարարության ավարտի, Գյումրի գյուղի քաղաքը դառնալու և Ալեքսանդրապոլի վերանվանվելու, ինչպես նաև 1840 թ. երկրամասի նոր վարչատարածքային բաժանման արդյունքում պատմության թատերագիր իջավ Անդրկովկասում երևի թե միակ՝ գերազանցապես հայ տարրով բնակեցված Ալեքսանդրապոլի գավառը⁵²⁶։

Ներկայացնենք Փամբակ-Շորագյալի դիմունցիայի կամ ապագա (1840 թ.) Ալեքսանդրապոլի գավառը կազմող Փամբակի, Շորագյալի և Լոռու գավառամերի ժողովրդագրական ու կրօնադավանաբանական պատկերը 1828-1831 թթ.-ից մինչև 1840 թ.։ Բարեբախտաբար երկրամասում հայության հետայսու և գերիշխող տարր մնալուն սպառ-

⁵²⁵ АРАԿ, т. 5, ч. 1, стр. 115.

⁵²⁶ Պարսամյան Վ., Հայ աղատագրական շարժումների պատմությունից, Եր., 1958, էջ 85-86:

նացող մահմեդական վտանգը վերացավ արդեն մեկ-երկու տարի անց, երբ իրար հաջորդած ռուս-պարսկական (1826-1828թթ.) և ռուս-թուրքական (1828-1829թթ.) պատերազմների արդյունքում գրանցվեց մահմեդական ազգաբնակչության թվի զգալի նվազում ի հաշիվ բավականին մեծ մասշտարներ բնդունած արտագաղթի⁵²⁷: ճիշտ է նույն 1826-1829թթ. ընթացքում կորուստներ եղան նաև տարածաշրջանի Հայ ազգաբնակչության շրջանում, սակայն պատերազմներին հաջորդած մասսայական ներգաղթերը, արմատապես փոխելով Փամբակի, Շորագյալի և Լոռու գավառների էթնոսողովագրական և կրոնադավաժանաբնական պատկերը՝ այս շրջաններում մեկընդմիշտ հաստատեցին Հայ տարրի գերիշխանությունը մնացած ազգությունների նկատմամբ և Փամբակ-Շորագյալի դիստանցիան դարձրին տոկոսային հարաբերությամբ ամենահայաշատը ամբողջ Անդրկովկաստում: 1829-1832թթ. կամերալ ցուցակագրման տվյալների հիման վրա կազմված պաշտոնական վարկածի Համաձայն՝ ներգաղթերից հետո դիստանցիայում ապրում էր 4901 ընտանիք կամ 16641 մարդ (այս և ասորեւ բերգող թվային տվյալները վերաբերում են միայն արական սեռին), այդ թվում 214 ընտանիք կամ 620մարդ հոգևորականներ, 3ընտանիք կամ 20մարդ մելիքներ, 1536ընտանիք կամ 5425 մարդ բնիկներ և 3148 ընտանիք կամ 10575մարդ նորեկներ: Բնակչության ընդհանուր թվի 95,7%-ը հայեր էին (դրա 89,9%-ը կամ 14963 մարդը՝ հայ-լուսավորչականներ, իսկ 5,8%-ը կամ 963 մարդը՝ Հայ-կաթոլիկներ), 3,3%-ը կամ 546 մարդը՝ մահմեդականներ, իսկ 1% կամ 169 մարդը՝ հույներ⁵²⁸: Նույն պաշտոնական տվյալներով Գյումրիում կար 503 ընտանիք կամ 1744 մարդ, որից 130մարդը կամ 7,5%-ը մահմեդականներ, իսկ մնացած 1614 մարդը կամ 92,5%-ը հայեր էին⁵²⁹:

Գաղթականների տեղաբաշխման ու ներգաղթից հետո Շորագյալի գավառի ժողովրդագրական իրավիճակի նկարագրությունը տալու նպատակով 1829-1832թթ. կամերալ ցուցակագրման վերոհիշյալ ձեռագրերի քննությունը աշխատանքի Բ գիրում մեզ բերել է այն եղբակացության, որ եթե Գյումրու բնակչության թվի Հարցում պաշտոնական տվյալները գրեթե կրկնակի անդամ նվազեցված են, ապա ամբողջ դիստանցիայի ժողովրդագրական պատկերը ներկայացնելիս տեղացիների (բնիկների) և դրանով պայմանավորված՝ նաև ընդհանուր բնակչության վերաբերյալ թվային տվյալները ուռածացված են: Ինչպես կարող էր արևմտահայերի ներգաղթից հետո Գյումրին ունենալ ընդամենը 503 ընտանիք, երբ գաղթի նախօրեին այստեղ եղած մոտ 100 ընտանիքին մինչև 1832թ. աշնանը ավելացան նաև գաղթած կարսեցիների 600 և էրզրումցիների

⁵²⁷ Վիրաբյան Ա., նշվ. աշխ., էջ 43:

⁵²⁸ Обозрение российских владений за Кавказом..., ч. 2, стр. 303-304.

⁵²⁹ Լինչ Հ. Ֆ. Պ., Հայաստան ուղևորություններ և ուսումնասիրություններ, Հ. Ա., Կ. Պոլիս, 1913, էջ 314:

200 ընտանիքներ⁵³⁰, չուրջ 300 ընտանիք բայց գետացիներ (ժամանակակիցների վկայությամբ՝ սրանք իրենց թվով զիջում էին միայն կարսեցիներին, կազմնեղով վերջններիս թվի կեսը), մոտ 150 ընտանիք մշեցիներ, ալաշկերտցիներ, բասենցիներ և Արևմտյան Հայաստանի այլ շրջաններից գաղթածներ: Հետևաբար 1829-1832 թթ. Գյումրու բնակչության ընդհանուր թիվը ընդամենը 503 ընտանիք դիտելը գուրկ է որևէ լուրջ հիմքից: Իրավանում պաշտոնական կարծիքի համար հիմք հանդիսացող նույն 1829-1832 թթ. կամերալ ցուցակագրման ձեռագրերի ուսումնասիրությամբ նախ պարզվեց, որ արևմտահայերի ներգաղթից անմիջապես հետո Գյումրի գյուղում բնակվում էին ոչ թե երկու, ինչպես հավաստում է պաշտոնական կարծիքը, այլ երեք ազգություններ՝ Հայեր, Հույներ և մահմեդականներ և երկրորդ, բնակչության թիվն էլ ոչ թե 503 ընտանիք է, այլ 1350 ընտանիք կամ 7250 մարդ (3980-ը արական, 3270-ը իբական սեռի)⁵³¹: Ինչ վերաբերում է Փամբակ-Շորապյալի դիստանցիայի 1829-1832 թթ. Ժողովրդագրական իրավիճակին, ապա մեր կարծիքով միմյանց հաջորդած ուսուպարսկական և ուսւ-թուրքական պատերազմների ավարտին վերոհիշյալ դիստանցիայում ուղղակի անհնարին էր 1536 ընտանիքի գյուղությունը: Ինչպես նշել ենք աշխատանքի Բ պիտում, 1826-1828 թթ. ուսուպարսկական պատերազմի սկզբին Երևանի Հուսեին խանի հանկարծակի հարձակման, խաղաղ բնակչության շրջանում գերեվարությունների, թալանի, գավառի տարածքից քրիստոնյայ ու մահմեդական ազգաբնակչության զանգվածային արտագաղթի, ապա նաև սկսված նոր ուսւթուրքական պատերազմի հետևանքով դիստանցիայի մի հատվածում Շորապյալի գավառում բնակչության ընդհանուր թիվը 1826 թ. գրանցված 496 ընտանիքի կամ 3040 մարդու փոխարեն նվազել էր մինչև 175 ընտանիք կամ 980 մարդ: Այս գեպքում ինչպես կարող էր դիստանցիայի յուս հատվածում Փամբակի գավառում (Այսուհետև Փամբակի գավառի ժողովրդագրական դրության մասին խոսեիս նկատի կունենանք նաև Բորչարտի գավառի այն հատվածը, որ Ալեքսանդրապոլի գավառի կազմի մեջ մտալ որպես Լոռու գավառակ), որ կրել էր գրեթե նույն զրկանքները, ինչ և Շորապյալ, 1828-1831 թթ. գաղթերի նախօրեին ապրել 1361 ընտանիք (եթե տեղաբնակների թիվը իրոք 1536 ընտանիք է, ապա գրանից 175 ընտանիք շորապյալցիներին հանելու գեպքում փամբակցիների թիվը կազմի 1361 ընտանիք): Ընդունենք, որ Փամբակի գավառում պարսկահպատակ հայերի ու արևմտահայերի գաղթերի նախօրեին կար 1361 ընտանիք: Կատացվի, որ 1828-1831 թթ. զանգվածային գաղթերի պայմաններում հարեան Շորապյալի գավառ են գաղթել 3591 ընտանիքներ՝ բնակչության ընդհանուր թիվն այս գավառում հասցնեղով 3866 ընտանիքի կամ 21695

⁵³⁰ Մաշտոցի անվան Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 74, վալ. 227, էջ 2:

⁵³¹ ՀՀ ՊԿՊԱ, ֆոնդ 93, ցուցակ 1, գործ 83, 84:

մարդու, մինչդեռ Փամբակի գավառոից պետք է որ հեռացած լինեին 59 ընտանիքներ՝ քանզի 1842-ով թվագրված «Կամերալ ցուցակագրման վերասուռում» ձեռագրերի համաձայն՝ 1828-1831 թթ. գաղթերից անմիջապես հետո այս գավառում ապրել է ընդամենը 1305 ընտանիք կամ 7280 մարդ⁵³²:

Այսպիսով, եթե սխալ են պաշտոնական տվյալները Փամբակ-Շորագյալի դիստանցիայի բնիկ ազգաբնակչության թվի մասին, ապա ինքնըստինբյան ընդունելի չեն դրանք նաև 1829-1832թթ. գյուղական ազգաբնակչության (Արփիվային փաստաթղթերում Գյումրին գյուղերի շարքին չի դասվում սկսած 1826թ.) ընդհանուր թվի (4901 ընտանիք) տեսակետից:

Պարսկահպատակ Հայերի և մանավանդ արևմտահայերի գանգվածային գաղթերից անմիջապես հետո Փամբակ-Շորագյալի դիստանցիայի էժնուժողովրդագրական և կրոնադավանաբանական իրական պատկերն այսպիսին էր. Դիստանցիայի բնակչության ընդհանուր թիվը 1824-1825 թթ. գրանցված 2150 ընտանիքից հասավ 5171 ընտանիքի, որից 1350 ընտանիքը (7250 մարդ)՝ 26%-ը ապրում էր Գյումրիում, իսկ 3821 ընտանիքը (21725 մարդ) կամ 74%-ը՝ գյուղական վայրերում: Կտրուկ փոխվեց դիստանցիայի ազգաբնակչության կրոնադավանաբանական պատկերը: Եթե 1824-1825 թթ. Հայերը կազմում էին ընդհանուր բնակչության թվի 70%, իսկ այլազգիները՝ 30%, ապա գաղթերից հետո Հայերի թիվը հասավ 95%-ի, փոխարենը այլազգիների թիվը նվազեց մինչև 5%: Ըստ որում, միատարրությամբ (Հայաշատությամբ) ամբողջ դիստանցիայում առանձնանում էին Շորագյալի գավառը և Հատկապես Գյումրին, որ XIX դարի 30-ական թվականների կեսերից արդեն ամենահայաշատ (չնայած նորաստեղծ լինելու հանդամանքին) քաղաքն էր ամբողջ Անդրկովկասում⁵³³: Գավառում 2516 ընտանիքից (տե՛ս աղյուսակ 13) Հայեր էին 2482-ը (14317 մարդ), գավառի գյուղական բնակչության ընդհանուր թվի ճնշող մեծամասնությունը՝ 98,6%, մահմեղականներ էին միայն 34 ընտանիքը (128 մարդ), այսինքն բնակչության միայն 1,4%-ը: 1350 ընտանիք ունեցող Գյումրիում Հայեր էին բնակչության 96%-ը, Հույներ՝ 3%-ը, իսկ մահմեղականներ՝ միայն 1%-ը⁵³⁴: Համեմատության համար ասենք, որ Արևելյան Հայաստանի ամենամեծ քաղաքում՝ Երևանում, նույն 1829-1832 թթ. բնակչության ընդհանուր թվից՝ 2751 ընտանիքից (11463 մարդ) Հայեր էին 944 ընտանիքը (4132 մարդ) կամ միայն 34%-ը, իսկ մահմեղականներ՝ 1807

⁵³² ՀՀ ՊԿՊԱ, փոնդ 93, ցուցակ 1, գործ 82:

⁵³³ Լին Հ. Ֆ. Պ., Հայաստան ուղևորություններ և ուսումնասիրություններ, Հ. Ա, էջ 61-62:

⁵³⁴ ՀՀ ՊԿՊԱ, փոնդ 93, ցուցակ 1, գործ 83, 84:

ընտանիքը (7331 մարդ) կամ 66%-ը⁵³⁵: Այս ցանկում թե՛ Հայերի թվով և թե՛ մահմեղականների հետ ունեցած տոկոսային հարաբերությամբ երրորդն ու վերջինը Փամբակի գավառն էր: 1824-1825 թթ. գավառում ազգաբնակչության մեջ գերակշռող տարրը Հայերն էին՝ 547 ընտանիք (72,2%): Արխիվային նյութի գրեթե իսպառ բացակայությունը հնարավորություն չի տալիս սակայն փոքրիշտատե պատկերացում կազմելու գավառի Հաջորդ երեք-չորս տարիների ժողովրդագրական իրավիճակի մասին: Այսուամենայնիվ, ձեռքի տակ եղած աղբյուրների և մանավանդ «Կամերալ ցուցակագրման վերատուգում» ձեռագրերի մանրակրկիտ ուսումնասիրությամբ եկանք այն համոզման, որ 1828-1831 թթ. գաղթերի նախօրեին վերոհիշյալ հարցում լուրջ փոփոխություն 1824-1825 թթ. տվյալների համեմատ չի եղել: Մինչդեռ 1829-1832 թթ. կամերալ ցուցակագրման տվյալները վկայում են, որ գավառում արդեն ապրում էր 1305 ընտանիք կամ 7280 մարդ, որից Հայեր էին 1133 ընտանիքը (6249 մարդ)՝ 86,8%-ը, և այլազգիներ, գերազանցապես մահմեղականներ էին 172 ընտանիքը (1031 մարդ) կամ 13,2%-ը⁵³⁷:

Հայահավաքման գործընթացը Հյուսիսային Հայաստանի այս հատվածում շարունակեց նաև Հաջորդ տասնամյակի ընթացքում, երբ Հարյուրակոր գաղթական ընտանիքներ, չհամակերպելով իրենց նոր ընակալարկերում ստեղծված պայմաններին, նորից բննեցին գաղթի ճամփան, որը նրանցից շատերին (459 ընտանիք) բերեց Փամբակ-Շորապյալ: Արդյունքը եղավ այն, որ երկրամասում իր ընակչության միասուրբությամբ առանց այն էլ աչքի ընկնող Շորապյալի գավառի գյուղական ազգաբնակչության թիվը XIX դարի 30-ական թվականների վերջերին հասավ 2830 ընտանիքի (տե՛ս այլուսակ N 15), որից Հայեր էին 98,8%-ը (2796 ընտանիք), մահմեղականներ՝ 1,2%-ը (34 ընտանիք):

Երևանական թվականների երկրորդ կեսին դիստանցիա վերապաղ-թած 459 ընտանիքներից Փամբակի գավառի 41 գյուղերում⁵³⁸ տեղափորփածները (145 ընտանիք) և՝ քանակապես, և՝ էթնոտոպոգրաֆական կազմով գգալիորեն տարբերվում էին Շորապյալի գավառում Հաստատվածներից (314 ընտանիք), որոնք միայն Հայեր էին: Մինչդեռ Փամբակում Հաստատված նորեկներից Հայեր էին միայն 117 ընտանիքը (701 մարդ), 28 ընտանիքը մահմեղականներ էին (58 մարդ), ուստի և Հույներ (111 մարդ)⁵³⁹: Այսուհանդերձ Փամբակում ևս XIX դ. 30-ական թվականների վերջերին գրանցվեց ազգաբնակչության թվի աճ՝ մինչև

⁵³⁵ Зелинский С., Город Эриван, Сборник материалов для описания местностей и племен Кавказа, (այսուհետև՝ СМОМПК), вып. I, отд. 1, Тифлис, 1881, стр. 40-41.

⁵³⁶ Обозрение российских владений за Кавказом..., ч. 2-4, СПб., 1836.

⁵³⁷ ՀՀ ՊԿԱ, ֆոնդ 93, ցուցակ 1, գործ 82:

⁵³⁸ Կորիսացան Զ., նշվ. աշխ., էջ XXIX-XXX:

⁵³⁹ Նույնը:

1450 ընտանիք (8150 մարդ)⁵⁴⁰: Ընդ որում, Հայերի քանակը գավառում թվապես զգալիորեն աճելով, 1829-1832 թվականների 1133 ընտանիքի փոխարեն 1830-ականների կերջին հասավ մինչև 1250 ընտանիքի (6950 մարդու), իսկ այլազգիներինը՝ միայն 200 ընտանիքի (1829-1832 թթ. 172 ընտանիքի փոխարեն):

Այսպիսով XIX դարի 30-ական թթ. վերջին՝ Ալեքսանդրապոլի գավառի կազմավորման նախօրեին, ապագա գավառի հիմք հանդիսացող Փամբակ-Շորապյալի դիստանցիան ուներ Էթնոժողովրդապրական և կրոնադապալանաբանական հետեւյալ պատկերը: Միայն գյուղական ազգաբնակչության թիվը կազմեց 4280 ընտանիք կամ 24017 մարդ (13681-ը արական, 10336-ը իգական սեռի): Ընդ որում, իբրև ճնշող մեծամասնություն, Հայերը 4046 ընտանիք կամ 22689 մարդ էին (12924-ը արական, 9765-ը իգական սեռի) և կազմում էին գիտանցիայի գյուղական ազգաբնակչության ընդհանուր թիվ 94,5%-ը, այն դեպքում, երբ այլազգիները 234 ընտանիքով կամ 1328 մարդով (757-ը արական, 571-ը իգական սեռի) դիստանցիայի գյուղական բնակչության մեջ բացարձակ փոքրամասնություն էին՝ միայն 5,5%:

Ցավոք, արիսիվային նյութի բացակայության պատճառով չենք կարող որոշակի պատկերացում կազմել այդ նույն ժամանակահատվածում Փամբակ-Շորապյալի դիստանցիայի միակ քաղաքը հանդիսացող Ալեքսանդրապոլի էթնոժողովրդապրական և կրոնադապանաբնական իրավիճակի մասին: Աղքատիկ տեղեկություն կա 1834 թ. Ապարանի Զամգիի մահամբ Մալին-քենոդ գյուղից 5 ընտանիքի⁵⁴¹ և Փամբակի Ղարաքիլիսապից մոտ 100 ընտանիք նախկին էրզրումցիների⁵⁴² Գյումրի գաղղթելու մասին, ինչպես նաև մոտ 77 ընտանիքների՝ Գյումրուց անհայտ ուղղությամբ Հեռանալու վերաբերյալ:⁵⁴³ Մնում է ենթադրել, որ այսպիսի աննշան փոփոխությունները չէին կարող առաջ բերել Գյումրու կրոնադապանաբանական պատկերի էական փոփոխություններ 40-ական թվականների սահմանագլխին:

Այսպիսով, պարսկահայերի, ապա արևմտահայերի ներգաղթի, ինչպես նաև XIX դ. 40-ական թվականների սկզբներին տեղի ունեցած նոր ու բավականին իրատեսական վարչատարածքային բարեկոփան հետևանքով ձևավորվեց Անդրկովկասում ազգաբնակչության կազմի տեսակետից ամենամիատարր ու հայեցի Ալեքսանդրապոլի գավառը: Գավառի ազգաբնակչության կազմի միաստարրությունը փոքրինչ խախտվեց միայն XIX դ. 40-ական թվականների կեսերին, երբ ցարական կառավարությունը մի քանի հետաձգումներից հետո վերջապես կյանքի կոչեց Անդրկովկասում մեծաթիվ ոռու գաղթականների,

⁵⁴⁰ ՀՀ ՊԿՊԱ, փոնդ 93, ցուցակ 1, գործ 82:

⁵⁴¹ ՀՀ ՊԿՊԱ, փոնդ 90, ցուցակ 1, գործ 447, էջ 32-33:

⁵⁴² Քաջրերումնի, նշվ. աշխ., էջ 3-4:

⁵⁴³ ՀՀ ՊԿՊԱ, փոնդ 93, ցուցակ 1, գործ 84, մաս Բ:

գերազանցապես աղանդավորների, վերաբնակեցնելու նախօրոք մշակած ծրագիրը⁵⁴⁴: Երկրամասը Ռուսաստանի համար հուսալի էթնիկական տարրով բնակեցնելու հարցը ցարական կառավարության համար առաջնահերթ խնդիր դարձավ գեուևս XIX դ. 20-ական թվականներից: Հնդ որում, հուսալի տարր ասելով թե՛ ցարական չինովնիկները և թե՛ Կովկասի կուսակալ ի. Պատկերը նկատի ունեին միայն մալուս կազակներին, որոնց տեղավորելով Անդրկովկասի և մասնավորապես Արևելյան Հայաստանի սահմանամերձ վայրերում, ցարական կառավարությունը մտադիր էր Ռուսաստանից հետագա պարբերաբար համալրումների հաշվին ձևավորելու այսպես կոչված «Արաքսի կազակությունը»: 80000 կազակներ ընդունելու, նրանց սահմանամերձ շրջաններում բնակեցնելու, ինչպես նաև կազակային 10 օկրուգներ (յուրաքանչյուր օկրուգն ունենալու էր 200000 դեսյատին հող և 8000 բնակիչ) ստեղծելու նպատակով 1827 թ. կոմս Պոտոք⁵⁴⁵ Տոլստոյի գլխավորությամբ նույնիսկ ստեղծվեց Հաստուկ կոմիտե, սակայն վերոհիշյալ ծրագրի իրագործումը գերազանցապես մեծ ծախսեր ու երկար ժամանակ պահանջելու պատճառով այդ շրջանում իրագործելի չէր: Այդ պատճառով էլ ցարական կառավարությունը, դրա իրագործումն ապագային թողնելով, իր սահմանամերձ շրջանների գոնե մի մասը էթնիկական հուսալի տարրով շուտափույթ բնակեցնելու հարցի լուծումն առայժմ տեսնում էր Պարսկաստանից հայերի զանգվածային ներգաղթ կազմակերպելու մեջ:

Արևելյան Հայաստանում մալուս կազակներ վերաբնակեցնելու Պասկեիչի երկրորդ և երրորդ ծրագրերը ևս, որ արքունիք ներկայացվեց 1829, ապա 1830 թթ., կրկին վերոբերյալ պատճառներով չհաջողվեց իրագործել: Փոխարենը, ինչպես արդեն ապիկել է, բնդամենը 95000 ռ. ուկով ու 380000 ռ. արծաթով ուստական կառավարությունը կազմակերպեց 12357 ընտանիքների գաղթը Տաճկահայաստանից: Անդրկովկասի ուստականացմանը ցարական կառավարությունը լրջորեն ձեռնամուխ եղավ միայն XIX դ. 40-ական թվականների կեսերից, երբ տարածաշրջանում իր տիրապետությունն ապիկի ամրապնդելու նպատակով առայժմ միայն Արևելյան Հայաստանում սկսեց վերաբնակեցնել մեծ թվով ոռու աղանդավորների: Հետագա իրադարձությունները ցույց տվեցին, որ չնայած Անդրկովկասայան երկրամասի ուստականացման պասկեիչյան նախագծերի ընդհանուր առմամբ մերժմանը, դրանց որոշ հոդվածներ մի քանի ամիս անց սկսեցին գործադրվել: Սա ըստ էության Արևելյան Հայաստանը ոռու աղանդավորներով վերաբնակեցնելու ցարական կառավարության քաղաքականության սկիզբը եղավ: Իսկ Ալեք-

⁵⁴⁴ Ռուս աղանդավորներով Անդրկովկասայան երկրամասը վերաբնակեցնելու ցարական կառավարության վերոհիշյալ քաղաքականության մասին մանրամասն տե՛ս Հայթյան Ա., Հայաստանի ոռու վերաբնակերը 1830-1920 թթ., Եր., 1989:

⁵⁴⁵ Պարսկայան Վ., Գրիգորյենովը և հայ-ուստական Հայագերությունները, Եր., 1947, էջ 104-105:

սանդրապոլի գավառի ոռուսականացումը բուռն թափով սկսվեց միայն
XIX դ. 40-ական թվականների կեսերից: 1844թ. Թիֆլիս-
Ալեքսանդրապոլ ուսպմուղու վրա, Լոռվա Մեծ Ղարաքիլիսա գյուղի օդ-
տագործման տակ գտնվող Օրբելիանների կալվածատիրական
Հողերում,որ աչքի էին ընկնում առողջ կլիմայով և հարմար էին
անասնապահության ու հողագործության համար, հիմնվեց Ալեք-
սանդրապոլի գավառի առաջին ոռուսական գյուղը՝ Վորոնցովկան: Վերջինիս
բնակիչները՝ մեծամասամբ Օրենբուրգի և Սարատովի
նահանգներից երած մորկաններ, Անդրկովկասում էին Հայսնըլիլ
գեռևս 1834 թ. և շուրջ մեկ տասնամյակ տեղած թափառումներից հետո
միայն կարողացան հիմնել Վորոնցովկան: 1849 թ. գյուղն ուներ արդեն
141 ընտանիք, մեկ տարի անց ավելացավ ևս 143 ընտանիք, որից 122-ը
Արևելյան Հայաստան էր եկել գեռևս 1834-1836 թթ.: Արխիվային
նյութերից հստակ երևում է, որ բնակչության թվի արհեստական աճն ի
հաշիվ նոր վերաբնակների Վորոնցովկայում շարունակվել է նաև հետա-
գա տարիներին: Այսպես, այսուեղ վերահաստատվելու նպատակով
արդեն 1846 թ. սլքորին գավառի Փամբակի տեղամասի պետին էին
դիմել Գանձակի և Շամախու նահանգների մի շարք գյուղերի ոռու
վերաբնակներ, որոնք չդիմանալով տեղական կիմային և ժողովրդի ոչ
բարեհամբույր վերաբերմունքին՝ թույլտվություն էին ինդրում տեղա-
փոխվելու Ալեքսանդրապոլի գավառ: Այս մասին Կովկասի փոխարքա-
յին տեղեկացնելով՝ Ալեքսանդրապոլի գավառապետը միաժամանակ
նշում էր, թե Շամախու նահանգի Թոփչի գյուղի ողջ ոռու բնակչու-
թյունը չնչին բացառությամբ (երկու ընտանիք Ելենովկայում և Հինդ
ընտանիք Նովոսարատովկայայում) իր թույլտվությամբ վերաբնակվել
են Վորոնցովկայում⁵⁴⁸: Թե ոռուսական կառավարության կողմանակալ
քաղաքականությունն ինչ ազգեցություն ունեցավ այս գյուղի
բնակչության հետագա աճի վրա, պարզ երևում է XIX դ. հետագա
ընթացքում իրար Հաջորդած մարդահամարների տվյալներից: Այսպես,
1852 թ. կամերալ ցուցակագրման տվյալներով Վորոնցովկայում
ազգաբնակչության թիվը 926 մարդ էր (450-ը արական, 476-ը իգական
սեռի), ապա 15 տարի անց՝ 1867 թ. հասավ արդեն 2284մարդու
(1189-ը արական, 1095-ը իգական սեռի):

Վորոնցովկայի հիմնադրման տարրում Ալեքսանդրապոլ-Դիլիջան
ճանապարհի վրա՝ Համգաշիմանի մոտ, հիմնվեցին ևս երկու ոռուսական
գյուղեր՝ Նիկիտինոն և Վոսկրեսենովկան⁵⁵¹: Նիկիտինոն 1852 թ. ուներ

⁵⁴⁶ Խոթաբեկան Վ. Ե., նշվ. աշխ., էջ 48:

⁵⁴⁷ Հայթյան Ա., նշվ. աշխ., էջ 59:

⁵⁴⁸ ՀՀ ՊԿԱ, ֆոնդ 133, ցուցակ 1, գործ 329, էջ 361:

⁵⁴⁹ ՀՀ ՊԿԱ, ֆոնդ 93, ցուցակ 1, գործ 110, էջ 510-547:

⁵⁵⁰ Կավազական կալենդար հա 1899 թ., Տիֆլիս, 1898, օդ. III, սր. 3.

⁵⁵¹ ՀՀ ՊԿԱ, ֆոնդ 133, ցուցակ 1, գործ 359, էջ 6:

56 բնտանիք կամ 388 մարդ (204-ը արական, 184-ը իգական սեռի)⁵⁵²: Վուկրեսենովկայում 1852 թ. գրությամբ ապրում էր 61 ընտանիք կամ 375 մարդ (194-ը արական, 181-ը իգական սեռի)⁵⁵³:

Արևելյան Հայաստանի ոռուսականացման գործընթացի հաջորդ փուլը սկսեց իրագործվել XIX դ. 40-ական թվականների վերջերին, երբ ցարական կառավարությունը, Հաշվի չառներով Արևելյան Հայաստանի տեղացի գյուղացիության հողածարավ վիճակը, Սևանա լճի ավագանում, Ալեքսանդրապոլի գավառում, Լոռի գաշտում և այլուր Հայկական գյուղական համայնքներից ընդարձակ հողակտորներ առանձնացրեց՝ ոռուս աղանդավորների վերաբնակեցման համար ստեղծելով այսպես կոչված՝ «Հաստուկ ֆոնդ»: Վերաբնակեցման այս նոր փուլն ամբողջությամբ իրագործվեց Երևանի գավառապետ Բալավատսկու և վերևում արդեն Հիշված Ֆադեևի ծրագրով: Վերջինս Արևելյան Հայաստանը ոռուս աղանդավորներով վերաբնակեցնելու իր ազգենիվ ճգտումների մեջ գերազանցեց Բալավատսկուն: 1849 թ. մայիսի 13-ին Երևանի նահանգապետին ներկայացրած իր գեկուցյուն Ֆադեևը գրում էր, թե Ալեքսանդրապոլի գավառում գտել է երկու հարմար տեղամաս ոռուս աղանդավորներով վերաբնակեցնելու համար: Դրանցից մեկը «Շորագյալի Էլիոտը կոչված վայրն է, ուր Համաձայն այս տարվա չափումների կա չուրջ 6928 գեսյատին օգտակար հողամաս, հետևաբար յուրաքանչյուր ընտանիքի համար 30 գեսյատին հող նախատեսելով, այնտեղ կարելի է բնակեցնել մինչև 230 ընտանիք»⁵⁵⁴: Գտնվելով Ալեքսանդրապոլ-Ախալցիս ճանապարհի վրա՝ տեղամասը հեռու չէր արդեն գյուղյուն ունեցող ոռուսական (գուխտորների ու մոլիկանների) գյուղերից, այնպես որ Ֆադեևի համոզմամբ ու գավառապետի կարծիքով՝ ոչ մի խոչընդոտ չկար այն ոռուս վերաբնակներով գրադաւոնելու համար:

Ուստաներով վերաբնակեցնելու համար նախատեսված երկրորդ տեղամասը, ըստ Ֆադեևի, հենց Ալեքսանդրապոլ քաղաքն էր, ուր նա առաջարկում էր բնակեցնել 20 ընտանիք միայն արհեստավորների⁵⁵⁵: Նրա ծրագրի առաջնահերթ խնդիրը ընդհանրապես Ալեքսանդրապոլի հարթավայրի և Ախուլյան գետի միջին հոսանքի ձախափնյա բոլոր տարածությունների վերաբնակեցումն էր ուստաներով: Նա մտորում էր ոռուսական գյուղեր հիմնել նաև Ալեքսանդրապոլ-Դիլիջան մայրուղու ամբողջ երկարությամբ՝ գտնելով, որ Ալեքսանդրապոլի գավառի հատկապես Լոռի գաշտի բնակեցումը ուստաներով բացառիկ նշանակություն կունենա Երևանի ու Թիֆլիսի նահանգներն իրար միացնող ուղեհանդգույցում ուժեղ հենակետ ստեղծելու տեսակետից: Ալեքսանդրապոլի գավառը ոռուս աղանդավորներով վերաբնակեցնելու Ֆադեևի ծրագրի

⁵⁵² ՀՀ ՊԿԱ, ֆոնդ 133, ցուցակ 1, գործ 110, էջ 548-562:

⁵⁵³ Նույն տեղում էջ 491-508:

⁵⁵⁴ Հայթյան Ա., նշվ. այսու., էջ 47:

⁵⁵⁵ Նույն տեղում, էջ 47:

մեխը հենց գավառի բոլոր ճանապարհները ոռուսական գյուղերով շրջապատեն էր⁵⁵⁶: Ի դեպ, 1840-ական թթ. ոռուս աղանդավորները ուժի-ինը գյուղեր (Բոգդանովկա, Սլավյանկա, Գորելոյե և այլն) հիմնեցին նաև Ախալքալաքի գավառի հարավ-արևելքում՝ դեպի Ալեքսանդրապոլ տանող ճանապարհի վրա⁵⁵⁷:

Յարական կառավարությունը ֆաղեկի վերոհիշյալ նախագծերին լրջորեն անդրադարձավ արդեն 1850 թ. սկզբներից, երբ Երևանի նահանգում արխիվային տվյալների համաձայն արդեն հաստատվել էին մոտ 500 ընտանիք ոռուս աղանդավորներ՝ :Վերաբնակեցման պաշտոնապես թույլատրությունից (1850 թ. մարտի 28) Արևելյան Հայաստան տեղափոխվեցին և 15080 դեսյատին 3574 սաժեն հողի վրա (այդ թվում Ալեքսանդրապոլի գավառում՝ էլիդար տեղամասում 6928 դեսյատին 1574 սաժեն, Ալեքսանդրապոլ քաղաքի մոտ 60 դեսյատին, Դարաչիչագի և Ալեքսանդրապոլի միջև ընկած Միսխանա տեղամասում՝ 1906 դեսյատին) հաստատվեցին ևս 500 ընտանիք ոռուս աղանդավորներ: Յուրաքանչյուր նորեկ ընտանիք կառավարության 1848 թ. դեկտեմբերի 9-ի որոշմամբ տրվում էր 8-ամյա հարկային արտոնություն ու մեկ անձի համար միջնը 6-7 դեսյատին հող (այդ որոշումը՝ կամովին Անդրկովկաս եկած և այստեղ կրկին ուղղափառ հավատքի դարձած բոլոր վերաբնակիչներին 25 տարով ազատվում էր հարկերից)⁵⁵⁸: Դա այն գեպքում, երբ Ատրաբետի հավաստմամբ՝ մեկ անձի համար տեղաբնակ հայերը ունեին միայն 1-3 դեսյատին հող (շատ հայկական գյուղեր նույնիսկ արտօտատեղեր չունեին իրենց սահմաններում), թաթարները (թուրքերը, պարսիկները)⁵⁵⁹՝ 4-5 դեսյատին, իսկ ուղղափառ հոյները՝ 5-6 դեսյատին⁵⁶⁰:

Թե 1850 թ. հետո Արևելյան Հայաստանում վերաբնակեցված վերոհիշյալ 500 ընտանիք ոռուս աղանդավորներից քանիսը վերջնականապես հաստատվեցին Ալեքսանդրապոլի գավառում, արխիվային նյութի բացակայության պատճառով ճատիվ նշելն անհնար է: Եվ այնուամենայնիվ ի մի բերելով մեր ունեցած տվյալները գավառում հաստատված ոռուս աղանդավորների վերաբերյալ, կարելի է արձանագրել հետեւյալը. XIX դարի կեսից բուռն թափով սկսված Անդրկովկասյան երկրամասի ոռուսականացման ցարական կառավարության քաղաքականության արդյունքում Ալեքսանդրապոլի գավառի միայն Փամբակի և Լոռվա տեղամասերում 383 ընտանիք կամ 2232 ոռուս վերաբնակները հիմնեցին չորս գյուղեր:

⁵⁵⁶ Հայթյան Ա., նշվ. աշխ., Էջ 48:

⁵⁵⁷ Այդ մասին մանրամասն տե՛ս Մելքոնյան Ա., Զավախիքը XIX դարում և XX դարի առաջին քառորդին, Եր., 2003, Էջ 217::

⁵⁵⁸ ՀՀ ՊԿԱ, Փոնդ 133, ցուցակ 1, գործ 359, Էջ 10:

⁵⁵⁹ Հայթյան Ա., նշվ. աշխ., Էջ 92:

⁵⁶⁰ Ատրաբետ, Հողատիրությունը Կովկասում, Ալեքսանդրապոլ, 1906, Էջ 34:

Աղուսակ 15. Ալեքսանդրապոլի գավառի ոռու վերաբնակների թիվը Համաձայն 1852թ. կամերայ ցուցակագրման տվյալների

| գյուղերը | ընտան. | ար. | իգ. | ընդամ. | դաշտանք. | տեղամաս |
|------------------|--------|------|------|--------|----------|---------|
| 1. Վուկրեսենովկա | 61 | 194 | 181 | 375 | մոլոկան | Փամբակի |
| 2. Նիկիտինո | 56 | 204 | 184 | 388 | մոլոկան | Փամբակի |
| 3. Վորոնցովկա | 170 | 450 | 476 | 926 | մոլոկան | Լոռու |
| 4. Պիլովնոյի | 96 | 266 | 277 | 543 | ուղղափառ | Լոռու |
| Ընդամենը | 383 | 1114 | 1118 | 2232 | | |

Հնդ որում, եթե Փամբակի տեղամասում հիմնված Վուկրեսենովկա և Նիկիտինո գյուղերը բնակեցվեցին բացառապես ոռու աղանդավորներով (117 ընտանիք), ապա Լոռովա տեղամասում հիմնված երկու գյուղերից (Պիլովնոյի և Վորոնցովկա) աղանդավորական էր միայն վերջինը, մինչդեռ Պիլովնոյին հիմնվեց աղանդավորների հետ միաժամանակ գավառում վերաբնակեցված 96 ընտանիք ուղղափառ ոռուների կողմից⁵⁶¹: Ինչ վերաբերում է ոռու աղանդավորների 20 արհեստավորական ընտանիքներ Ալեքսանդրապոլում վերաբնակեցնելուն, ապա մեր ունեցած տվյալներով այս գործընթացն իր նախնական փուլում ընթանում էր Համեմատաբար դանդաղ. մինչև 50-ական թվականների կեսերը ցարական կառավարությանը հաջողվել էր քաղաքում տեղավորել ընդամենը 14 ոռու աղանդավորի⁵⁶²: Իսկ արդեն 50-ական թվականների վերջերին այդ թիվը կտրուկ աճեց և Ալեքսանդրապոլի գավառապետի՝ Երևանի նահանգապետին ներկայացրած գելուցազրի Համաձայն՝ քաղաքում Հասավ 124 մարդու (67-ը արական, 57-ը իգական սեռի)⁵⁶³:

Ալեքսանդրապոլի գավառի XIX դ. 40-50-ական թվականների էթնոտոպովրդական և կրօնագավանաբանական պատկերի ձևագործման վրա որոշակի ազգեցություն թողեցին նաև այլ գործոններ: Դրանցից կարելի է առանձնացնել ժամանակակից, որ գեռ 30-ական թվականների վերջերին մորեգնում էր Վրաստանի հարավային սահմանամերձ շրջաններում⁵⁶⁴, իսկ կարճ ժամանակ անց տեղափոխվեց Արևելյան Հայաստանի տարածք և ընդգրկեց նաև Ալեքսանդրապոլի գավառն ու մասնավանդ Ալեքսանդրապոլ քաղաքը: Թե գավառում ե՞րբ և ո՞րտեղ երևան եկան առաջին հիվանդները, տվյալների բացակայության պատճառով պարզել հնարապոր չեղավ: Դրանցից առաջնները վերաբերում են միայն 1840թ. աշնան կեսերին, երբ Համաճարակը գավառում արդեն ընդունել էր բավականին մեծ մասշտաբներ: Ի դեպ, հիվանդության հետևանքով գրանցված գուշերի մասին պաշտոնական

⁵⁶¹ ՀՀ ՊԿԱ, ֆոնդ 93, ցուցակ 1, գործ 110, էջ 563-585:

⁵⁶² Կավազակի կալենդար 1855 թիվ, Տիֆլիս, 1854, ուժ. III, պահ. 332-333.

⁵⁶³ ՀՀ ՊԿԱ, ֆոնդ 125, ցուցակ 1, գործ 14-1 մաս, էջ 63:

⁵⁶⁴ Մինչև XIX դարի 50-ական թվականներն Անդրկովկասում բնակված ժամանակատի և լողերայի Համաճարակների մասին մանրամասն տես' Երիցով Ա., Կոմա և Զակավազի, (Իсторический очерк), Տիֆլիս, 1879; Նույնի, Իстория холерных эпидемии в Закавказье, Тифлис, 1872.

տվյալները գերազանցապես վերաբերում են միայն Ալեքսանդրապոլ քաղաքին։ Այսպես, 1840 թ. հոկտեմբերի 17-ին օտարապահանների գործերով նախարար Բլուդովին ներկայացրած իր գեկուցագրում գեներալ Ե.Գոլովինը Ալեքսանդրապոլում համաձարակի հասցրած վնասների մասին գրում էր. «Պատիվ ունեմ Զեզ տեղեկացներու, որ Ալեքսանդրապոլում ժանտախտի ի Հայոտ գալուց մինչև հոկտեմբերի 7-ը հիվանդացել է 126 մարդ, որից 88-ը մահացել է, իսկ մնացած 38-ը գտնվում է կասկածելի վիճակում»⁵⁶⁵։ Ժանտախտի համաձարակը քաղաքում շարունակվել է նաև Հաջորդ մեկ-երկու ամիսների ընթացքում և մեր կարծիքով նահանջել է միայն ցուրտա ձմռան գալստյան հետ։ Այդ են վկայում 1840թ. դեկտեմբեր-1841թ. հունվար ամիսների ընթացքում գեներալ Ե. Գոլովինին՝ կոմս Ստրոգանովին ներկայացրած գեկուցագրերը։ 1840 թ. դեկտեմբերի 22-ի N 552 գեկուցագրով Գոլովինը տեղեկացնում էր, թե «նոյեմբերի 25-ից մինչև գեկտեմբերի 19-ը Ալեքսանդրապոլում ժանտախտով ախտահարվել է միայն երեք մարդ, որի հետևանքով հիվանդների թիվը քաղաքում նվազել է մինչև 37-ի (գեկուցագրին Հաջորդած օրերի ընթացքում սրանցից 6-ը մահացել էր, 29-ը՝ առողջացել, 2-ը կասկածելի վիճակում էին)»⁵⁶⁶, ապա արդեն 1841 թ. հունվարի 8-ով թվագրված իր N 4 գեկուցագրում Գոլովինը նույն Ստրոգանովին հայտնում էր քաղաքում հիվանդության իսպառ վերացման մասին⁵⁶⁷։ Մեր կարծիքով համաձարակն Ալեքսանդրապոլում գերազանցապես տարածված է եղել ոռոսական զինվորականության շրջանում, և ժանտախտի զոհ դարձածների մասին վերոհիշյալ թվային տվյալները մեծամասամբ վերաբերում են Հենց Ալեքսանդրապոլում կանգնած ոռոսական զորքերին, և ոչ թե քաղաքային բնակչությանը։ Դա է վկայում նաև գեներալ Գոլովինի արդեն հիշված 1840թ. դեկտեմբերի 22-ի գեկուցագրին՝ ներկայացված կոմս Ստրոգանովին, որում մասնավորապես նշվում էր, թե «Ժանտախտն Ալեքսանդրապոլում մասնավանդ տարածված է ոռոսական զորքերում՝ ցածրաատիճանն սպայական անձնակազմի և զինվորականության շրջանում»⁵⁶⁸։ Ինչ վերաբերում է քաղաքային բնակչությանը, ապա մեր կարծիքով համաձարակի զոհերի թիվն այս շրջանում չպետք է մեծ լիներ հետեւյալ պատճառով։ Նախևառաջ, եթե այդպիսիք քաղաքում մեծ թիվ կազմեին, ապա անպայման հիշված կինեին 1842-ով թվագրված «Կամերալ ցուցակագրման վերատուգում» ձեռագրերում, ինչպես հիշվել են մեր կողմեց արդեն նշված այն 77 ընտանիքները, որոնք քաղաքից հեռացել էին անհայտ ուղղությամբ։ Եվ վերջապես, եթե համաձարակի զոհերն իրոք մեծաթիվ էին, ապա անհնար է, որ քաղաքի ժողովրդագրական դրու-

⁵⁶⁵ АКАԿ, т. 7, стр. 85.

⁵⁶⁶ Նույն տեղում, էջ 87.

⁵⁶⁷ Նույն տեղում, էջ 88:

⁵⁶⁸ Նույն տեղում, էջ 87.

թյան մեջ որևէ, թեկուղւ աննշան հետոնթաց չնկատվեր: Մինչդեռ արխիվային փաստաթղթերով ու մեր ձեռքի տակ եղած տվյալներով դա չի փաստվում: Ընդհակառակը, XIX դ. ամբողջ 40-ական թվականների ընթացքում նկատվում է քաղաքային բնակչության պարբերական և համաշափ անընդհատ աճ: Այսպես, եթե զանգվածային ներգաղթերից հետո Շորավայի գավառով Գյումրի գյուղում բնակչության թիվը հասավ 1350 ընտանիքի (7250 մարդու), ապա արդեն 1848թ. Ալեքսանդրապոլս ուներ 1957 ընտանիք, այդ թվում Հայեր էին 1871 ընտանիքը, որ կազմում էր քաղաքի ընդհանուր բնակչության 95,6%-ը: Հույներ էին միայն 27 ընտանիքը կամ 1,4%-ը, մահմեղականներ՝ 59 ընտանիքը կամ 3%-ը⁵⁶⁹:

Ալեքսանդրապոլ քաղաքում բնակչության թիվի համաշափ աճ է դիտվում նաև Հաջորդ տարիների ընթացքում: Այսպես, եթե 1849 թ.՝ Ֆաղենի կողմից Ալեքսանդրապոլի գավառը ուսւա աղանդավարոներով վերաբնակեցնելու նախագիծը կազմելու նախօրեին, Ալեքսանդրապոլը նորաստեղծ Երևանի նահանգում իր մարդաշատությամբ Երևանից հետո երկրորդն էր (1962 ընտանիք կամ 10260 մարդ) և առաջնն իր բնակչության միատարրությամբ (Հայեր էին 95,8%-ը, 1,3%՝ Հույներ, 2,5%-ը մահմեղականներ):⁵⁷⁰ ապա 1850-1851 թթ.՝ վերոհիշյալ ծրագրի արդեն իրագործման պահին, քաղաքային բնակչության թիվը հասավ 11280 մարդու (6000-ը արական, 5280-ը իդական սեռի): Միևնույն ժամանակ քաղաքում երևան եկան ցարական կառավարության՝ Արևելյան Հայաստանը ուսւաներով վերաբնակեցնելու առաջին թույլ նկրտումները. Հայ, Հույն և մահմեղական բնակչության կողքին Ալեքսանդրապոլում հայտնրվեցին առաջին ուսւ վերաբնակները՝ 11 մարդ, որ կազմում էր քաղաքի ընդհանուր բնակչության 0,1%-ը: Քաղաքային բնակչության մասցած 99,9%-ը ըստ ազգությունների ուներ հետեւյալ պատկերը. Հայերն Ալեքսանդրապոլում ճնշող մեծամասնություն էին և կազմում էին քաղաքային բնակչության 94,9%-ը (10696 մարդ), մահմեղականներ էին 3,6%-ը (410 մարդ), Հույներ՝ միայն 1,4%-ը (163 մարդ):⁵⁷¹

Ինչ վերաբերում է Ալեքսանդրապոլի գավառի գյուղական բնակչության շրջանում ժամանակատի համաճարակի բռնկվելու ժամանակին ու Հասցրած վիսամներին, ապա ինչպես արդեն նշեցինք, նյութի բացակայության պատճառով այդ մասին ստույգ խոսել Հնարավոր չէ: Հայտնի է միայն, որ համաճարակը գավառի գյուղական վայրերում գոյատեղ շատ ավելի երկար ու համաձայն գեներալ Գոլովինի 1841 թ. նոյեմբերի 16-ի օտարադասվանների գործերով նախարար Բլուդովին ներկայացրած N 942 զեկուցագրի՝ «... այս անգամ ևս Աստծո օգնությամբ կասեցվեց

⁵⁶⁹ ՀՀ ՊԿԱ, ֆոնդ 93, ցուցակ 1, գործ 97:

⁵⁷⁰ Кавказский календарь на 1850 год, Тифлис, 1849, отд. III 33-34.

⁵⁷¹ Документы и материалы по истории армянского народа..., док. 141, стр. 343.

միայն սույն տարրակա նոյենմբերի «սկզբներին»⁵⁷²: Իսկ գյուղերում համաձարակի զոհերի և հիվանդների թվի անորոշության մեջ մեղքի իրենց բաժինն ունեին նաև հիվանդների հարապատները, որոնք ամեն գնով իշխանություններից թաքցնում էին իրենց հիվանդ ազգականներին: Նույն գեկուցագրում գեներալ Ե. Գոյովինը գրում էր, թե վարակի տարածման շրջանում ապրում է ավելի քան 23000 մարդ, և չափազանց գելար է այս թվից հիվանդներին պարզելը. «Օրինակ, Ալեքսանդրապոլի գավառի Համամլու գյուղում բնակիչները չին թողնում ստուգել իրենց տները: Ի վերջո մենք գենքի ուժով հասանք մեր ուզածին և պարզվեց, որ գյուղում բնակվող 935 բնակչից 205-ը հիվանդ է ժանտախտով»⁵⁷³:

Այժմ փորձենք պարզել այն փոփոխությունները, որոնք գրանցվեցին XIX դ. 40-50-ական թվականներին Ալեքսանդրապոլի գավառի և մասնավորաբար նրա երկու՝ Փամբակի և Շորագյալի գավառակների (տեղամասեր) էթնոսողովրդագրական և կրոնադավանաբանական իրավիճակներում (Խոսքը վերաբերում է գավառի միայն գյուղական բնակչությանը, որովհետև Ալեքսանդրապոլ քաղաքի 1840-1850 թթ. էթնոսողովրդագրական և կրոնադավանաբանական պատկերը վերևում արդեն ուրվագծեցինք):

XIX դ. 40-ական թվականների վերջերին հետաքրքիր իրադարձություններ տեղի ունեցան Ալեքսանդրապոլի գավառի Փամբակի տեղամասում: 1848 թ., բոլորովին խաղաղ պայմաններում, սկսվեց Հայ ազգաբնակչության արտագաղթ Փամբակի տեղամասից դեպի Շորագյալի տեղամաս: Թեև պաշտոնական փաստաթղթերում այս մասին որևէ բացատրություն չկա, այնուամենայնիվ մեր կարծիքով դա ուղղակիորեն առնչվում էր Ալեքսանդրապոլի գավառը ոռու աղանդավորներով վերաբնակեցնելու խնդրին: Նախ հայերի արտագաղթը կարող էր կազմակերպած լինել հենց ոռուսական իշխանությունների կողմից՝ տեղում ոռու վերաբնակների համար նոր հողեր ազատելու նպատակով: Երկրորդ, այդ արտագաղթի պատճառ կարող էր լինել նաև ոռու աղանդավորների հետագա վերաբնակեցման նպատակով հողային «Հատուկ ֆոնդի» ստեղծումը՝ առանց տեղաբնակների կարծիքը հաշվի առնելու, որի պատճառով Փամբակի տեղամասի բնիկ հայերը, կորցնելով իրենց գյուղմերն ապահովող առանց այն էլ փոքր հողակտորները, ստիպված էին լինում Շորագյալ տեղափոխվելու: Թե այս պատճառներից որն էր իրականը կամ առաջնայինը, էական չէ: Փաստն այն է, որ 1848-1850 թթ. ընթացքում Փամբակից գաղթեցին և Շորագյալում հաստատվեցին մոտ 90-100 ընտանիք հայեր: Այդ թվի մոտավորության առիթով նշենք, որ նորեկների կողմից Շորագյալում հիմնված յոթ գյուղերից (Բազարիսանա (Զիթհանքով), Քեշիշ-Քենդ (Գեղարոտ), Մանջուխի

⁵⁷² АКАК, т. 7, стр. 66.

⁵⁷³ АКАК, т. 7, стр. 66:

(Շիքար), Սարունջի, Ախ-Ղուկի (Բերքառատ), Աբգուլ-Ռահման և Փոքր Ղրիկ) առաջին Հինգը, Համաձայն 1852 թ. կամերալ ցուցակագրման տվյալների, բնակեցվեցին միայն փամբակացիների 80 ընտանիքներով⁵⁷⁴:

Աղյուսակ 16. 1852թ. կամերալ ցուցակագրման տվյալների համաձայն Շորապետում միայն փամբակացիներով բնակեցված գյուղերը

| Շորապետի գյուղերը | ընտանիք | ար. | իգ. | ընդամենը | Փամբակի գյուղերը |
|-------------------|---------|-----|-----|----------|---------------------------|
| 1. Բագրայանաս | 32 | 116 | 83 | 199 | Փամբակից |
| 2. Քեշիշ-Քենդ | 6 | 15 | 16 | 31 | Փամբակի Ոհուտս գյուղից |
| 3. Մանջուխի | 21 | 81 | 56 | 137 | Փամբակի Հայդարբեկ գյուղից |
| 4. Սարունջի | 8 | 27 | 26 | 53 | Փամբակից |
| 5. Ախ-Ղուկի | 13 | 49 | 26 | 75 | Փամբակի Լեջան գյուղից |
| Ընդամենը | 80 | 288 | 207 | 495 | |

Մինչդեռ Աբգուլ-Ռահման և Փոքր Ղըրիս գյուղերում գաղթած փամբակացիների կողքին հայտնվեցին նաև Շորապետի Փոքր Արրիսվալի, Փոքր Ղարաքիլիսա և Թափառդղակ գյուղերից ելածներ, և 1852թ. այդ երկու գյուղերն ունեին 32 ընտանիք կամ 173 մարդ (99-ը արական, 74-ը իգական սեռի), որում մեր կարծիքով փամբակացիների թիվը չէր գերազանցելու 10-20 ընտանիքը:

Ժողովրդագրական դրության վերոհիշյալ փոփոխություններով հանդերձ՝ Ալեքսանդրապոլի գավառի Փամբակի տեղամասի 51 գյուղերում բնակչության թիվը 1852թ. կամերալ ցուցակագրման տվյալների համաձայն հասակ 2138 ընտանիքի կամ 13567 մարդու:

Աղյուսակ 17. Ալեքսանդրապոլի գավառի Փամբակի տեղամասի ժողովրդագրական դրությունն ըստ 1852 թ. կամերալ ցուցակագրման տվյալների

| գյուղերը | ընտանիք | ար. | իգ. | ընդամենը | գավանանքը |
|--------------|---------|-----|-----|----------|----------------|
| 1. Ղալթախչի | 71 | 230 | 173 | 403 | Հայ-առաքելական |
| 2. Գյուլուծա | 25 | 62 | 68 | 130 | — |
| 3. Նալբանդ | 48 | 165 | 129 | 294 | — |
| 4. Վարդապուր | 32 | 105 | 103 | 208 | — |
| 5. Կուրթան | 50 | 216 | 189 | 405 | — |
| 6. Ղլաղ | 58 | 233 | 151 | 384 | — |

⁵⁷⁴ ՀՀ ՊԿԱ, ֆոնդ 93, ցուցակ 1, գործ 109:

⁵⁷⁵ ՀՀ ՊԿԱ, ֆոնդ 93, ցուցակ 1, գործ 110; Հովհաննիսյան Զ., Նահապետյան Ռ., Վիճակագրական տեղեկություններ Լոռու գավառակի վերաբերյալ (1851-1914թթ.), ԲՀԱ, N 2, Եր., 1988, էջ 29:

Արմեն Հայրապետյան

| | | | | | |
|---------------------------|------------------|------------------|------------------|-------------------|----------------------------------|
| 7. Լոռի | 7 | 28 | 17 | 45 | — |
| 8. Աղալասկ | 23 | 103 | 84 | 187 | — |
| 9. Լեջան | 4 | 14 | 8 | 22 | — |
| 10. Դանդարիթ | 9 | 35 | 24 | 59 | — |
| 11. Մեծ Բեքանդ | 127 | 518 | 428 | 946 | — |
| 12. Աղբուղաղ | 54 | 197 | 138 | 335 | — |
| 13. Շահալիթ | 27 | 156 | 126 | 282 | — |
| 14. Սարմուսալիթ | 21 | 105 | 80 | 185 | — |
| 15. Բողիքենդ | 57 | 233 | 147 | 380 | — |
| 16. Ցաղուգլիթ | 27 | 94 | 80 | 174 | — |
| 17. Ջելալօղիթ | 49 | 200 | 157 | 357 | — |
| 18. Ոխուտ | 11 | 34 | 28 | 62 | — |
| 19. Հայդարբեկ | 17 | 62 | 55 | 117 | — |
| 20. Դարալ | 42 | 158 | 116 | 274 | — |
| 21. Դարբազ | 14 | 62 | 46 | 108 | — |
| 22. Դանջուղազ | 18 | 49 | 45 | 34 | շիա մահմեդական |
| 23. Դզբան | 12 | 42 | 47 | 89 | — |
| 24. Արջուտ | 20 | 88 | 84 | 172 | սունի մահմեդական |
| 25. Մարալ | 23 | 61 | 87 | 148 | — |
| 26. Գալլավար | 35 | 97 | 106 | 203 | շիա մահմեդական |
| 27. Վարդանիթ | 27 | 78 | 87 | 165 | — |
| 28. Ավդիքեկ | 45 | 149 | 144 | 293 | հայ-առաքելական |
| 29. Մեծ Դարաքլիխաս | 161 | 599 | 443 | 1042 | — |
| 30. Հայի Դարա | 42 | 178 | 124 | 302 | — |
| 31. Դարսմամադ | 4 | 7 | 7 | 14 | սունի մահմեդական |
| 32. Համամիթ | 160 | 502 | 397 | 899 | հայ-առաքելական |
| 33. Դարաբոյս | 24 | 83 | 81 | 164 | — |
| 34. Գոգարան | 38 | 99 | 69 | 168 | — |
| 35. Թափանիթ | 18 | 59 | 55 | 114 | — |
| 36. Վարդնով | 92 | 245 | 188 | 433 | — |
| 37. Դաչաղան | 26 | 55 | 46 | 101 | — |
| 38. Շահնաղար | 53 | 159 | 178 | 337 | — |
| 39. Դուրսալիթ | 15 17 | 49 72 | 25 58 | 74 130 | հայ-առաքելական շիա մահմեդական |

| | | | | | |
|----------------------------|-------------|-------------|-------------|--------------|-----------------------|
| 40. Հորածիք | 10 | 36 | 32 | 68 | Հայ-առաքելական |
| 41. Դարաքենդ | 16 | 52 | 57 | 109 | — |
| 42. Գեղգեր | 40 | 198 | 141 | 339 | — |
| 43. Գյուղագարակ | 28 | 87 | 66 | 153 | — |
| 44. Շիշմափա | 13 | 56 | 55 | 111 | — |
| 45. Փոքր Ղարաքիլիսա | 7 | 18 | 14 | 32 | — |
| 46. Սարչապետ | 16 | 61 | 34 | 95 | — |
| 47. Ղարաքիլիսա 2-րդ | 22 | 75 | 54 | 129 | — |
| 48. Վուկենսնովկա | 61 | 194 | 181 | 375 | աղանդավոր ոռւս |
| 49. Վորոնցովկա | 170 | 450 | 476 | 926 | — |
| 50. Նիկահնու | 56 | 204 | 184 | 388 | — |
| 51. Պրիվոնյե | 96 | 266 | 277 | 543 | ուղղափառ ոռւս |
| Ընդամենը | 2138 | 7378 | 6189 | 13567 | |

Ազգաբնակչության թվի աճը տեղամասում արև անգամ ևս եղավ գերազանցապես ի հաշիվ այլազգիների: Մրանք 1842 թ. 200 ընտանիքի կամ 14%-ի փոխարեն 1852 թ. կազմեցին 548 ընտանիք կամ 3306 մարդ, որ գավառակի ընդհանուր բնակչության արդեն 25,7%-ն էր: Ընդ որում, այլազգիների մեջ գերակուղղ դարձան ոռուսները՝ 383 ընտանիք (տե՛ս այլուսակ 16), որ կազմում էր գավառակի ընդհանուր բնակչության 18%-ը: Մինչդեռ գավառակի ուժը գյուղերում ամբողջությամբ, իսկ մեկում՝ Ղուրսալիում հայերի հետ խառը ընակվող և ընդհանուր առմամբ՝ 165 ընտանիք կամ 1074 մարդ մահմաների կազմեցին բնակչության միայն 7,7%-ը: Ինչ վերաբերում է Փամբակի հայ բնակչությանը, ասպա նրա թիվը 1842 թ. 1250 ընտանիքների փոխարեն 1852 թ. հասավ մինչև 1590 ընտանիքի կամ 10261 մարդու (5735-ը արական, 4326-ը իգական սեռի): Այսուհետեւ գավառական սեռի 1842 թ. 86%-ից 1852 թ. իջակ մինչև 84,3%-ի: Ի դեպ, հայերը միատարր չեն գավանանքով. Գավառակի 33 գյուղեր ամբողջություն բնակեցված էին 1479 ընտանիք կամ 9557 մարդ (5366-ը արական, 4191-ը իգական սեռի) կազմող հայ-լուսավորչականներով (մեկում՝ Ղուրսալիում նրանք ապրում էին մահմեդականների հետ խառը): Սա Փամբակի ամբողջ բնակչության 69%-ն էր և հայ տարրի 93%-ը: Հայ-կաթոլիկները՝ 111 ընտանիք կամ 704 մարդ (369-ը արական, 335-ը իգական սեռի), բնակվում էին միայն հինգ գյուղերում և կազմում էին գավառակի ընդհանուր բնակչության 5,3%-ն ու հայ բնակչության 7%-ը:

Նույն ժամանակահատվածում Շորագյալի գավառակի ժողովրդագրական իրավիճակում ևս գրանցվեցին փոփոխություններ, որոնք XIX դարի կեսերին էլ ավելի նկատելի դարձրին գավառի երկու հատվածների՝ Փամբակի և Շորագյալի տեղամասերի էթնոժողովրդա-

գրական և կրոնագավանաբանական պատկերների միջև եղած տարբերությունները: Այսպես, եթե Փամբակի տեղամասի համար XIX դ. 40-ական թվականների վերջը նշանավորվեց հայ տարրի արտագաղթով ու այլազգինների ներգաղթով, ապա Շորագյալի տեղամասում, հակառակը, այլազգինների և հատկապես մահմեղականների արտագաղթով և հայերի ներգաղթով՝ Դրա շնորհիվ ընդամենը երեք տարվա ընթացքում մինչև 1850 թ. գավառակում մեկը մյուսի հետեւից հիմնեցին 12 գյուղեր (Բագարիսանա, Քեշիշ-Քենտ, Մանջուսի, Մասուղի, Աբովուշ-Ռահման, Ղզը-Ղուլա, Փոքր Ղըրխ, Սարունջի, Ախ-Ղուլի, Փամպ, Փոքր Դուղքենդ, Ղզը-Ղուլ (Ղուկասյան))՝ գյուղերի թիվը 76-ից հասցնելով 88-ի: Ըստ որում, ինչպես վերևում նշեցինք, այդ 12 նորաստեղծ գյուղերից յոթը հիմնվեց փամբակացինների կողմից, մեկը՝ Մասուղին, 1849 թ. Սարչապետից Շորագյալ գաղթած հայերի և եղինների կողմից ու դարձավ խառը ազգաբնակչությամբ (եղինների գերակությամբ) միակ գյուղն ամբողջ տեղամասում: 1852 թ. կամերալ ցուցակագրման տվյալներով՝ գյուղում ապրող 45 ընտանիքներից կամ 250 մարդուց եղիններ էին 28 ընտանիքը կամ 139 մարդը (71-ը արական, 68-ը իգական սեռի): Եվ վերջապես մյուս չորս գյուղերը Շորագյալի տեղամասում 1848-1850 թթ. ընթացքում հիմնեցին բնիկ շորագյալցինները. 1848 թ. Շորագյալի ձգիւար և Դուղքենտ գյուղերից ելածները հիմնեցին Ղզը-Ղուլա գյուղը, որ 1852 թ. ուներ 7 ընտանիք կամ 61 մարդ (35-ը արական, 26-ը իգական սեռի) բնակչություն⁵⁷⁶: Երկրորդ՝ Փամպը, բնակեցվեց Փոքր Ղարաքիլսայից ելածներով և 1852 թ. ուներ 13 ընտանիք կամ 84 մարդ (50-ը արական, 34-ը իգական սեռի) բնակիչ⁵⁷⁷: Հաջորդ՝ 1849 թ. հիմնեցին Փոքր Դուղքենդն ու Ղզը-Ղուլը: Առաջինը հիմնեց Շորագյալի Դուղքենդ գյուղից ելածների կողմից և 1852 թ. ուներ 15 ընտանիք կամ 67 մարդ (39-ը արական, 28-ը իգական սեռի) բնակչություն: Նույնքան ստույգ նշել, թե Շորագյալի որ գյուղից ելածները հիմնեցին Ղզը-Ղուլը, աղբյուրների սակավության պատճառով անհնար է: Հայտնի է միայն, որ 1852 թ. կամերալ ցուցակագրման տվյալներով գյուղն ունեցել է 20 ընտանիք կամ 113 մարդ (49-ը արական, 64-ը իգական սեռի) բնակչություն⁵⁷⁸:

Ինչ վերաբերում է նույն ժամանակահատվածում Շորագյալից մահմեղականների արտագաղթին, ապա տվյալների բացակայության պատճառով մեզ չհաջողվեց պարզել, թե 1840-1850-ական թվականների արանքում կոնկրետ ե՞րբ և ի՞նչ ուղղություններով արանք հեռացան գավառակից: Փաստ է միայն այն, որ եթե 1842 թ. կամերալ ցուցակագրման վերաստուգման տվյալներով Շորագյալի գավառի երեք լրիվ մահմեղական և երեք խառը հայ-մահմեղական բնակչությամբ

⁵⁷⁶ ՀՀ ՊԿՊԱ, փոնդ 93, ցուցակ 1, գործ 110:

⁵⁷⁷ Նույնը:

⁵⁷⁸ ՀՀ ՊԿՊԱ, փոնդ 93, ցուցակ 1, գործ 110: ը:

գյուղերում կային 34 ընտանիք կամ 128 մարդ (տե՛ս աղյուսակ 14) մահմեղականներ, ապա 1852 թ. կամերալ ցուցակագրման տվյալների համաձայն՝ Շորապյալում մնացել էր ընդամենը մեկ մահմեղական գյուղ՝ Թաթարական Գյոզալդաբան՝ միայն 21 ընտանիքով կամ 116 մարդով:

Վերոհիշյալ փոփոխությունների հետևանքով 1852 թ. կամերալ ցուցակագրման տրվյալների համաձայն՝ Շորապյալի գավառակի արդեն 88 գյուղերում բնակչության թիվը հասավ 3685 ընտանիքի կամ 19947 մարդով:³⁷⁹

Աղյուսակ 18. Ալեքսանդրապոլի գավառի Շորապյալի տեղամասի ժողովրդագրական դրությունն ըստ 1852 թ. կամերալ ցուցակագրման տվյալների

| գյուղերը | բնակչություն | արակ. | իգակ. | բնդամենը | դաշտանանքը |
|-----------------------|--------------|-------|-------|----------|----------------|
| 1. Ճղապար | 30 | 83 | 96 | 179 | Հայ-առաքելական |
| 2. Փոքր Քեթի | 26 | 72 | 55 | 127 | — |
| 3. Մեծ Քեթի | 36 | 83 | 98 | 181 | — |
| 4. Ղաղումի Դուզքենդ | 18 | 44 | 56 | 100 | — |
| 5. Եսաուլ | 64 | 155 | 178 | 333 | — |
| 6. Թաթար. Գյոզալդաբան | 21 | 51 | 65 | 116 | մահմեղական |
| 7. Փոքր Քյափանակ | 29 | 86 | 52 | 138 | Հայ-առաքելական |
| 8. Հաֆի-Նազար-Ղուղի | 74 | 190 | 121 | 311 | — |
| 9. Փոքր Ղարաբիլսա | 237 | 548 | 650 | 1198 | — |
| 10. Թափառողակ | 43 | 123 | 106 | 229 | Հայ-կաթողիկ |
| 11. Ղազանչի | 61 | 123 | 93 | 216 | Հայ-առաքելական |
| 12. Տավշան-Ղցչաղ | 72 | 240 | 170 | 410 | — |
| 13. Բազարիսանա | 32 | 116 | 83 | 199 | — |
| 14. Քեյշ-Քենդ | 6 | 15 | 16 | 31 | — |
| 15. Մանջումի | 21 | 81 | 56 | 137 | — |
| 16. Մասուղի | 17 | 61 | 50 | 111 | Հայ-առաքելական |
| | 28 | 71 | 68 | 139 | եղդի |
| 17. Արբուլ-Ռահման | 10 | 37 | 20 | 57 | Հայ-առաքելական |
| 18. Ղըզ-Ղուղա | 7 | 35 | 26 | 61 | — |
| 19. Փոքր Ղըրիս | 22 | 62 | 54 | 116 | — |
| 20. Մարտունի | 8 | 27 | 26 | 53 | — |
| 21. Արբակալի Յ-րդ | 29 | 71 | 104 | 185 | — |
| 22. Ղազարապատ | 54 | 144 | 168 | 312 | — |
| 23. Մարիսպ | 46 | 115 | 99 | 214 | — |
| 24. Փոքր Բերանի | 59 | 187 | 131 | 318 | — |
| 25. Ղասմալի | 15 | 36 | 33 | 69 | — |
| 26. Քյափթառի | 43 | 122 | 81 | 203 | Հայ-կաթողիկ |
| 27. Ջրափի | 42 | 98 | 79 | 177 | Հայ-առաքելական |
| 28. Ղուղչան | 33 | 69 | 62 | 131 | — |
| 29. Ղորդաթ | 31 | 72 | 59 | 131 | — |
| 30. Փոքր Ղանիջա | 28 | 71 | 86 | 157 | — |
| 31. Եղանակ | 40 | 119 | 91 | 210 | — |
| 32. Աղին | 55 | 133 | 164 | 297 | — |
| 33. Մեծ Քյափանակ | 92 | 286 | 176 | 462 | — |

³⁷⁹ Նույն տեղում, գործ 109:

Արմեն Հայրապետյան

| | | | | | |
|----------------------|-----|-----|-----|-----|----------------|
| 34. Դիրաքլար | 40 | 107 | 91 | 198 | |
| 35. Ջաջուռ | 58 | 224 | 272 | 496 | |
| 36. Բողբոսան | 33 | 70 | 80 | 150 | |
| 37. Արթիկ | 116 | 356 | 332 | 688 | |
| 38. Բողադ-Քեսան | 36 | 90 | 89 | 179 | |
| 39. Սոգովթի | 82 | 177 | 235 | 412 | |
| 40. Ջերաբ-Կեչուտ | 40 | 159 | 143 | 302 | |
| 41. Փալութի | 33 | 68 | 117 | 185 | Հայ-Կոթողիկ |
| 42. Բայանդուր | 97 | 276 | 284 | 560 | Հայ-առաքելական |
| 43. Մոլլա-Գյոկչա | 63 | 170 | 170 | 340 | |
| 44. Հոռոմ | 114 | 296 | 284 | 580 | |
| 45. Դահարի | 38 | 91 | 77 | 168 | |
| 46. Զիրալի | 38 | 94 | 105 | 199 | |
| 47. Շիշթափա | 15 | 44 | 38 | 82 | Հայ-Կաթողիկ |
| 48. Լզրլ-Ղոչ | 20 | 49 | 64 | 113 | Հայ-առաքելական |
| 49. Թաքնայի | 21 | 71 | 80 | 151 | |
| 50. Բանդեան | 32 | 120 | 127 | 247 | |
| 51. Թովառի | 36 | 116 | 145 | 260 | |
| 52. Օրթաքիլիսա | 38 | 82 | 130 | 212 | |
| 53. Մեծ Լանինա | 42 | 120 | 125 | 245 | |
| 54. Իմիրիսանի | 36 | 96 | 115 | 211 | |
| 55. Արմութի | 25 | 57 | 74 | 131 | |
| 56. Ավան-Վերդի | 61 | 142 | 150 | 292 | |
| 57. Ախ-Դուկի | 13 | 49 | 26 | 75 | |
| 58. Մեծ Արրիսվալի | 58 | 144 | 145 | 289 | |
| 59. Փամա | 13 | 50 | 34 | 84 | |
| 60. Չոռի | 17 | 50 | 46 | 96 | |
| 61. Կեղաչ | 19 | 62 | 49 | 111 | |
| 62. Մահմուռջուղ | 61 | 179 | 151 | 330 | |
| 63. Շիրվածուղ | 61 | 165 | 162 | 327 | |
| 64. Աղ-Քիլիսա | 33 | 107 | 78 | 185 | |
| 65. Իյսիսափի | 78 | 210 | 245 | 455 | |
| 66. Նորաշն | 41 | 98 | 96 | 194 | |
| 67. Հայկ. Գյողաբարաս | 22 | 65 | 37 | 102 | |
| 68. Դուզբենդ | 80 | 380 | 238 | 618 | |
| 69. Սարիբաշ | 13 | 28 | 36 | 64 | |
| 70. Թայիթօղի | 16 | 55 | 45 | 100 | |
| 71. Քյալափի | 19 | 49 | 45 | 94 | |
| 72. Դարբանդ | 20 | 49 | 72 | 121 | |
| 73. Գյուղժի-Յոյ | 26 | 68 | 101 | 169 | |
| 74. Սոնդուռի | 31 | 75 | 86 | 161 | |
| 75. Լութնի-Կրշաղ | 8 | 32 | 27 | 59 | |
| 76. Ճրովիսանի | 25 | 51 | 45 | 96 | |
| 77. Կապս | 36 | 99 | 101 | 200 | |
| 78. Իլլի-Դարաքիլիսա | 36 | 89 | 119 | 208 | |
| 79. Լափի | 42 | 97 | 96 | 193 | |
| 80. Բաշգյուղ | 43 | 127 | 110 | 237 | |
| 81. Կիչաղ | 33 | 94 | 98 | 192 | |
| 82. Թոմարտաշ | 44 | 145 | 116 | 261 | |

| | | | | | |
|--------------------|------|-------|------|-------|---|
| 83. Մեջալի | 54 | 117 | 110 | 227 | — |
| 84. Դզոյ-Քիլիաս | 75 | 167 | 175 | 342 | — |
| 85. Փոքր Դուղբենդ | 15 | 39 | 28 | 67 | — |
| 86. Դրիմ-Դագիրման | 38 | 75 | 82 | 157 | — |
| 87. Ղոնսալյան | 47 | 124 | 154 | 278 | — |
| 88. Փոքր Արրխավայի | 25 | 85 | 61 | 146 | — |
| Ընդամենը | 3685 | 10134 | 9813 | 19947 | |

Հնդ որում, ինչպես արդեն նշել ենք, ի տարբերություն հարևան Փամբակի գավառակի, այստեղ բնակչության աճը գերազանցապես եղավ ի հաշիվ Հայ տարրի ավելացման, որը 1842 թ. եղած 2796 ընտանիքի փոխարեն 1852թ. հասավ 3636 ընտանիքի կամ 19692 մարդու։ Վերացավ նաև գավառակի Հայ բնակչության մինչ այդ գյուղական ունեցող կրոնական միաստարությունը։ 1852թ. կամերալ ցուցակագրման տվյալներով Շորագյալի Հայ բնակչությունն ըստ գավառանքի արդեն բաժանվում էր երկու անհավասար խմբերի՝ Հայ-լուսավորչականների և Հայ-կաթողիկների։ Առաջինները 3502 ընտանիք կամ 18993 մարդ էին (9655-ը արական, 9338-ը իդական սեռի) և կազմում էին գավառակի գյուղական բնակչության 95 ու Հայ բնակչության 96%-ը։ Երկրորդները՝ Հայ-կաթողիկները, 134 ընտանիք կամ 699 մարդ (357-ը արական, 342-ը իդական սեռի), ապրում էին միայն թափարովակ, Քյափթառվի, Փալութի և Շիշթափա գյուղերում՝ կազմելով գավառակի գյուղական բնակչության 3,6 ու Հայ բնակչության 4%-ը։ Ինչ վերաբերում է Շորագյալի ոչ քրիստոնյա բնակչությանը, ապա վերջինիս թիվը գավառակում անցած մեկ տասնամյակի ընթացքում փոքր-ինչ աճելով, 1,2%-ի (34 ընտանիք) դիմաց 1852 թ. հասավ 49 ընտանիքի կամ 285 մարդու, որ գավառակի գյուղական բնակչության թիվ 1,4%-ն էր։ Հարկ է նշել, որ գավառակում ոչ քրիստոնյա բնակչության թիվի այս չնչին աճն արձանագրվեց ի հաշիվ 1849թ. Սարչապետից Հայերի հետ Շորագյալ գաղթած եղիների (ընդամենը 28 ընտանիք կամ 139 մարդ)։ Սրանք արդեն 1852 թ. կազմում էին գավառակի գյուղական բնակչության 0,8 և ոչ քրիստոնյա բնակչության 57%-ը, այն դեպքում, երբ շորագյալը բնիկ մահմեղականները (ընդամենը 21 ընտանիք կամ 116 մարդ) կազմում էին գավառակի գյուղական բնակչության միայն 0,6 և ոչ քրիստոնյա բնակչության 43%-ը։

Գավառի երկու տեղամասերում Փամբակում և Շորագյալում ժողովրդագրական իրավիճակի առանձնակի նկարագրությունների հիման վրա կարելի է վերականգնել ամբողջ Ալեքսանդրապոլի գավառի էլմնուժողովրդագրական և կրօնադավանաբանական պատկերը XIX դարակեսին։ Փավառի բնակչության Համաչափ աճը շարունակվեց նաև Հաջորդ տասնամյակի ընթացքում։ 1852 թ. կամերալ ցուցակագրման տվյալների համաձայն՝ Ալեքսանդրապոլի գավառը ուներ արդեն 44794

Արմեն Հայրապետյան

մարդ (23512-ը արական, 21282-ը իբական սեռի)⁵⁸⁰, որից 11280-ը բնակվում էր Ալեքսանդրապոլի քաղաքում, որտեղ հայերը կազմում էին բնակչության ընդհանուր թվի 94,9%-ը, մահմեղականները (410 մարդ)՝ 3,6%-ը, հոգները (163 մարդ)՝ 1,4%-ը, ոռուաները՝ (11 մարդ) 0,1%-ը:

Եվս 5823 ընտանիք (33514 մարդ) ապրում էր Ալեքսանդրապոլի գավառի 139 գյուղերում: Գավառի 124 գյուղեր ամբողջությամբ, իսկ երկուսը (*Մասուղին և Ղուղաղին*) մասամբ բնակեցված էին 5226 ընտանիք (29953 մարդ) կազմող հայերով, որ գավառի գյուղական բնակչության 90%-ն էր: Հայերից հետո քանակով երկրորդը՝ 383 ընտանիք (2232 մարդ) ուստաներն էին, որ ապրելով ընդամենը 4 գյուղերում, կազմում էին գավառի գյուղական բնակչության 6,5%-ը: Մինչդեռ գավառի 9 գյուղերում ամբողջությամբ և մեկում (*Ղուղաղի*) հայերի հետ խառը ապրող 186 ընտանիք (1190 մարդ) մահմեղականները կազմում էին միայն 3%, իսկ մասուղեցի 28 ընտանիք (139 մարդ) եղղիները՝ 0,5%:

Աղյուսակ 19. Ալեքսանդրապոլի գավառի գյուղական բնակչության էթնուգողվագրական գրությունը 1852թ. կամերալ ցուցակագրման տվյալներով

| աղյությունը | ընտանիք | արակ. | իբակ. | բնականներ | % | գյուղերի թիվը |
|-------------|---------|-------|-----------|-----------|-----|---|
| Հայ | 5226 | 15713 | 142 10 | 29953 | 90 | 124 (լրիվ), 2 (մահմեդ. և եղղիների հետ խառը) |
| ոռու | 383 | 1114 | 1118 | 2232 | 6.5 | 4 (լրիվ) |
| մահմեղական | 186 | 580 | 610 | 1190 | 3 | 9 (լրիվ), 1 (հայերի հետ) |
| եղղի | 28 | 71 | 68 | 139 | 0.5 | 1 (հայերի հետ) |

Հատ գավանանքի՝ նույն 139 գյուղերում ապրող 5823 ընտանիք-ները բաժանվում էին ութ խմբերի: Հայ-լուսավորչականներ էին Ալեքսանդրապոլի գավառի գյուղական բնակչության 85,5%-ն ու Հայ բնակչության 95%-ը (4981 ընտանիք կամ 28550 մարդ): Հայ-կաթողիկ-ներ էին գյուղական բնակչության 4,5%-ը կամ հայերի 5%-ը: Իռու աղանդավորներ էին գավառի բնակչության 4,9%-ը և ոռու աղքաբնակչության 75%-ը (287 ընտանիք կամ 1689 մարդ): Փոխարենը ուղղափառ ուստաներ էին բնակչության 1,6%-ը կամ ուստաների 25%-ը (96 ընտանիք կամ 543 մարդ): Ավելի խայտաբղետ պատկեր ուներ գավառի մահմեղական աղքաբնակչությունը: Շիս մահմեղականներ էին գավառի գյուղական բնակչության 2%-ը կամ մահմեղական աղքաբնակչության 63,4%-ը (118 ընտանիք կամ 740 մարդ), սումիներ էին գյուղական բնակչության 0,7%-ը կամ մահմեղականների 25,3%-ը (47 ընտանիք կամ 334 մարդ), իսկ աղանդավոր մահմեղականներ էին գյուղական

⁵⁸⁰ ՀՀ ՊԿՊԱ, ֆոն 93, ցուցակ 1, գործ 97, 109, 110, 120; Կավկազский календарь на 1852 год, Тифлис, 1851, отд. III, стр. 275; Կավկазский календарь на 1854 год, Тифлис, 1853, отд. III, стр. 121, 321-330; Կավկазский календарь на 1855 год, Тифлис, 1854, отд. III, стр. 332-347.

բնակչության $0,3\%$ -ը կամ մահմեղականների 11.3% -ը (21ընտանիք կամ 116 մարդ): Վերջապես, արևապաշտ էր գավառի եղդի ազգաբնակչությունը, որ կազմում էր գավառի գյուղական բնակչության 0.5% -ը:

Աղյուսակ 20. Աղեքսանդրապոլի գավառի գյուղական բնակչության կրտնագավանաբանական պատճերը 1852 թ. կամերայ ցուցակագրման տվյալներով

| գավանանքը | ընտան. | արակ. | իգակ. | ընդամ. | % | գյուղերի թիվը |
|----------------------|--------|-------|-------|--------|------|---|
| Հայ-լուսա-փոքչական | 4981 | 15021 | 13529 | 28550 | 85.5 | 113 (լրիվ), 2մահմեղա-կան. և եղդիների հետ) |
| Հայ-կաթողիկ | 245 | 726 | 677 | 1403 | 4.5 | 9 (լրիվ) |
| աղանդավորական ռուս | 287 | 848 | 841 | 1689 | 4.9 | 3 (լրիվ) |
| ուղղափառ ռուս | 96 | 266 | 277 | 543 | 1.6 | 1 (լրիվ) |
| շիա մահմեդական | 118 | 373 | 367 | 740 | 2 | 5 (լրիվ), 1 (Հայերի հետ) |
| տունի մահմեդական | 47 | 156 | 178 | 334 | 0.7 | 3 (լրիվ) |
| աղանդավոր մահմեղական | 21 | 51 | 65 | 116 | 0.3 | 1 (լրիվ) |
| եղդի | 28 | 71 | 68 | 139 | 0.5 | 1 (լրիվ) |

Թեև XIX դ. 40-ական թվականների կեսերից Աղեքսանդրապոլի գավառի ազգաբնակչության կազմի միատարրությունը փոքր-ինչ տեղի տվեց (1842 թ. Հայեր էին քաղաքաբնակների 96 և գյուղաբնակների 94,5%-ը, ապա 1852 թ. քաղաքաբնակների 94,9 և գյուղաբնակների 90%-ը), այնուամենայնիվ XIX դարակեսին նույնպես գավառը շարունակում էր մնալ որպես ամենամիատարրն ու Հայեցին ամբողջ Անդրկովկասում⁵⁸¹:

Գ) Աղեքսանդրապոլի գավառական կենտրոն

XIX դարի առաջին քառորդը քաղաքաշինության տեսակետից արգասապոր չեղակքանի որ Հայաստանի արևելյան հատվածը շարունակում էր գտնվել պարսկական տիրապետության տակ, ուր շինարարական գործունեություն ծավալելու համար տնտեսական հնարավորությունները սահմանափակ էին: Դրությունը գգալիրեն փոխվեց Արևելյան Հայաստանի Ծետ միավորվելուց հետո, երբ շարական, ինչպես քաղաքացիական, այնպես էլ զինվորական

⁵⁸¹Նիկողոսյան Ն., Վիճակագրական տեղեկություններ Աղեքսանդրապոլի գավառի Հայ-լուսապոչականների մասին, «Սուրճ», N 8, օգոստոս, թիվից, 1901, էջ 239-240; Արմաно-կատոլիչеские церкви в Закавказье и число их прихожан, Кавказский календарь на 1885 год, Тифлис, 1884, отд. III, стр. 69; Сборник сведений о Кавказе, т. 1, Тифлис, 1871, стр. 259.

իշխանությունների կողմից, ճիշտ է, դանդաղ, սակայն որոշակի հետևողականությամբ ու ծրագրով իրականացվող քաղաքաշինական միջոցաւումների արդյունքում Հայաստանի տարբեր շրջաններում իրարժենք վերակառուցվեցին կամ հիմնվեցին նոր քաղաքներ։ Դրանց մեջ խնդրո առարկայի ուսումնամիրության տեսակետից մեզ համար առավել հետաքրքրություն է ներկայացնում Հատկապես այն մեկը, որ արևմտահայ գաղթականների կողմից հիմնվելով Շորապյալի գավառի Գյումրի գյուղի հարավային մասում՝ Արփաչայ գետի ձախ ափին, արդեն 1837 թ.-ից գավակեց քաղաքների շարքն ու պատմության մեջ մտավ Ալեքսանդրապոլ անվամբ։ Սակայն մինչ նորաստեղծ այս քաղաքի մասին մեր խոսքը շարունակելը, տեսնենք, թե անցած դարերի ընթացքում ինչ էր իրենից ներկայացնում քաղաքի կորիգը Հանդիսացող Գյումրի գյուղը։

* Մարմաշենից ոչ հեռու գտնված մ.թ.ա. VIII դարի մի արձանագրության մեջ հիշատակված «Իրդանիտունի» տեղանունը (Մելիկոսիլի Ղ., Սարդարական անձնագիր, 1960, էջ 18; Սամուելյան Խ., Հին Հայաստանի կուտուրան, հ. Բ, Երև., 1941, էջ 56, 62), Հարագյուղանը և Ս. Պետրոսյանը նույնացնում են «Կումարի» տեղանունին հետ։ Հ. Կարագյուղանը գրում է. «Իրդանիտունի տեղանունը կագմած է իր (գետ) բառով և Անիու հասուկ անունով (կամ Անիո)։ Անիո ձեզ գրված է Հայերենի սեռական Հորսվով, որից կարելի է բնեցնել նախնական Անիո ձեզ։ Այս «Անիա» քաղաքի անունը հնուագում տրվել է այս գետին, որը հոսուի է Հիշյալ բնակավայրի մոտով՝ Իրդ-Անիո կամ «Անիա քաղաքի գետ»։ Մ.թ.ա. XIII դարում կառուցված Իրդանիությանը գանվել է Էրփախ երլիքի կենտրոնում՝ Կումայրու տեղում կամ նրա մոտակայքում։ Հետագայում Իրդանիությանը անունը մոտացվում է. Այն հիշատակվում է արդեն քաղաքի արվարձաններից մենի Կումայրու անունով, որը տարածվում է ամբողջ Իրդանիության կավալայրի վրա։ Կումայրու, Իրդանիության արվարձան լինելու մասին իր կարծիքը Հ. Կարագյուղանը հիմնավորում է տեղանունը սոսուգարանությամբ, որի Կում և այրի քաղաքդիմեր ունեն գրեթե միատեսակ իմաստներ՝ «Վյուղ» կամ «Բնակավայր» (Կարագյուղան Հ., Կումայրուն բառ սեռականի և այլ արդյունքների, ՇՊՄԾ Հանրապետական երկրորդ գիտաժողովի գելուցուների հիմնագրությներ, Գյումրի, 1996, էջ 13-14)։ Ս. Պետրոսյանը Իրդանիունին (կամ Իրդանիուն) տեղադրում է Գյումրու տարածքում և նույնացնում Կումայրի հնավայրի հետ, որը տեղադրում է քաղաքի արևմտյան մասում՝ Զարկրպի ձոր կոչվող գետակի ձախ ափին, գտնելով, որ այդ գետակը սեռագրային շրջանի Իրձու-գետն է, իսկ Կումայրի հնավայր՝ ափամերձ Իրդանիունի քաղաքը (Պետրոսյան Ս., IRDANIU(NI) բնակավայրի տեղադրության և անվան ստուգաբանության շուրջ, ՇՊՄԾ Հանրապետական երրորդ գիտաժողովի գելուցուների հիմնագրությներ, Գյումրի, 1998, էջ 18-19)։ Բնակավայրի տեղի ու Կումայրի հրցիքու մասին պատմագրության մեջ գրյություն ունեն այլ կարծիքներ ևս առաջ քաշված ավագեմիկաներ Գ. Ջահովանի, Հ. Մանանցանի, Տ. Երեմյանի, Գր. Ղափանցյանի, Ի. Դյալոնովի, Կ. Կողմյանի, Գր. Ղազարյանի, և այլոց կողմից (Զահուկանի Գ., Կիմերները և կիմերների պրոբեմը արդի գիտության մեջ, ՊԲՀ, N 4, Եր., 1977; Մանանցյան Հ., Հին Հայաստանի և Անդրկովկասի մի քանի պրոբեմների մասին, Եր., 1944; Երեմյան Տ., Կիմերական և սկզբանական ցեղերի արշավանքը և Ուրարտուի ու Ասորետանի պայքարը քըչպրների գեմ, ՊԲՀ, N 2, Եր., 1968; Կալանչյան Ղ., Խայաս-կալեմել արման, Եր., 1947; Ճյոնով Ի. Մ., Ասսիր-վավելոնյան источники по истории

Սրբության (ԱԲԻԿ) N 65(ՎՃԻ), Մ. 1951, N 3; Կոգմոյան Կ., Լենինական, Եր., 1957; Հազարյան Գր., Հայաստան և Հայերը ըստ Քանոնքոնի, Թիֆլիս, 1908): Այնուամենայնիվ, չնայած այս հարցում եղածքավամկարծիքով յանը, մենք խնդրու առրկայի վերաբերյալ առավել համոզիք ենք Համարում այն վարկածը, որ ձևափորել է Հ. Կարպագոյանի ու Ա. Պետրոսյանի ուսումնակիրթով յանը արդյունքում: Հետաքայում արդեն Հայ մասենագրության մեջ Կումայրին որպես գյուղ հիշատակվում է մ.թ. նախ 774 թ. Հակասարավական ապատամբության առիթով («..Հասանէր ի գաւառն Շիրակ ի գիւղն Կումայրի») (Տե՛ս՝ Պատմութիւն Հեռնդայ մեծի վարդապէտի Հայոց, Սանկտ-Պետրովրդ, 1887, գլ. ԼՌ., էջ 138), իսկ արդեն Կոմիրի ձևով, իրբև գյուղաբարյար՝ նաև 1209 թվականին (Տե՛ս Մաշտոցի անվան Մատենագրարան, ձեռագրեր թիվ 1886, էջ 1; Մաթևոսան, Ա. «Ի մեծ գեւազարավարքին Կումիրոյ», «Բաննորոք», Լենինական, 1979, 10 Հոկտեմբերի, N 237, էջ 3; Պետրոսյան Ս., Կումայրի-Գյումրի-Աղեքանողապութ-Լենինական, «Գիտություն և տեխնիկա», Եր., 1983, N 4, էջ 26): Այսուհետեւ բնակավարի մասին տեղեկություններ այլևս չեն Հանդիպում բնիչուակ մինչև XIX դարի սկիզբը, երբ արդեն Գյումրի անվամբ այն հիշատակվում է իշխան Յիշխանովի առաջին երեանցան արշավանքի առիթով, իրբև գեներալ Տուչկովի կողմից 1804 թ. Հունիսի 10-ին գրավված գյուղ (Նաջեցին Ա. Կավազսկի կողմանը, պրովինցիա և լուծարությունը, 1891, ստ. 393-394; Սեղոյան Կ., Արևելական ավանդությունները և դրանց արտահայտությունները լենինականցիների կենցաղում, Ատեն. պատ. գիտ. թիկ., Եր., 1969, էջ 22): Հայկական ազգություններում Գյումրին հիշատակվում է Գյումրի, իսկ ուսական ազգություններում՝ Գյումրի նոր՝ Գյումրի անվան առաջացումն ու նշանակությունը մի շարք հակասական, երբեմն նաև անհայտանական դաստիգությունների առիթ են տվել: Հովհաննացի կարծիքով՝ «Գյումրի բառը կրճատված է: Իրականում այն նշանակում է «Գյումրի», որովհետև սա եղել է զօրաց գումարման տեղը Գագիկի արքայի ժամանակներում, որը նաև ունեցել է Անբուլը» (Խոջայեանց Հ., Գյումրի, «Արքարան», Էջմիածին, 1871, թիվ Թ, էջ 312): Գյումրի տեղանունը յուրովի է բացառիկ Գյանը: «Առաջ այսուել եղել է ոչ մեծ թուղթական ամրություն կամ ինչ-որ մաքսային ուղեկալ որը ազատ անցնելու թուղթով յանց Համար մաքս՝ «ցայտուկ» էր գանձում: Այսուելց էլ գյուղը ստացել էր իր անունը՝ Գյումրի» (Ղան Կ., Օպыտ օբյանենի կավազական գեոգրա菲ական անունների համար, Տիֆլիս, 1909, ստ. 8; Սեղոյան Կ., Աղեքասավորական ավանդությունները և դրանց արտահայտությունները լենինականցիների կենցաղում, «Հայ ազգագործություն և բանահյուսություն», հ. 6, Եր., 1974, էջ 163): Կ. Գանին Համակարծիք է նաև 1854-1855թթ. ռուս-թուրքական պատերազմի մասնակից ապաներից մեկը, որը 1854 թվականի ապրիլի 20-ին իր օրագորում կաստրել է այսպիսի գրառում: «Անքանանգամ է մաքսասուուր, ուզ եղավ մեր կորպուսը, թուրքերն անվանում են Գյումրի, որ նշանակում է մաքսասուուր՝ «ցայտուկ», որովհետև իրոք, այսուել եղել է նրանց մաքսասուուր» (Յանձնական անունների համար, 1860, ստ. 483-484; Վեյդենբայ Ե, Պутեվություն Կավազական գեոգրա菲ական անունների համար, 1888, ստ. 400): Անշուշտ, թուրքիմացություն է Գյումրի տեղանունը թուրքական ցայտուկ բառի համար: Թուրք-սելջուկներն Անդրկովկաս են թափանցել միայն XI դարում, իսկ Գյումրին Կումայրի ձևով գյուղուն ունի գեռևս ուրարտական ժամանակներից: Միանգամայն անընդունելի է նաև Հովհաննացի կարծիքը, թե Գյումրին «Գյումրի» բառի կրճատված ձևն է: Մենք Համակարծիք ենք այն պնդմանը, թե Կումայրի ձևն է, որ գարերի ընթացքում Հնչյունական փոփոխությունների ենթարկվելով, տվել է Կումերի-Կումրի-Գյումրի-Գյումրի-Գ ուրարտի, իսկ որոշ ժամանակ անց նաև օսմանական վագենացությանը՝ ի վերջո Գյումրի ձևը, որ Հայերենի Հնչյունական օրենքներին խորթ է բնականաբար մերժելի ձև է:

Զծանրանալով Կումայրի-Գյումրի անվանը վերաբերող անցքերի հանգամանալի շարադրման վրա՝ փորձենք տալ XIX դարի առաջին կեսի Գյումրի-Ալեքսանդրապոլի նկարագրությունը պատմաժողովրդական տեսակետից:

Մինչև XIX դարի սկիզբը այն մի փոքրիկ գյուղ էր Զերքեզի ձոր (Զարքըզի ձոր) կոչվող վայրում⁵⁸², որի բնակիչները զանազան հալածանակներից ապահովվելու համար Զերքեզի ձորից աստիճանաբար բարձրացան բլրի վրա, որն էլ հետագայում դարձավ ձևավորվող քաղաքի «Գեղցոց մահլեն»: Նրանից ներքև ավելի ուշ առաջացավ «Զորի մահլան» կամ «Զորի բողազը»՝ քաղաքի հրմանական թաղամասերից մեկը: Ժամանակակիցների վկայությամբ՝ Գյումրի գյուղում, որն ուներ մի հին եկեղեցի ապրել են մոտ 30 տուն պարսիկներ և 20 տուն պարսկահպատակ Հայեր, որոնք տեղավորված էին տարբեր թաղամասերում և ապրում էին Հաշում⁵⁸³: Ամրոցի կառուցումից հետո գյուղն աստիճանաբար տեղափոխվել է ավելի վեր (այժմյան քաղաքի Հյուսիսարևելյան կողմը), իսկ հին եկեղեցու տեղում 1857 թ. կառուցվել է նորը՝ Ս. Նշան եկեղեցին⁵⁸⁴: Իրենց «Տեղագրություններ»-ում դարակիցի այս գյուղի մասին գրեթե նույնն են ասում նաև Դ. Ալբշանն⁵⁸⁵ ու Պ. Վարդապետ Պետրոսյանը⁵⁸⁶, իսկ Լեռն ավելացնում է. «1826 թ. Երևանի Հյուսեին խանի արշավանքի հետևանքով Գյումրին վերածվեց 50 տնից բաղկացած գյուղի»:

1801 թ. Վրաստանի՝ Ռուսաստանին միանալուց հետո ռուսական քաղաքական շրջաններում զորեղանում էր նաև Հայկական Հողերի միավորման ձգուումը, և ուսղմական նպատակների համար չափազանց կարևոր նշանակություն ունեցող Գյումրին բնականաբար չըրիակեց ռուսական զինվորականության ուշագրությունից:

1804 թ., երբ ոռու կազմակերպի առաջին խմբերը մտան Գյումրի⁵⁸⁷, գյուղի ամայի Մրջակայքում կայագորի գինվորների համար 1804 թ. կառուցվեց բնակելի թաղամաս, որը կարճ ժամանակում վերածվում է բավականին ամուր սահմանային կայանի, որտեղ 1817 թ. մի անգիտացի

⁵⁸² Գաբրիելյան Հ., Լենինական, Եր., 1984, էջ 11:

⁵⁸³ Թամրազան Ս., Հյուսություններ XIX դարի Ալեքսանդրապոլի անցյալից մինչև մեր օրերը (1938 թ.), ձեռագիր, Պի.Ա., գործ 103, Թամրազանի նյութերը, տեսոր 1; Մատինեանց Կ., Ալեքսանդրապոլի վաճառականները, «Մերու Հայաստանի», Թիֆլիս, 1874, 2 փետրվարի, թիվ 5, էջ 3:

⁵⁸⁴ Նիկողոսյան Ն., Գյումրի-Լենինականի անցյալը (1935 թ.), ձեռագիր, Պի.Ա., գործ 103, Ն. Նիկողոսյանի նյութերը, ներածություն:

⁵⁸⁵ Ալիշան Դ., Շիրակ, Տեղագրութիւն պատկերացոյց, Վենետիկ, Ս.Ղազար, 1881, էջ 154:

⁵⁸⁶ Տեղագրութիւն Շիրակայ, աշխատասիրեայ ի Պոլս վարժապետ Պետրոսեան, «Արարատ», Էջմիածին, 1870, թիւ 9, էջ 55:

⁵⁸⁷ Լեռ, նշվ. աշխ. էջ 458:

⁵⁸⁸ Կավաչեցի կալենդար на 1851 год, отд. III, Тифлис, 1850, стр. 104; Նորյան Մուշեղ, Ալմանախի վկայություն-Գյումրին քաղաք 1817 թ.-ին, «Բանվոր», Լենինական, 1978, 28 գեկտեմբերի, N 303, էջ 3:

ճանապարհորդի վկայությամբ արդեն կար ոռուսական բազմանին մեծ մի կայագոր ⁵⁸⁹: Ուստաների զինական ուժի ներկայության չնորհիվ հուսալի դատնարությունը կատարվել է գեղաքի իրեն ձգել պատերազմներից ու գրկանքներից այս ու այն կողմ ցրված հայերին: Գյումրիում ապահով անկյունն փնտրող հայերի նորեկ ընտանիքները տեղափորփում են գերազանցապես «Զորի մահայութ»:

Սակայն բնակվայրի տնտեսական կյանքը նկատելորեն աշխուժացավ միայն 1829-1831 թթ. գաղթերից հետո, երբ օգտվելով ցարական կառավարության ընձեռություններից ու Հնարավորություններից՝ չուրջ 1250 ընտանիք արևմտահայեր հաստատվեցին Գյումրիում՝ Հիմնելով նոր թաղեր։ Ի դեպ, սկզբնական շրջանում սրանք ձևավորվեցին տարերայնորեն ու առանց քաղաքացինական որոշակի ծրագրի, և բնակչությունը դրանցում ինքնարերաբար տեղաբաշխվեց կամ ըստ ազգային պատկանելիության («Թուրքի մահլա», «Բոչի մահլա», «ՈՒռմնոց մահլա», «Ոռուսական թաղամաս») կամ «Սլաքողկա», կամ ըստ դաշտանանքի («Ֆլուսանգների մահլա») և կամ նույնիսկ ըստ զբաղմունքի ու տարբեր արհեստների («Մանչպարների մահլա»)⁵⁹⁰։ Քաղաքի հարավային մասում էր գեռ դարասկզբից բնակություն հաստատած ուուս զինվորները Հիմնեցին «Սլաքողկա» կոչվող թաղը։ Մոտ 40-50 տուն մահմեղականները Գյումրու հարավարեկում (այժմյան ավտոկայանից մինչև Հին գերեզմանոց ընկած տարածքում) Հիմնեցին «Թուրքի մահլեն»։ Դրանից գեավի հյուսիսի 150 տուն հույները Հիմք դրեցին «ՈՒռմնոց» կամ «Հունաց մահլեն»։ 30-40 տուն հայ բոշաները հիմնեցին «Բոչի մահլեն» (այժմյան Սայաթ-Նովա փողոցից մինչև նախկին Հանրախանությի տարածքը)։ Մոտ 50 տուն հայ-կաթողիկների շանքերով Հիմնվեց «Փունգների մահլեն» (Օրբիորդաց գիմնազիայից մինչև զինվորական կոմիսարիատ ընկած այժմյան տարածքը)։ «Հունաց մահլից» հյուսիս խղճուկ տներ էին կառուցել աղքատ գաղթականները, որոնց թաղը «Հողեպալան» էր կոչվում, իսկ հին գյումրեցիները բերդի կառուցման պատճառով տեղաբարվել էին գերազանցապես «Զորի մահլում»⁵⁹¹։

Սինէլ 1837 թ. Վերոհիշյալ թաղերի նեղ, ծուռումու փողոցներով, փողոցահայաց բութ ու «կույր»՝ առանց պատուհանների տուփաշար պատերով ցածրիկ տներ ունեցող բնակավայր էր Գյումրին։ Եվ քանի որ մինչև XIX դ. 30-ական թվականների վերջերը Գյումրիում

⁵⁸⁹ Линч Х. Ф. Б., Армения. Путевые очерки, этюды, Тифлис, 1910, стр. 162.

⁵⁹⁰ Անդրակ. Գ. Բ., Արմենիա. Խոցեանք օքրիք, տիկամ, Դիքիք, 1976, ըր. 162.
 Ավելիսիյան Խ., Քաղաքների զարգացմանը Սովորական Հայաստանի ներկա տարրածքում 1828-1914 թթ., ՊԲՀ, N 3, Եր., 1978, էջ 57; Հարությունյան Վ., Գյումրի-Այերսանլպապալլ XIX դարում, «Բանվոր», Լենինական, 1978, 14 գեղանձբերի, N 297, էջ 3:

⁵⁹¹ Հիմ, գործ 103, Ն. Նիկոլոսյանի նյութերը, տեսր 1, պուփ 2; Մաթեևյան Ա., Լենինականի Հասովակագծումը և կառուցապատումը XVIII-XIX դդ., ԼՀԳ, N 10, Եր., 1972, էջ 71; Հարությունյան Վ., Գյումրին, նրա մարզիկ, սովորույթները, Գյումրի, 1996, էջ 297-298:

կատարվող քաղաքաշինական միջոցառումները հիմնականում ունեին ռազմական նշանակություն, ապա բնակավայրի վերոբերյալ մուայլ պատկերն անփոփոխ մնաց նաև հաջորդ երեք-չորս տարիների ընթացքում: Այնպես որ 1837 թ. վերջերին Նիկոլայ Ա. ցարի Անդրկոուկան կատարած այցելովթյան արդյունքում նախ քաղաքի կարգավիճակ ստանալով, իսկ կարծ ժամանակ անց նաև Ալեքսանդրապոլ վերանվանվելով հանդերձ, նորաստեղծ այս քաղաքը ժամանակակիցների հուշերում մնաց որպես «տիպիկ ասիական քաղաք՝ կեղտոտ, կոպիտ ու անկտուր տներով... որ չնայած իր երիտասարդ տարիքին, արդեն կրում էր ծեր ու քայլապող քաղաքի ֆիզիանոմիա...»⁵⁹² և «ոչ այլ ինչ էր, եթե ոչ քարվանսարա մեծ ճանապարհի վրա»⁵⁹³: Քաղաքային տնտեսության այդ շրջանի անմիտիթար վիճակի մասին «Ախուրյանը» գրում էր, թե «ցեխի պատճառով քաղաքի գյունավոր փողոցներն անանցանեին, իսկ ինչ վերաբերում է այսպես կոչված <քոռ ու փցներին>, ապա աստված Հեռու տանէ, այնպիսի ողորմելի դրովթյան մեջ են, որ գուխը և ոտը չկոտրելու համար ցերեկն անգամ պետք է կրակով ման գալ»⁵⁹⁴:

Դ. Անանունի՝ «Ռուսահայերի հասարակական զարգացումը XIX դարում» աշխատության առաջին հատորում հրապարակված գյուղմեցիների բողոք-նամակը՝ ուղղված ռուսական ցարին, թույլ է տալիս եղրակացնելու, որ քաղաքային կյանքի նմանատիպ դրությունը ինչ-որ չափով արդյունք էր նաև նրա անորոշ, ամելի շուտ երկակի կարգավիճակին: Մինչև 1840 թվականը տեղական, պետական և ոստիկանական մարմինների կողմից ալեքսանդրապոլցիները հարկվում էին թե՛ որպես քաղաքացիներ և թե՛ որպես գյուղացիներ⁵⁹⁵: Բնականաբար, հարկային այսպիսի քաղաքականությունը չէր կարող խթան հանդիսանալ քաղաքին և նրա տնտեսության զարգացման համար:

Քաղաքի և նրա բնակչության վիճակը բարելավող միջոցառումները սկսվեցին միայն 1837-1840 թթ. Հետո: Ընդ որում, այս գործում առաջնային դեր խաղաց նախ Գյումրու բերդի շինարարության

⁵⁹² Patriae Fillius, Физиономия и нравы Александраполя, Кавказ, Тифлис, 1854, 12 июня, N45, стр.177-178; Линстром Н., Кавказский Альманах на 1904 год, Тифлис, 1903, стр 116; Кавказский путевой дневник Кн. В. Мещерского, СПб., 1878, стр. 157.

⁵⁹³ Дневник офицера, состоящего в отряде, действующем на кавказско-турецкой границе. Отрывок 1, Лагерь под Александраполем, Кавказ, Тифлис, 1854, 16 июня, N 46, стр. 184; Դավիթան Մ., Սեր քաղաքի անցյալից, «Բանվոր», Լենինական, 1978, 11 մարտի N 59, էջ 3:

⁵⁹⁴ Շահէս, Փողոցներ չունենք, «Ախուրեան», Ալեքսանդրապոլ, 1907, 16 փետր., թիվ 8, էջ 2:

⁵⁹⁵ Անանուն Դ., նշվ. այս., 4. Ա., էջ 179-183:

⁵⁹⁶ Нефедьев Н., Взгляд на Армянскую область, из путевых записок Н. Нефедева, СПб., 1839, стр. 3; Гагемейстер Ю., Закавказские очерки, издан в типографии министерства внутренних дел, отд. III, СПб., 1845, стр. 46.

նախնական փուլի ավարտը: Գյումրիում ուսղմավարական տեսակետից բացատիկ նշանակություն ունեցող նմանօրինակ կառուցյի անհրաժեշտության վրա ցարական կառավարության ուշադրությունն առաջին անգամ հրավիրեց գեռևս Պ. Ցիցիանովը, որ 1805թ. մայիսին Ալեքսանդր Ա. կայսերը գեկուցելով ամբողջ Շորագյալի սուվանության գրավման մասին՝ նշում էր, թե նպատակահարմար է Գյումրուց ոչ հեռու հիմնել պաշտպանական ամրոց: Ավելին, նա նույնիսկ զեկուցագրին էր կցել կառուցցինելիք բերդի՝ ինժեներ-պրապորչչիկ Գոտշեղի կազմած հատակագիծը⁵⁹⁷: Սակայն 1806թ. գեկտեմբերին սկսված ոռու-թուրքական պատերազմի պատճառով Շորագյալի գավառում որևէ կառուցողական բնույթի աշխատանք կատարելը դարձավ անհնար: Իսկ Գյումրիում բերդ կառուցելու մասին Հաջորդ առաջարկը եղավ միայն 20-ական թվականների վերջերին կոմս Պասկվիչի կողմից: Վերջինս, մի քայլ առաջ անցնելով Ցիցիանովից, 1828թ. գեկտեմբերի 18-ին կառավարող սենատին ներկայացրած իր գեկուցագրում առաջարկում էր «...կառուցել շինություններ ոչ միայն կայազորի, այլ նաև դաշտային զորքերի Համար»⁵⁹⁸: Թե պասկվիչյան այս նախագիծն ինչ ճակատագիր ունեցավ, ալլյուրիների սակագության պատճառով դժվար է ասել: Իրականությունն այն է, որ ոռուները Գյումրու բերդի կառուցմանը լրջորեն ձեռնամուլս եղան միայն ոռու-թուրքական պատերազմի ավարտից հետո: Ընդ որում, սկսված շինարարական աշխատանքները բռուն թափ ստացան միայն 1834-1835 թթ.-ից, այնպես որ արդեն 1837 թ. Նիկոլայ Ա. կայսրի Գյումրի այցելելուց առաջ բերդի կառուցումը հիմնականում ավարտված էր: Կայսրը ոչ միայն դիտեց ու հիացավ նորակառուց բերդով, այլև հիմնագրեց նրանում կառուցվելիք Ա. Ալեքսանդրայի անունը կողղ ոռուական եկեղեցին՝ Գյումրին վերանվանելով Ալեքսանդրապոլ:

Քաղաքի անվանափոխությունը ժամանակակիցների կողմից տեղի է տվել մի շարք հակասական, հաճախ ոչ ստույգ գատողությունների: Այս հարցին ժամանակագրական առումով առաջինը՝ 1838թ. անդրադարձել են Հայ ժողովրդի պատմության քննությանը վերաբերող վավերագրերի ժողովածուն կազմողները: Նրանք գրում են, թե երբ Նիկոլայ Ա.-ն դիտեց նոր կառուցվող ամրոցը և Սուլը մեծ նահատակ թագուհի Ալեքսանդրայի պատվին եկեղեցու հիմնումը, Նորին Կայսերական Մեծությանը Հաճելի եղավ նաև Գյումրի քաղաքն անվանել Ալեքսանդրապոլ⁵⁹⁹: Ալ. Երիցյանցը այդ մասին գրում է, թե հոկտեմբերի 4-ին Գյումրի համար կայսրը «նույն օրը հիմն դրեց հանուն սրբուհիոյն Ալեքսանդրի ոռուական եկեղեցվոյ և Հրամայեց կոչել քաղաքն Ալեքսանդրապոլ»: Գյումրին Ալեքսանդրապոլ և բերդը Ա. Ալեքսանդրայի անունով կոչելը Դ. Ալիշանը վերագրում է Նիկոլայ Ա.-ի կողո՞ն՝ Ալեքսանդրա Ֆյո-

⁵⁹⁷ Գարբիելյան Հ., նշվ. աշխ., էջ 11-12:

⁵⁹⁸ Ակոյն Տ. Խ., նշվ. աշխ., էջ 79:

⁵⁹⁹ Собрание актов..., ч.2, стр. 420.

⁶⁰⁰ Երիցյանց Ալ., նշվ. աշխ. մաս Բ. Թիֆլիս, 1895, էջ 434:

դրույնայի պատմվին՝ գրելով, թե «Երկրի քաղաքն ու ամրոցը - Ա. Հ.) միանգամայն կոչեցան հանուն կայսրուհին Ալեքսանդրապոլս»⁶⁰¹:

Հստ ռազմական պատմաբան Վ.Պոտոլիի՝ կայսրը «Հրամայեց հենց քաղաքը կոչել Ալեքսանդրապոլ»ի պատիվ Ալեքսանդր Ա. կայսեր, որի օրոք Գյումրին միացվել է Ռուսաստանին⁶⁰²: Եվ վերջապես Կ. Գանը այս մասին իր «Կովկասյան աշխարհագրական անվանումների մեջ՝ նաբանձման փորձ» աշխատության մեջ այն կարծիքն է Հայտնում, թե Ալեքսանդրապոլը, որ այդպես է կոչվել ի պատիվ Ալեքսանդրա Ֆյոդորովնա կայսրուհու, 1837թ. Նիկոլայ Ա.-ի ներկայությամբ հրմանադրված քաղաքի և ամրոցի անվանումն է⁶⁰³:

Իրականում այս հարցի պատասխանը Վրաստանի քաղաքացիական նահանգապետ Ն. Փալավանդովին հղված Կովկասի կառավարչապետ Գ. Ռոգենի այն գրության մեջ է, որում վերջինս տեղեկացնում է, թե 1837 թ. Գյումրի ամրոցը Ալեքսանդրապոլ, Հունա-ռուսական եկեղեցին Ս. Ալեքսանդրա և 1840թ. քաղաքը (ընդգծումները մերն են-Ա. Հ.) Ալեքսանդրապոլ է կոչվել ռուսական եկեղեցու մեծ նահատակ Ս. Ալեքսանդրա թագուհու պատմին⁶⁰⁴: Ստորև ներկայացնում ենք այդ կարեւոր փաստաթղթի հայերեն թարգմանությունը:

«Վրաստանի քաղաքացիական նահանգապետ, պարոն իսկական պետական խորհրդական և ասպետ, իշխան Ն. Փալավանդովին. Ողորմած Տեր Կայսրը Բարձրագույնս բարեհաճեց Հրամայել Գյումրի ամրոցը այսուհետև անվանել Ալեքսանդրապոլ, նաև անցած Հոկտեմբերի 4-ին Նորին Բարձրության ներկայությամբ Հիմնադրված համառուսական եկեղեցին կառուցել ի պատիվ Սուրբ Մեծ նահատակ Ալեքսանդրա թագուհու: Այդպիսի բարձրագույն ցանկության մասին գեներալ-համձարգ Ազգերբերգը Հոկտեմբերի 5-ին N 399-ը զեկուցագրով տեղեկացրեց ինձ պատշաճ կատարման համար, ավելացնելով, որ ինքը միաժամանակ այդ մասին հաղորդել է պարոն ռազմական մինիստրին՝ Գյումրի ամրոցի վերանվանման հրամանը բանակին հայտարարելու համար:

Այդ մասին իրազեկում եմ Ձերդ պայծառափայլությանը:
Գեներալ-համձարգ Գ. Ռոգեն

Շտաբի պետ՝ գեներալ-մայոր Վ. Պոլոչևսկի

թիվ 3208 8 նոյեմբերի, 1837 թվական, Թիֆլիս»

Միանգամայն պարզ է դառնում, որ Ալեքսանդրապոլ է անվանվել 1836 թ. նոր կառուցված բերդամրոցը և ոչ թե Գյումրի գյուղը, որն ի

⁶⁰¹ Ալշան Դ., նշվ. աշխ., էջ 154:

⁶⁰² Потто В., Памяти старых кавказцев, Тифлис, 1897, стр. 42-43.

⁶⁰³ Գան Բ., նշվ. աշխ., էջ 8:

⁶⁰⁴ Դարրեհնան Մ., Գյումրին Ալեքսանդրապոլ վերանվանելու մասին, ԲՀԱ, եր., 1981, թիվ 2, էջ 139:

գեպ, 1837 թ. սկսած, ստանալով քաղաքի կարգավիճակ, իր վրա վերցրեց նաև բերդի Ալեքսանդրապոլ անվանումը:

Տեղի հմտութ վարպետների ձեռքով կառուցված վերոշիշյալ ամբողջունն իր 7 բաստիոններով, զորանոցներով, կարմիր և սև տուփի համադրությամբ գեղեցիկ և հզոր պարիսպներով, իր փառահեղ դիրքով քաղաքին տալիս էր ուրույն չուք ու հանդիսավորություն: «Բերդը, գրում է Պողոս վարդապետ Պետրոսյանն իր «Տեղագրութիւն Շիրակայ» աշխատության մեջ, - նայում է քաղաքին լայնանիստ, ամրակառույց և վայելչադիր: Կա խաչաձեւ ոռուսական եկեղեցի՝ բոլորակավոր գմբեթով, ինչպես ունեն մզկիթները: Բերդն ունի վառողի 36 սենյակ, 200 թնդանոթ, ցորենով ու գարով լցված ամբարներ, 600 սենյակ էլ տրամադրված է 10000 գորքի համար, թեպետ սովորաբար բերդում գտնվում են 4000 զինվոր»⁶⁰⁵:

Ո. Էփրիկյանը բերդը համարում է «գարուս գինուրական նշանաւոր շենքերէն մին ...թէ ամրութեամբն և թէ ճարտարարուեստ կառուցմամբ: ՈՒնի զինուց մթերանոցներ, ամբարնոց և գրեթէ 16000 հոգւոց բնակարան, մեծ բանտ մը, առանձին հիվանդանոց և բերդապահ զորավարի համար յատուկ պալատ: Ասոցմէ զատ ունի խաչաձեւ, գեղեցիկ եկեղեցի մը... և հիւսիսային կողմը Կարմիր կոչուած աշտարակ մը: Մեկ խօսքով բերդս իւր այս ամենայն հանգամանօք կրնար երկար ժամանակ դիմադրել թշնամոյ ուժերուն»⁶⁰⁶: Օտարագոգի հեղինակներից Ալեքսանդրապոլի բերդի մասին բավականին մանրամասն տեղեկություններ են թողել Մ. Վագներն և Կ. Սպասակի-Ավտոնոմովը: Մանավանդ վերջինս, որ համոզված էր, թե «ամբողջ Անդրկովկասում չկա Ալեքսանդրապոլի բերդի նմանը: Այն համարվում է դարի գլուխգործոց: Իսկ ինչ վերաբերում է բերդի եկեղեցուն, ապա այն մեզ՝ ասիացիներիս համար, կատարելի իրություն է: Կարելի է ասել ավելին՝ Ալեքսանդրապոլի բերդն ու եկեղեցին ամբողջ Անդրկովկասում առայժմ ոռուսական տիրապետության միակ հուշարձաններն են»⁶⁰⁸: Ալեքսանդրապոլի բերդի հյուակերտ շինությունների շարքում որպես զիւխսգործոց է հիշատակվում նաև եռահարկ, քարե ամուր պարիսպներով հիվանդանոցը:

Ալեքսանդրապոլի բնակչության տնտեսական վիճակի բարեկալման գործում կարևոր խթան եղավ 1840 թ. նրա՝ նոր կազմավորված գավառի կենտրոն դառնալը: Հայաստան, Վեհենա, 1851, էջ 126-127:

⁶⁰⁵ Տեղագրութիւն Շիրակայ, աշխատասպիրեալ ի Պողոս վարդա. Պետրոսեան, նշվ. աշխ., էջ 56:

⁶⁰⁶ Էփրիկյան Մ., նշվ. աշխ., հ. Ա, էջ 45:

⁶⁰⁷ Վակներ Մ., Ճանապարհորդութիւն ի Հայաստան, Վեհենա, 1851, էջ 126-127:

⁶⁰⁸ Спасский-Автономов К., Второе посещение Арарата, Отечественные записки, т. 38, ном. 1-2, СПб., 1845, отд. VIII, стр. 14.

⁶⁰⁹ Տէր-Դավթեանց Գ., Ալեքսանդրապոլ, «Անդր Հայաստանի», Թիֆլիս, 1873, 24 մարտի, թիվ 11, էջ 3:

պարհի վրա, որն իր մի հաստվածով համբնկնում էր նաև «աղի ճանապարհին», քաղաքն իրու հացառաւատ շրջանի կենտրոն, հացահատիկ էր մատակարարում ճանապարհի երկու կողմերի շրջակա մեծ թվով գյուղերին և նույնիսկ Երևանին, որը, հեռու գտնվելով պետության առետրական կենտրոններից և հաղորդակցության ճանապարհներից, վերածվել էր որոշ չափով՝ ինքնամփոփ, տեղական նշանակություն ունեցող արհեստներով բնակչության նեղ պահանջներն ապահովող քաղաքի⁶¹⁰:

Եվ՝ քաղաքական, և՝ տնտեսական տեսակետից աստիճանաբար զգալի նշանակություն ձեռք բերելով՝ Ալեքսանդրապոլի երկրորդական գավառային քաղաքից արագորեն վերածվում է նահանգային առաջնակարգ գավառակինտրոնի, որը 1840թ. ակաած կառուցապատվում էր միայն հաստատված հաստակագծի համաձայն և ուներ քառանկյունի տեսք՝ երկայնքով ու լայնքով իրար հասող փողոցներով:

Հարկ ենք համարում նշել, որ Հայ պատմագիտության մեջ որոշակի տարակարձություն գոյություն ունի նաև Գյումրի-Ալեքսանդրապոլի առաջին հաստակագծման տարեթվի հարցում։ Այսպես, Վ. Պարսամյանն իր «Հայ ազատագրական շարժումների պատմությունից» աշխատության մեջ գրում է, թե «1831 թ. Հուլիսի 28-ին, Ախուրյան գետի Հովտում, ցարական կառավարության կողմից հաստատված հատակագծի համաձայն սկիզբ է դրվում քաղաքի (ապագա Ալեքսանդրապոլի-Ա. Հ.) շինարարությունը»⁶¹¹։ Խնդրի առնչությամբ Վ. Հարությունյանը աներկայորեն կարծում է, թե Կովկասյան հասուլ ինժեներական կորպուսի ինժեներ-գնդապետ Բառումերի գլխավորությամբ կազմված Գյումրու առաջին հաստակագիծը հաստատվել է 1833 թ. սեպտեմբերի 4-ին⁶¹²։ Եվ վերջապես Հ. Գաբրիելյանը հատակագծի հաստատման տարեթիվ է ընդունում 1836 թ.⁶¹³։ Այնուամենայնիվ մեր կարծիքով Գյումրի-Ալեքսանդրապոլի առաջին հատակագծման տարեթվին վերօքերող բոլոր երեք կարծիքներում էլ հաշվի չի առնել մի կարևոր հանգամանք. Վերևում նշել ենք, որ 1829-1831 թթ. գաղթից հետո Գյումրու նորաստեղծ թաղերը ձևավորվեցին տարերայնորեն ու առանց քաղաքաշինական որոշակի ծրագրի։ Քաղաքի կառուցապատման հարցերը քաղաքացիական իշխանությունների ուշադրության առարկա դարձան միայն 1837 թ. մկնած, քանի մինչ այդ ցարական կառավարության հիմնական հոգածության առարկան ուղղմավարական տեսակետից բացառիկ նշանակություն ունեցող Գյումրու ամրոցն էր, որի հզորացման ուղղությամբ 1834 թ. ակաած մեծ չանքեր էին գործադրվում զինվորական իշխանությունների կողմից։ Հետևաբար, եթե Ռուսաստանին միացման սկզբնական շրջանում մինչեւ 1837թ., իշ-

⁶¹⁰ Հակոբյան թ. Խ. Երևանի պատմությունը (1801-1879), էջ 403։

⁶¹¹ Պարսամյան Վ., նշվ. աշխ., էջ 86։

⁶¹² Հարությունյան Վ., Գյումրին և գյումրեցիները, Գյումրի, 1998, էջ 7։

⁶¹³ Գաբրիելյան Հ., նշվ. աշխ., էջ 13։

խանությունների հիմնական ուշադրության առարկան բերդամրոցն էր, ապա վերոբերյալ հատակագծերը, եթե այդպիսիք իրոք եղել են, պիտի որ վերաբերեին միայն բերդին ու նրան հարակից շինություններին:

Ինչ մնում է Ալեքսանդրապոլ քաղաքի առաջին հատակագծման տարեթվի ճշտմանը, ապա այս մասին նշենք հետևյալը: Քանի որ քաղաքաշինական միջոցառումներն այստեղ բուռն թափով սկսվեցին միայն 1840-ական թթ. ալզբեներից, ապա համակարծիք լինելով Ս. Մաթևոսյանի հետ՝ հակված ենք ենթադրելու, որ քաղաքի առաջին հատակագիծը կազմվել ու հաստատվել է ոչ թե 1831, 1833 կամ 1836 թթ., այլ միայն 1840 թ.⁶¹⁴: Հստ այդ հատակագիծի՝ Ալեքսանդրապոլը զբաղեցնում էր մայոր Զաֆարը բեկի երբեմնի սեփականությունը հանդիսացողող Հողաբաժինը՝ Հին Գյումրիի բերդի (այժմյան քաղաքային մարզադաշտի, Սպայի տան, Մելիքյանի անվան հիվանդանոցի և «Բալատոն» վարժարանի տարածքները)⁶¹⁵ և նրա շրջակայքում նախկինում գոյություն ունեցող կառուցումների արևելյան կողմում՝ «400 մետր աւելի ցած իւր ախոյեան Կարսից»⁶¹⁶:

Անկասկած, քաղաքի տեղանքի այդպիսի բնարությունը բխել է նախկինության ուազմական նկատառումներից: Քանի որ թուրքական սահմանը քաղաքի արևմտյան կողմում էր, և վտանգը սպառնում էր արևմտաթից, այդ պատճառով էլ բերդաքաղաքի ամրոցային կառուցումներն այն օղակում էին զենց արևմտաթից, մասամբ նաև հյուսիսից, մինչդեռ արևելյան կողմից «քաղաքն անպարիսապ տարածեալ էի դաշտակողմն»⁶¹⁷:

Պաշտպանական կառույցների այսպիսի դասավորվածությունը պայմանավորված էր նաև քաղաք մտնող երեք գիխավոր ճանապարհների ուղղություններով. Հարավից՝ երևանից եկող, արևմուտքից՝ Կարսից եկող և հյուսիսից՝ Թիֆլիսից եկող: Բնականաբար նման պայմանները պետք է թելադրեին բնակավայրի առավել համակցված կառուցապատում: Քաղաքը տեղադրվել էր ույիշեփի համեմատաբար ավելի ցածր տարածության վրա և ուներ անհարթ դիրք. տների մի մասը կառուցվել էր ձորավի մեջ, մյուս մասը՝ բլուրների ու զառիվայրերի վրա⁶¹⁸: Քաղաքի տեղանքի մասին բավականին մանրամասն նկարագրություն է թողել XIX դ. անգլիացի ճանապարհորդ Լինչը. «Պատկերացրեք նախկեառաջ ոչ խոր գետ, որը հոսում է դեպի Հարպավ, թեթևակի ափսեածե, բայց ընդարձակ դաշտավայրի միջով: Նրա ձափակողմյան կամ արևելյան ափի հարթ տեղանքով ձգվում է ոչ մեծ

⁶¹⁴ Մաթևոսյան Ս. Գյումրիի ժողովրդական ճարտարապետությունը, Եր., 1985, էջ13:

⁶¹⁵ Հարությունյան Վ., նշվ. աշխ., էջ 7:

⁶¹⁶ Էլիզէ Ռէլին, Ռուսական Հայաստան կամ Արաքսի ավագան, ՈՒրմիա լիճ եւ Առաջաւոր Ասիա, Վապաշչապատ, 1890, էջ 63; Գէորգ-Մեսրոպ, Աշխարհագրութիւն Պատմական Հայաստանի, Կ. Պոլիս, 1924, էջ 30:

⁶¹⁷ Ալիշան Դ., Շիրակ, էջ 154:

⁶¹⁸ Միկիթարեանց Ալ., Ալեքսանդրապոլ, «Մեղու Հայաստանի», Թիֆլիս, 1873, 28 ապրիլի, N 15, էջ 3:

բարձրություն ունեցող ցցուն գագաթով բլրաշարը: Այս բլրաշարի հետևում են դարձյալ երեք զուգահեռ բլրաթմբեր՝ կառուցապատված քաղաքային տներով»⁶¹⁹: Այսուամենայնիվ, չնայած քաղաքի տեղանքի զգալի անհարմարություններին, սկսած 1840 թ. նոր կառուցապատվածներն Ալեքսանդրապոլում իրականացվել են կանոնավոր ձևունեցող, ուղղանկյուն խաչվող փողոցների ցանցածև սիեմայով⁶²⁰:

Կառուցապատվող քաղաքի հատակագծի ստեղծման ժամանակ հաշվի առնվեցին նաև այլ գործոններ: Այսպես, Հին Գյումրու թաղերը զբաղեցրել էին արևելահայաց «ազատ հարթ դաշտով» Հյուսիսից հարավ զուգահեռ ձգվող բլրաշարերը և շարված էին վերջիններիս միջով նույնպես զուգահեռ հոսող գետակների բոլորը: Այդ թաղերը, ինչպես ասվեց, նախապես ի հայտ էին եկեղեց տարեքայնորեն, ձևավորվել էին, ավանդական շինարարական եղանակներով և տարածվել էին տեղանքին համապատասխան՝ բնակավայրին տալով Հյուսիսից հարավ ձգվածություն, որը միաժամանակ համապատասխանում էր գետակների ընթացքին ու գերակշռող հյուսիսային քամիների ուղղությանը:

Այս ամենի մանրամասն հաշվառման հիման վրա 1840 թ. Ալեքսանդրապոլի հատակագրեմամբ ստացվեց փողոցների հետևյալ պատկերը: Քաղաքի համեմատաբար հարթ ու երկար փողոցներն իրար էին կապում Հյուսիսում և հարավում գտնվող «Խանչպարների», «Զորի բողազ» և «Թուրքի մահլա» թաղամասերը: Իսկ հյուսիս -հարավ ձգվող փողոցներին ուղղահայաց հատողները, որ տեղանքի պատճառով աչքի էին ընկնում խիստ ալիքավորությամբ, միմյանց էին միացնում քաղաքի արևելյան և արևմտյան կողմերում տեղադրված «կաթողիկների» և «Հույների» թաղամասերը: Միևնույն ժամանակ 1840 թ. հատակագծով նախատեսներում էր խաչվող փողոցներում ստեղծել կանոնավոր ուղղանկյուն թաղամասեր՝ կվարտաներ, իսկ համեմատաբար մեծ թաղամասերում լինելու էին նաև նրբանցքներ:

Այսպիսով, եթե 1830-ական թվականների Ալեքսանդրապոլի մասին խոսում էին ընդամենը որպես «գեղեցիկ ապագա խոստացող», բայց արևելյան տիպի խոճուկ քաղաքի, ապա XIX դարի կեսին այն արդեն ոչ ասիական, բարեկարգ քաղաք էր՝ ուղիղ, լայն և գիշերը լուսավորվող փողոցներով, իսկ քաղաքի բնակչությունը քիչ թե շատ խոսում էր ոռւսերեն՝ ինչը հազվագեց երևույթ էր երկանի նահանգի

⁶¹⁹ Լինչ Խ. Փ. Ե., նշ. աշխ., էջ 163:

⁶²⁰ Яралов Ю., Города Армении, М., 1950, стр. 12-13; Халпахчян О., Армяно-русские куль турные отношения и их отражение в архитектуре, Ер., 1957, стр. 42-43.

⁶²¹ Переяленко В., Поездка в Александриополь, Закавказский Вестник, Тифлис, 1853, 22 января, ном. 4, стр. 15-16.

⁶²² Ղամբան Արսեն, Համալսարանութիւն Ալեքսանդրապոլի Հայոց Հոգևոր Վիճակին դպրոցի (1840-1912), Ալեքսանդրապոլ, 1912:

մյուս քաղաքների համար⁶²³: Ավելի հանգամանալի և ընդգրկում դարձնելու համար XIX դարակեսի Ալեքսանդրապոլի նկարագիրը՝ մեջբերենք մի քանի վկայություններ՝ ժամանակի վիճակագրական հաշվետվություններից: Այսպես, «1852թ. Կովկասյան օրացույցի» տվյալներով, Ալեքսանդրապոլում արդեն 1850 թ. կար 240 հաստատված ճակատամասով (ֆասադով) տուն, 1808 ասիհական տիպի քարե տուն, 250 կրպակ, 150 փողոց, 2 հրապարակ, 10 կամուրջ⁶²⁴: 1852-1853 թթ. մեկ այլ հաշվետվության մեջ խոսվում է Ալեքսանդրապոլի 75 թաղամասերի, 52 աղբյուրների, 186 ջրհորների, 2048 քարային տների (200-ը յակ ճակատամասերով) մասին, և այս ամենը՝ 11280 բնակչի համար: Ենքները տեղական մե տուֆից են, կամ 2 հայկական՝ Ս. Աստվածածինն ու կաթողիկե եկեղեցիներ, նաև 1849 թ. Հիմնադրված ուղղափառ եկեղեցին, 2 շուկա՝ սովորական և անսասունների փաճառքի, 7 քարվանսարա, 850 կրպակ, 3 բաղնիս, 1 հրապարակ, 1 նոր և 2 հին հայկական, 1 մահմեդական և մեկ ընդհանուր գերեզմանոցներ: Երևանի նահանգի քաղաքների տրնտեսական-քաղաքացիական կյանքի վերաբերյալ 1865 թ. հաշվետվության մեջ Ալեքսանդրապոլի մասին ասվում էր. «Քաղաքը, որ հյուսիսից սահմանակից է Եսաուլ, Օրթաքիլիսա, Թոփառի, արևելքից՝ Ղոնախ-Ղուան, Հաջի-Նազար-Ղուլի, Հարավից՝ Դյուզյանդ, Թափաղովակ, Ղարաքիլիսա գյուղերին, իսկ արևմուտքից՝ Արփաչայ գետին, ունի 16 337 բնակիչ (8638-ը արական, 7699-ը իբական սեռի): Քաղաքային բնակչությանն է պատկանում Հետելյալ անշարժ գույքը՝ 2870 տուն, 1460 կրպակ, 17 քարվանսարա, 6 ջրաղաց, 36 գործարան: Ընդ որում, վերը նշվածից ազնվականությանն են պատկանում 25 տուն, 145 կրպակ, 5 քարվանսարա, 5 (օճառի) գործարան: Հոգեւորականությանը՝ 37 տուն, 74 կրպակ, առևտորականներին՝ 700 տուն, 40 ջրաղաց, կրպակ և գործարան: Մնացած անշարժ գույքը պատկանում է աղքատ խավին»:⁶²⁵

⁶²³ Муравьев А., Грузия и Армения, ч.2, СПб, 1848, стр. 289; Աբովյան Խ., նշվ. աշխ., հ. 7, էջ 179; Նորան Մուշեղ, Աբովյանը և Գյումրին, «Բանալոր», Լենինական, 1978, 15 մայիս, N 62, էջ 4:

⁶²⁴ Руцевич, Статистические очерки некоторых городов Кавказа и Закавказского края, Кавказский календарь на 1852 год, Тифлис, 1851, отд. III, стр. 276.

* Ալեքսանդրապոլի եկեղեցիների մասին մանրամասն տե՛ս ՀՀ ՊԿԱ, ֆոնդ 57, ցուցակ 1, գործ 208, էջ 1-3; Մաշտոցի անվան Մատենադարան, Շահաթունյանի արխիվ, թողթ. 63, գավ. 28, էջ 1-3:

⁶²⁵ Военно-статистическое обозрение Российской империи, т. XVI, ч. 6, Эриванская губерния, СПб., 1853, стр. 259; Документы и материалы по истории армянского народа..., Еր., 1993, док. 134, стр. 319, док. 141, стр. 344.

⁶²⁶ ՀՀ ՊԿԱ, ֆոնդ 125, ցուցակ 1, գործ 14-1 մաս, էջ 50-64; Сборник статистических сведений о Кавказе, издаваемый Кавказским отделом императорского русского географического общества, составил и издавал Н. Воронов, т. 1, отд. 1, Тифлис, 1869, стр. 36-38.

Արդեն XIX-ր. 50-ական թվականներին Ալեքսանդրապոլի քաղաքային կյանքի զարգացման բավականին բարձր տեմպերը առաջին հերթին հետևանք էին այն համեմատաբար ապահով իրավիճակի, որում հայտնվել էր Ուուսաստանի տիրապետության տակ անցած այս տարածաշրջանը, ապահովություն, որը հնարավորություն էր տալիս տեղի բնակչությանը ոչ միայն իր կյանքը դնել նորմալ հունի մեջ, այլև աննախադեպ բարենպաստ պայմաններ էր ստեղծում ինչպես քաղաքային շինարարության, այնպես էլ տնտեսական կյանքի առաջընթացի համար:

Վ Ե Ր Զ Ա Բ Ա Ն

Մեծ Հայքի Այրարատ աշխարհի Շիրակ գավառը Հայկական լեռնաշարհի հնագույն երկրամասերից է: Որոշ բառաստուգաբանական վերլուծություններ թույլ են տալիս մտածել ժամանակին այս տարածքի վրա նույնիսկ կիմերական ցեղերի ունեցած իշխանության մասին:⁶²⁷ Պատմական տեղեկությունների վկայությամբ՝ բավականին երկարատև մի ժամանակահատվածում այն եղել է նաև Վանի թագավորության

⁶²⁷ Երեմյան Ս., Կիմերական և սլյութական ցեղերի արշավանքը և ՈՒրարտուի ու Ասորեստանի պայքարը քոչվորների դեմ, ՊԲՀ, N 2, Եր., 1968; Զահրովյան Գ., Կիմերները և կիմերների պրոբլեմը արդի գիտության մեջ, ՊԲՀ, N 4, Եր., 1977:

Ենթակայության տակ: Շիրակն Արշակունիների թագավորության շրջանում հիշատակվում է նախ որպես Կամսարականների կալվածք, ասպա VIII դարից սկսած՝ Բագրատունիների ժառանգական սեփականություն:

Ավելի ուշ, դարեր տևած թուրք-պարսկական ասպատակությունների արդյունքում Շիրակի արևմտյան հատվածը հայտնվեց Օսմանյան կայսրության, իսկ արևելյանը, Շորագյալի սուլթանության տեսքով՝ Երևանի պարսիկ խաների գերիշխանության ներքո: 1805 թ. Արևելյան Շիրակը վերջնականորեն միացվում է Անդրկովկաս հաստատապես մուտք գործող Ռուսաստանին: Այս պատմական իրադարձության ծնունդը, որ թելագրված էր Ռուսաստանի համար այդ հացատատ շրջանի ռազմավարական կարևորագույն նշանակության հստակ գիտակցմամբ, հիմնովին փոխեց Շիրակի պատմական գավառի արևելյան հատվածի սոցիալ-տնտեսական ու ժողովրդագրական զարգացման հետագա ողջ ընթացքը: Ռուսաստանի հետ միավորվելը Արևելյան Շիրակը վեր էր ածում խական միջնապատի մի կողմից Ռուսաստանի գերիշխանության տակ անցած Վրաստանի, իսկ մյուս կողմից՝ Պարսկաստանի և Օսմանյան Թուրքիայի միջև և, որ նույնպես անշափ կարեր է, ուստաների կողմից Շորագյալի սուլթանության գրավումը միանգամայն հնարավոր ու իրատեսական էր դարձնում ուստական գորքերի հետագա առաջնաղացումը Արևելյան Հայաստանում՝ մեծապես իմթանելով Հայ ազգաբնակչության շրջանում ուստամետ տրամադրությունների ածին: Պատահական չէ, որ մինչև XIX դ. 70-ական թվականների վերջերը հանդիսանալով Անդրկովկասում ուստաների ամենահզոր ուազմական հենակետը՝ Արևելյան Շիրակը նաև ուստական կովկասյան զորքերի հավաքատեղին էր: Անցնելով Ռուսաստանի գերիշխանության տակ՝ Արևելյան Շիրակը ենթարկվեց Անդրկովկասյան երկրամասում ուստական իշխանությունների կողմից իրագործված վարչատարածքային գրեթե բոլոր բարեփոխումներին՝ 1805 թ. գրեթե անմարդաբնակ Շորագյալի սուլթանությունից արդեն 1849 թ. վերածվելով Երևանի նահանգի Ալեքսանդրապոլի գավառի ամենամարդաշատ ու ամենահայեցի Շորագյալի գավառակի:

Խնդրո առարկա ժամանակահատվածում լուրջ և բեկումնային տեղաշրժեր գրանցվեցին գավառի էթնոսուղովրդագրական իրավիճակի մեջ: Զնայած ուստական գերիշխանության տակ անցնելուն՝ Համարյա մինչև XIX դարի առաջին քառորդի ավարտը գավառում ընթանում էին քաղաքական լծակների ազդեցությամբ ընակչության ընականոն աճի արգելակման ու կինիկական դիմահեղման նախորդ դարերից ժառանգված գործընթացներ: Դրանք ի վերջո հանգեցրին այն բանին, որ 1805 թ. Ռուսական կայսրության հետ միավորվելու պահին մոտ 808 ընտանիք (4877 մարդ) ունեցող Շորագյալում 1804-1813 թթ. ուստապարսկական և ուստա-թուրքական իրար հաջորդող պատերազմների, թալանչիական հարձակումների, ազգաբնակչության բռնագաղթերի,

կոսորածների ու հատկապես սովորի և ավերի հետևանքով բնակչության թիվը նկատելիորեն նվազեց: Ընդ որում, եթե բնակչության թիվը անկումը գավառում մինչև 1810 թ. տեղի էր ունենում համեմատաբար դանդաղ, ապա 1810-1817 թթ. այդ գործընթացը հայտնվեց այսպես ասած՝ «ազատ անկման» վիճակում, հասներով իր նվազագույն կրթիկական կետին՝ ընդամենը 174 ընտանիքի (870 մարդու): Ստեղծված ձայրահեղ վատթար իրավիճակի մեջ դրական տեղաշարժեր սկսեցին ի հայտ գալ միայն XIX դ. 20-ական թվականների սկզբներից, երբ պայմանագործած որոշ արտաքին ու ներքին գործոններով Շորագյալում գրանցվեց ազգաբնակչության թիվի դանդաղ աճ: Մինչդեռ գավառի բնակչության թվաքանակի էական աճի ու էթնիկական կազմի ան-նախադեպ փոփոխությունները գրանցվեցին միայն 1828-1831 թթ. գաղթերից հետո, երբ Ռուսական կայսրության տարածք տեղափոխված շուրջ 20606 պարակահապատակ և արևմտահայ գաղթական ընտանիքներից (125000 մարդ), Համաձայն 1832 թ. Կամերալ ցուցակագրման տվյալների՝ 3866 ընտանիքը (21695 մարդ) Հաստատվեց Արևելյան Շիրակի տարածքում, ընդ որում, 1350 ընտանիքը (7250 մարդ): Գյումրիում միակ մասցած 2516 ընտանիքը (14445 մարդ): Գավառի 76 գյուղերում: Գավառում բնակչության թիվը բնական և արհեստական աճը շարունակվեց նաև գաղթերին հաջորդած երկու տասնամյակների ընթացքում: Այսպես որ արդեն 1852 թ. նորաստեղծ Երևանի նահանգի Ալեքսանդրապոլի գավառի Շորագյալի տեղամասում ապրում էր 31227 մարդ, որից 11280 մարդը՝ միայն Ալեքսանդրապոլ քաղաքում:

Արևելյան Շիրակի՝ Ռուսական կայսրության հետ միավորվելը նշանավորվեց նաև XIX դ. 30-ական թվականներից այսուեղ քաղաքաշինական մեծածավալ միջոցառումներով: Երբ Աղքիանապղպի Հաշտության պայմանագրով Ռուսաստանը ստիպված եղավ թուրքական կայսրությանը վերադարձնելու Կովկասյան ճակատում իր գրաված տարածքների մեծագույն մասը՝ Կարսը, Էրզրումը և Բայազետը, Հրամայական անհրաժեշտություն գարձակ Ախուրյանի ոռուական ափին՝ Գյումրի փոքրիկ գուղղատեղում, ուստի ապահան ուժեղ հենակետ ստեղծելու առաջնահերթ խնդրի շուտափույթ լուծումը: Ռազմավարական տեսակետից բացառիկ նշանակություն ունեցող նմանօրինակ կառույցի անհրաժեշտության վրա ցարական կառավարության ուշադրությունն առաջնը՝ գեռևս 1805 թ. Հրավիրել էր Պ. Յ. Ցիցիանովը: Ասկայն Գյումրու բերդի կառույցման պահանջը լրջորեն զգացվեց Հատկապես 1828-1829 թթ. ոռու-թուրքական պատերազմի ընթացքում, որի, ոռուների համար անհաջող ավարտն էլ խթանեց վերջինիս շինարարությանը ձեռնամուխ լինելու աշխատանքները: Գյումրու բերդի շինարարությանը զուգահեռ կառուցապատվեց նաև համանուն բնակալիյրո, որը նորակառուց բերդը դիտելու պատրիակով 1837 թ. Հոկտեմբերի 3-ին Անդրկովկաս ժամանած նիկոլայ Ա. կայսեր

Հրամանով՝ Հոչակվեց քաղաքը ու վերանվանվեց Աղեքսանդրապոլ։ Բնակավայրը, որի մասին XIX-րդ 30-ական թվականներին խոսում էին որպես ընդամենը «գեղեցիկ ապագա խոստացող» արևելյան տիպի խղճուկ քաղաքի, արդեն 1840 թ. կառուցապատվելով հաստատված հատակագծով, դարձավ քաղաքային կանքի զարգացման բավականին բարձր տեմպեր ունեցող, իր արհեստավորներով ու առևտրականներով՝ ամբողջ Անդրկովկասում հոչակված, ոչ ասիական, բարեկարգ քաղաք «...թուրքական սահմանի դիմաց ոռւսական զորավոր մի կայան՝ լավ դիրքով, մեծաթիվ պահակագորով և արագորեն աճող ազգաբնակչությամբ»։ Ավելին, նույնիսկ 1877-1878 թթ. ոռւս-թուրքական հերթական պատերազմի արդյունքում ոռւսների կողմից Կարսի գրավումից հետո, կորցնելով Հանդերձ Ռուսական կայսրության համար իր նախկին ռազմավարական կարևոր նշանակովթյունը, Աղեքսանդրապոլը շարունակեց մնալ որպես առևտրագորական հոչակի և առանձնահատուկ դիմագծի տեր քաղաք Անդրկովկասյան երկրամասում։

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ակգբնաղբյուրներ

Ա) Զեռագիր աղբյուրներ

1.1. Մաշտոցի ամսվան Մատենադարան, ձեռագիր NN 1886, 6517:

Բ) Արմիվային նյութեր

1.2. Մաշտոցի անսվան Մատենադարան, արխիվային բաժին, Փոնդ Կաթողիկոսական դիվան, թղթապանակ NN 22 ա, (վավերագիր 86), 43 (վ. 298թ), 46 (վ. 249), 58 (վ. 133), 59 (վ. 546, 578), 66 (վ.

- 54), 74 (գ. 227, 246): Ալեքսանդր Երիցյանի արխիվ, թղթ. 154 (գ. 28), 157 (գ. 9): Կարապետ արքեպիսկոպոսի գիշան, 163 գ (գ. 1173), 163դ (գ. 1407): Ներսես Աշտարակեցու արխիվ, թղթ. 166 (գ. 1016, 1084, 1085, 1122), 166, գլ. Իթ (գ. 928), 166, գլ. ԼԲ (գ. 1071, 1119), 167ա (գ. 19): Լազարյանների արխիվ, թղթ. 105 (գ. 13, 192), 106, գ. 51 (գ. 93, 94, 95), 111, գլ. 79 (գ. 1): Շախաթունյանի արխիվ, թղթ. 63 (գ. 28):
- 1.3. ՀՀ պատմության կենտրոնական պետական արխիվ (ՀՀ ՊԿԱ), ֆ. 47, գ. 1, գ. 659, 660, 661, 662, 663, 859, 860, 863, 865, 920, 921, 922, 923, գ. 2, գ. 1, 18, 20, 21, 22, 23, 37, 39, 46, 47, 48, 69, 70, 73, 74, 75, 79, 81, 82, 83, 89, 90, 91, 92, 98, 102, 103, 107, 108, 109, 111, 112, 115, 120, 121, 128, 130, 131, 132, 134, 135, 138, 139, 140, 146, 147, 148, 149, 150, 153, 154, 155, 156, 157, 158, 195, 201, 225, 237, 416, 516, 530, 625, 626, 630, գ. 3, գ. 199, 920, գ. 6, գ. 37, 59, 119, 152, 167, 179, 248: ֆ. 57, գ. 1, գ. 36, 66, 85, 208: ֆ. 90, գ. 1, գ. 44, 365, 445, 447: ֆ. 93, գ. 1, գ. 82, 83, 84, 85, 86, 87, 97, 109, 110, 120: ֆ. 125, գ. 1, գ. 14-Ի մաս: ֆ. 133, գ. 1, գ. 329, 359: ֆ. 151, գ. 1, գ. 25: ֆ. 247, գ. 1, գ. 181 (քարտեղ): ֆ. 332, գ. 1, գ. 120, 715, 815, 816:
- 1.4. ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի արխիվ, Լեռյի անձնական արխիվ, ֆ. 1, գ. 1, գ. 349, 388, 413: Ե. Նիկողոսյանի նյութերը, գ. 103: Ա. Թամրազյանի նյութերը, գ. 103:
- Դ) Տպագիր սկզբնաղբյուրներ
- ա) Հայ երեսներ
- 1.5. «Արաբական աղբյուրները Հայաստանի և Հարեւան երկրների մասին», Յակուտ ալ-
- Համակի, Աբովլ-Ֆիդա, Իբն Շաղդադ, կազմեց՝ Հ. Թ. Նալբանդյանը, Եր., 1965:
- 1.6. Աբրահամ Կրետացի, Պատմութիւն անցիցն իւրոց և Նատր Շահին Պարսից, Վաղարշա պատ, 1870:
- 1.7. Առաքել Դավիթիեցի, Պատմութիւն Առաքել վարդապետի Դաւրիթեցոյ, Վաղարշապատ, 1896:
- 1.8. Դիւան Հայոց պատմության, կազմեց Գ. Աղանեանցը, գիրք Ա-ՃԳ, թիֆլիս, 1893-1917:
- 1.9. Զաքարեայ Սարկաւագ Քանաքեռցի, Պատմագրութիւն, հ. Ա, Վաղարշապատ, 1870:
- 1.10. Զաքարեայ Սարկաւագ Քանաքեռցի, Պատմագրութիւն, հ. Բ, Վաղարշապատ, 1870:
- 1.11. Էվլիա Չելեբի, Թուրքական աղբյուրները, ծանոթագրությունները, առաջարանը և թարգմանությունը, Ա. Սաֆրաստյանի, Հ. Գ, Եր., 1967:

- 1.12. «Թուղթական աղբյուրները Հայաստանի, Հայերի և Անդրկովկասի մյուս ժողովրդների մասին», Հ. Ա., Եր., 1961:
- 1.13. «Թուղթական աղբյուրները Հայաստանի, Հայերի և Անդրկովկասի մյուս ժողովրդների մասին», Հ. Բ., Եր., 1964:
- 1.14. Խաչատրյան Մ., Պարսկահայերի ներգաղթի կազմակերպումն ըստ ժամանակի փաստաթղթերի, Լրաբեր Հասարակական գիտությունների, Եր., 1978, N 10:
- 1.15. Հակոբյան Հովհաննես, Ոհղեգորովյաններ, Աղբյուրներ Հայաստանի և Անդրկովկասի պատ մության, Հ. Զ. Ժ. ԺԹ դարի առաջին քսանամյակ (1800-1820), Եր., Հրատ. Մելքոնյան Գոնդի, 1934:
- 1.16. Հայերեն ձեռագրերի Ժէ դարի հիշատակարաններ (1601-1620 թթ.), Հ. Ա., Կազմեցին՝ Վ. Հակոբյան, Ա. Հովհաննիսյան, Եր., 1974:
- 1.17. Մանր ժամանակագրություններ XIII-XVIII դդ., կազմեց Վ. Հակոբյան, Հ. Ա., Եր., 1951:
- 1.18. Մանր ժամանակագրություններ XIII-XVIII դդ., կազմեց Վ. Հակոբյան, Հ. Բ., Եր., 1956:
- 1.19. Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1910:
- 1.20. Նոր վավերագրեր Գեորգիևսկի 1783թ. դաշնագրի մասին, Հրատ. Վ. Մարտիրոսյան, Պատմա-Բանասիրական Հանդես, Եր., 1978, N 3, Էջ 234-241:
- 1.21. Նոր վավերագրեր պարսկահայերի և արևմտահայերի 1828-1830 թթ. գաղղթի վերաբերյալ, Հրատ. Մ. Դարբինյան, Բանքեր Հայաստանի արխիվների, Եր., 1973, N 2, Էջ 135-146:
- 1.22. Չամչյան Սիրայել, Պատմութիւն Հայոց, Հ. Բ., Վենետիկ, 1875:
- 1.23. Պատմութիւն Ղեռնդայ մեծի վարդապէտի Հայոց, Մանկո-Պետերբուրգ, 1887:
- 1.24. Սամուել Անեցի, Հաւաքմունք ի գրոյ պատմագրաց, Վաղարշապատ, 1893:
- 1.25. Սիմեոն Երևանցի, Ջամբռ, գիրք, որ կոչի յիշատակարան, Վաղարշապատ, 1873:
- 1.26. Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ, Պատմութիւն տիեզերական, Ա. Պետերբուրգ, 1885:
- 1.27. Վարդան Վարդապետ, Հաւաքումն պատմութեան լուսաբանեալ, Վենետիկ, 1862:
- 1.28. Վրացական աղբյուրները Հայաստանի և Հայերի մասին, թարգմ. Լ. Մելիքսեթ-բեկ, Հ. Ա., Եր., 1934:
- 1.29. Վրացական աղբյուրները Հայաստանի և Հայերի մասին, թարգմ. Լ. Մելիքսեթ-բեկ, Հ. Բ., Եր., 1938:
- 1.30. Վրացական աղբյուրները Հայաստանի և Հայերի մասին, թարգմ. Լ. Մելիքսեթ-բեկ, Հ. Գ., Եր., 1955:
- 1.31. Օրբելյան Մու., Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910:

բ) Բուռսերներ

- 1.32. *Акты собранные Кавказской Археографической Комиссии (АКАК), т. 1-12 Тифлис, 1866-1904.*
- 1.33. *Внешняя политика России XIX и начале XX века, 1815-1830гг., Документы Российского министерства иностранных дел, т. VIII, М., 1972.*
- 1.34. *Документы и материалы по истории армянского народа. Социально-политическое и экономическое положение Восточной Армении после присоединения к России (1830-1870), Еր., 1993.*
- 1.35. *Եալցկի Օքստ, Статистическое описание Закавказского края, с присовокуплением статьи; Политическое состояние Закавказского края в исходе XVIII века и сравнение этого с нынешним, СПб., 1835.*
- 1.36. *Новые документы о переселении персидских и западных армян в 1828-1830гг., изд. М. Дарабян, Вестник архивов Армении, Еր., 1977, N 3, стр 3-23.*
- 1.37. *Обозрение российских владений за Кавказом, в статистическом, топографическом, топографическом и финансовом отношениях, ч. 1, СПб., 1836.*
- 1.38. *Обозрение российских владений за Кавказом, в статистическом, топографическом, топографическом и финансовом отношениях, ч. 2, СПб., 1836.*
- 1.39. *Обозрение российских владений за Кавказом, в статистическом, топографическом, топографическом и финансовом отношениях, ч. 3, СПб., 1836.*
- 1.40. *Походный дневник, 1854-1855 г.г., Военный сборник, т. XI, отдел II, СПб., 1860.*
- 1.41. *Присоединение Восточной Армении к России, Сборник документов, т. 1, редактор Ц. П. Агаян, Еր., 1972.*
- 1.42. *Присоединение Восточной Армении к России, Сборник документов, т. 2, редактор Ц. П. Агаян, Еր., 1978.*
- 1.43. *Сборник сведений о Кавказе, т. I, Тифлис, 1871.*
- 1.44. *Сборник статистических сведений о Кавказе, издаваемый Кавказским отделом императорского русского географического общества, составил и издавал Н. Воронов, т. I, Тифлис, 1869.*
- 1.45. *Свод статистических данных о населении Закавказского края извлечённых из посемейных списков 1886г, Издан по распоряжению Главноначальствующего гражданской части на Кавказе, Закавказским статистическим комитетом, Тифлис, 1893.*
- 1.46. *Собрание актов, относящихся к обозрению истории армянского народа, ч. 1-3, М., 1833.*
- 1.47. *Эреванская губерния, Военно-статистическое обозрение Российской империи, т. XVI, ч. 6, СПб., 1853.*

2. Աշխատություններ

- ա) Հ ա յ ե ր ե ն
- 2.1. Աբովյան Խ., Երկերի լիակատար ժողովածու, ակադ. Հրատ., հ. 7, Եր., 1958:
 - 2.2. Աբրահամյան Վ., Հայ Համքարությունները Անդրկովկասի քաղաք-ներում (18-20 դարերի սկիզբը), Եր., 1971:
 - 2.3. Ալիշան Դ., Ալրարատ, բնաշխարհ Հայաստաննեայց, Վենետիկ, Ս. Ղազարի տպ., 1890:
 - 2.4. Ալիշան Դ., Շիրակ, տեղագրութիւն, պատկերացոյց, Վենետիկ, Ս. Ղազարի տպ., 1881:
 - 2.5. Ալիշան Դ., Տեղագիր Հայոց մեծաց, Վենետիկ, Ս. Ղազարի, Միմիթարյանների տպ., 1855:
 - 2.6. Ալպյանյան Արշակ, Պատմական Հայաստանի սահմանները, Կաջիրե, 1950:
 - 2.7. Աղաբեզյան Մ., Խնդիր կաթողիկոսության Ամենայն Հայոց, Քննություն 1836թ. սահմանադրության (Պոլոմենիայի), Կ. Պոլիս, 1865:
 - 2.8. Աղանեանց Գ. ք., Կարնո գաղթը (1829-1830), Թ-Փիլիս, 1891:
 - 2.9. Աղանյան Գ., Երկարագործական արհեստները Հայոց մեջ XIXդ. և XX դ. սկզբին, ՀՀ ԳԱԱ ՇՀՀԿ «Գիտական աշխատություններ», Հ. 2, Գյումրի, 1999:
 - 2.10. Աղանյան Գ., Հայկական գինագործությունը XIX դ.-XX դ. սկզբին, ՀՀ ԳԱԱ ՇՀՀԿ «Գիտական աշխատություններ», Հ. 3, Գյումրի, 2000:
 - 2.11. Անանուն Դ., Ռուսահայերի հասարակական գարգացումը XIX դարում (1800-1870), հ. Ա, Բաքու, 1916:
 - 2.12. Առաքելյան Բ., Քաղաքները և արհեստները Հայաստանում IX-XIII դարերում, մաս 1, Եր., 1958:
 - 2.13. Ավգալքելյան Խ., Հողային հարցը Արևելյան Հայաստանում, Եր., 1959:
 - 2.14. Ատրպետ, Հողատիրությունը Կովկասում, Ալեքսանդրապոլ, 1906:
 - 2.15. Բագելյան Կ., Կանանց արհեստները Հայոց մեջ XIXդ. ու դրանց կազմը Համքարությունների հետ, ՀՀ ԳԱԱ ՇՀՀԿ «Գիտական աշխատություններ», հ. 4, Գյումրի, 2001:
 - 2.16. Բդոյան Վ., Երկրագործական մշակույթը Հայաստանում, Եր., 1972:
 - 2.17. Գաբրիելյան Հ., Լենինական, Եր., 1984:
 - 2.18. Գալոյան Գ., Ռուսաստանը և Անդրկովկասի ժողովուրդները, ՈՒրվագծեր նրանց փոխհարաբերությունների քաղաքական պատմության հին ժամանակներից մինչև Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ հեղափոխության հաղթանակը, Եր., 1978:
 - 2.19. Գալոյան Ս., Շիրակից Հայերի գաղթը դեպի Ամերիկա, Լու-Անջելես, 1950:

- 2.20. Գեղամյան Ե., Հայերի ազատագրական շարժումները ԺԹ դարում,
Բաքու, 1915:
- 2.21. Գեղամյան Ե., Պատմական քաղվածքներ, պրակ 3, մաս 1, Բաքու,
1909:
- 2.22. Գեղամյան Ե., Պատմական քաղվածքներ, պրակ 4, մաս 2, Բաքու,
1909:
- 2.23. Գէորգ-Մեսրոպ, Աշխարհարութիւն Պատմական Հայաստանի, Կ.
Պոլիս, 1924:
- 2.24. Գրիգորյան Զ., Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին և
նրա պատմական նշանակությունը, Եր., 1978:
- 2.25. Գրիգորյան Զ., Հայերի մասնակցությունը Արևելյան Հայաստանի
ազատագրման գործին, Եր., 1951:
- 2.26. Գրիգորյան Զ., Հայ և ռուս ժողովրդների պատմական բարեկամու-
թյունը, Եր., 1942:
- 2.27. Գրիգորյան Մելիքսեղեկ, Համառոտ տեղագրություն Հնութեանց
Մեծին Շիրակա և Մայրաքաղաքին Անվոյ, Աղքանդըրապոլ,
1903:
- 2.28. Գրիգորյան Վ., Երևանի խանությունը XVIII դարի վերջում, Եր.,
1958:
- 2.29. Դիլոյան Վ., Արևելյան Հայաստանը XIX դարի առաջին երեսնամ-
յակին և Հայ-ռուսական Հարաբերությունները, Եր., 1989:
- 2.30. Երեմյան Ս., Հայաստանն ըստ «Աշխարհացոյցի», Եր., 1963:
- 2.31. Երիցյան Ալ., Ամենայն Հայոց կաթողիկոսությունը և Կովկասի
հայք XIX դարում, Հ. Ա., Թիֆլիս, 1894:
- 2.32. Երիցյան Ալ., Ամենայն Հայոց կաթողիկոսությունը և Կովկասի
հայք XIX դարում, Հ. Բ., Թիֆլիս, 1895:
- 2.33. Էլիզէ Ռէկլիւ, Ռուսական Հայաստան, կամ Արաքսի ավագան,
Ռիբմիա լիճ եւ Առաջաւոր Ասիա, Վաղարշապատ, 1890:
- 2.34. Էփրիկյան Ս., Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, Հ. Ա.,
Վենետիկ, 1902:
- 2.35. Էփրիկյան Ս., Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, Հ. Բ.,
Վենետիկ, 1907:
- 2.36. Ինձիճեան Հ., Աշխարհագրութիւն չորից մասսանց աշխարհի, Հ. Ա.,
Վենետիկ, Ս. Ղազար, 1806:
- 2.37. Ինձիճեան Հ., Հնախոսութիւն աշխարհագրական Հայաստանյաց
աշխարհի, Հ. Ա.-Գ, Վենետիկ, 1835-ՌՄՇԴ:
- 2.38. Լեռ, Երկերի ժողովածու, տաս Հասորով, Հ. Գ, Եր., 1969:
- 2.39. Լեռ, Երկերի ժողովածու, տաս Հասորով, Հ. Դ, Եր., 1984:
- 2.40. Լեռ, Հայոց պատմություն, նորագույն շրջան, մաս Ա, Եր.,
Պետական Համալսարանի ապակետիպ, 1926:
- 2.41. Լեռ, Հայոց պատմություն, նորագույն շրջան, մաս Բ, Եր.,
Պետական Համալսարանի ապակետիպ, 1927:

- 2.42. Լեռ, Հայոց պատմություն, հ. Գ., Եր., 1946:
- 2.43. Լինչ Հ. Ֆ., Հայաստան ուղևորություններ և ուսումնասիրություններ, հ. Ա., Կ. Պոլս, 1913:
- 2.44. Խոջաբեկյան Վ., Հայաստանի բնակչությունը և նրա զբաղվածությունը, Եր., 1979:
- 2.45. Կոգեան Ս., Կամսարականները «Տիարք Շիրակայ և Արշարունեաց», Վիեննա, 1926:
- 2.46. Կողմոյան Կ., Լենինական, Եր., 1957:
- 2.47. Կոստանեանց Կ., Տ. Ներսես Ե Աշտարակեցի՝ Կաթողիկոս Ամենայն Հայոց, Ալեքսանդրապոլ, 1909:
- 2.48. Կորկոսյան Զ., Խորհրդային Հայաստանի բնակչությունը վերջին Հարյուրամյակում (1831-1931), Եր., 1932:
- 2.49. Կրպէ, Կարս քաղաքը, Մոսկվա, 1893:
- 2.50. Կուրտիկյան Ստ., Եր., Եր., 1960:
- 2.51. Հակոբյան Թ., Անիի պատմություն (Հնագույն ժամանակներից մինչև 1045թ.), հ. Ա., Եր., 1980:
- 2.52. Հակոբյան Թ., Անիի պատմություն (1045թ. մինչև անկումն ու ամայացումը), հ. Բ., Եր., 1982:
- 2.53. Հակոբյան Թ., Երևանի պատմությունը (1500-1800), Եր., 1971:
- 2.54. Հակոբյան Թ., Երևանի պատմությունը (1801-1879), Եր., 1959:
- 2.55. Հակոբյան Թ., Հայաստանի պատմական աշխարհագրություն, Հրատ. 2, Եր., 1968:
- 2.56. Հայ ժողովրդի պատմություն, ակադ. հրատ., հ. Գ-Դ-Ե, Եր., 1972-1976:
- 2.57. Հայաստանի և Հարակից շրջանների տեղանունների բառարան, կազմեցին՝ Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախչյան, Հ. Բարսեղյան, հ. 1-5, Եր., 1986-2001:
- 2.58. Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովորական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), Եր., 1972:
- 2.59. Հայթյան Ա., Հայաստանի ռուս վերաբնակները 1830-1920թթ., Եր., 1989:
- 2.60. Հայրապետյան Ա., Գյումրի-Ալեքսանդրապոլս XIX դարի առաջին կեսին, ՀՀ ԳԱԱ ՇՀՀԿ «Գիտական աշխատություններ», հ. 4, Գյումրի, 2001:
- 2.61. Հարությունյան Վ., Գյումրին և գյումրեցիները, Գյումրի, 1998:
- 2.62. Հարությունյան Վ., Գյումրին, նրա մարդկա, սովորույթները, Գյումրի, 1996:
- 2.63. Հովհաննիսյան Կ., Արևելյան Հայաստանի ազատագրական շարժման պատմությունից, Եր., 1981:
- 2.64. Հազարյան Գր., Հայաստանն և Հայերն ըստ Քսենոֆոնի, Թիֆլիս, 1908:

Արմեն Հայրապետյան

- 2.65. Դատական Արսեն, Համառոտ պատմութիւն Ալեքսանդրապոլի Հայոց Հոգևոր Վիճակային դպրոցի (1840-1912), Ալեքսանդրապոլի, 1912:
- 2.66. Դատական Արսեն, Նախագիծ Հայաստանեայց եկեղեցու սահմանադրության, Ալեքսանդրապոլ, 1908:
- 2.67. Մաթևոսյան Մ., Գյումրիի ժողովրդական ճարտարապետությունը, Եր., 1985:
- 2.68. Մանանդյան Հ., Հին Հայաստանի և Անդրկովկասի մի քանի պրոբլեմների մասին, Եր., 1944:
- 2.69. Մանանդյան Հ., Քննական տեսություն Հայ ժողովրդի պատմության, Հ. Գ. Եր., 1977:
- 2.70. Մանուկյան Ե., Հայ ժողովրդի ազգահավաքման գործընթացն Արևելյան Հայաստանում XIX դարի 20-ական թվականների վերջերին-30-ական թվականների սկզբներին, Ատեն. պատ. գիտ. թեկ., Եր., 1991:
- 2.71. Մելքոնյան Ա., Էրզրում, Էրզրումի նահանգի Հայ ազգաբնակչությունը 19-րդ դարի առաջին երեսնամյակին, «Պատմաժողովրդագրական ուսումնամիջություն», Եր., 1994:
- 2.72. Մելքոնյան Ա., Զավախիքը XIX դարում և XX դարի առաջին քառորդին, Եր., 2003:
- 2.73. Մինաս Վարդապետ Համբեցոց, Ազգաբանութեան Հայոց, Վաղարշապատ, 1870:
- 2.74. Մուրացյան Մ., Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին XIX դարի ուսումնական պատմագիտական և հասարակական մտքի գնահատմամբ, Եր., 1985:
- 2.75. Մուրացյան Հ., Կարսի նահանգի վարչաժողովրդագրական պատկերը 19-րդ դարի առաջին երեսնամյակին, Ատեն. պատ. գիտ. թեկ., Եր., 2001:
- 2.76. Նաջարյան Հ., XVII դարի սկզբի թուրք-իրանական պատերազմը և Հայերի տարեգրությունը, Եր., 1959:
- 2.77. Նաջարյան Հ., 1639 թվականի թուրք-իրանական հաշտության պայմանագիրը և Հայաստանը, Եր., 1969:
- 2.78. Ներսիսյան Մ., Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ 1850-1870թթ., Եր., 1955:
- 2.79. Ներսիսյան Մ., Հայ ժողովրդի նոր պատմության էջերից, Եր., 1982:
- 2.80. «Նկարագիր գաղթականութեան Հայոց ի Պարսկաստանէ ի Ռուսաստան», Մոսկվա, 1832:
- 2.81. Պարսամյան Վ., Առաջին ժանդարմական գործն Ալեքսանդրապոլում, Եր., 1936:
- 2.82. Պարսամյան Վ., Գյուղացիական հուգումները, Փամբակ-Շորագյալի դիստանցիայում 1838թ.-ին, «Երևանի պետական Հա-

- մայսարանի գիտական աշխատություններ», պր. 3, հ. 62, Եր., 1958:

2.83. Պարսամյան Վ., Գրիբոյեվովը և Հայո-ռուսական հարաբերությունները, Եր., 1947:

2.84. Պարսամյան Վ., Հայ ազատագրական շարժումների պատմությունից, Եր., 1958:

2.85. Պարսամյան Վ., Հայ ժողովրդի պատմություն 1830-1850թթ., Եր., 1956:

2.86. Պարսամյան Վ., Ցարիկմի գաղութային քաղաքականությունը Հայաստանում, Եր., 1940:

2.87. Դերպէրեան Ա., Պատմութիւն Հայոց, Կ. Պոլիս, 1871:

2.88. Պողոսյան Ա., Ռուս-Հայ բարեկամության պատմությունից, Եր., 1974:

2.89. Զալպեան Ս., Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Ա, Տփիսիս, 1842:

2.90. Զալպեան Ս., Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Բ, Տփիսիս, 1858:

2.91. Ռշտունի Վ., Հայաստանի XIX դարի գյուղացիական շարժումների մասին, Եր., 1945:

2.92. Ռշտունի Վ., ՈՒրիշագծեր Հայաստանի գյուղացիության պատմության, մաս Ա (1828-1870թթ.), Եր., 1960:

2.93. Սամուելյան Խ., Հին Հայաստանի կուլտուրան, Հ. Բ, Եր., 1941:

2.94. Սարգսյան Հ., Ալեքսանդրապոլի գավառի Էմնուաչսարհագրական բնութագրի և XIX դարի վերջերին, ՀՀ ԳԱԱ ՇՀՀԿ «Գիտական աշխատություններ», Հ. 1, Գյումրի, 1998:

2.95. Սարգսյան Ն., Տեղագրութիւնք ի Փոքր եվ ի Մեծ Հայս, Վենետիկ տպ. իւ. Ղազար, 1864:

2.96. Սեղբոսյան Կ., Արհեստավորական ավանդույթները և դրանց արտահայտությունները լենինականցիների կենցաղում, Ատեն. պատ. թեկ., Եր., 1969:

2.97. Սեղբոսյան Կ., Արհեստավորական ավանդույթները և դրանց արտահայտությունները լենինականցիների կենցաղում, «Հայագիտություն» և բանահյուսություն», Հ. 6, Եր., 1974:

2.98. Վակներ Մ., Ճանապարհորդութիւն ի Հայաստան, Վիեննա, 1851:

2.99. Վիրաբյան Ս., Շորապյալի սովորականությունը XVI դարի վերջերից մինչև XIX դարի առաջին քառորդը, «Պատմագիտական հետազոտություններ», Վանաձոր, 2001:

2.100. Քաջունի Մ., Աշխարհագրութիւն Հին և Նոր Հայաստանեաց, Վենետիկ, 1857:

Բ) Թուսերեն

- 2.101.** Авагян Л., Четвертичные ископаемые млекопитающие Армении, Еր., 1953.

- 2.I02. Акопян Т., Развитие Еревана после присоединения Восточной Армении к России, Сборник документов, 1801-1917 гг., Ер., 1978.
- 2.I03. Арутюнян Н., Биайнили (Урафту), Военно-политическая история и вопросы топономики, Ер., 1970.
- 2.I04. Арутюнян Н., Земледелие и скотоводство Урафту, Ер., 1964.
- 2.I05. Арутюнян Н., Топономика Урафту, Ер., 1985.
- 2.I06. Багаян Б., Дипломатическая история русско-иранских войн и присоединение Восточной Армении к России, Ер., 1988.
- 2.I07. Багаян Б., Междуродные отношения Ирана в 1813-1838 гг., автореф. канд. дис., Ер., 1963.
- 2.I08. Братская помощь пострадавшим в Турции Армянам, М., 1898.
- 2.I09. Бороздин К., Переселенцы в Закавказье, СПб., 1891.
- 2.I10. Брюсовский С., Новейшие географические и исторические известия о Кавказе, М., 1823.
- 2.I11. Бутков П., Материалы для новой истории Кавказа с 1722 по 1803 г., т. 2, СПб., 1869.
- 2.I12. Вейденбаум Е., Путеводитель по Кавказу, Тифлис, 1888.
- 2.I13. Взгляд на Эриванскую дорогу, Сборник газеты Кавказ, изд. О. И. Константинов, второе полугодие 1847 года, Тифлис, 1848.
- 2.I14. Ган К., Опыт объяснения кавказских географических названий, Тифлис, 1909.
- 2.I15. Генерал-лейтенант Давид Осипович Бебутов, СПб., 1867.
- 2.I16. Генерал-фельдмаршал князь Паскевич, его жизнь и деятельность. По неизданным источникам составил Генерального Штаба Ген.-лейт. Щербатов, т. 3, октябрь 1827-май 1831, СПб., 1891.
- 2.I17. Глинка С., Описание переселения армян аддербиджанских в пределах России, М., 1831.
- 2.I18. Грибоедов А., Полное собрание сочинений, т. 3, СПб., 1917.
- 2.I19. Договоры России с Востоком, политические и торговые, составил и издал Т. Юзефович, СПб., 1869.
- 2.I20. Дубровин Н., Георгий XII, последний царь Грузии и присоединение ее к России, СПб., 1867.
- 2.I21. Дубровин Н., Закавказье 1803-1806 гг., СПб., 1866.
- 2.I22. Дубровин Н., История войны и владычества русских на Кавказе, т. 2, СПб., 1885.
- 2.I23. Дубровин Н., История войны и владычества русских на Кавказе, т. 3, СПб., 1886.
- 2.I24. Дубровин Н., История войны и владычества русских на Кавказе, т. 4, СПб., 1886.
- 2.I25. Дяконов И., Ассиро-аввелоно-исланские источники по истории Урафту, (АВИИУ) N 65 (ВДИ), М., 1951, N 3.

- 2.126. Егиазаров С., Исследования по истории учреждений в Закавказье, ч. 2, Гродские чехи, Казань, 1891.
- 2.127. Ерицов А., История холерных эпидемии в Закавказье, Тифлис, 1872.
- 2.128. Ерицов А., Нерсес V и Воронцовы, Тифлис, 1898.
- 2.129. Ерицов А., Чума в Закавказье, (Исторический очерк), Тифлис, 1879.
- 2.130. Зубов Платон, Кафтина Кавказского края принадлежащего России, и сопредельных ей земель; в историческом, статистическом, этнографическом, финансовом и топографическом отношениях, ч. 1, СПб., 1834.
- 2.131. З. З., Патриарх Нерсес V и Персидская война 1827 года, М., 1898.
- 2.132. Иваненко В., Гражданское управление Закавказьем от присоединения Грузии до наместничества Великого Князя Михаила Николаевича, Тифлис, 1901.
- 2.133. Иоанисян А., Присоединение Закавказья к России и международная дипломатия в начале XIX столетия, Ер., 1958.
- 2.134. История Азербайджана, т. 1, Баку, 1958.
- 2.135. История военных действий в Азиатской Турции в 1828-1829 годах, ч. 2, Варшава, 1848.
- 2.136. История военных действий в Азиатской Турции в 1828-1829 годах, ч. 2, СПб., 1836.
- 2.137. Историческая записка об управлении Кавказом, т. 1, С. Эзов, Тифлис, 1907.
- 2.138. Кавказский путеводитель Кн.В.Мещерского, СПб., 1878.
- 2.139. Капанян Гր., Историко-лингвистическое значение топономики древней Армении, Научные труды 1, т. XIV, Ер., 1940.
- 2.140. Капанян Гр., Хайаса-калыбель армян, Ер., 1947.
- 2.141. Ковалевский П., Завоевание Кавказа Россией, СПб., 1887.
- 2.142. Колониальная политика российского царизма в Азербайджане в 20-60-х гг. XIXв., ч. 1, М.-Л., 1936.
- 2.143. К Столетию присоединения Грузии к России. Утверждение русского владычества на Кавказе, т. 12, Тифлис, 1901.
- 2.144. Линч Х. Ф. Б.Армения. Путевые очерки, этюды, Тифлис, 1910.
- 2.145. Магакян А., Растительность Армянской ССР, М., 1941.
- 2.146. Меликишвили Г., Урафские клинообразные надписи. Изд. АН. СССР, М., 1960.
- 2.147. Меликишвили Г., Урафские клинообразные надписи, М., 1970.
- 2.148. Муравьев А., Грузия и Армения, ч. 2, СПб., 1848.
- 2.149. Мкртычян Ю., Формы скотоводства в Восточной Армении (вторая половина XIX-начало XXв.), РЫІ і ІІІ·сбХГЫІбХЭ Ё բԷՇՏԵՇԽԼԽԳԵՇԽЭ, С. 6, е. с., 1974:
- 2.150. Надеждин П., Кавказский край, природа и люди, Тула, 1901.
- 2.151. Нефедьев Н., Взгляд на Армянскую область, из путевых записок Н. Нефедьева, СПб., 1839.

- 2.152. Петров А., Война России с Турцией 1806-1812 гг., т. 3, СПб., 1885.
- 2.153. Пиотровский Б., Ванское царство (Урафту), М., 1959;
- 2.154. Погосян М., Кафская область в составе России, Еր., 1983.
- 2.155. Подесаул Ив., Позаровский, Материалы для военного обозрения Эриванской губернии, ч. 1, вып. 1, Тифлис, 1890.
- 2.156. Потто В., Геройская защита Баязета, изд. 2, СПб., 1879.
- 2.157. Потто В., Кавказская война в отдельных очерках, эпизодах и биографиях, т. 1, СПб., 1885.
- 2.158. Потто В., Кавказская война в отдельных очерках, эпизодах и биографиях, т. 2, СПб., 1885.
- 2.159. Потто В., Кавказская война в отдельных очерках, эпизодах и биографиях, т. 3, СПб., 1886.
- 2.160. Потто В., Кавказская война в отдельных очерках, эпизодах и биографиях, т. 3, выпуск 4, СПб., 1887.
- 2.161. Потто В., Кавказская война в отдельных очерках, эпизодах и биографиях, т. 4, Тифлис, 1887.
- 2.162. Потто В., Осада и штурм Кафса, изд. II, СПб., 1903.
- 2.163. Потто В., Памяти старых кавказцев, Тифлис, 1897.
- 2.164. Потто В., Первые добровольцы Карабага в эпоху возвращения русского владычества, Тифлис, 1902.
- 2.165. Потто В., Покорение Эривани, изд. 2, СПб., 1903;
- 2.166. Путешествие Шардена по Закавказью в 1672-1673 гг., Тифлис, 1902.
- 2.167. Пушкин А.С., Путешествие в Арзрум во время похода 1829 года, Полн. соб. соч., изд. 4, т. 4, Ленинград, 1978.
- 2.168. Розен Д., История Турции от победы реформы в 1826 году до Парижского трактата в 1856 году, ч. 1, От истребления яничар до смерти Махмеда II, СПб., 1872.
- 2.169. Саркисян Г., Население Восточной Армении в XIX-начале XXв., Еր., 2002.
- 2.170. Сборник газеты Кавказ, изд. О. И. Константиновым, первое полугодие, Тифлис, 1847.
- 2.171. Тунян В., Восточная Армения в составе России, Еր., 1989.
- 2.172. Утверждение русского владычества на Кавказе, т. 1, под редакцией В. Потто, Тифлис, 1901.
- 2.173. Утверждение русского владычества на Кавказе, т. 4, ч. 1, под редакцией генерал-майора В. Потто, Тифлис, 1906.
- 2.174. Утверждение русского владычества на Кавказе, т. 4, ч. 2, под редакцией генерал-майора В. Потто, Тифлис, 1908.
- 2.175. Фадеев А., Россия и Кавказ первой трети XIX века, М., 1960.
- 2.176. Хачатрян Т., Древняя культура Ширака, Еր., 1975.
- 2.177. Хорхорская летопись Аргишти 1-го, ЭВ 7, 1953, УКН, текст 127.

- 2.178. Խելտուլիսավուլ Մ., *Вступление Грузии в состав Российской империи, Кутаис, 1901.*
- 2.179. Խիբով Ե., *Описание достопамятных прошествий в Армении, СПб, 1811.*
- 2.180. Խաչափրիձե Ղ., *К истории Грузии XIXв, Тбилиси, 1950.*
- 2.181. Խալթահյան Օ., *Армяно-русские культурные отношения и их отражение в архитектуре, Еր, 1957.*
- 2.182. Ռախատունյան Ա., *Административный перелом Закавказского края, Тифлис, 1918.*
- 2.183. Շերեմետ Վ., *Тифлис и Адрианопольский миф 1829г, М, 1975.*
- 2.184. Ռոպեն Ի., *Исторический Памятник состояния Армянской области в эпоху ее присоединения к Российской империи, СПб, 1852.*
- 2.185. Էզօվ Ղ., *Сношения Петра Великого с армянским народом, СПб, 1898.*
- 2.186. Էզօվ Ղ., *Начало отношений Эчмиадзинского патриаршего престола с русским правительством, Тифлис, 1901.*
- 2.187. Էսաձե Ը., *Историческая записка об управлении Кавказом, т. 1, Тифлис, 1907.*
- 2.188. Յարալով ՅՈ., *Города Армении, М, 1950.*

գ) Օտար լեզուներով

- 2.189. Olearus Adam, *Les Voyages en Moscovie, Tartarie et Perse, Amsterdam, 1727.*
- 2.190. Smith E. *Researches of the rev. E. Smith and rev. H. G. O. Dwight in Armenia including a Journey through Asia Minor, and into Georgia and Persia, v. 1, Boston, 1833.*

3. Պարբերական մամուկ

ա) Հայերեն ամսագրեր

3.1. Ալբյուր, Թիֆլիս, 1896:

3.2. Աշխատություններ Հայաստանի պատմության Պետական թանգարանի, Եր., 1975:

3.3. Արարատ, Եջմիածին (Վաղարշապատ), 1870, 1871, 1904:

3.4. Արձագանք, Թիֆլիս, 1899:

3.5. Արևելյան մամուլ, Զմիւռնիա, 1898, 1899:

3.6. Բանբեր Երևանի Համալսարանի, Եր., 1973:

3.7. Բանբեր Հայաստանի արխիվների, Եր., 1981, 1988:

3.8. Գիտություն և տեխնիկա, Եր., 1983:

3.9. Իրան-Նամի, Եր., 1998:

3.10. Լրաբեր Հասարակական գիտությունների, Եր., 1972, 1973:

3.11. Լումա, Թիֆլիս, 1903:

Արմեն Հայրապետյան

- 3.12. Կոռունկ Հայոց աշխարհի, Թիֆլիս, 1862:
- 3.13. Հանդես ամսօրեայ, Վեննա, 1905, 1924:
- 3.14. Մուրճ, Թիֆլիս, 1893, 1894, 1901:
- 3.15. Շիրակի պատմամշակութային ժառանգությունը Հանրապետական գիտաժողովի թերամարք, Գյումրի, 1994, 1996, 1998, 2000:
- 3.16. Պատմա-բանափական Հանդես, Եր., 1959, 1962, 1968, 1974, 1976, 1977, 1978:
- 3.17. Տեղեկագիր ՀԱԱՀ ԳԱ (Հաս. գիտութ.), Եր., 1960:
- 3.18. Փորձ, Տփիսիս, 1876, 1879, 1880:

բ) Հայերեն թերթեր

- 3.19. Ախուրեան, Ալեքսանդրապոլ, 1907:
- 3.20. Բանվոր, Լենինական, 1978, 1979:
- 3.21. Մեղու Հայաստանի, Թիֆլիս, 1873, 1874:

գ) Ռուսերեն ասագրիր

- 3.22. Закавказский Вестник, Тифлис, 1853.
- 3.23. Кавказский Альманах, Тифлис, 1903.
- 3.24. Кавказский сборник, Тифлис, 1900, 1901, 1902, 1903, 1910.
- 3.25. Кавказский календарь, Тифлис, 1849, 1850, 1851, 1853, 1854, 1865, 1867, 1884.
- 3.26. Отечественные записки, СПб., 1845.
- 3.27. Русский архив, М., 1890.
- 3.28. Русская старина, СПб., 1884, 1900.
- 3.29. Сборник материалов для описания местностей и племен Кавказа¹, (СМОМПК), Тифлис, 1881, 1884.

դ) Ռուսերեն թերթեր

- 3.30. Кавказ, Тифлис, 1854.

4. Հոդվածներ

ա) Հայերեն

- 4.1. Աղանեանց ք. Գ., Կարնո գաղթը, Արձագանք, Թիֆլիս, 1899, N 11:
- 4.2. Ավետիսյան Խ., Քաղաքների զարգացումը Սովետական Հայաստանի ներկատարածքում՝ 1828-1914թթ., Պատմա-բանափական Հանդես, Եր., 1978, N 3:
- 4.3. Ատրպետ, Ալեքսանդրապոլի ապագան, Ախուրեան, Ալեքսանդրապոլ, 1907, 30 Հունվարի, N 3:
- 4.4. Գեղամեանց Յ., Ախալցիսայից մինչև Անի, Փորձ, Տփիսիս, 1880, ապրիլ, N 4:
- 4.5. Գեղամյանց Ե., Կարապետ արքեպիսկոպոս, Փորձ, Տփիսիս, 1876, N 1:

- 4.6. Գրիգորյան Զ., Ռուսաստանի Հետ Արևելյան Հայաստանի միավորման նշանակությունը հայ ժողովրդի ազգահայրածման և գոյատևման համար, Պատմա-բանասիրական Հանդես, Եր., 1978, N 3:
- 4.7. Դավիթյան Մ., Սեր քաղաքի անցյալից, Բանվոր, Լենինական, 1978, 11 մարտի N 59:
- 4.8. Դարբինյան Մ., Արևմտահայերի 1829-1830 թթ.-ի գաղթը Հայկական մարզ և հարակից շրջաններ, Պատմա-բանասիրական Հանդես, Եր., 1974, N 2:
- 4.9. Դարբինյան Մ., Գյումրին Ալեքսանդրապոլ վերանվանելու մասին, Բանբեր Հայաստանի արխիվների, Եր., 1981, N 2:
- 4.10. Դարբինյան Մ., Էջեր Ախալցիսայի և Ախալքալաքի հայերի 1829-30 թթ. գաղթի պատմությունից, Բանբեր Երևանի համալսարանի, Եր., 1973, N 2:
- 4.11. Դարբինյան Մ., Պարսկահայերի գաղթը և նրանց բնակեցումը (1828-1829 թթ.), Լրաբեր Հասարակական գիտությունների, Եր., 1973, N 8:
- 4.11. Երեմյան Ս., Կիմերական և սկյութական ցեղերի արշավանքը և ՈՒրարտուի ու Ասորեստանի պայքարը քոչվորների դեմ, Պատմաբանասիրական Հանդես, Եր., 1968, N 2:
- 4.12. Թոփչեան Ե., Ալեքսանդրապոլի գավառ, Աղբյուր, Թիֆլիս, 1896, 14-րդ տարի, N 7:
- 4.13. Խօջայեանց Հ., Գիւմրի, Արարատ, Էջմիածին, 1871, թիւ Թ:
- 4.14. Կողեան Ս., Կամսարականներու ծագումը, Հանդես ամսօրեայ, Վիճննա, 1924, թիւ 3-4:
- 4.15. Կարագյոյցան Հ., Կումայրին ըստ սեպագիր և այլ աղբյուրների, ԾՊՄԺ Հանրապետական երկրորդ գիտաժողովի թեզիսներ, Գյումրի, 1996:
- 4.16. Կարասեայան Մ., Եփրեմ Սեթը արևմտահայության 1829-1830 թթ. գաղթի մասին, Պատմա-բանասիրական Հանդես, Եր., 1974, N 2:
- 4.17. Հմայակյան Ս., Շիրակը Լուշա-Կատարզա-Վիտերուիսի գաշնության կազմում, ԾՊՄԺ Հանրապետական առաջին գիտաժողովի թեզիսներ, Գյումրի, 1994:
- 4.18. Հմայակյան Ս., Էրիախեն աստվածապետություն, «ԾՊՄԺ Հանրապետական երկրորդ գիտաժողովի թեզիսներ, Գյումրի, 1996:
- 4.19. Հովհանն Քահանա Ուկերյան, Յաղագս տարագիր լինելուց ժողովրդոցն Արարատեան Վաղարշապատու, և մասնավոր գեղորեիցն Հոյոց նոյնոյ աշխարհին, Կոռունկ Հայոց աշխարհի, Թիֆլիս, 1862, ապրիլ:
- 4.20. Հովհաննիսյան Կ., Պարսկահայերի գաղթը և Ներսես Աշտարակեցին, Աշխատություններ Հայաստանի պատմության Պետական թանգարանի, Եր., 1975, N 4:

- 4.21. Հիւբշման Հ., Հայոց տեղույ անունները, Հանդես ամսօրեայ, Վիեննա, 1905, թիւ 12:
- 4.22. Հովհաննիսյան Ջ., Նահապետյան Ռ., Վիճակագրական տեղեկություններ Լոռու գավառակի վերաբերյալ (1851-1914), Բանքեր Հայաստանի արխիվների, Եր., 1988, N 2:
- 4.23. Հարությունյան Վ., Գյումրի-Աղեքսանդրապոլի XIX դարում, Բանվոր, Լենինական, 1978, 14 գեկտեմբերի, N 297:
- 4.24. Մաթևոսյան Ա., «Ի մեծ գեալզաքաղաքէն Կումիրոյ», Բանվոր, Լենինական, 1979, 10 հոկտեմբերի, N 237:
- 4.25. Մաթևոսյան Ա., Լենինականի հատուկագծումը և կառուցապատում XVIII-XIX դր., Լրաբեր Հասարակական գիտությունների, Եր., 1972, N 10:
- 4.26. Մատինեանց Կ., Աղեքսանդրապոլի վաճառականները, Մեղու Հայաստանի, Թիֆլիս, 1874, 2 փետրվարի, թիվ 5:
- 4.27. Մելքոնյան Ա., Ժողովրդագրական տեղաշարժերը Զավախքում և Ախալցխայի գավառում 19-րդ դարի առաջին քառորդին, Իրան-Նամի, Եր., 1998, N 1-2-3:
- 4.28. Միթթարեանց Ալ., Աղեքսանդրապոլ, Մեղու Հայաստանի, Թիֆլիս, 1873, N 15:
- 4.29. Մրհեղեան Ա., Մեծ Ղարաբիլսայի ներկայ վիճակը, Մուրճ, Թիֆլիս, 1893, հոկտեմբեր, N 10,:
 4.30. Նիկողոսյան Ն., Շիրակի գյուղական կյանքից, Արարատ, Էջմիածին, 1904, թիւ է-Ը:
- 4.31. Նիկողոսյան Ն., Վիճակագրական տեղեկություններ Աղեքսանդրապոլի գավառի Հայ-լուսավորչականների մասին, Մուրճ, Թիֆլիս, 1901, օգոստոս, N 8:
- 4.32. Նորյան Մուշեղ, Աբովյանը և Գյումրին, Բանվոր, Լենինական, 1978, 15 մայիս, N 62:
- 4.33. Նորյան Մուշեղ, Ականատեսի վկայություն-Գյումրին քաղաք 1817թ.-ին, Բանվոր, Լենինական, 1978, 28 դեկտեմբերի, N 303:
- 4.34. Շահն, Փողոցներ չունենք, Ախուրեան, Աղեքսանդրապոլ, 1907, 16 փետրվար, թիվ 8:
- 4.35. Պետրոսյան Ս. Կումայրի-Գյումրի-Աղեքսանդրապոլ-Լենինական, Գիտություն և Տեխնիկա, Եր., 1983, N 4:
- 4.36. Պետրոսյան Ա., IRDANIU(NI) բնակավայրի տեղագրության և անվան ստուգաբանության շուրջ, ՇՊՄՃ Հանրապետական երրորդ գիտաժողովի թեգիսներ, Գյումրի, 1998:
- 4.37. Զահուկյան Գ., Կիմերները և կիմերների սլոբեմը արդի գիտության մեջ, Պատմա-բանակրական հանդես, Եր., 1977, N 4:
- 4.38. Սեղրոսյան Կ., Գյուղատնտեսական գրադմունքները Աղեքսանդրապոլ-Լենինականի կենցաղում, ՇՊՄՃ Հանրապետական չորրորդ գիտաժողովի թեգիսներ, Գյումրի, 2000:

- 4.39. Վանցյան Գ., Պատմական ակնարկ բոշաների անցյալից, Մուրճ, Թիֆլիս, 1894, N 7-8:
- 4.40. Տեղագրութիւն Շիրակայ, աշխատասիրեալ ի Պօղոս վարդապետէ Պատրոսեան, Արարատ, Էջմիածին, 1870, 3-րդ տարի, թիւ Ա, էջ 20-25, թիւ Բ, էջ 54-58, թիւ Գ, 100-105, թիւ Ե, էջ 181-185, թիւ Զ, էջ 238-245, թիւ Է, էջ 273-283, թիւ Ը, էջ 347-351:
- 4.41. Տեղագրական պատառիկներ. Արևելյան մասն Շիրակայ, Արևելյան մամուլ, Զմիւռնիա, 1898, 28-րդ տարի, թիւ 15, 1 օգոստոսի, թիւ 16, 15 օգոստոսի, թիւ 17, 1 սեպտեմբերի, թիւ 18, 15 սեպտեմբերի, թիւ 19, 1 հոկտեմբերի, թիւ 22, 15 նոյեմբերի, թիւ 23, 1 դեկտեմբերի, թիւ 24, 15 դեկտեմբերի:
- 4.42. Տեղագրական պատառիկներ. Արևելյան մասն Շիրակայ, Արևելյան մամուլ, Զմիւռնիա, 1899, 29-րդ տարի, թիւ 3, 1 փետրվարի, թիւ 5, 1 մարտի, թիւ 6, 15 մարտի:
- 4.43. Տեր-Դավթեանց Գ., Ալեքսանդրապոլ, Մեղու Հայաստանի, Թիֆլիս, 1873, 24 փետրվարի, N 7,:
4.44. Տէր-Դավթեանց Գ., Ալեքսանդրապոլ, Մեղու Հայաստանի, Թիֆլիս, 1873, 24 մարտի, թիւ 11:
- 4.45. Փափազյան Հ., Օսար տիրապետությունը Արարատյան Երկրում, Տեղեկագիր, ՀՍՍՀ ԳԱ (Հաս. գիտութ.), Եր., 1960, N 7-8:
- 4.46. Քաջբերունի, Հիշողություններ, Լումա, Թիֆլիս, 1903, N 3, մայիս-Հունիս:
- 4.47. Քաջբերունի, Ալեքսանդրապոլից դեպի Կարին, Փորձ, Տիֆլիս, 1879, N 5, մայիս:
- 4.48. Քաջբերունի, Ղարաքիլիսա, Մեղու Հայաստանի, Թիֆլիս, 1873, 27 Հունվարի, N 3:

բ) Թուսերեն

- 4.49. Александраполь, Кавказский календарь на 1866 год, отд. III, Тифлис, 1865.
- 4.50. Александраполь, Кавказский календарь на 1868 год, отд. III, Тифлис, 1867.
- 4.51. Александрапольский уезд, Кавказский календарь на 1899 год, отд. III, Т., 1898.
- 4.52. Армяно-Григорянские церкви Александрапольского уезда, Кавказский календарь на 1854 год, отд. III, Тифлис, 1853.
- 4.53. Армяно-католические церкви в Закавказье и число их прихожан, Кавказский календарь на 1885 год, Тифлис, 1884.
- 4.54. Берյе А.Император Николай на Кавказе в 1837г., Русская стафина, т. 8, СПб, 1884.
- 4.55. В городе Александраполе, Кавказский календарь на 1855 год, Тифлис, 1854.

- 4.56. Генерал-лейтенант Б. О. Бебутов, *Кавказ, Тифлис, 1854, N 7, 23 января.*
- 4.57. Город Александрополь, *Кавказский календарь на 1851 год, отд. III, Тифлис, 1850.*
- 4.58. Дневник офицера, состоящего в отряде, действующем на кавказско-турецкой границе. Отрывок 1. Лагерь под Александрополем¹, *Кавказ, Тифлис, 1854, 16 июня, N 46.*
- 4.59. Дюльфье, *Армяне в 1854 году, Кавказ, Тифлис, 1854, 20 октября, N 22.*
- 4.60. Зелинский С., *Город Эривань, Сборник материалов для описания местностей и племен Кавказа (СМОМПК), вып. I, отд. 1, Тифлис, 1881.*
- 4.61. Из записок М. А. Коффа, *Русская старина, т. 101, СПб, 1900.*
- 4.62. Князь Воронцов и А. П. Ермолов, *Их переписка о Кавказе, Русский архив, 1890, кн. 1.*
- 4.63. Константинов О., *Александраполь, Кавказский календарь на 1850 год, III, Тифлис, 1849.*
- 4.64. Коцебу М., *Описание вторжения персиян в Грузию в 1826г., Кавказский сборник, т. ХХII, Тифлис, 1901.*
- 4.65. Линстром Н., *Кавказский Альманах на 1904 год, Тифлис, 1903.*
- 4.66. Нерсисян М., *О крестьянских волнениях в Шираке в 1837-1838 годах, Историко-филологический журнал, Ер., 1962, N 1.*
- 4.67. Орловски К., *Эривань, Кавказский календарь на 1852 год, отд. III, Тифлис, 1851.*
- 4.68. Patriae Fillius, *Физиономия и нравы Александрополя, Кавказ, Тифлис, 1854, 12 июня, N 45.*
- 4.69. Переваленко В., *Поездка в Александрополь, Закавказский Вестник, Тифлис, 1853, 22 января, ном. 4.*
- 4.70. Потто В., *Материалы к истории персидской войны 1826-1828гг., 1825-й год, Кавказский сборник, т. XXI, Тифлис, 1900.*
- 4.71. Потто В., *Материалы к истории персидской войны 1826-1828гг., Кавказский сборник, т. XXII, Тифлис, 1901.*
- 4.72. Потто В., *Материалы по истории персидской войны 1826-1828гг., Кавказский сборник, т. XXIII, Тифлис, 1902.*
- 4.73. Потто В., *Материалы к истории персидской войны 1826-1828гг., Кавказский сборник¹, т. XXIV, Тифлис, 1903.*
- 4.74. Потто В., *Материалы к истории персидской войны 1826-1828гг., Кавказский сборник, т. XXX, Тифлис, 1910.*
- 4.75. Рузвич, *Статистические очерки некоторых городов Кавказа и Закавказского края, Кавказский календарь на 1852 год, отд. III, Тифлис, 1851.*
- 4.76. Семенов Л., *К вопросу о значении Туркменчайского договора для истории Армении, Историко-филологический журнал, Ер., 1959, N 4.*
- 4.77. Спасский-Автономов К., *Второе посещение Арафата, Отечественные записки, т. 38, ном. 1-2, СПб, 1845.*

- 4.78. Тавакалян Н., Переселение армян из Персии и Турции в Закавказье после присоединения Восточной Армении к России, Историко-филологический журнал, Ереван, 1976, № 3.
- 4.79. Шульгин К., Взятие Эривани, Сборник материялов для описания местностей и племен Кавказа (СМОМПК), выпуск 4, отд. 2, Тифлис, 1884.

Արևելյան Շիրակի (Շորագյալի գավառի) բնակավայրերի Հին և նոր անունները

Յանկը կազմվել է «Հայաստանի և Հարակից շրջանների տեղանունների բառարան»ի (կազմողներ՝ թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախչյան, Հ. Բարսեղյան, հ. 1-5, Երևան, 1986-2001) և «Հայական ՍՍՀ վարչա-տերիտորիալ բաժանումներ» (առ. 1-ը հունվարի 1976 թ., 5-ը Հրատ., Երևան, 1976) ժող. տեղանունների հիման վրա:

Աղյուսակ 1

| Հին անունը | Նոր անունը | Հին անունը | Նոր անունը |
|------------------------|------------|----------------|--------------|
| 1. Ճպար | Յողամարգ | 45. Դահարի | Գետք |
| 2. Փոքր Քեթի | Փոքր Քեթի | 46. Զլրպի | Զույգապրյուր |
| 3. Մեծ Քեթի | Մեծ Քեթի | 47. Շիշմակա | Մեպասար |
| 4. Ղայդուկի Դուգքենդ | Բարոժ | 48. Ղզրդոչ | Ղուկասյան |
| 5. Եսաուլ | Հովունի | 49. Թաքնալի | Գողհովիս |
| 6. Թաթական Գյողարդարան | Գեղադիր | 50. Բանդեան | Փոքր Բանդեան |
| 7. Փոքր Քյափանակ | Հովիտ | 51. Թոփառի | Հացիկ |
| 8. Հաջինազար զուղի | Կամո | 52. Օրթաքիլիսս | Մայիսյան |
| 9. Փոքր Ղարաքիլիսս | Ազատան | 53. Մեծ Ղանիջա | Մարմաշեն |

Արմեն Հայրապետյան

| | | | |
|---------------------------|--------------------|---|---------------------|
| 10. Թափագոլակ | Արեկի | 54. Իմիրլասնի | Սարսառակ |
| 11. Ղազանչի | Մնղաշեն | 55. Արմութի | Տուֆաշեն |
| 12. Թալշանդրշաղ | Շիրակավան | 56. Սվանվերդի | Լուսաղբյուր |
| 13. Բազարիսանա | Զիթհանքով | 57. Ախուրի | Բերքառատ |
| 14. Քեշքենդ | Գեղարտոս | 58. Մեծ Արփիսլալի | Մեծ Մանթաշ |
| 15. Մանջուկի | Ծիքար | 59. Փամպ | — |
| 16. Մասուղի | Լանջիկ | 60. Ջոռի | Լեռնագյուղ |
| 17. Աբովլուսհման | — | 61. Կեղաչ | — |
| 18. Ղըղլուռալա | — | 62. Մահմուլջուղ | Պեմզաշեն |
| 19. Փոքր Ղրիս | — | 63. Շիրվաջուղ | Լեռնակերտ |
| 20. Սարունջի | — | 64. Աղքիլիսա | Կրաշեն |
| 21. Արբանիալի Յ-րդ | Լեռնուտ | 65. Իլիսիարի | Այգաբաց |
| 22. Ղազարապատ | Խաչակրան | 66. Նորաշեն | Նորաշեն |
| 23. Սարիար | Սարիար | 67. Հայկական Գյու- զարդարա | Գեղաձոր |
| 24. Փոքր Բերանդ | Փոքր Պարնի | 68. Դուգենդ | Ախուրյան |
| 25. Ղասմալի | Գեսամիկի | 69. Սարիբաշ | Հայկասար |
| 26. Քյափթառի | Փանիկ | 70. Թալիբուղի | Լուսակերտ |
| 27. Ջրախիլի | Ջրառատ | 71. Քելալի | Նորաբեր |
| 28. Դուփիջան | Սպանդարյան | 72. Դարբանդ | Կարմրաքար |
| 29. Ղոլգաթ | Գեղանիստ | 73. Գյուրջի յոլ | Թորոսգյուղ |
| 30. Փոքր Ղանիջա | Վահրամաքերդ | 74. Մոնղուռի | Հայրենյաց |
| 31. Եղանգար | Արեշատ | 75. Ղոմիղիդրշաղ | Հովտաշեն |
| 32. Աղին | Անի | 76. Ճլովիսանի | Բենիամին |
| 33. Մեծ Քյափանակ | Մուսայելյան | 77. Կապս | Կապս |
| 34. Կիրաքար | Կառնուտ | 78. Իլինդարաքիլիսա | Իլի |
| 35. Ջաջուռ | Ջաջուռ | 79. Ղափի | Գուսանագյուղ |
| 36. Բոզդողան | Սարակապ | 80. Բաշցյուղ | Սարալանջ |
| 37. Արթիկ | Արթիկ | 81. Ղիչաղ | Հառիճ |
| 38. Բողաքեսան | Զորակապ | 82. Թոմարտաշ | Վարդաքար |
| 39. Մոգութի | Մառնաղբյուր | 83. Մեջիոլի | Նոր Կյանք |
| 40. Ջելար կեչուտ | Ջրաձոր | 84. Ղըրեիլիսա | Կարմրավան |
| 41. Փալութի | Արփինի | 85. Փոքր Դուգենդ | Դուգենդ |
| 42. Բայանդուր | Բայանդուր | 86. Ղըրիսագիրման | Հնարերդ |

| | | | |
|--------------------------|---------------|--------------------------|--------------------|
| <i>43. Մոլլա Գյուկչա</i> | <i>Մարտիկ</i> | <i>87. Ղրնախղում</i> | <i>Շիրակ</i> |
| <i>44. Հոռոմ</i> | <i>Հոռոմ</i> | <i>88. Փոքր Արթխղում</i> | <i>Փոքր Մանթաշ</i> |
| | | <i>89. Ալլահքիլիսա</i> | <i>Բայթար</i> |

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

| | |
|--|----|
| Առաջաբան | 3 |
| ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ | |
| Արևելյան Շիրակի վարչաքաղաքական իրավիճակը մինչև XIX դարի առաջին երեսնամյակը | |
| Ա.) Պատմաշխարհագրական ակնարկ | 20 |
| Բ.) Արևելյան Շիրակը Երևանի խանության կազմում | 29 |
| Գ.) Արևելյան Շիրակը (Շորագյալի գավառը) ռուս-պարսկական | |
| և ռուս-թուրքական Հակամարտությունների թատերաբեմ | 37 |
| Դ.) Շորագյալի գավառի միացումը Ռուսական կայսրությանը. վարչատարածքային սահմաններն ըստ Գյուլիսանի և թուրքմենչայի պայմանագրերի և ժողովրդագրական իրավիճակը գավառում. | 49 |
| ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ | |
| Արևելյան Շիրակը XIX դարի 30-40-ական թվականներին | |
| Ա.) Շորագյալի գավառի վարչատարածքային կառուցվածքը XIX դարի առաջին երեսնամյակին. | 65 |

| | |
|--|-----|
| <i>Բ) Պարսկահպատակ Հայերի և արևմտահայերի գաղթը Արևելյան Շիրակ 1828-1831 թվականներին</i> | 70 |
| <i>Գ) Գաղթականության տեղաբաշխումն Արևելյան Շիրակում</i> | 89 |
| <i>Դ) Ժողովրդագրական իրավիճակը գավառում ներգաղթից հետո</i> | 119 |
| ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ | |
| Ալեքսանդրապոլի գավառը Անդրկովկասի վարչատարածքային բաժանումների համակարգում | |
| <i>Ա) Ալեքսանդրապոլի գավառի կազմակորումն ու վարչատա րածքային սահմանները XIX դարի 30-40-ական թվթ.</i> | 137 |
| <i>Բ) Գավառի էթնոժողովրդագրական և կրոնադավանաբանական պատկերը 1830-1850 թթ.</i> | 150 |
| <i>Գ) Ալեքսանդրապոլ գավառական կենտրոն</i> | 177 |
| Վերջաբան | 192 |
| <i>Օգտագործված աղյուսների և գրականության ցանկ</i> | 195 |
| <i>Արևելյան Շիրակի (Շորագայի գավառի) բնակավայրերի հին և նոր անունները</i> | 210 |

Հայրապետյան Արմեն Սերգոյի

պատմ. գիտ. թեկնածու

ԱՐԵՎԵԼՅԱՆ ՇԻՐԱԿԸ

XIX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ

(պատմաժողովրդագրական ուսումնասիրություններ)

Айрапетян Армен Сергоевич

кандидат исторических наук
**ВОСТОЧНЫЙ ШИРАК В ПЕРВОЙ
ПОЛОВИНЕ XIX ВЕКА**

(историко-этнографическое исследование)
Гюмри, издательство “Дпир”, 2005г.
(на армянском языке)

Գիտական խմբագիր՝
Հրատ. խմբագիր՝
Գեղ. և տեխ. խմբագիր՝
Համակարգչային էջապրոց՝
Վերստ. սրբագրիչ՝

պատմ. գիտ. դրվագոր,
պրոֆեսոր *Աշոտ Սելքոնյան*
Հովհկ Կարապետյան
Սուրեն Բարիսովարյան
Հովհաննես Բարիսովարյան
Միքարքի Կարապետյան

*Շապիկին՝ Գյումրու քերդի «Ան դու» ամրոց
պատմաճարտարապետական հուշարձանը*

Լուսանկարը՝ Սուրեն Բարխոսովարյանի

Ստորագրված է սպազմությամ՝ 25.08.2005թ.
Գրաշաբ՝ 60x84 1/16: Թուղթը՝ օֆսեթ: Տպագրություն՝ օֆսեթ:
Տառատեսակը՝ Græc Nor: 12,75 պայմ. կա. մամուլ,
10,88 հրատ մամուլ: Տպաքանակը 150:

«Դպիր գրասուն» ՍՊԸ, Գյումրի, Անի թաղ., 7-րդ փ. 5/34:
Հեռ/Զպս. 2-17-89, 4-13-49:
ԿԿԿ “Ժողովրդ ՀՅՈՒՅՎ”, ք’ՎՐՌ, ՍՉ. ԸվՌ, ցս. 7,5/34.

Տպագրված է «Էղիք Պրինտ» ՍՊԸ, Երևան, Թումանյան 12/3